

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Գ.Ծ.Վ. — Անթիլիասի Պահանջատիրական Ձայնը Այս Անգամ Յնչեց Երո-խորհրդարանի Բեմեն.....	757
---	-----

ՔԱՐՈՉԱԽՕՍԱԿԱՆ

ԴԵՒՈՆԴ ԱԲՂ. ԲԷՆԴԷՋԵԱՆ — Քրիստոսով Նոր Կեանք	760
---	-----

ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ

ԹԱՍԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ — Հայ Սուրբեր Մինչեւ ԺԵ. Ղար (վաւերագիրներ).....	763
---	-----

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱԴԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Աղքատ Ղազարոսին Առակը	771
---	-----

ԱՍՏՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ

ԶԱՐԵՅ ԱՐՔ. ԱԶՆԱԽՈՐԵԱՆ — Հայ Եկեղեցւոյ Հաւատքը (Մեկնութիւն Հաւատամքի).....	778
--	-----

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ — Մայեստեր Էկիարտ (1260-1328).....	793
ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՄԷՋԵԱՆ — Եկեղեցւոյ Պատմութիւն (Թրգմ.)	800
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍԵԱՆ — Վեցիկ ճարտարապետի Յուշարձանը.....	808

ՀԱՅ ԼԵՉՈՒԻ ՏԱՐԻ

ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ — Հայերէն Լեզուին Ներկայ Իրավիճակը	811
---	-----

ԱՐԽԻՄԱՅԻՆ ՆԻԹԵՐ

ԽԱԶԻԿ ՔՅՆՅ. ԳՈՌՈՋԵԱՆ — Քրիստոնէութիւնը Իբրեւ Կրօնք	816
--	-----

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ՉԻՖԹՃԵԱՆ — Քրիստոնէութեան Երկու Նշանները.....	819
ՍԱԿԱՐ ԱԲՂ. ԱՇԳԱՐԵԱՆ — Ճանապարհորդութեան Հացը (Թրգմ.)	822

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	824
------------------	-----

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	828
-----------------------------	-----

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	829
-------------------	-----

ՀԱՅ ԴԱՏ	841
---------------	-----

ՄԻՋ-ԿՐՕՆԱԿԱՆ	848
--------------------	-----

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	858
----------------------	-----

ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ	864
---------------------	-----

ԼՈՒՐԵՐ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ	876
-------------------------	-----

ՔՐԻՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	878
-----------------------------------	-----

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ	880
------------------------------	-----

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ	887
--	-----

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ՉԱՅՆԸ ԱՅՍ ԱՆԳԱՄ ՀՆՉԵՅ ԵԻՐՈ-ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԵՄԷՆ

Հայ ժողովուրդի իրաւունքներու ձեռքբերման նպաստող իւրաքանչիւր քայլ, հաւաքական կամքի ու անխախտ հաւաքքի ցայտուն արտայայտութիւն է: Պահանջարկիւրական այս երթին կը մասնակցի ամէն հայ անխախտ, երբ կը շարունակուի փակաւին անփետումի, ուրացումի եւ մեր ժողովուրդի իրաւունքներու բռնաբարման քաղաքականութիւնը, հայութեան հասարակաց թշնամիին կողմէ:

Պահանջարկիւրութեան առաջափար մարտիկը դառնալու համար, այսօրուան աշխարհին համապարասխան միջոցներ, քաղաքական հայեացք, ու մարտավարութիւն անհրաժեշտ են: Անցնող դարը իր քաղաքական ու արհեստագիտական ոստումներով, կերպարանափոխեց աշխարհը: Կարելի չէ այլեւս ապրիլ ու գործել փակաւին մօտ անցեալի չափանիշերով: Առ այդ, Հայկական Յեղասպանութեան հետապնդման հարցը եւս, քննարկման, մօտեցման ու քաղաքական որոշումներու յանգելու փարբեր ելակէտ մը ունի, միշտ նոյն նպատակին՝ արդարութեան հասնելու համար:

Անցնող աւելի քան 90 փարինները, յարկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար եղան ո՛չ միայն վերապրումի ու վերականգնումի փարիններ, այլ մեր արդար պահանջարկիւրութեան ձայնը միշտ լսելի դարձնելու յարապետ ճիգի ժամանակաշրջան մը: Իր ժողովուրդով փեղահանուած Հայ Եկեղեցւոյ Հայրապետական դարաւոր այս Մուրբ Աթոռը, իր երին թողած անձայրածիր արտավար հողեր, կալուածներ, պատմական նստավայր ու հարստութիւն, առաջին պահանջափերն է իրաւագրկուած մեր ժողովուրդի արդար իրաւունքներուն:

Ահա թե ինչո՞ւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութիւնը, չեղաւ միայն որբահաւաքի, կամ վերապրողներու եկեղեցական ու ազգային կեանքին կազմակերպումը: Այլ՝ այդ բոլորէն անդին, իրաւունքներու ձեռքբերման պայքար մը բացաւ ան, ամէն մակարդակներու վրայ, կարեւոր ճակատներու դիմաց: Տեղական, շրջանային ու միջազգային շրջագծերէն ներս, Կիլիկեան Սուրբ Աթոռը դարձաւ խորհրդանիշը մեր ժողովուրդի պահանջաբիրութեան:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իբրեւ մեծագոյն գոհը Յեղասպանութեան, լիիրաւ ու լիարժէք պահանջաբեր է, ու պիտի մնայ այդպիսին, մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներու վերաբիրացման: Անիկա դրօշակիրն է համահայկական պահանջաբիրական պայքարին: Առանց այս Սուրբ Աթոռի հետեւողական ու ազդու գործունէութեան, շրջանային ու միջազգային մակարդակներու վրայ, ներքին ու արտաքին ճակատներու վրայ, պիտի չարձանագրուէին Յեղասպանութեան 50-ամեակէն ետք բացուող նոր ուղիին բոլոր դրական քայլերը: Հայրենի պեղականութեան մը բացակայութեան, Խորհրդային վարչակարգին փակ ճնշումը Հայաստանի կաշկանդումը իրավիճակին մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետները, Լուսաւորչի Ասան ի ձեռքին միջազգային դռներ թակեցին, արդար՝ իրաւունքի արդար՝ պահանջով:

Բացէ՛ք էջերը այս Սուրբ Աթոռի մօտիկ անցեալի պատմութեան: Հերեւեցէ՛ք մեր Հայրապետներու ծառայական կեանքին ու Հովուապետական առաքելութեան: Հոն պիտի տեսնէք փիրական ներկայութիւնը ազգային պահանջաբիրութեան:

Նոյն առաքելութեան լծումը է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, հաւաքարիմ՝ Նահապետներու կրակին: Նոյն առաքելութիւնը, նոր օրերու փարագաւորումով, այս անգամ կենսագործուեցաւ Եւրո-խորհրդարանին մէջ, ո՛չ միայն Հայոց Հայրապետին ներկայութեամբ, այլ նաեւ ու մանաւանդ ֆրանսերէն լեզուով արքասանած կուռ ճառով: Արդարեւ, Վեհափառ Հայրապետը քաղաքական համարեասական վերլուծումով, հայ ժողովուրդի պահանջաբիրութիւնը ներկայացուց ներկայ Եւրոպային դիմագրուած մարտահրաւերներուն եւ նոր ինքնութեան փնտրութիւնի մէջ գտնուող այս կարեւոր ցամաքամասին պարզա՛ծ առաջնահերթութիւններու շրջագծէն ներս: Իր պատմութեան հետ չհաշտուած ժողովուրդին՝ Թուրքիոյ մուրքը Եւրո-միութենէն ներս կանխարգիլող յստակ պատճառները, Վեհափառ Հայրապետին բանաձեւումով, չեն արքօներ որ մարդկային իրաւանց ու արդարութեան հարցերով մտահոգ Եւրոպան, թոյլ փայ նման երկրի մը անդամակցութիւնը:

Հեռու ամէն տեսակ ամբողջարական ու ազգայնամոլ մօտեցումներէ, Նորին Սրբութեան յստակ տեսակետները ու յառաջադրուական ընթացքով փրումը քաղաքական վերլուծումները, հետաքրքրութիւնը պիտի շարժէին՝ իր խօսքը արքասանած ու մեկնած, եւ ապա միայն Վեհափառ Հայրապետին խօսքը մտիկ ընելու սրահ վերադարձած Եւրո-խորհրդարանի փոխ-նախագահին: Նիստի աւարտին, խօսակցական մտերմիկ պահուն, փոխ-նախագահը չվարանեցաւ ըսելու, թէ այն ինչ որ մենք հրապարակաւ չէինք կրնար ըսել, ձեր

Հայրապետը քաջաբար մարմանշեց: Ապա, օրինակը փայլով ուրնագնդակի խաղին, ըսաւ, թէ խաղի ընթացքին մարզիկներ իրարու առիթ փայլով գնդակը կը հասցնեն բերդին, մինչ ձեր Կաթողիկոսը հեռուէն հասցուց զայն ուղղակի բերդին...:

Անթիլիասի ծայնն էր դարձեալ, որ Եւրո-խորհրդարանի բեմէն հնչեց: Ջարդի ու լլկանքի, փարագրութեան ու վերապրումի, ողբի ու որբութեան, սուգի ու լացի ծայն չէր այդ, այլ՝ պահանջափրոթեան փրական ու վճռական ծայնը: Ճիշդ է, որ մեր արդար պահանջքին դիմաց, աշխարհը ունի իր օրակարգը: Քաղաքականութեան կշիռքին նժարները, ճիշդ է որ երկիրներու ու ժողովուրդներու հեփապնդած շահերուն համաձայն կը թեքուին աջ թէ ձախ: Սակայն, սե՛նք եւս ունինք իրաւունքը, արդարութեան կշիռքին վրայ դնելու մեր արդար դատը, որուն պաշտպանութեան լծուած պէտք է ըլլայ իւրաքանչիւր հայ: Այսպէս ըսաւ նաեւ Վեհափառ Հայրապետը Պրիքսէլի Հայ Դարի Գրասենեակին մէջ արտասանած իր խօսքի ընթացքին:

Վեհափառ Հայրապետին արտասանած ճառի աւարտին Եւրո-խորհրդարանին մէջ հաւաքուած բազմութիւնը, յոփնկայս ծափահարութիւններով ողջունեց աշխարհա-քաղաքական հարցերու վերլուծման եղանակը Նորին Սրբութեան: Այս ոգիին ու մօտեցման, այս հաւաքքին ու վճռականութեան դարբնոցը եղաւ ու կը մնայ Անթիլիասը, ուր կանգնած Ապրիլեան առաջին Յուշարձան-Մարտիին մէջ կը հանգչին անթաղ աճիւնները մէկուկէ միլիոն նահապակաց մնացորդներուն: Նահապակներու անխախտելի հաւաքքով ու անընկճելի կամքով թրծուած, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յեփ-Եղեռնեան բոլոր Հայրապետները այսպէ՛ս մրաճեցին ու գործեցին: Նո՛յն առաքելութիւնն է որ կը շարունակուի այսօր: Երբ արդար իրաւունքներու բռնաբարումը կը շարունակուի, Անթիլիաս միշտ պիտի բարձրացնէ իր ծայնը՝ երէկ Արաքական աշխարհէն սկսեալ մինչեւ Միացեալ Նահանգներ ու Գանաթա, այսօր Եւրո-խորհրդարանի ճամբով համայն ընդանիքին, եւ վաղը, ամէն փեղ՝ ուր պէ՛տք է լսելի դառնայ մեր ժողովուրդի իրաւունքներու ձեռքբերման արդար ծայնը:

Գ.Ծ.Վ.

ՔԱՐՈՉԱԽՕՍԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍՈՎ ՆՈՐ ԿԵԱՆՔ*

«Եւ մինչ կ'աղօթէր, անոր դէմքը այլակերպեցաւ եւ հագուստը սպիտակ գոյն առաւ» (Ղկ. 9.29)

«Ի քեզ, Տէ՛ր, յուսացայ մի ամաչեցիցից յաւիտեան» (Սղ 70.1) *Ողջ էութեամբս, այս սուրբ բեմէն, աչքերս առ Աստուած բարձրացուցած, սաղմոսերգուին ձայնակցելով, կ'աղաչեմ Աստուծոյ ըսելով՝ «Ո՛ր՛ Տէր, քեզի՛ ապաւինեցայ, թող ամօթով չմնա՛մ բնաւ» (Սղ 70.1): Փառք եւ գոհութիւն կու տամ Աստուծոյ որ իր աներեւոյթ ներկայութեամբ այս սուրբ տաճարը կը լեցնէ: Փառք իրեն որ իր օրհնութիւնը առաւօտեան ցօղին նման մեր բոլորին վրայ կը ցօղէ:*

Փառք եւ գոհութիւն կու տամ Աստուծոյ որ անարժանիս ձեռքէն բռնելով, զիս առաջնորդեց իր ծառայութեան այգիին մէջ մշակ դառնալու: Արժանի բրաւ, որպէսզի իմ համեստ լուծալովս մասնակից դառնամ իր փրկչագործական ծրագիրին, որպէս Հայ Առաքելական Եկեղեցւոյ սպասաւոր:

Որդիական երախտագիտութեամբ շնորհակալութիւն կը յայտնեմ Մեծի Տանն Կիլիկիոյ արժանընտիր Գահակայ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, որ արժանի դարձուց զիս իր մատենան գունդին զինուոր դառնալու, որպէս կուսակրօն քահանայ: Կ'աղօթեմ Աս-

տուծոյ որ Վեհափառ Հօր կեանքի արեւը միշտ պայծառ պահէ եւ իր հայրապետական մականը, Ահարոնի գաւազանին պէս՝ միշտ ծաղկեալ:

Իմ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ, իմ հոգեւոր ծնողիս՝ Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Եպս. Սարգիսեանին, որ սիրայօժար յանձն առաւ զիս ձեռնադրել եւ օծել, կոչելով զիս այս սուրբ կարգին:

Իմ վերջին շնորհակալութիւնս նաեւ Դպրեվանքի Տեսչութեան եւ ուսուցչական կազմին, որոնք ամբողջ ինը տարիներ զիս լիացուցին հոգեմտաւոր արժեքներով: Թող Աստուած ոյժ եւ համբերութիւն տայ իրենց, այս նուիրական եւ յարգանքի արժանի առաքելութիւնը շարունակելու, ի պայծառութիւն մեր եկեղեցւոյ ու ազգին:

Ի վերջոյ աղօթքս ձեր աղօթքին միացնելով փունջ մը կազմած, առ Աստուած կը բարձրացնեմ որպէս անուշաբոյր խոնկ, որպէսզի Աստուծոյ զօրութեամբ կարենամ արժեւորել իմ վրայ դրուած ծանր, բայց քաղցր լուծը եւ Տիրոջ առջեւ կանգնելով հանգիստ սրտով ըսել. «Անպիտան ծառայ եմ, ինչ որ պարտաւոր էի ընել՝ կատարեցի» (Ղկ 17. 10)

Այսօր, սիրելի հաւատացեալներ, Հայ եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն տօնն է մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի

* Սոյն անդրանիկ քարոզը տրուած է Պէյրութի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ մատուցուած անդրանիկ պատարագի ընթացքին, Կիրակի 15 Յուլիս 2007-ին:

այլակերպութեան:

Երկու հազար տարիներ առաջ, Գալիլիայի Թաբոր լեռան վրայ, երեք աշակերտներու ներկայութեան, Յիսուս աղօթած ժամանակ այլակերպեցաւ եւ դէմքն ու հագուստը պայծառակերպեցան:

Յիսուս առնելով իր հետ Պետրոս, Յովհաննէս եւ Յակոբոս առաքեալները, լեռ բարձրացաւ աղօթելու համար: Մինչ կ'աղօթէր, անոր դէմքը այլակերպեցաւ եւ հագուստը սպիտակ գոյն առաւ, եւ ահա Հին Ուխտի պատմութեան կարեւորագոյն երկու անձնաւորութիւններ՝ Մովսէսն ու Եղիան երեւցան իրենց փառքով, կը խօսէին Յիսուսի հետ, իր մահուան մասին: Այդ միջոցին աշակերտներուն աչքերը քունով ծանրացած էին, բայց երբ տեսան Քրիստոսի փառքը, սթափեցան եւ Պետրոս ապրելով Քրիստոսի աստուածային ներկայութիւնը եւ չուզելով բաժնուիլ անկէ, անմիջապէս առաջարկեց երեք վրաններ շինել, մէկը Յիսուսին, միւսը Մովսէսին եւ երրորդը Եղիային համար: Սակայն անմիջապէս ամպ մը ծածկեց գիրենք եւ լսուեցաւ Աստուծոյ ձայնը որ կ'ըսէր. - «Այս է Իմ ընտրեալ Որդիս, անոր մտիկ ըրէ՛ք» (Հմմտ Մտ 17:5):

Ահաւասիկ, սիրելի հաւատացեալներ, Թաբոր լեռան վրայ Քրիստոսի աստուածութիւնը շեշտող դրուագ մը, ուր նաեւ կը շեշտուի հին եւ նոր կտակարաններու կապը, ուր Յիսուս ուղղակի կապի մէջ կը մտնէ Մովսէսին եւ Եղիային հետ: Եւ քիչ առաջ, նախքան լեռ բարձրանալը, Պետրոս յայտարարած էր Յիսուսի աստուածութիւնը, բայց այժմ անձամբ ճաշակեց այդ աստուածութեան քաղցրութիւնը:

Յիսուս, իր աշակերտներուն հետ լեռ բարձրացաւ աղօթելու համար եւ աղօթքի ընթացքին այլակերպեցաւ: Յիսուս առաջին անգամը չէր որ լեռ կը բարձրանար աղօթելու, ան յաճախ կ'աղօթէր եւ աղօթել կը սորվեցնէր իր հետեւորդներուն:

Բայց այս անգամ ուզեց իր աշակերտներուն առջեւ, կենդանի օրինակով տալ աղօթքին ներգործող գորութիւնը:

Եկէք միասնաբար խորհրդածենք թէ քրիստոնեային համար ի՞նչ է աղօթքի ներգործող գորութիւնը:

ա.- Աղօթքը գորութիւն է:

Աղօթքը կրօնքին հակառակ տարրն է: Ինչպէս բոյսը իր արմատը հողին մէջ ունենալով հանդերձ իր ուժն ու սնունդը երկինքէն կ'առնէ, այնպէս ալ մենք՝ քրիստոնեաներս, հակառակ որ աշխարհին մէջ կ'ապրինք, սակայն մեր հոգիի ուժն ու սնունդը երկինքէն՝ Աստուծոյ կը ստանանք: Այլակերպութեան ժամանակ աշակերտներուն աչքերը քունով ծանրացած էին, բայց երբ տեսան աղօթքին գորութիւնը Քրիստոսի փառքին մէջ, անմիջապէս սթափեցան եւ կազդուրուեցան: Յաճախ աշխարհին հոգերն ու զբաղումները կը կրծեն եւ կը տկարացնեն մեզ եւ սին արժէքներով լեցնելով մեր կեանքը, կը հեռացնեն հոգիի մնայուն եւ վեհ արժէքներէ: Բայց յիշենք, սիրելիներ, թէ երբ Յիսուս Գեթսեմանիի պարտէզին մէջ կ'աղօթէր, եւ կ'ապրէր իր չարչարաններուն տագնապը, հրեշտակ մը երեւցաւ եւ կը գորացնէր գինք, եւ Յիսուս աղօթքով գորացած, յանձն առաւ մեր մեղքերուն համար խաչ բարձրանալ: Ուստի սիրելիներ, մենք ալ Քրիստոսի օրինակով գորանանք աղօթքով, որպէսզի երբեք տկար չմնանք աշխարհին առջեւ եւ մեր կեանքի փորձութեանց դիմաց, մենք ալ սթափինք եւ կազդուրուինք:

բ.- Աղօթքը այլակերպող է:

Յիսուս իր աշակերտներուն պատուիրեց.- «Ձեր իրար սիրելով է որ մարդիկ պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք»: (ՅՀ 13: 35) Մենք՝ որպէս քրիստոնեաներ եւ Քրիստոսի աշակերտ-

ներ, կոչուած ենք տարբեր ըլլալու մեր ունեցած վարք ու բարքով:

Աղօթելը, սիրելի հաւատացեալներ, կը նմանի ջրտուք կատարելու, որ Աստուծոյ կողմէ մեզի տրուած շնորհքները աճեցնելով, մեզ հանգրուան առ հանգրուան կ'այլակերպէ եւ, ժողովրդական բացատրութեամբ, հրեշտականման կը դարձնէ մեզ:

Աղօթքը մեր ցամբած հոգիէն կենսատու աղբիւր կը բղխեցնէ եւ մեր սոված հոգիին երկնային մանանայ կը պարգեւէ, զոր ուտելով ոչ կը ծարաւինք եւ ոչ ալ անօթի կը մնանք, այլ՝ դառնալով Աստուծոյ շնորհներով լեցուն քրիստոնեաներ, կը դառնանք Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ:

գ.– Աղօթքը մեզ Աստուծոյ կը միացնէ:

«Աղօթքը հոգեւոր կեանքի ամենասրբագան վայրկեանն է, երբ մարդ առանց միջնորդի, դէմ առ դէմ կանգնած է իր Աստուծոյն առջեւ» *Ինչպէս կ'ըսէ մեր եկեղեցւոյ հայրապետներէն մէկը: Սիրելիք, Աստուած Քրիստոսով մեր Հայրը դարձաւ եւ մեզի իր որդին ըլլալու պատիւին արժանացուց: Արդ, մեզմէ ո՞վ իր օրը կ'անցնէ առանց նոյնիսկ վայրկեան մը իսկ իր հօր մասին մտածելու եւ կամ իր հօրը հետ խօսելու: Երբեք սիրելիներ: Ինչպէս Աստուած Հայր ըլլալով ամէն վայրկեան մեզ կը խնամէ, այնպէս ալ մենք, ըլլայ ուղղակի կամ*

մեր գործերուն ընդմէջէն, մեր կապը միշտ պէտք է պահենք Աստուծոյ հետ, որպէսզի այդ կապը միշտ գորացնելով հաստատ մնանք մեր հաւատքին մէջ: Աղօթողը Աստուած իր սրտին մէջ կ'ունենայ: Եւ ինչ վսեմ գգացում երբ մարդ իր Աստուածը իր սրտի մէջ ապրեցնէ:

Աղօթքը գորութիւնն է, որ մեզ կ'այլակերպէ եւ Աստուծոյ կը մօտեցնէ: Արդ, սիրելի հաւատացեալներ, մենք որ այսօր եկեղեցի եկած ենք աղօթելու համար Աստուծոյ, թող որ մեր աչքերը դէպի Աստուած յառենք եւ մեր սրտի դռները բանալով հրաւիրենք զինք մեր սրտին մէջ ապրեցնելու համար: Եւ ինչպէս ամպերուն մէջէն խօսեցաւ եւ ըսաւ.- «Այս է Իմ ընտրեալ Որդիս, անոր մտիկ ըրէ՛ք»: *Լսենք Քրիստոսի այսօրուան խօսքը որ այս սուրբ բեմէն կոչ կ'ուղղէ մեզի, որպէսզի յարատեւ աղօթելով գորանանք Իրմով եւ վերադառնանք մեր բնակարանները, պայծառակերպուած եւ միանալով Իրեն դառնանք Իր Եկեղեցւոյ մնայուն բնակիչները, որպէսզի մարդիկ մեզ տեսնելով ըսեն՝ «Ասոնք իսկապէս Քրիստոսի աշակերտներն են», որու կը վայելէ փառքը, իշխանութիւնը եւ պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:*

ՂԵՒՈՆԴ ԱՐԴ. ԲԷՆԴԷՋԵԱՆ

ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ

ՀԱՅ ՍՈՒՐԲԵՐ
Մինչև Ժե Դար (Վաերագիրներ)*

5. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՄԱԽՈԺ, ՎԿԱՅ

† 553

19 Մեհեկան = (25 Փետրուար)

5.1 Մ. ԱԳԵՐԵԱՆ, Լիակատար Վարք...
Հ. 10, 1814, էջ 234-238:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ
Սրբոյն Աստուածատրոյ, կամ Յիզտրուգտի:

Հ. փետր. 25: Տէր Իսրայէլ. փետր. 22: եւ պատմագիրք հայոց:

Երջանիկն՝ ՚ի վկայս՝ սուրբ մանուկն Աստուածատուր՝ էր ազգաւ պարսիկ ՚ի քուրաստանէ բեշապհոյ՝ որդի մոգպետի, յամս թագաւորութեանն խոսրովու որդւոյ կաւատայ, բնակեալ ՚ի դուին քաղաք հայոց ընդ դենշապհոյ պարսիկ մարգպանի. եւ առաջին անունն նորա ՚ի հեթանոսութեան մախոթ կամ մախոչ:

Եւ եղեւ ՚ի տեսանել մախոթայ գնահատակութիւն գրիգորի ռաժկի համազգւոյն իւրոյ, զի եւ նա ՚ի մոգութենէ էր դարձեալ, վառեցաւ ՚ի սիրտ նորա սէր առ քրիստոնէութիւն. եւ այնուհետեւ խղճէր ընդ դենն պարսկական՝ գմտաւ ածելով զպատրանս սնտրի կրակապաշտութեան եւ արեւապաշտու-

թեան. վասն որոյ թէպէտեւ յապարանս մոգուց կայր, բայց երկմիտ էր ՚ի հաւատոց նոցա: Եւ յաւուր միում յորժամ մոգքն զոհս մատուցանէին ատրուշանին՝ այս ինքն կրակարանին, եւ մախոչ ընդ նոսա, յանկարծակի բոցն բարձրացաւ, եւ սկսաւ այրել զապարանսն, եւ ո՛չ կարացին շիջուցանել եւ եղեւ աղաղակ մեծ ՚ի քաղաքին:

Ձոր լուեալ հազարապետն հայոց՝ փութացաւ յեկեղեցին, էառ զքահանայսն կենսատու սուրբ խաչիւն, եւ եկն յապարանսն. եւ անդէն վաղվաղակի ՚ի գորութենէն քրիստոսի նշանաւ սուրբ խաչիւն շիջաւ բոցն. եւ մոգքն շնորհակալ եղեն նոցա: Իսկ պատանին մախոչ ՚ի բաց ընկեցեալ զգործի զոհիցն, եւ

առեալ՝ի ձեռս գրուրվառն՝ երթալը առաջի սրբոյ խաչին մինչեւ յեկեղեցին:

Եւ ՚ի վաղիւն գնացեալ մոգուցն՝ չարախօսեցին գնա առ դենչապուհ մարգպանն, որ եւ միանգամայն վերակացու եւ դատաւոր քաղաքին դունայ, եւ ածեալ կացուցին գերիտասարդն յատենի. եւ նա համարձակութեամբ խոստովանեցաւ զքրիստոսի հաւատն, եւ այպանեաց զսնտի պաշտամուռնս նոցա. ընդ որ բարկացեալ դատաւորն՝ խուզեաց զհերսն եւ զմօրուսն, եւ գանեաց սաստիկ. եւ ետ արկանել գնա՝ի բանտ:

Եւ մտեալ մախոչ ՚ի բանտն՝ եգիտ գոմն կրօնաւոր ներսէս անուն արգելեալ ՚ի բանտին հանդերձ սահակաւ ընկերաւ իւրով՝ վասն արհամարհելոյ հրապարակաւ զդենն պարսից: Եւ մնաց ընդ նոսա յերկար յարգելանս. եւ ուսանէր ՚ի նոցանէ օրրասօրէ զհաւատս քրիստոսի, եւ զսաղմոսն դաւթի. եւ սաղմոսէին ՚ի միասին անդադար:

Եւ յետ երից ամսոց (կամ որպէս այլք ընթեռնուն, ամաց) մկրտեցաւ մախոչ ՚ի բանտին, եւ անուանեցաւ յիգիտբուրդիտ կամ յիգտիբուրդտ, այն է եագէտպուզիտ, որ թարգմանի Աստուածատուր. եւ եղեալ կրօնաւոր՝ զգեցաւ մագեղէն. եւ ճգնէր խստակրօն վարուք զցայգ եւ զցերեկ: Իսկ յետ բազում աւուրց՝ յորժամ ըստ աղաչելոյ տեառն մովսեսի հայոց կաթողիկոսի փոխեաց արքայն պարսից զդենչապուհ բռնաւոր մարգպան, եւ առաքեաց զայլ ոք վշնաս վահրամ անուն հանդերձ երկու պարսիկ իշխանօք՝ իրաւունս առնել տառապանաց աշխարհին հայոց, խաղաղութիւն եղեւ քրիստոնէից:

Եւ յաւուր միում նստեալ յատենի՝ քննէին զբանտարկեալսն. եւ ազդեցաւ նոցա, թէ ՚ի վաղուց հետէ արք երեք են ՚ի բանտի՝ մախոչ, սահակ, եւ ներսէս. գորս բերեալ առաջի՝ քննեցին եւ գտին գնեբսէս եւ զսահակ ՚ի մանկութենէ ծնեալ քրիստոնեայ. վասն որոյ արձակեցին զնոսա յազատութիւն: Իսկ զսրբ-

բոյն աստուածատրոյ՝ վասն զի ՚ի պարսկութենէ ՚ի քրիստոնէութիւն էր դարձեալ, պատառեցին զկրօնաւորական զգեստն, եւ ծիւ ծիւ արարին զկրնկուղն. եւ ասէին, դառնա՞ս ՚ի պարսկական դաւանութիւն, եւ ուրանա՞ս զքրիստոս՝ յոր հաւատացեր, եթէ մեռանիս չարաչար մահուամբ: Ասէ երանելին. ես ծանեայ զքրիստոս միայն ճշմարիտ աստուած եւ արարիչ երկնի եւ երկրի, եւ գանձն իմ պատրաստեցի ՚ի գործ մշակութեան նորա, թէ եւ մահ հասանէ: Եւ բարկացեալ՝ յոյժ տանջեցին գնա, եւ նեղէին ուրանալ զքրիստոս. եւ նա եւս առաւել համարձակութեամբ խօսէր եւ յանդիմանէր զպղծալի եւ զգարչելի մոլորութիւն նոցա: Եւ իբրեւ տեսին գերանելին անդրդրուելի ՚ի քրիստոսէ, հրաման ետուն ՚ի խաչ հանել գնա՝ վասն յարելոյն ՚ի խաչելեալն:

Իսկ հայրապետն հայոց լուեալ զայն, եւ ժողովեալ առ ինքն զքահանայսն, եւ ելեալ ՚ի տեղի մի յանդիման խաչին՝ եկաց ՚ի տեսիլ նահատակութեան սրբոյն աստուածային նշանաւն, հանդերձ խնկօք բուրելովք եւ լուցեալ մոմեղինօք, հայցելով յաստուծոյ տալ սրբբոյն զօրութիւն: Եւ ածեալ գերանելին պարսիկ դահճաց՝ մերկացուցին, եւ բեւեռեցին ՚ի վերայ փայտին. ընդ նմին եւ այլ երկու արս չարագործս, մինն պարսիկ, եւ միւսն հրէայ, որպէս գաւազակսն՝ վասն գործոցն իւրեանց: Եւ պարսիկն նախքան զխաչիլն իւր գայր եւ առնոյր զարիւնախառն հողն ՚ի պատուանդանէ սրբոյն աստուածատրոյ, եւ օծանէր գերեսն իւր՝ ասելով. յիշեա՛ զիս սուրբդ աստուծոյ: Իսկ դահճացն առեալ գնա բռնութեամբ՝ հանին ՚ի խաչ ընդ աջմէ սրբոյն, եւ զհրէայն ընդ ձախմէ. որ աղաղակէր դառնալ ՚ի մոգութիւն, եւ ոչ ընկալան:

Յայնմ վայրի քաջ նահատակն քրիստոսի աստուածատուր քարոզէր ՚ի վերայ խաչին, եւ ուսուցանէր զհաւատացեալս՝ հաստատուն կալ ՚ի քրիստոս,

եւ համբերել ամենայնի որ վասն անուան նորա: Ապա նետահար արարին գերանելին՝ ի վերայ խաչին. եւ այնպէս աղօթելով՝ ի վերայ չարչարողացն իւրոց՝ աւանդեաց զհոգին իւր առ աստուած սուրբն յիգտբուզտ աստուածատուր՝ յաւուր կիւրակէի յերրորդ ժամուն:

Եւ հաւատացեալքն եկին առ իշխանսն, եւ խնդրեցին բառնալ զմարմին սրբոյն. եւ նոքա հրամայեցին առնուլ զնա: Յայնժամ զիմեաց հայրապետն քահանայիւք եւ ժողովրդովք. եւ բարձ-

եալ զպատուական մարմին սրբոյն՝ տարան՝ ի մեծ եկեղեցին դուռնայ. եւ եղին ՚ի տապանի սաղմոսիւք եւ օրհնութեամբ. եւ զխաչն մասունս արարեալ՝ բաշխեցին ամենայն հաւատացելոց:

Այս եղեւ յառաջին ամի թուականութեանս հայոց, այն է յամի տեառն 552: Եւ ես ներսէս (ասէ վկայարանն) չարչարակից եւ ընկերակից սրբոյն՝ արարի զպատմութիւնս ՚ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ:

**5.2 Ղ. ԱԼԻՇԱՆ, Հայապատում,
Հ. 1, Վեներիկ 1901, էջ 466-469:**

ՃԿԹ

**ՀԱՒԱՏԱԼՆ ՅԻՁՏԻՔՈՒՁՏԻ ՈՐ ԿՈՉԵՅԱԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ
(ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ)**

Ընդ ժամանակս թագաւորութեան Խոսրովու որդւոյ Կաւատայ արքային Պարսից¹, առաւել զայրացեալ լինէր խոստովանութիւնն որ առ Քրիստոս, եւ ոչ սակաւք նահատակեցան յաշխարհին Պարսից եւ ի դրան արքունի: Յորում ժամանակի այլ ոմն Մախոշ² մոգ՝ ի նորին աշխարհէ, ի գաւառէն որ կոչի Բերշապուհ, ի գեղջէ որոյ անունն Քոււնարաստան. որոյ ծնողքն պաշտօնեայք էին կրակի, եւ ինքն ի մանկութենէ մոզութեամբ վարժեալ: Եւ էր զօրաւոր խրատու եւ գիտութեան հրապաշտիցն եւ խորհրդօք իմաստուն: Սա ի դիպուածոյ իմեքէ ի բանակս թագաւորին

հասանէր, եւ պատահէր չարչարանաց սրբոյ վկայի որումն, որում անունն էր գրիգորիոս. հրաշացեալ ընդ համարձակութիւն նահատակին³, եւ զհաւատոյ բարւոք նախանձն նախանձեալ՝ ասէ ի սրտի իւրում. Տէր Աստուած քրիստոնէից, նայեաց յիս եւ ցոյց ինձ ճանապարհ՝ որով գնացից, եւ բա՛ց ինձ դուռն ողորմութեան ընդ նահատակին քում. զի արժանի եղէց արքայութեան քում, որ տէրդ ես երկնի եւ երկրի: Իսկ ի նմին գիշերի տեսիլ սքանչելի երեւէր նմա, որպէս թէ լինէր ինքն ի սուրբ եկեղեցւոջ. եւ այր ոմն սպիտակագգեստ երեւեալ նմա ասէ. Երանելի ես դու, զի այսպիսի լուսաւոր եկեղեցւոյ եղեր

¹ Ա. Խոսրովն է, մականուանեալն Նուշուիվան:
² Բնիկ անուն մոգին (Մէլիսոշ) որ քրիստոնէացեալ կոչեցաւ ըստ Պարսից Եգիտ-բուզիտ:

³ Սա իր ցեղին կամ երկրին անուամբ *Ռաժիկ* կոչուի:

արժանի, եւ հաւատասցես յայսմ հետէ յԱստուած արարիչն երկնի եւ երկրի եւ յՈրդին համագօր եւ ի Հոգին համագործ, եւ ուսցիս զայդ յաւանդութենէ սրբոյ աւետարանին: Եւ զարթուցեալ իմացաւ զտեսիլն, եւ հաւատաց բոլորով սրտիւ, եւ ասէ. Աստուածն քրիստոնէից է ճշմարիտ Աստուած: Եւ յայնմհետէ զղմամբ ունէր զմոգութիւն: Գայր անտի յաշխարհն Սիւնեաց, պարապելով յուսկնդրութիւն զրոց սրբոց. եւ լեալ անդ սակաւ ամիսս՝ հասանէ ի Հայս. եւ եկեալ յԱյրարատ գաւառ՝ բնակէր յոստանին Հայոց՝ ի Դուին, յարեալ ի մոզս ուրումն Հայոց համակարի⁴, որում անուն էր Խոսրով-Պերոզ, եւ արհամարհանօք զմոգութիւնն անցուցանէր:

Եւ լինէր ի ձմերային ժամանակի, ի մեհեկանին՝ ըստ Պարսկաց՝ ամսոյ սկիզբն⁵, եւ ըստ սովորութեան իւրեանց զոհս աղտէզ⁶ մատուցանէին հրոյն յապարանս համակարին. եւ երանելին Մախոշ կայր ընդ նոսա յառակի⁷, պնդեալ զբերանն: Եւ բարձրացեալ բոցն ի ճարպոյն՝ հասանէր ի դարաւանդակ տանն⁸ եւ բորբոքէր: Իսկ մոգուցն ժողովեալ զգոհելն՝ զհուրն փութացան շիջուցանել եւ ոչ կարացին, եւ արտաքս ընթացեալ պատմէին զիրան: Եւ որ հազարապետն էր Հայոց՝ իբրեւ լուաւ զձայն ամբոխին, փութացեալ հասանէր ի դուռն եկեղեցւոյն, ստիպէր զպաշտօնեայն առնուլ

զսուրբ խաչն եւ բերել յապարանսն, զի թերեւս մերժեսցի հուրն, որ առ նեղութեան ակամայ հաւատայր⁹: Եւ սպասաւորացն առեալ զնշանս սուրբ խաչին՝ արագ հասանէին ի տեղին. եւ հասեալ յանդիման ապարանիցն՝ սուրբ խաչն, եւ բոցն տարածեալ՝ շիջանէր առ հասարակ: Այս մեծ նշան եղեւ պատուական սուրբ խաչիւն յաշխարհս Հայոց, ի խնդութիւն բարեպաշտից եւ յամօթ կռապաշտութեան: Եւ տեսեալ կնոջ համակարին՝ մեծ զոհութիւն առաքէ սպասաւորաց սքանչելագործ սուրբ խաչին:

Իսկ երանելին Մախոշ իմացեալ զայսպիսի սքանչելիս, զուռն¹⁰ որովք հրամայէր՝ ջարդեալ ի բաց ընկնոյր, նոյնպէս եւ զբերանակապն. եւ մատուցեալ առնոյր զբուրվառն ի ձեռաց սարկաւազին եւ արկանէր խուսկս առաջի սրբոյ խաչին, եւ յայտնէր զհաւատսն զոր ունէր ի Քրիստոս, եւ յուղարկելով զսպասաւորս խաչին, ասէր. Խնդրէք յԱստուծոյ վասն իմ, զի եւ ես քրիստոնեայ եմ: Եւ տեսեալ մոգուցն՝ ասենցնաւ. Ընդէ՞ր զայդ իշխեցեր առնել: Ասէ երանելին. Ես ի բազում ժամանակաց հաւատայի քրիստոնէից, եւ խղճիւ մոգէի. բայց արդ յայտնապէս քարոզեմ զհաւատս որ ի Քրիստոս, եւ այլ ոչ եւս սպասաւորեցից հրոյն, զայդ ամենայն զարմանալիս տեսեալ:

⁴ Պարսից կողմանէ դրուած հոգցող կամ համարակալ:

⁵ Մահկեանէ, ամսական եւ նոր ամիս նշանակէ:

⁶ Թուի իւղային նիւթեր կրակին վրայ լեցրնէին, որ աւելի բորբոքի:

⁷ Ըստ կրօնից կրակապաշտ Պարսից՝ գոհելու ատեն բերանի կապ դնէին պաշտօնեայքն. եւ այնպէս կենալն ի պաշտաման՝ թուի նշանակել յառակի կայն:

⁸ Տանը կամ մեհեմնին ձեղուրը, ներքին տանիքն:

⁹ Այս նեղութեան վտանգի ատեն՝ հազարապետն Պարսից կամայ ակամայ հաւատայր՝ թէ քրիստոնէից խաչն կըրնայ կրակը մարել:

¹⁰ Կուստ գլուխ գաւազան պաշտօնական:

6. ԱՏՈՄԵԱՆՔ

(Արոմ գորավար իր գունդերով)

Տե՛ս նաեւ ՄԱՆԱՃԻՀՐ գորավար իր գունդերով

449

Նաւասարդ 9 = Օգոստոս 19

6.1 [Դ. ԱԼԻՇԱՆ], Սոփերք Հայկականք, Հ. 18, էջ 69-82:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԱՏՈՄԱՅ ԵՒ ՈՐԴԻՈՅ ԻՒՐՈՒՄ ԵՒ ՎԱՐՍԱՅ, ԵՒ ՆԵՐՍԵՀԻ ԵՒ ՎԱՐՉԱԻՈՐԻՆ

Արք եղբարք եւ հարք ժողովուրդք աստուածասէրք՝ որ երկիւղիւն Աստուծոյ ժողովեալ էք՝ ի կատարել գլխատակ սրբոց վկայիցս. մեծաւ ցանկութեամբ կամեցայ պատմել ձեզ գբաջութիւն արանցն. եւ գնահատակութիւն սրբոցն, որք վասն սիրոյն Քրիստոսի նահատակեցան, եւ մեզ թողին օրինակ. զի լսելով գվարս նոցա առաւել հաստատեսցուք ՚ի հաւատս: Արդ շնորհեսցէ մարդասէրն Աստուած պարգեւս, բան՝ ինձ ասողիս եւ ձեզ լսողացդ մտադիւրութեամբ ունկընդրութիւն, քահանայից եւ ժողովրդոց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսանաց եւ ամենայն չափու հասակի: Արդ մաքրեցէք զմիտս եւ զխորհուրդս, զգուշութեամբ լսելով զաստուածագօր մարտակցութիւնն սրբոց վկայիցն ընդդէմ թշնամոյն. որպէս զի եւ մեք հետեւեսցուք զկնի հետոց նոցա, որք հորդեցին մեզ զանսայթաք պողոտայն ՚ի վերինն Երուսաղէմ:

Ի ժամանակս Յագկերտի ամբարշտի Պարսից թագաւորին, ծաղկէր

հաւատ քրիստոնէութեան ընդ ամենայն երկիր. եւ տեսեալ մոգպետացն եւ մոգուցն խորհուրդ ՚ի մէջ առեալ վարդապետան իւրեանց սատանայիւ, ժողովեցան եւ ծանուցին թագաւորին, ասելով, եթէ Գիտութիւն լիցի տէրութեանդ քում, զի դենիմագղեզդ կործանեցաւ, եւ դիցախառն նախնեաց ձերոց պաշտամունք բարձան, զի ամենեքեան ՚ի քրիստոնէութիւն կործանեցան. եւ եթէ ոչ հրով եւ սրով եւ փայտիւ հրամայես կորուսանել զանուանեալ քրիստոնեայն, մանաւանդ որ յաշխարհէն Հայոց այսր հասեալ են ազատք եւ հեծելագօրք, որք առաւել թշնամի են պաշտաման կրակի եւ մոգութեան, ոչ եւս գօրացեալ եղիցին պաշտամունք աստուածոցն: Իսկ պիղծ եւ անօրէն թագաւորն փութանակի հրամայեաց հրովարտակս հասուցանել ընդ ամենայն կողմանս իւրոյ տէրութեանն, եթէ Մի՛ ոք իշխեսցէ անուանել զանձն քրիստոնեայ, ապա թէ ոչ սրով եւ հրով եւ փայտիւ դատեսցի. իսկ որք կատարեն զմեր հրա-

մանս, եւ մեծարեն զկրակ եւ զմոգուլթիւն՝ բարձի եւ պատուի եւ մեծի իշխանութեան արժանի գտցին:

Այնուհետեւ լինէր հայաժողովն մեծ քրիստոնէից, զի տանջէին անհնարին տանջանօք, եւ սպանանէին պէսպէս մահուամբք: այլ քաջքն պսակէին առ ոչինչ համարելով գտանջանսն եւ զմահ, ըստ ասելոյ սրբոյն Պաղղոսի, եթէ Ոչ մահ եւ ոչ նեղութիւնք ոչ կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյն Քրիստոսի: զի անցաւոր մահուամբս եւ չարչարանօքս՝ զանանց եւ զանճառ բարիսն ժառանգեսցուք: Արդ յուշ արարեալ ոմանց, որ էին ճշմարտութեանն թշնամիք՝ անօրէն թագաւորին՝ զազատագունդն Հայոց, որ էին սեփական ծառայք Քրիստոսի, արձակէ առ նոսա դաւով նախարար գոմն, եւ գրէ հրովարտակ այսպէս: Յագկերտէ արքայից արքայէ եւ յաստուածոց հաւասարէ՝ առ սիրելի ծառայս մեր առ ազատս եւ ռամիկ հեծեալս Հայոց աշխարհիդ, որ ՚ի մարգիդ էք, ողջոյն հասցէ ՚ի մերմէ տէրութենէս: Յիշեցաք զվաստակս ձեր, եւ զքաջութիւն որ առ թշնամիս մեր, եւ կամիմք մեծաւ պատուով եւ ճոխութեամբ արձակել զձեզ յաշխարհն ձեր: զի տեսեալ եղբարց ձերոց առաւել փութասցին ՚ի մեզ եւ ՚ի մեր ծառայութիւն: միայն զի փութով հասանիցէք ՚ի դուռն արքունի:

Արդ իբրեւ ընթերցան նոքա զհրաման թագաւորին եւ յուան զբանս նախարարին, այնուհետեւ զիտացին զգաղտածիդ նետս թշնամուցն, որ հանապազ մարտնչի ընդ ծառայս Աստուծոյ: յուղի անգեալ գնացին, եւ հասեալ ՚ի կիցս ճանապարհին որ գատանէր յաշխարհն Հայոց, խորհուրդ աստուածային շնորհացն ՚ի տեսչութենէ վերին զօրութեանն ՚ի մէջ անկանէր: Եւ ժողովեալ տէր Աստուծոյ գնունի իւրովք ազատօքն, եւ տէր Մանածիհր ուշտունի իւրովք ազատօք, խորհուրդ կալան առ միմեանս, եւ սկըսան ասել այսպէս: Մեք զիտեմք զպիղծ եւ զանօրէն թագաւորն, զի վասն այնու-

րիկ կոչէ զմեզ զի հնազանդեցուցէ իւր խաւարային խորհրդոցն, եւ արասցէ զմեզ խաւար փոխանակ լուսոյ: եւ զանցաւոր պատիւս խոստանալով՝ ՚ի յաւիտենական բարութեանցն զմեզ վրիպեցուցէ, զոր խոստացաւ անսուտն Աստուած իւրոց ծառայից ՚ի ձեռն սրբոց իւրոց մարգարէից: որք քաջութեամբ նահատակեցան ՚ի ժամանակս իւրեանց վասն անուան նորա, եւ բարի անուան յաշխարհի թողին եւ զանճս բարութեան յերկինս համբարեցին, արժանաւոր գոլով լուսաւոր պսակացն: զի թեպէտ եւ մեք անարժան եմք, սակայն ՚ի նա ապաւինելով՝ արժանաւորք գտանիցիմք, զի միայն զյօժարութիւն կամացն խնդրէ Աստուած: Եւ միաբանեալք ամենեքեան ընտրեցին մեռանել վասն անուան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, քան առ ժամանակ մի վայելել ՚ի մեզս: ոչ զարհուրեալք յառժամանակեայ մահուանէս ըստ ձայնի սրբոյ աւետարանին՝ որ ասէ, թէ Մի՛ երկնչիք յայնցանէ որ զմարմինն սպանանեն, եւ զոգին ոչ կարեն սպանանել: Այնուհետեւ յանձն արարեալ զինքեանս սրբոյ Երրորդութեանն, դէմ եղեալ զնացին յաշխարհն Հայոց:

Իսկ ապա համբաւն հասեալ ՚ի դուռն անօրէն թագաւորին, արձակէր զունդ բազում զկնի նոցա, եւ հրաման տայր զամենեսեան սրով սպանանել: Իսկ սրբոց երանելեացն հասեալ այնուհետեւ յաշխարհն Հայոց, յերկիրն Անձեւացեաց, եւ գտեալ ՚ի վայելուչ տեղի մի յերանցն հրեշտակակրօն միանձնական գոմն ՚ի քարանձաւի միջ բնակեալ՝ պէսպէս եւ բազում ճգանց համբերեալ-առ սա հասեալք ամենեքեան առ հասարակ ծունր կրկնեալ բարերարին Աստուծոյ, եւ փառաւորէին զԱստուած: եւ օրհնեալք ՚ի նմանէն պատմեցին զանցս աղէտիցն, եւ զնեղութիւնս իւրեանց ճանապարհին: Իսկ Հոգւոյն սրբոյ ազդեալ նմա, ասէ: Երանելիք էք դուք արք քրիստոսասէրք: զի վաղվաղակի

տեսանելոց էք առ որ անձկացեալն էք, զի զօգտակարն ձեր հոգասցէ տէր Յիսուս Քրիստոս: Եւ ընկալեալ զօրհնութիւնս 'ի նմանէ իջին բնակեցան մօտ առ նա մեծաւ ուրախութեամբ որպէս զբանակս հրեշտակաց սաղմոսելով եւ օրհնելով զԱստուած: Եւ 'ի մէջ զիշերին տեսիլ սքանչելի երեւեալ սրբոյն Ատոմայ, լոյս կամարածեւ փայլեալ 'ի վերայ ամենեցուն, եւ այլ մի լուսաւոր զգեստիւք եւ ահաւոր տեսեամբ բաշխէր պսակս բոլորեալս 'ի կարմիր վարդէ. եւ ասէ ցտուրն Ատոմ, Քաջալերեցարուք զինուորք Քրիստոսի: Իսկ նորա զարհուրեալ 'ի տեսլենէն՝ զարթուցեալ, բազում պաղատանս եւ աղօթս մատուցանէր հանդերձ արտասուօք առ բարերարն Աստուած այսպէս ասելով. Տէր դու զիտես զսրտից մերոց զխորհուրդս, զի վասն անուան քում սրբոյ մատնեցաք զանձինս մեր 'ի մահ, անարգելով զհրամանս պիղծ եւ անօրէն թագաւորին, որ բանիւք սնտոիւք հրապուրէ զմեզ. զի եղիցուք հրաժարեալք յանսպառ քոց բարեաց, եւ վայելել 'ի մառախլապատ եւ 'ի մոխրապաշտ վայելչութիւնս նոցա: Արդ տէր բարերար, մի՛ բացէ առներ 'ի մէջն զօգնականութեանդ քո վերակացութիւն, զի մի ոտնհար լիցի թշնամին, թէ՛ յաղթեսցէ քոց ծառայից. զի թէպէտ եւ անարժան եմք, այլ դու տէր սովոր ես ցուցանել զողորմութիւնս քո 'ի վերայ մեղաւորաց. քանզի ոչ եկիր կոչել զարդարս, այլ զմեղաւորս 'ի կենդանատուր բղխումն արեան քո: Եւ այսպէս կացեալ նոցա յաղօթս մինչեւ ցժամ առաւօտին, ապա յարուցեալ ամենեքեան 'ի պաշտօն առաւօտուն կատարեցին զսովորական աղօթսն: Եւ սկսեալ սուրբն Ատոմ պատմել նոցա զտեսիլ զիշերոյն. իսկ նոցա առ հասարակ արտասուելից հառաչանօք ծուներ կրկնեալ բարերարին Աստուծոյ, որպէս 'ի միողէ բերանոյ աղաղակէին եւ ասէին. Տէր մեր եւ Աստուած Յիսուս Քրիստոս, եթէ արժանի համարիս զմեզ մեռանել վասն անուանդ քո

սրբոյ, մեք պատրաստ եմք յամենայն ժամ որպէս զոչխար 'ի սպասումն, զի կատարեսցուք նշանաւ սուրբ խաչի քո, եւ մի պարտեսցուք յանաստուածիցն, 'ի մոխրապաշտ թագաւորէն, եւ 'ի զօրաց նորա. զի ամօթալից կորիցեն ամենայն թշնամիք ճշմարտութեանն:

Իսկ դիւապաշտ եւ սեւագունդ զօրքն Պարսկաց զգիշերն ամենայն հետամուտ եղեալ հասանէին 'ի լեռուն, եւ կալեալ զոմն հարցանէին. թէ՛ ՄԼԸ իցեն բնակեալ: Իսկ նորա զարհուրեալ յանցաւոր մահուանէս, հանգոյն լեալ Յուդայի մատնչի՝ պատմէր նոցա զտեղուցն: Եւ նոքա բազում ամբոխիւ վաղվաղակի հասանէին ուր էին սուրբքն: Իսկ քաջ նահատակացն տեսեալ զյարձակումն անօրինացն ըստ սովորական իւրեանց արիւթեանն, միմեանց ձայն տուեալ ասելով, Ձի կալէք. վասն որոյ եւ անուն տեղոյն Ձիակալի վանք կոչեցեալ մինչեւ ցայսօր ժամանակի: Իսկ արանցն քրիստոսասիրաց հեծեալք յուրաքանչիւր երիվարս, ժողովեալք 'ի բլուրն կարգեցին ռազմն: Իսկ նախախնամութիւնն Աստուծոյ յայտնեալ սիրելեացն իւրոց, տեսիլ զիշերոյն յայտնապէս երեւեալ ամենեցուն անանց լոյսն եւ անթառամ պսակքն. եւ նոյնժամայն 'ի բաց թողեալ զերիվարսն, եւ ընկեցեալ զգէնսն ցնծութեամբ յառաջ մատուցեալ 'ի կատարումն: Իսկ սուրբն Ատոմ զսքանչելատեսիլ զորդեակն իւր առաջի արարեալ 'ի ժամ կատարմանն՝ զանգիտեալ 'ի մանկական տիոցն. իսկ նորա յօժարութեամբ յառաջեալ քան զամենեանն՝ բարի խոստովանութեամբ 'ի Քրիստոս կատարէր եւ պսակէր. եւ սուրբն Ատոմ հանդերձ սուրբ ընկերօքն իւրովք սաղմոսէին եւ ասէին. Սիրեցաք զքեզ տէր, զի լուիցես ձայնի աղօթից մերոց. ընկալ զկամաւոր պատարագս եւ խառնեա զամենեսեան 'ի գունդս սրբոց քոց: Եւ ամենայն իսկ զնդին արժանի եղեալ կատարեցան սրով բարի խոստովանութեամբ 'ի Քրիստոս, աւանդեցին

զհողիս իւրեանց 'ի նոյն տեղւոջ. եւ սուրբ եւ վարդազոյն արիւնն գերկիր ոռոգանէր:

Իսկ շնորհալից Պարսիկ մի 'ի նոյն գնդէ արժանի եղեւ նոյն տեսեան, եւ գաղաղակ բարձեալ, թէ Եւ ես քրիստոնեայ եմ, որ առժամայն կատարեցաւ մկրտեալ յիւր արիւնն, եւ թուեցաւ 'ի գունդս սրբոցն 'ի տեսչութենէն Աստուծոյ: Իսկ մի ոմն թշուառացեալ 'ի գնդէն Հայոց փախստեայ անկանի առ հովիւ մի, եւ առեալ զհովուական մախաղն, կերպարանեալ գինքն ձեռով հովուին, փոխանակեալ գլուսեղէն պատմուճանն եւ գմշտնջենաւոր կեանսն ընդ գագրատեսիլ զգեստուն եւ ընդ առօրեայ կենացս. եւ Պարսիկն յօժարութեամբ դիմեալ 'ի տեղի կատարմանն, ընկալեալ յինքն գվճիւ մարտիրոսութեանն յուղարկեալ փոխանակ նորա ընդ սուրբ գնդին յերկնաւոր հարսանիսն. եւ նա որպէս ոմն որ վարատեցաւ երբեմն 'ի սրբոց Քառասնից դիմելով 'ի բաղանիսն, եւ գտեղի կոչման նորա վիճակի ելից բաղանեպանն. քանզի թոյլք եւ երկմիտքն յամենայն ժամ կորնչին:

Ապա յետ երկուց աւուրց տեսիլ երեւեալ 'ի գիշերին սրբոյ ճգնաւորին, զի յամենեցունց վերայ լոյս փայլեալ ծագէր հրաշալի եւ սքանչելի. որ մեծաւ զարմացմամբ 'ի վաղիւն փութով ազդ արարեալ եպիսկոպոսին եւ քահանայից, ազատաց եւ ամենայն ժողովրդոց, որք փութով անդր հասանէին. եւ 'ի սուրբ կտաւս զնշխարս սրբոցն ամփոփեալ մատուցին 'ի տեղի հանգստեանն իւրեանց՝ լապտերօք լուցելովք եւ բուր-

մամբ խնկոց, սաղմոսիւք, եւ երգօք հոգեւորօք հանդերձ հսկմամբ. եւ սօնախմբեալ գլխատակս նոցա մեծաւ ուրախութեամբ 'ի նաւասարդի ամսոյ ինն:

Արդ որք յայսմ տեղւոջ հանդիպեալք կատարեցան են այսոքիկ. գլխաւորն սուրբ Ատոմ որդւոյն իւրով յագգէն Գնունեաց, սուրբն Վարս յՈստան տանէ, սուրբն Ներսէզ յԱրուանթունի տանէ, սուրբն Վարձաւոր եւ այլ եւս բազմութիւն սուրբ ընկերացն որք նահատակեցան ընդ նոսա, եւ առին զպրսակս անապականս, որոց անուանքն գրեալ են 'ի դպրութիւն կենացն յաւիտենից:

Եւ սուրբն Մանածիհր ոչտունի իւր սուրբ ընկերօքն յառաջեալ 'ի սահմանս իւրն աշխարհին՝ կատարեցան 'ի տեղւոջն որ կոչի Ոչխարաց վանք. որ եւ ամփոփեալ զնշխարս սրբոցն, ոսկերք նոցա ծածկեալ կան յեկեղեցոջն որ 'ի բլրին: Այսպէս նահատակեալք արի եւ քաջ նահատակացն յամս Յազկերտի ամբարշտի Պարսից թագաւորի. որք արհամարհեցին զկեանս իւրեանց վասն անուան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. եւ զամբարտաւան թագաւորն հանդերձ խորհրդակցաւն իւրով սատանայիւ յամօթ արարին. զօրացեալք յԱստուած Հայր մեր, եւ 'ի տէր մեր Յիսուս Քրիստոս, եւ 'ի սուրբ Հոգին. որում փառք յաւիտեանս. ամէն:

ԹՒԱՄԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

(Շար. 5)

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻՆ ԱՌԱԿԸ*

Աբրահամ ըսաւ անոր. «Որդեա՛կ, յիշէ՛ քե ի՛նչպէս դուռն քու կեանքիդ ընթացքին ամէն բարիք վայելեցիր, մինչ Ղազարոս չարչարուեցաւ: Հիմա անիկա հոս կը հանգստանայ, մինչ դուռն հոն կը տառապիս» (Ղկ 16.25): Այս համարին վերաբերեալ քանի մը հաստատումներ-

1.- *Ուշագրաւ է որ յաւիտենական կեանքին պատկերը ներկայ կեանքին ճիշդ հակառակն է: Օրինակ, յաւիտենական կեանքին մէջ հեզ ու խոնարհ մարդիկն են որ պիտի յիշատակուին, իսկ մեր ներկայ երկրաւոր կեանքին մէջ հեզ ու խոնարհ մարդոց անունները չէ որ կ'արձանագրուին, այլ ընդհակառակը:*

Իսկական բարերարը կոտորած սիրտերը ուրախացնողն է, ուրիշին համար բարին կամեցողն է, ուրիշին փրկութեան համար աղօթողն ու աշխատողն է:

2.- *«Որդեա՛կ, յիշէ՛»: Աբրահամ մեծահարուստին կը պատուիրէ յիշել իր անցեալի կեանքն ու կենցաղակերպը, կարծէք անուղղակիօրէն իրեն հասկցնելու համար, որ ներկայ տանջանքը որուն մէջն է ինք, արդիւնքն է երկրի վրայ իր ապրած մեղսալից կեանքին:*

3.- *«Յիշէ՛»: Մեղաւոր մարդիկ երբ անզեղ կերպով կը բաժնուին այս աշ-*

խարհէն՝ դժոխքին մէջ, ամենա՛յն յստակութեամբ, ամենա՛յն պարզութեամբ եւ ամենա՛յն մանրամասնութեամբ կը յիշեն իրենց գործած մեղքերը, իրենց կատարած անօրէնութիւնները, ուրիշին պատճառած խոցոտումները: Եւ այդ յիշողութիւնն է որ զիրենք պիտի տանջէ ու այրէ: Մեղքը մահուան կ'առաջնորդէ, բայց ինք անմահ կը մնայ: Անմահ կը մնայ՝ յաւերթօրէն տանջելու համար իր ստրուկները:

4.- *«Յիշէ՛»: Մահէն յետոյ դժոխք նետուած կամ գալուստէն յետոյ գեհէն նետուած մարդոց ուղղուած հրաւէր մը պիտի ըլլայ՝ «Յիշէ՛»: Յիշէ՛ գործած մեղքերդ: Յիշէ՛ քեզի ուղղուած ապաշխարութեան կոչերը եւ քու մերժումներդ: Յիշէ՛ աղօթելու պատուէրները եւ քու անհնազանդութիւնդ: Յիշէ՛ Յիսուսի մահը քեզի համար եւ քու անտարբերութիւնդ: Յիշէ՛ Աստուծոյ հոգատարութիւնը եւ քու անհոգութիւնդ: Յիշէ՛ Աստուծոյ համբերութիւնը եւ քու ցուցաբերած յամառութիւնդ: Դատապարտուածին դժոխքը իր յիշողութիւնը պիտի ըլլայ:*

5.- *«Բու կեանքիդ ընթացքին ամէն բարիք վայելեցիր»:* *Կեանքի վայելքն ու երջանկութիւնը չեն կայանար համադամ կերակուրներ ուտելուն մէջ, ո՛չ ալ փառաւոր ու շողշողուն զգեստներ հագուելուն մէջ: «Ամէն բարիք վայելեցիր» բառերը ցոյց կու տան, որ մեծահարուս-*

* Շար. նախորդ թիւէն:

տը իր կեանքին վայելքը փառաւոր խնճոյքներուն եւ շքեղ հագուածքներուն մէջ կը տեսնէր: Այսպիսի մարդոց համար է որ Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Ձեր հարստութիւնը փտութիւն է, եւ ձեր հագուստները ցեցերու կեր են: Ձեր արծաթն ու ոսկին ժանգոտ են, եւ անոնց ժանգը ձեզի դէմ վկայութիւն պիտի ըլլայ եւ կրակի պէս լափէ ձեր մարմինները (ինչպէս հիմա կը լափէ մեծահարուստին մարմինը), քանի շուտով իր վախճանին մօտեցող այս աշխարհին մէջ դուք միայն այս գանձերը դիզեցիք» (Յկ 5.2-3):

6.- «Մինչ Ղազարոս չարչարուեցաւ»: Աբրահամ տեղեակ էր երկրի վրայ Ղազարոսին կրած տառապանքէն ու չարչարանքներէն: Այս բառերը կը պարզեն որ Աստուած ամէն բանէ տեղեակ է, ոչինչ կը վրիպի իր ուշադրութենէն, կը տեսնէ նեղութեան մէջ եղողները եւ գիտէ ու կը ճանչնայ թէ՛ իրաւագրկողները եւ թէ՛ իրաւագրկուածները, թէ՛ տառապողները եւ թէ՛ տառապեցնողները:

7.- «Հիմա անիկա հոս կը հանգստանայ»: Ղազարոս նախապէս կը տառապէր, իսկ հիմա «կը հանգստանայ»: Հոս գործածուած «հանգստանայ» բառը կը յիշեցնէ մեզի որ Քրիստոս իսկական եւ յաւիտենական հանգիստ մը վերապահած է իր սիրելիներուն համար, յատկապէս իր սիրոյն տառապողներուն ու չարչարողներուն համար:

8.- «Մինչ դուն հոն կը տառապիս»: Ուր որ տարուեցաւ մեծահարուստը՝ տանջանքի վայր էր հոն, նեղութեան վայր էր: Կարեւոր ճշմարտութիւն մը կայ հոս որուն պէտք է անդրադառնալ: Ղազարոսի համար կ'ըսուի թէ Աբրահամի քովն էր, իսկ մեծահարուստը առանձին էր, ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ «դուն» անձնական դերանունը: Ի՞նչն է այն ճշմարտութիւնը զոր կը պարզուի մեր դիմաց այստեղ: Մահէն յետոյ

դրախտ գացող կամ Քրիստոսի գալուստէն յետոյ արքայութիւն մտնող հաւատացեալները իրարու հետ պիտի ըլլան, իրարու հետ հաղորդակցութեան եւ քաղցր յարաբերութեան մէջ պիտի ըլլան, նոյնը չէ պարագան դժոխք կամ գեհէն նետուած մարդոց: Անոնք թէպէտ իրարու հետ պիտի ըլլան, բայց իւրաքանչիւրին տանջանքը ա՛յնքան սաստիկ պիտի ըլլայ, որ ինքզինք առանձին պիտի կարծէ այդ տառապանքին մէջ, եւ պիտի չկրնայ ու պիտի չուզէ հաղորդակցիլ կամ յարաբերիլ իրեն վիճակակից եղող այլ մարդոց հետ:

«Գիտցի՛ր նաեւ, որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ: Եթէ ուզեն այստեղէն ձեր մօտ անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ» (Ղկ 16.26): Կարեւոր ճշմարտութիւնը զոր այս համարը կը բացայայտէ, այն է՝ որ գեհէնէն արքայութիւն, կամ արքայութեանէն գեհէն անցնիլ չկայ եւ պիտի չըլլայ: Այս իրողութիւնը շեշտելը կարեւոր է, որովհետեւ, երբեմն մարդիկ զգացականութենէ տարուելով՝ կ'ըսեն. ժամանակ պիտի գայ երբ Աստուած պիտի խղճայ գեհէն նետուածներուն վրայ եւ գիրենք գեհէնէն դուրս բերելով՝ արքայութիւն պիտի ընդունի: Աբրահամին խօսքը սակայն ուղղուած մեծահարուստին՝ «Ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ», ամենայն յստակութեամբ ցոյց կու տայ, որ գեհէն նետուած մարդը՝ գեհէն պիտի մնայ յաւերժապէս, եւ մեծահարուստը մնաց:

Դատաստանէն ետք թէ՛ յաւիտենական կեանքը եւ թէ՛ յաւիտենական պատիժը անփոփոխական եւ յաւիտենական պիտի ըլլան: Քրիստոս խօսելէ ետք վերջին դատաստանին մասին, խօսքը կ'եզրակացնէ ըսելով. «Անոնք (մեղաւորները) պիտի երթան յաւիտենական պատիժի, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքի» (Մտ 25.46): Հոս թէ՛ պատիժը կոչուած է յաւիտենական եւ թէ՛ կեանքը: Եթէ մերժենք անոնցմէ մէկուն յաւիտենական ըլ-

լալը, պէտք է նաեւ մերժենք միւսին յաւիտենական ըլլալը: Եթէ դժոխքը կամ գեհնը յաւիտենական է, արքայութիւնն ալ ուրեմն յաւիտենական է: Արքայութիւնը սակայն յաւիտենական է, որովհետեւ հոն մտնող հաւատացեալին մեղքերը յաւիտենապէս ջնջուած են, եւ դժոխքը յաւիտենական է, որովհետեւ հոն նետուողներուն մեղքերը յաւիտենականօրէն պիտի մնան:

Ս. Յովհան Ոսկերեան կ'ըսէ. «Երբ ժամանակաւորէն յաւիտենականին անցնինք՝ ապաշխարութեան առիթ պիտի չըլլայ: Մեծահարուստը շատ բաներու համար տրամեցաւ բայց իր տրամութիւնը ոչինչով օգտեց իրեն»:

Ս. Ամբրոսիոս կ'ըսէ. «Մեծ անդունդ մը կայ Ղազարոսին եւ մեծահարուստին միջեւ, ուստի կարելի չէ անոնց վարձատրութիւնները փոփոխութեան ենթարկել»:

Ս. Օգոստինոս կ'ըսէ. «Աստուածային դատավիճակը պիտի չփոխուի, եւ արդարեալը նոյնիսկ եթէ ուզեն կարեկցիլ դատապարտուածներուն՝ պիտի չկրնան»:

«Մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ»: Ի՞նչ անդունդի մասին է խօսքը եւ ինչո՞ւ ատիկա կը կոչուի՝ մեծ: Կարելի է ըսել որ յիշեալ անդունդը նոյնինքն Աստուծոյ կամքն է: Աստուծոյ կամքը իբրեւ անդունդ մը, իբրեւ պատնէշ մը, իբրեւ պատուար մը, կը կանգնի արքայութեան եւ դժոխքին միջեւ: Այսինքն՝ թէ Աստուած չի կամենար որ կորուստի արժանի մարդը փրկուի կամ փրկութեան արժանի մարդը կորսուի: Ասիկա Աստուծոյ կամքին հակառակ է:

Կարելի է նաեւ ըսել որ այդ «մեծ անդունդը» Աստուծոյ խօսքն է: Եթէ Քրիստոս իր գալստեան ժամանակ պիտի փրկէ բոլոր մարդիկը, հակասութեան գաղափար մը կը յառաջանայ: Մենք Աստուածաշունչը կը դաւանինք իբրեւ անսխալական գիրք, ո՛չ միայն ո-

րովհետեւ ատոր մէջ սխալներ չկան, այլեւ որովհետեւ ատիկա Աստուծոյ Գիրքն է: Աստուծոյ այդ Գիրքն է, Աստուծոյ այդ խօսքն է, որ «մեծ անդունդ» իբրեւ, այլ խօսքով՝ մեծ արգելք, մեծ անցարգել իբրեւ պիտի կանգնի արքայութեան եւ դժոխքին եւ անոնց գաւակներուն միջեւ: Քանի Աստուած իր խօսքին մէջ թէ՛ դժոխքը եւ թէ՛ արքայութիւնը յաւիտենական կոչած է, մենք առանց առարկութիւն ընելու պէտք է ընդունինք զանոնք:

Մեծահարուստը ըսաւ. «Կաղաչեմ հայր, Ղազարոսը դրկէ իմ հօրս տունը, ուր հինգ եղբայրներ ունիմ. թող զանոնք մախազգուշացնէ՝ որպէսզի անոնք ալ տանջանքի այս վայրը չգան: Աբրահամ ըսաւ անոր.– Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն» (Ղկ 16:27-29): **Այս երեք համարներուն վերաբերեալ եւս քանի մը հաստատումներ.–**

1.- **Տուեալ համարներէն կարելի է քաղել պատասխան մը այն հոսանքին կամ այն մտածողութեան, ըստ որուն, այս կեանքէն բաժնուողները՝ անոնք ըլլան փրկուած թէ կորսուած, չեն կրնար տեղեակ ըլլալ երկրի վրայ պատահածներուն մասին:**

Աստուածաշունչը կը հերքէ նման մտածողութիւն: Կը տեսնենք որ մեծահարուստը տեղեակ էր իր հինգ եղբայրներուն երկրի վրայ ապրած ամբարիշտ կեանքէն, այսպէս ան Աբրահամին պիտի չըսէր. «Ղազարոսը դրկէ իմ հօրս տունը, ուր հինգ եղբայրներ ունիմ. թող զանոնք մախազգուշացնէ՝ որպէսզի անոնք ալ տանջանքի այս վայրը չգան»: Կը տեսնենք նաեւ որ Աբրահամը իբրեւ արդար մարդ, իրագեկ էր եւ լաւապէս գիտէր թէ մեծահարուստը երկրի վրայ եղած ատեն հանգիստ կեանք մը վարած էր, իսկ Ղազարոսը՝ տառապած ու չարչարուած էր:

Աբրահամին եւ մեծահարուստին

երկրի վրայ պատահածներէն տեղեակ ըլլալը, ինքնին ապացոյց մը չէ՞ որ արդարներն ու անարդարները իրագեկ են երկրային իրականութեանց: Թէպէտ անմիջապէս պէտք է ըսել, թէ՛ ո՛չ արդարները եւ ո՛չ ալ մեղաւորները ամէն բանէ տեղեակ կ'ըլլան, կամ ամէն բան կը տեսնեն, կամ ամէն բան գիտեն: Ամէն բան տեսնելն ու գիտնալը՝ յատուկ է Աստուծոյ:

Նոյն ձեւով կարելի է բացատրել Աբրահամին պատասխանը մեծահարուստին ուղղուած. «Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն»: Աբրահամ ի՞նչպէս գիտէր որ մեծահարուստին եղբայրները իրենց տրամադրութեան ներքեւ ունէին «Մովսէսի Օրէնքն ու մարգարէները», մանաւանդ երբ Աբրահամ Մովսէսէն շուրջ 600 տարի առաջ ապրած էր:

Քրիստոս տարբեր առիթով մը եւս անուղղակիօրէն ցոյց տուաւ որ մահուամբ այս աշխարհէն բաժնուող արդար մարդիկը կը տեսնեն երկրի վրայ պատահածները: Յիսուս հրեաներուն ուղղեց հետեւեալ խօսքը. «Աբրահամ՝ ձեր հայրը, ցանկաց աշխարհ գալստեսնել. տեսաւ եւ ուրախացաւ» (ՅՏ 8:56): Եթէ աշխարհէն բաժնուող արդար մարդիկը չեն տեսներ աշխարհին մէջ պատահածը, այդ պարագային, Աբրահամ ի՞նչպէս տեսաւ Քրիստոսի ծնունդը, երբ ինք Քրիստոսէ շուրջ 2100 տարի առաջ ապրած է:

Անոնք որոնք կ'ըսեն թէ մահուամբ այս աշխարհէն հեռացող փրկուած ու կորուսած հոգիները տեղեակ չեն երկրի վրայ պատահածներէն, իրենք իսկ միաժամանակ, կ'ըսեն թէ հրեշտակները եւս տեղեակ չեն եւ չեն կրնար ըլլալ, եւ իբր այդպիսին, անոնք բնականօրէն չեն կրնար բարեխօսել մեզի համար կամ որեւէ հարցի գծով օգնել մեզի:

Այն հոսանքները որոնք կը մերժեն սուրբերու կամ հրեշտակներու բարեխօ-

սութիւնը, կը հիմնուին նոյն այս աղքատ Ղազարոսի առակին վրայ՝ եւ կ'ըսեն. «Մեծահարուստը խնդրեց Աբրահամին բարեխօսութիւնը եւ Աբրահամ չպատասխանեց. ասիկա ինքնին ապացոյց մըն է որ անդեմական կեանքին պատկանողները չեն բարեխօսել կամ անընդունելի է անոնց բարեխօսութիւնը»: Նման տրամաբանութիւն կամ բացատրութիւն սխալ է, որովհետեւ մենք կը խօսինք դժոխք նետուած մէկու մը մասին: Դժոխք նետուած ու դատապարտուած մէկը չի կրնար սուրբի մը բարեխօսութիւնը խնդրել: Նոյնիսկ եթէ խնդրէ՝ իր խնդրանքը բնական է որ անպատասխան պիտի մնայ:

Աստուածաշունչին մէջ վկայութիւններ կան այն մասին, ըստ որուն հրեշտակները իրենք եւս կը տեսնեն երկրի վրայ պատահածները: Մտ 4:11-ին մէջ կը կարդանք. «Այն ատեն Սատանան ձգեց զինք ու հեռացաւ, եւ ահա հրեշտակները մօտեցան եւ կը ծառայէին Յիսուսի»: Այս հաստատումէն յտակ կ'երեւի որ հրեշտակները կը տեսնէին Սատանային կողմէ Յիսուսի առաջարկուած փորձութիւնները եւ Յիսուսի յաղթանակը: Երբ Յիսուս յաղթեց չարին՝ հրեշտակները եկան եւ սկսան ծառայել իրեն: Հոսկէ կը սորվինք որ մենք եւս երբ կը պայքարինք մեղքին դէմ եւ կը յաղթենք անոր՝ կը վայելենք հրեշտակներուն ընկերակցութիւնն ու ծառայութիւնը:

Մեր ուսումնասիրած առակը ինքնին կը փաստէ որ հրեշտակները կը տեսնեն մեր կրած նեղութիւնները եւ կը ճանչնան մեզ: Ասկէ առաջ տեսանք որ «աղբատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աբրահամի մօտ» (ՂԿ 16:22): Այս հաստատումը ցոյց չի տար որ հրեշտակները գիտէին Ղազարոսը եւ անոր կրած նեղութիւններն ու տառապանքը: Ինչպէ՞ս կրնան Աբրահամի գիրկը տանիլ մէկը որուն չեն ճանչնար:

Ուրեմն, հրեշտակները լաւապէս կը

ճանչնան մեզ եւ գիտեն թէ որո՞նք Աստուծոյ գաւակներն են եւ որո՞նք ոչ: Այլապէս, Քրիստոս անոնց պիտի չվստահէր աշխարհի աւարտին մարդոց ընտրութիւնը: Քրիստոս ըսաւ թէ աշխարհի կատարածին «իր հրեշտակները պիտի դրկէ, որոնք իր արքայութենէն պիտի հաւաքեն բոլոր անոնք որ գայթակղութեան պատճառ կ'ըլլան եւ չարիք կը գործեն, ու գանձով պիտի նետեն բոցավառ հնոցին մէջ, ուր պիտի լան եւ կրնտեն իրենց ատմաները» (Մտ 13:41-42): **Եթէ հրեշտակները լաւապէս չճանչնան մեզ՝ անոնք ի՞նչպէս կրնան բարի մարդը գատել չար մարդէն: Անոնց վստահուած գատելու գործողութիւնը, ինչպէս նաեւ մահուան ժամանակ անոնց գալը եւ հաւատացեալներուն հոգիները դիմաւորելը կենդանի ապացոյց են որ անոնք մեզ շատ լաւ կը ճանչնան:**

Ղկ 15:10-ին մէջ կը կարդանք. «Աստուծոյ հրեշտակները պիտի ուրախանան մեղաւորի մը համար որ կ'ապաշխարէ»: **Հրեշտակներուն ուրախանալը դարձի եկող մեղաւորներուն համար, ցոյց չի՞ տար որ անոնք կը տեսնեն մեղքին դէմ մղած մեր պայքարը, Աստուծոյ հաւատարիմ մնալու մեր ջանքը, եւ փրկութեան մեր փափաքը: Բայց անոնք ո՛չ միայն փրկութեան մեր փափաքին ակառատեսներն են, այլեւ՝ մեր փրկութեան համար աշխատանք տանողներն են: Ասոր փաստը կը գտնենք Երբայեցիներուն նամակին մէջ, ուր Պօղոս առաքեալ կ'ըսէ.** «Հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր 1:14): **Կարելի՞ բան է որ անոնք օգնեն մեզի առանց ճանչնալու մեզ: Յստակ է որ կը ճանչնան մեզ, որովհետեւ անոնք բոլորին չէ որ կ'օգնեն, այլ միայն «անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն»:** **Տակաւին շատ համարներ կարելի է մէջբերել եւ անոնց մասին խօսիլ. համարներ՝ որոնք ցոյց կու տան թէ հրեշտակներ տե-**

ղեակ են երկրաւոր իրադարձութեանց, (տե՛ս օրինակ՝ Ղկ 2:11-12: Յյտ 8:3-4: Ղկ 22:43: ՅՀ 5:4):

2.- Որո՞նք են հոս յիշուած հինգ եղբայրները որոնք կարիքը ունին Մովսէսի եւ մարգարէներուն: Ս. Գրիգոր Նարեկացի կը հաստատէ թէ այս հինգ եղբայրները կը ներկայացնեն մարդ արարածին հինգ զգայարանքները: Նոյն կարծիքին է Ս. Յովհան Ոսկերեան Հայրապետ. ան կ'ըսէ. «Հինգ եղբայրները կը խորհրդանշեն հինգ զգայարանները որոնք տակաւին չեն սրբացած քանի որ այս աշխարհին մէջ կ'ապրին հաճոյքներով լի կեանք մը: Եթէ այդ հինգ զգայարանները մեռնին Քրիստոսի հետ՝ Քրիստոսով կը սրբանան: Հինգ զգայարանները մարդուն հինգ եղբայրներն են: Ան որ աշխարհային ցանկութիւններու եւ հաճոյքներու մէջ կ'ապրի, կը կորսնցնէ իրեն ամէնէն մօտիկ հինգ եղբայրները, այլ խօսքով՝ իր հինգ զգայարանները»:

Ս. Օգոստինոս եւս հետաքրքրական բացատրութիւն մը կու տայ «հինգ եղբայրներ» բառերուն վերաբերեալ: **Ան կ'ըսէ.** «Հինգ եղբայրները կը ներկայացնեն հրեաները, որովհետեւ ապրեցան Մովսէսի հինգ գիրքերուն օրէնքներուն տակ. անոնք չեն կրնար ընդունիլ մեղքներէն յարութիւն առած Յիսուսը, այնքան ատեն երբ չեն ընդունիր Մովսէսի Օրէնքն ու մարգարէութիւնները հոգեւոր իմաստով մը»:

3.- Մեծահարուստը Արբահամէն կը խնդրէ որ Ղազարոսը դրկէ իր հօրը տունը նախագգուչացնելու համար իր հինգ եղբայրները, որպէսզի անոնք ալ տանջանքի նոյն վայրը չգան: Հետաքրքրական է իր ունեցած գութը իր եղբայրներուն նկատմամբ, թէպէտ անգուժ էր Ղազարոսի նման աղքատ ու թշուառ մարդոց հանդէպ: Ս. Ամբրոսիոս կ'ըսէ. «Մեծահարուստը անգութ եւ ժլատ մէկն էր, որովհետեւ ան իր հարստութենէն բա-

ժին չհանեց աղփատներուն, հակառակ ասոր, սակայն, ան որոշ գորով մը ունէր իր հինգ եղբայրներուն հանդէպ, եւ այս գորովը մնաց նոյնիսկ իր մահէն ետք, բայց անկարողութեամբ յատկանշուած գորով մըն էր, գործնական գետնի վրայ ոչինչ կրնար ընել, որովհետեւ գործի ժամանակը այլեւս խլուած էր իր ձեռքէն: Ան կ'ուզէր իր եղբայրներուն փրկութիւնը, բայց անգամ մը որ իր փրկութիւնը կորսնցուց, ալ չէր կրնար Աստուծոյ ներկայութեան կանգնելով աղօթել: Այլ խօսքով, մէկը որ իր փրկութիւնը կորսնցուցած է, ի՞նչպէս կրնայ փրկութիւն խնդրել ուրիշներուն համար»:

4.- *Մեծահարուստին դժոխք նետուելէ ետք յանկարծ եղբայրներուն մասին մտածելը եւ անոնց հանդէպ գուժ ու գորով ցուցաբերելը կարեւոր բան մը կը սորվեցնէ մեզի: Մեծահարուստը հիմա կը պատժուէր բայց չէր ուզեր հետագային իր եղբայրները նոյն այս պատիժին ենթակայ ըլլան: Եթէ առիթը ընծայուէր իրեն՝ վստահաբար շատ բան պիտի պատմէր իր եղբայրներուն, պիտի խրատէր անոնց, եւ պիտի յորդորէր փոխել իրենց կեանքի ընթացքը: Որքա՛ն յաճախ փորձութիւններու մէջ ինկած ու դժուարութիւններէ անցած մարդիկ, հիմնուելով իրենց փորձառութեան վրայ, կը խրատեն, կը յորդորեն ու կը զգուշացնեն իրենց նմանները, բայց քիչեր միայն ուշադրութիւն կը դարձնեն անոնց ըսածին: Խոհեմութիւն եւ խմսատութիւն է ուրիշներու փորձառութեանն օգտուելը:*

5.- *Հիմա որ մեծահարուստը պատիժի ենթակայ է՝ կ'անդրադառնայ իր սխալին, բայց ի գուր, ոչինչ կրնայ ընել, ոչինչ կրնայ կացութենէն փոխել: Ժողովուրդը կ'ըսէ. «Բանը բանէն անցաւ»: Երբ «բանը բանէն» անցնի՝ ողբալը օգուտ մը չ'ընէր: Չսպասենք տապալիլ եւ յետոյ գիտակցութեան գալ: Մեծն Գրի-*

գորիտո կ'ըսէ. «Երբեմն չար մարդիկ երբ պատիժի ենթակայ ըլլան՝ իրենց սրտին մէջ որոշ սէր մը յառաջ կու գայ, բայց գուր սէր մը կ'ըլլայ ատիկա...», քանի որ կապուած են իրենց մեղքերուն եւ չեն սիրեր իրենք զիրենք»: Յաւտենական պատիժի ենթարկուելէ ետք՝ զղումի, սիրոյ եւ գթութեան զգացումով լեցուիլը մեզ չեն կրնար փրկել:

6.- *«Ղազարոսը դրկէ իմ հօրս տունը»: Ինչո՞ւ մեծահարուստը Աբրահամէն խնդրեց որ Ղազարոսը դրկէ իր եղբայրներուն մօտ որպէսզի վկայութիւն տար անոնց, փոխանակ խնդրելու որ զինք դրկէ: Այս հարցումին կը պատասխանէ Ս. Օգոստինոս եւ կ'ըսէ. «Մեծահարուստը չխնդրեց Աբրահամէն զինք դրկել իր եղբայրներուն մօտ, որովհետեւ զգաց եւ անդրադարձաւ որ ինք արժանի չէր նշարտութեան վկան ըլլալու: Մէկը որ իր խնդրած կաթիլ մը ջուրը չկրցաւ ձեռք ձգել, բնականօրէն պիտի չակնկալէր որ իրեն արտօնուէր դուրս գալու դժոխքի խորխորատէն՝ նշարտութիւնը քարոզելու համար ուրիշներուն»:*

7.- *«Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն»: Մեծահարուստը կը խնդրէ Աբրահամէն Ղազարոսը դրկել իր եղբայրներուն մօտ, իսկ Աբրահամ չեչտը կը դնէ Աստուծոյ խօսքին վրայ ըսելով. «Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին»: Աբրահամին այս խօսքը, առաջին, ցոյց կու տայ որ Աստուծոյ հնազանդ մարդուն համար Աստուծոյ խօսքը՝ Աստուածաշունչը առաջնահերթ պէտք է ըլլայ: Պէտք չէ խնդրել Աստուծոյ կամ պէտք չէ սպասել որ Աստուած մեռելներու աշխարհէն մէկը դրկէ՝ վկայութիւն տալու համար մեզի՝ որպէսզի հաւատանք: Որքա՛ն յաճախ լսած ենք մարդոցմէ հետեւեալ արտայայտութիւնը.- «Ո՞վ դժոխքէն կամ դրախտէն եկած ու պատմած է,*

որպէսզի հաւատանք»: Հաւատացեալ մարդը այսպիսի բան չի կրնար ըսել կամ հարցնել: Հաւատացեալ մարդը պէտք է կուրօրէն հաւատայ Աստուածաշունչին մէջ գրուածին եւ չսպասէ կամ չպահանջէ որ Աստուած դրախտէն կամ դժոխքէն մէկը դրկէ իրեն՝ վկայութիւն տալու: Վկայութիւն տուողը Աստուածաշունչը ինք պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ մեռելներու աշխարհէն եկող մէկը: Ինչ որ Աստուածաշունչը ըսած է դրախտին կամ արքայութեան, դժոխքին կամ գեհնին մասին, պէտք է ընդունիլ առանց առարկութիւններ ընելու: Աստուածաշունչը չէ գրուած որպէսզի սրբազրուի մեր կողմէ, այլ որպէսզի ինք մեզ սրբազրէ:

Երկրորդ, ի՞նչ ըսել ուզեց Աբրահամ երբ ըսաւ. «Թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն»: Ան ըսել ուզեց, որ Աստուածաշունչին պատուիրանները գործադրող մարդը, պէտք չունի տեսնելու մեռելներէն յարութիւն առնող մէկը որպէսզի հաւատքի գայ: Աստուածաշունչը ինք կրնայ հաւատք արթնցնել մեր ներսիդին, եթէ մենք փնտռողն ենք այդ հաւատքին: Նոյն վկայութիւնը կու տայ հաւատքի առաքեալը՝ Պօղոս. «Հաւատքը ծնունդ կ'առնէ քարոզութիւնը լսելէն. իսկ քարոզութիւնը հաւատք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են որ կը քարոզուին» (Հռ 10.17): Հետեւաբար, մեր ներսիդին հաւատք արթնցնողը, մեզ դարձի բերողը, մեր քայլերը ուղղողը՝ Աստուծոյ Խօսքն է եւ ո՛չ թէ անդենա-

կան կեանքէն եկող մը:

Երրորդ, մեծահարուստին խնդրանքը՝ Ղազարոսը իր եղբայրներուն մօտ դրկելու որպէսզի «գանձի մախազգուշացնէ», եւ Աբրահամին յորդորը՝ թող Աստուածաշունչին պատուիրանները գործադրեն, ամենայն յստակութեամբ կը ցուցնեն թէ Աստուածաշունչը մեզ նախագգուշացնող Գիրք մըն է, արթնցրող Գիրք մըն է, գգաստացնող Գիրք մըն է:

Ո՛չ մէկ անհաւատ կրնայ արդարաւնայ Աստուծոյ առջեւ այնքան ատեն երբ Աստուածաշունչը գոյութիւն ունի: Ո՛չ ոք ո՛չ մէկ հարցի գծով պիտի կարենայ առարկութիւն ընել երբ Աստուծոյ ներկայութեան կանգնի, քանի որ Աստուածաշունչը ամէն տեսակ հարցի գծով ըսելիք ունի ուղղակի թէ անուղղակի կերպով, կը բաւէ որ կամեցողութիւնը ունենանք գայն բանալու, կարդալու, սերտելու, եւ մանաւանդ, ապրելու: Անոնք որոնք կը ջանան ապրիլ Աստուածաշունչը, կը սիրեն զԱստուած, կը փնտռեն Տէրը եւ ճշմարտութիւնը՝ անոնք վերահասու կ'ըլլան ճշմարտութեան եւ «ամէն բան կը հասկնան» (Առ 28.5) եւ կարիքը չեն գգար հանդիպելու եւ լսելու անդենական կեանքէն անձի մը՝ որպէսզի գօտեպնդուին իրենց հաւատքին մէջ:

ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 5)

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱԲԱՏՔԸ
ՄԵԿՆՈՒԹԻՒԻՆ «ՀԱԲԱՏԱՄՔ»Ի***

«ՅԵՐՐՈՐԴ ԱՒՈՒՐ ՅԱՐՈՒՑԵԱԼ,
ԵԼԵԱԼ Ի ՅԵՐԿԻՆՍ ՆՈՎԻՆ ՄԱՐՄՆՈՎՆ՝ ՆԱՏԱԻ ԸՆԴ ԱԶՄԷ ՀՕՐ»

Այս բաժինը յարույթեան խորհուրդին նուիրուած է, ինչպէս առաջին իսկ տողերը մեզի ցոյց կու տան: «Յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր»:

Քրիստոնէական հաւատքը կը հիմնուի բացարձակապէս յարույթեան իրականութեան վրայ: Վերցուցէք Քրիստոսի յարույթիւնը, քրիստոնէական հաւատք գոյութիւն չունենար: Մեր հաւատքը հիմնականին մէջ վարդապետութիւն մը չէ, ուսուցում մը չէ, յայտարարութիւններու եւ ծանօթութիւններու գումար մը չէ, այլ հիմնուած է անձի մը վրայ, այդ անձը Յիսուս Քրիստոս Ինքն է, եւ հիմնականին մէջ այդ փրկութիւնը որովհետեւ մարդեղութեամբ կը սկսի եւ յարույթեամբ իր պսակումը կը ստանայ, ամբողջ փրկագործութեան մերժումը կ'ըլլայ, եթէ մենք այդ յարույթիւնը ջնջենք: Ճիշդ անոր համար է, որ Քրիստոս ինք իր աշակերտներուն պաշտօն տուաւ վկայ ըլլալու իր յարույթեան:

Առաքեալները իրենք ալ առաքեալ չեղան, որքան ատեն որ տակաւին Քրիստոսի յարույթիւնը չկար. յարույթեան առաջ իրենց հաւատքը խախտու էր, բայց

յարույթեան էտք որովհետեւ հիմնուեցան Քրիստոսի ճշմարիտ ինքնութեան վրայ, դարձեալ իսկական առաքելական հաւատք, որ դէպի աշխարհ գացող կրակէ լեզուներու պէս, առաջին մէկ-երկու դարերուն, պիտի լափէր Հռոմէական կայսրութիւնը եւ գայն եզերող միւս աշխարհները:

Գործք Առաքելոց գիրքին առաջին գլուխին մէջ կը տեսնենք իրողութիւն մը, Համբարձումէն անմիջապէս ետք երբ տասնմէկ աշակերտները իրենք ուզեցին իրենց խորհրդական այդ տասներկու թիւը լրացնել, ի՞նչ առաջադրանք դրին, ի՞նչ էր իրենց մտածողութիւնը կամ ինչպէ՞ս խորհեցան եւ ուզեցին մէկը ընտրել, ո՞վ պիտի ըլլար ընտրեալը: Երբ այստեղ կան մարդիկ որոնք միշտ մեզի հետ եղած են, Յիսուսի երկրաւոր առաքելութեան ամբողջ տեսողութեան, Յովհաննէսի ձեռքով անոր մկրտութենէն, մինչեւ երկինք համբարձման օրը, ասոնցմէ մէկը պէտք է որ տասնմէկիս միանայ, Քրիստոսի յարույթեան վկայ ըլլալու համար: Առաքելութիւնը այդ էր: Մեր հաւատքը կը ջնջուի եթէ յարույթիւնը ջնջենք, ինչպէս Պօղոս առաքեալ շատ զեղեցիկ կերպով կ'ըսէ. «Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՝ զուր է մեր քաղաքութիւնը, զուր է նաեւ ձեր հաւատքը»:

* Շար. նախորդ թիւէն:

(Ա.Կր 15:14): Մեր հաւատքի շէնքը կը կանգնի յարուժեան ժայռին վրայ:

Մեր հաւատքի խոստովանութիւնը կը սկսի «Յրրորդ օրը յարութիւն առաւ» նախադասութեամբ:

Քրիստոս ինք բազմաթիւ անգամներ ըսած էր, թէ ինք «Յրրորդ օրը» յարութիւն պիտի առնէ մահուանէն ետք. իսկ ուրիշ քանի մը առիթներով ըսաւ թէ սպանութենէն «Երբք օր ետք» անիկա յարութիւն պիտի առնէ: «Յրրորդ օրը», եւ «Երբք օր ետք». այս բացատրութիւնը կրնայ մեզի անկարեւոր թուիլ կամ ձեւական. բայց ոմանք անոր վրայ հիմնուած, լուրջ աւարկութիւններ կը փորձեն ընել: Կ'ըսեն, արդեօք երեք օր ետքը պէտք չէ՞ որ ըլլար Քրիստոսի յարութիւնը, մինչդեռ հիմակուան հաշուով, եթէ Ուրբաթ կէսօրէ վերջէն Շաբաթ գիշեր առնենք, երեք օր չունինք, մինչդեռ Քրիստոս «երեք օր ետք» ըսաւ: Հետեւաբար այդ երեք օր ե՞տք բացատրութեան վրայ պէտք է կենանք, թէ երրորդ օրը բացատրութեան վրայ. ո՞ր մէկն է ճշմարիտը:

Ասիկա առաջին հարցը կը դնէ. ե՞րբ խաչուեցաւ Քրիստոս, որովհետեւ ոմանք այդ ալ խնդրոյ առարկայ կը դարձնեն. ե՞րբ թաղուեցաւ, եւ հետեւաբար ե՞րբ տեղի ունեցաւ նաեւ յարութիւնը: Եթէ տոմարագէտներուն վստահինք, անցեալին ալ մեր եկեղեցական հայրերուն մէջ նշանաւոր մարդիկ կային, որոնք օրացոյցի մասնագէտ էին, տոմարագէտ էին: Անոնք իրենց հնագոյն հաշուումներով կ'ըսեն որ, այն տարին որ Քրիստոս խաչուեցաւ, 30 թուականին Ք. Ե., Չատիկը կու գար Հինգշաբթի օր, եւ արդէն բոլոր Աստուածաշնչական տուեալներն ալ, Նոր Կտակարանի տուեալները կու գան նոյն բանը հաստատել: Եթէ Հինգշաբթի էր ամսուն 14-ը մեր ներկայ հաշուումով Հինգշաբթի ցերեկն էր, իրենց Չատիկը կը սկսէր Նիսանի 15-ին: Բայց Հրէական հաշուումով ամէն մէկ օր կը սկսէր ոչ

թէ կէս գիշերին, այսօրուան ժամացուցային օրուան հասկացողութեամբ, ոչ ալ կը սկսէր առաւօտ կանուխ, ինչպէս ոմանք օրը կրնան հաշուել, այլ կը սկսէր երեկոյէն. իրիկուան ժամը վեցին կը սկսէր օրը եւ մինչեւ յաջորդ իրիկուան ժամը վեց կ'երկարէր:

Անոր համար ալ երբ կարդաք ստեղծագործութեան դրուագը, այնտեղ առաջին բանը որ մեր ուշադրութեան կը հանդիպի, կը տեսնենք որ կ'ըսուի՝ «Եւ գիշեր ու ցերեկ կազմեցին մէկ օր», նախ գիշերը կը յիշուի, յետոյ ցերեկը ատիկա հետեւաբար Եբրայական հաշուերու կերպն էր: Հինգշաբթի երեկոյեան կը սկսէր իրենց ամսուն 15-ը եւ բուն Չատիկի տօնը, գառնակները մորթուած կ'ըլլային արդէն եւ հագիւ երեկոն կը սկսէր պէտք էր իրենք նստէին ընթրիքի սեղան, այն հանդիսաւոր ընթրիքը կատարելու, որ Եգիպտոսէն ելքի, իրենց ազատագրութեան յիշատակը պէտք էր ըլլար:

Քրիստոսի վերջին ընթրիքը, եթէ այդ իրենց ազատագրութեան տօնի գատկական ընթրիքն էր, ուրեմն տեղի ունեցաւ Հինգշաբթի երեկոյէն անմիջապէս ետքը, երբ հագիւ սկսած էր մ'իջնալ: Աւետարանական պատումները կ'ըսեն, հագիւ ընթրիքը վերջացուցին, ելան գացին Գեթսեմանիի պարտէզ, ուր տեղի ունեցաւ ձերբակալութիւնը, յետոյ այդ գիշեր դատավարութիւնը, ձաղկումը, չարչարանքները, եւ բոլորը տեղի ունեցան նոյն Հինգշաբթի գիշերը, առաւօտուն, Ուրբաթ առաւօտ եղաւ վերջին դատաստանը, այս անգամ Պիղատոսի ատեանին մէջ, իրենք արդէն մահուան վճիռը տուած էին իրենց Հրէական ատեանին մէջ, եւ ժամը իննին Քրիստոս խաչ բարձրացաւ, խաչելութիւնը տեւեց երեք (վեց) ժամ, այնպէս ինչպէս կ'արձանագրեն Աւետարանները, ժամը իննէն մինչեւ կէսօրէ ետք ժամը երեք: Առաջին երեք ժամերը ըստ երեւոյթին այսպէս կոչուած լոյսի ժամերն էին, իսկ

երկրորդ երեք ժամերը խաւարման պահերն էին, երբ որ խաւարում եղաւ եւ երեք ժամ խաւարը մնաց, ինչպէս կ'ըսեն Աւետարանները: Հետեւաբար այդ երեք ժամերու աւարտին էր որ իր հոգին աւանդեց, մահուընէն կարճ ժամանակ մը ետքը:

Ճշգրիտ չենք գիտեր որքան շուտ կարգադրութիւնները եղան թաղման, մինչեւ Պիղատոսի գացին արտօնութիւն առնելու համար, ան զարմացաւ թէ այնքան շուտ մեռած է, հարիւրապետը կանչեց ստուգել տուաւ, եւ երբ որ ստուգեց, մարմինը շնորհեց Յովսէփ Արիմաթացիին, որպէսզի թաղուի: Հապճեպով պատանքեցին մարմինը, ինչ որ պատրաստած էին արագ կերպով կատարեցին: Եւ այդպէս ալ երեկոն չսկսած, այլ խօսքով Շաբաթ չմտած, արդէն թաղումը կատարուած էր: Յաջորդ լման օրը, ամբողջ Շաբաթ օրը դար է, լուութիւն է մեզի համար: Իրենց համար ալ մեծ տօն մըն էր: Իսկ Շաբաթ երեկոյեան, երեկոն սկսելէն ետքը, Մէկշաբթին կամ Կիրակին երբ որ սկսած էր, ճիշդ պահը մեզի ըսուած չէ, տեղի ունեցաւ յարութիւնը Քրիստոսի: Որովհետեւ եթէ Աւետարանական դրուագին հետեւինք, օրինակ Մատթէոսի պատմածին, կ'ըսէ որ Շաբաթ երեկոյեան երբ որ Կիրակին պիտի լուանար, կիները գերեզման եկան: Կիներուն գերեզման գալը ե՞րբ եղաւ, արդեօք առաւօտ կանո՞ւխ, թէ իրիկունը, այսինքն հազիւ իրենց Շաբաթը լմնցաւ, իրենք իրենց պատրաստածները առին եւ գերեզման վագեցին, պարտականութիւն մը կատարելու համար: Բայց, կ'ըսէ, չհասան, որովհետեւ այնտեղ երբ հասան արդէն գերեզմանը բացուած գտան:

Ուրեմն Շաբաթ գիշեր արդէն յարութիւնը տեղի ունեցած էր: Ոմանք հետեւեալ առարկութիւնը կ'ընեն, անոր համար որ եթէ «երեք օր ետք» բացատրութիւնը պիտի առնենք, կ'ըսեն, որ այդ երեք օրը լման պէտք է անցած ըլլայ,

մինչդեռ Քրիստոսի յարութեան պարագային մենք անոր կատարումը չենք տեսներ:

Տակաւին ուրիշ հարց մը: Մատթէոսի Աւետարանին 12-րդ գլուխին մէջ, առիթով մը երբ Քրիստոս կը խօսէր ժամանակակիցներուն, եւ անոնք իրմէ նշան պահանջեցին, որպէսզի հաւատան, ըսին, մեզի նշան մը ցոյց տուր երկինքէն: Քրիստոս ալ ըսաւ ձեզի ուրիշ նշան պիտի չարուի եթէ ոչ միայն Յովնանի նշանը, «Ինչպէս Յովնան երեք օր ցերեկ ու գիշեր կէտ ձուկի փորին մէջ մնաց, նոյնպէս ալ Մարգու Որդին երեք օր, ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի ընդերքին մէջ» (Մտ 12:40): Այս բացատրութիւնը կարծէք կը շեշտէ երեք օր ու գիշեր, որ կը նշանակէ երեք լման օր պէտք էր երկրին մէջ մնար, այլ խօսքով՝ թաղուած մնար: Եթէ Ուրբաթ կէսօրէ ետքէն պիտի հաշուենք մինչեւ Շաբաթ գիշեր, երեք օր չկայ, անոր համար ոմանք կ'ուզեն տեղափոխել Քրիստոսի վերջին ընթրիքը, խաչելութիւնը, ըսելով օրինակ, որ հաւանաբար Քրիստոս այդ տարուան սովորական Ջատկուան օրը չկերաւ վերջին ընթրիքը, այսինքն իր ժողովուրդին միւս գաւակներուն հետ չէր որ ըրաւ վերջին ընթրիքը, կամ Ջատկական ընթրիքը, այլ երկու օրեր առաջ, Երեքշաբթի իրիկուն կատարեց եւ Չորեքշաբթի գիշերը եղաւ իրեն համար չարժանքի գիշերը, Հինգշաբթի եղաւ խաչելութիւնը. եւ այս ձեւով Հինգշաբթին, Ուրբաթը, Շաբաթը, լման երեք օր ու գիշեր կ'ուզեն հաշուել:

Որքան ալ որ առաջին հերթին տրամաբանական թուի եւ մեզ փորձութեան մատնէ այս տեսութիւնը, նախ Աստուածաշնչական չէ, երկրորդ չի՛ յարգեր ժամանակակից Հրէական մտածողութիւնը, որովհետեւ ժամանակակից Հրէական մտածողութեան մէջ «երրորդ օր» բացատրութիւնը տարբեր կերպով կը գործածուի, եւ ասոր վկայութիւնը մենք Աստուածաշունչին մէջ ունինք: Ծննդոց

գիրքէն սկսեալ բազմաթիւ օրինակներ ունինք, այս բացատրութեան գործածած երրորդ օրը, որ ցոյց կու տայ ոչ թէ երեք օրեր, այլ ցոյց կու տայ առաւելագոյնը երկու օր եւ երրորդ օրուան սկիզբին արդէն պայմանաժամը լմնցած կ'ըլլայ: Օրինակ պահ մը այսօրուան մեր կացութեամբ հիմա առնենք, եթէ ես հիմա ըսեմ որ երեք օրէն մենք այսինչ բանը պիտի կատարենք, կամ երրորդ օրը, այս իրիկունը կը հաշուեմ մէկ օր, վաղը կը հաշուեմ երկու օր, միւս օրը կ'ըլլայ երրորդ օրը, քանի՞ օր հաշուած կ'ըլլամ սակայն եթէ օրացուցային կամ ժամացուցային հաշուով շարժիմ, մէկ ու կէս օր հաշուած կ'ըլլամ, որովհետեւ միւս օրը առտու եթէ նկատի առնեմ հազիւ մէկ ու կէս օր կ'ըլլայ:

Աստուածաշունչին մէջ բազմաթիւ են գործածութիւնները, որոնք մեզի ատիկա ցոյց կու տան: Հետեւաբար ճիշդ չէ այն հաշուումի եղանակը, որով ոմանք արուեստականօրէն կը փորձեն առնել, մանաւանդ որ թէ՛ Աւետարանները յստակ օրերով կը խօսին մեզի, եւ թէ՛ միւս կողմէ պէտք չէ երբեք արհամարհել եկեղեցիներու հնագոյն աւանդութիւնը: Բոլոր եկեղեցիներուն համար ալ առաջին իսկ շրջանէն, յարութիւնը մեծագոյն տօնն էր, եւ առաջին միակ տօնն էր: Սկզբնական շրջանին եկեղեցիները ուրիշ տօն չունէին, ոչ Մնունդ կար, ոչ Այլակերպութիւն կար: Միակ եւ առաջին տօնը որ առաջին օրէն կը կատարէին եկեղեցիներ, Յիսուսի յարութեան յիշատակն էր. եւ շուտով նաեւ ատիկա իրենց ծիսական կեանքին մաս կազմեց:

Այս օրի հարցը փակելու համար, ասոր մէջ նաեւ կայ մարգարէական տուեալ մը, այլ խօսքով՝ այս երրորդ օրը բացատրութեամբ կը կատարուէր նաեւ այն ինչ որ Ովսէէ մարգարէն իր (6.12) մէջ մեզի կ'ըսէ: Այնտեղ Մեսիայի չարանքներու մասին եւ մեր փրկագործութեան ակնարկութեամբ հետեւեալը

կ'ըսէ, «Եկէ՛ք Տիրոջ դառնանք, որովհետեւ ինքը պատանեց, այսինքն բզկտեց, եւ ինքը պիտի բժշկէ մեզ. ինքը զարկաւ եւ ինքը պիտի փաթթէ մեզ: Երկու օր ետքը պիտի կենդանացնէ: Երրորդ օրը մեզ ուրիշ պիտի կանգնեցնէ եւ անոր առջեւ պիտի ապրինք», ճիշդ Փրկչին նմանողութեամբ մեր հոգեւոր վերականգնումին կամ յարութեան մասին կ'ըսէ, «Երկու օր ետքը», յետոյ կ'ըսէ «Երրորդ օրը», որ կը նշանակէ թէ երկու օր ետքը եւ երրորդ օրը համազօր, նոյնանշանակ երկու բացատրութիւններ են:

Երկրորդ, յարութեան իրականութեան երբ գանք, որոշապէս կ'անդրադառնանք որ յարութիւնը պարզ դէպք մը չէ Քրիստոսի կեանքին մէջ: Քրիստոս իր կեանքին մէջ բազմաթիւ նշաններ ցոյց տուաւ, բազմաթիւ գործեր կատարած էր, այդ գործերուն մարդիկ չհաւատացին, եւ հիմա իբրեւ գերագոյն նշան եւ գերագոյն հրաշք, կու տայ իր յարութիւնը:

Յարութեան այս իրողութիւնը առաջին իսկ դարէն տեղ գտած է այն հաւատքի դաւանութեանց մէջ, որոնք արդէն առաքելական շրջանէն ծնունդ առին, եւ անոնցմէ առաջինը մենք կը գտնենք Առաքելական նամակներուն մէջ: Այսպէս, երբ կարդանք Պօղոս առաքեալի Կորնթացիներուն առաջին նամակը, անոր (15.3-7) համարէն սկսեալ, այնտեղ ան տեսակ մը առաջին խմբագրութիւնը կը կատարէ այդ Հաւատամքին, հետեւեալ բառերով, «Ես ձեզի փոխանցեցի այն հաւատքը որ նախ քան ընդունեցի. այն՝ որ Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ, ինչպէս Սուրբ Գիրքերը կ'ըսէին, թաղուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ, դարձեալ Սուրբ Գիրքերուն համաձայն, եւ երեցաւ Պետրոսին եւ ապա տասներմէկ առաքելներուն: Յետոյ երեցաւ միատեղ խմբուած հինգ հարիւրէ անլի հետեւորդներու. թէպէտ ասոնցմէ ոմանք մեռած են հիմա, բայց շատերը ողջ են տակաւին: Այնուհետեւ երեցաւ Յակոբ

բուսին եւ ապա բոլոր առաքեալներուն»:

Առաջին վկայութիւնները կը խմբէ եւ նաեւ կը թուէ ոչ միայն երեւումները առաքեալներուն, այլ նաեւ հինգ հարիւրէ աւելի եղբայրներու, Քրիստոս ուրեմն նեղ շրջանակի մը մէջ չէր որ միայն ինքզինք ցոյց տուաւ:

Իր ամբողջ առաքելութեան ընթացքին բազմաթիւ անգամներ, բազմաթիւ առիթներով Քրիստոս խօսեցաւ իր յարութեան մասին, մասնաւորաբար որոշ հանգրուանէ մը ետքը, սկսաւ յատուկ կերպով իր աշակերտներուն միտքը պատրաստել, ըսելով որ ժամանակ պիտի գայ, երբ Մարդու Որդին պիտի յանձնուի իր ժողովուրդի ղեկավարներուն ձեռքը, որոնք զինք չարչարանքներու եւ մահուան պիտի ենթարկեն, բայց երրորդ օրը յարութիւն պիտի առնէ: Երեք տարբեր հանգրուաններով, երեք տարբեր անգամներ այս յայտնութիւնը կատարեց անոնց: Յստակ է, որովհետեւ մէկ անգամը զիրենք անակնկալի պիտի բերէր, եւ թերեւս անիրական որպէս բան մը առնէին. մինչդեռ ինք կ'ուզէր իր աշակերտներուն, ինչպէս նաեւ իր ժողովուրդի մտայնութեան մէջ ճշդում մը կատարել այն չարչարուող ծառային եւ Մեսիային, որու մասին Եսայի մարգարէ կը խօսի, ըսելու համար որ Մեսիան փառաւոր թագաւորը պիտի չըլլայ միայն, այլ փառաւոր թագաւորը ըլլալէ առաջ, մեզի համար, մեր սիրոյն եւ մեր փրկութեան համար չարչարանքներ յանձն առնող Աստուծոյ ծառան պիտի ըլլայ:

Թէ որքանո՞վ այս յայտնութիւնը տեղաւորուեցաւ աշակերտներուն մըտքին մէջ, կրնանք գիտնալ այն պատկերացումներէն որ Աւետարանները կու տան, աշակերտները կարծէք իրենց մտքին մէջ դժուար կը հասկնան այդ իրողութիւնը, ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ այն փառաւոր Վարդապետը, որ Աստուծոյ կողմէ եկած եւ իրենց կը խօսի, այն՝ որ Աստուծոյ կողմէ այնքան նշաններ եւ

հրաշագործութիւններ ցոյց կու տայ, կրնայ ըլլալ որ սովորական մարդու մը պէս ենթարկուի չարչարանքներու: Այսինքն այն պահուն երբ ինք կ'ըսէր պիտի ձերբակալուի եւ չարչարանքներու պիտի ենթարկուի, արդեօք իր գօրութիւնը պիտի չցուցնէ՞ եւ պիտի չորդեգրէ՞ կերպ մը որ ինքզինք ազատէ անոնց ձեռքէն: Այս երկու իրողութիւնները իրենց մտքին մէջ չէին կրնար տեղաւորել որոշապէս, որովհետեւ Աստուծոյ ծրագիրը, այնպէս ինչպէս կը ներկայանար Աստուածաշունչին մէջ, տակաւին իրենց մտքի հասողութենէն խոյս կու տար:

Բայց միայն այս երեք առիթները չէին որ Քրիստոս խօսեցաւ իր յարութեան մասին. ուրիշ առիթներով եւս, տարբեր կերպերով, երբեմն ակնարկութիւններով: Վերեւ յիշեցինք Յովնանի պարագան, կամ նշանի մը հարցին առիթով Յիսուսի տուած պատասխանը: Ուրիշ առիթով մը, օրինակ, երբ Երուսաղէմ կը գտնուէր, Յովհաննու Աւետարանը կը պատմէ մեզի 2-րդ գլխուն մէջ, տաճարը մաքրագործեց այն վաճառականներէն, որոնք եկած եւ լեցուցած էին այնտեղ, եւ իր իշխանութիւնը հարցականի տակ դրին: Որո՞ւ իշխանութեամբ կամ ի՞նչ իշխանութեամբ այս բոլորը դուն կ'ընես, երբ հարցուցին, Քրիստոս ինքը անոնց պատասխան մը տուաւ եւ ըսաւ, քանդեցէք այս տաճարը, եւ ես զայն երեք օրէն պիտի վերականգնեմ: Աւետարանիչը անմիջապէս կու գայ ճշդելու մեզի, ըսելով որ անոնք սխալ հասկցան, ենթադրեցին որ տաճարին մասին կը խօսի, եւ վերջաւորութեան ալ իրենց ամբաստանութիւններու մէջ այդ ալ նկատի ունեցան, ըսելով որ կ'ուզէ մեր տաճարը քանդել, մինչդեռ, Քրիստոս կը խօսէր իր մարմնի տաճարին մասին, եւ անոր համար էր որ կ'ըսէր քանդեցէք եւ ես զայն երեք օրէն պիտի վերականգնեմ:

Դարձեալ, ուրիշ առիթով մը երբ որ

կը խօսէր ճշմարիտ հովիւին մասին, եւ ինքզինքը ներկայացուց իբրեւ ճշմարիտ հովիւը, ակնարկեց նաեւ այս փրկագործական տնօրինութեան հետեւեալ բառերով: «Հայրը գիտ կը սիրէ, որովհետեւ կեանքս կու տամ՝ վերստին առնելու համար գայն: Ոչ ոք կրնայ կեանքս ինձմէ խլել: Ես իմ կամովս կու տամ: Իրաւունք ունիմ գայն տալու, ինչպէս նաեւ իրաւունք ունիմ գայն կրկին առնելու» (ՅՃ 10.17-18): Թէպէտ այստեղը բացայայտ բառերով չի խօսիր մահուան եւ յարութեան եզրերով, բայց որոշակի կերպով կ'ըսէ՝ կեանքս պիտի տամ եւ պիտի առնեմ, եւ ամբողջական իրաւունքը ունիմ գայն տալու եւ առնելու:

Ի վերջոյ տակաւին կրնանք յիշել, Ծաղկազարդի օրը յաղթական կերպով Երուսաղէմ մտաւ, այդ մուտքէն երկուերեք օրեր առաջ, երբ վերջին անգամ մը Զիթենեաց լեռնէն դէպի Երուսաղէմ կը նայէր, շատ յուզիչ պահ մըն է որ մեզի Աւետարանիչը կը ներկայացնէ: Մտթէոսի Աւետարանին մէջ կը կարդանք, որ Երուսաղէմի մասին կ'արտայայտուի, կ'ողբայ կարծէք մեր Տէրը ինք հետեւեալ բառերով: «Երուսաղէմ, Երուսաղէմ, եթէ գիտնայիր թէ ինչ կը սպասէ քեզի՝ քանի անգամներ ուզեցի քեզ փրկութեան հրաւիրել, կամ իմ թեւերուս տակ առնել, այնպէս ինչպէս հաւ մը իր ձագուկները իր թեւին տակ կը ժողվէ, բայց դուք չկամեցաք, չուզեցիք: Զիշդ անոր համար ալ ասկէ ետք ձեր տունը աւերակ պիտի մնայ» (Հմմտ Մտ 24.37-38): Իսկ տունը ըսելով թէ՛ քաղաքին կ'ակնարկէր, եւ թէ՛ տաճարին: Հագիւ այս խօսքը աւարտեց, նաեւ ըսաւ. «Այ պիտի չտեսնէք գիտ, մինչեւ որ ըսէք. “Օրհնեալ ըլլայ ան՝ որ կու գայ Տիրոջ անունով» (Մտ 24.39): Ան իր աշակերտներուն ըսած էր թէ շուտով մահուան պիտի երթայ, բայց հիմա նաեւ կը յայտնէ թէ այդ պահը իրեն համար վերջը չէ, ընդհակառակը սկիզբն է այն փառաւորումին, որ վերջ ի վերջոյ պիտի յանգի

երկրորդ գալստեան: Այն ատեն է որ պիտի ըսեն իսկական եւ ամբողջական ճշգրիտ հասկացողութեամբ՝ օրհնեալ է ան՝ որ կու գայ Տիրոջ անունով: Հետեւաբար դարձեալ իր յարութիւնը ի մտի ունենալով ատիկա կ'ըսէ:

Արդէն նշեցինք, որ յարութենէն ետք ալ երկու անգամներ երբ Յիսուս իր աշակերտներուն քով եկաւ, անոնց ըսաւ, թէ ինչ որ եղաւ արդէն գրուած էր եւ գրուածները պէտք էր կատարուէին: Պարզապէս անոնք կատարումն էին անցեալին տրուած մարգարէական նախաձայնութիւններուն կամ խոստումներուն, որոնք կատարուեցան: Արդ, այդպէս պէտք էր փառաւորուէր ինքը, որովհետեւ այդպէս ալ գրուած էր անցեալին:

Մարգարէական կարգ մը նախաձայնութիւններ ինչքան խօսուեւ են մանաւանդ անոնք, որոնք անմիջականօրէն Քրիստոսի յարութեան առնչուած են: Այսպէս օրինակի համար, (16.10) սաղմոսը առնենք, այնտեղ հետեւեալը գրուած է, «Գիտեմ թէ իմ անձս մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես, եւ պիտի չթողու որ բու սուրբիդ մարմինը փտուիւն տեսնէ», Մեսիական սաղմոս մըն է, այսինքն գայիք Փրկիչին, Օծեալին վերաբերող սաղմոս մըն է:

Եսայի մարգարէն չարհարուող ծառային մասին խօսելով կ'ըսէր թէ հարուստի մը գերեզմանին մէջը պիտի դրուի, բայց նաեւ յետոյ կը շարունակէ, եւ ունի բացատրութիւններ, որոնք անուղղակի կ'ակնարկեն Յիսուս Քրիստոսի յարութեան: «Բայց Տէրը որ գայն տառապանքի ու ցաւի մատուած էր, իր վերքերէն բժշկեց գայն, որ ինքզինքը մեր մեղքերուն համար տուաւ, որպէսզի իր սերունդը տեսնէ եւ երկար կեանք ունենայ, եւ անոր միջոցաւ Տիրոջ կամքը իրագործուի: Տէրը ուզեց գայն իր ցաւերէն ազատել, իր լոյսը ցոյց տալ անոր եւ իր գիտութեամբ գայն վերականգնել, որպէսզի անիկա՝ իր հաւատարիմ ծառան ուրիշնե-

րը արդարացնէ, անոնց մեղքերը ինք կրելով: Այս պատճառով ալ անիկա շատերը պիտի փրկէ այնպէս ինչպէս հօգորները աւար կ'առնեն, որովհետեւ կամաւորաբար ինքզինքն զստուան մատնեց եւ անօրէններու կարգին դատուեցաւ, շատերու մեղքերը իր վրայ առաւ, եւ իր մահուամբ Աստուծոյ բով միջնորդութիւն ըրաւ, որ անոնց անօրէնութիւնները ներուիւն» (Ես 53.10):

Մարգարէն սկիզբը ցոյց կու տար որ Աստուած գայն իր վէրքերէն պիտի բժշկէ, բայց կ'ըսէ նաեւ որպէսզի անիկա իր սերունդը տեսնէ: Այդ սերունդը մարդկային սերունդ մը չէ, այդ սերունդը Քրիստոսի եկեղեցին էր, իրմով շաղուած այն նոր ժողովուրդը Աստուծոյ համար: Անիկա կ'ըսէր նաեւ երկար կեանք ունենայ, ատով արդէն ցոյց կու տար որ մահուան սահմանէն անդին անցնի, որովհետեւ անոր կեանքը այլեւս մահուան պատնէշը երբեք պիտի չճանչնայ, ընդհակառակը, մահուան վրայ իր տիրապետութիւնը հաստատելով մշտականօրէն եկեղեցիին հետ պիտի ըլլայ, իր եկեղեցիին հետ պիտի մնայ եւ միջնորդութիւն ընէ շատերուն համար, զանոնք փրկելու, այնպէս ինչպէս հօգորները աւար կ'առնեն, հօգորներուն նաեւ նմանութիւնը որոշակի կերպով իր աստուածային տիրոջ ստիճանին յիշատակումն է, որովհետեւ անիկա հօգոր Աստուած է:

Նոյն այս չարչարանքներուն եւ մահուան մասին խօսող Եսայի մարգարէն այդ Օծեային առիթով կը գրէր. «Որովհետեւ հիմա մեզի մանուկ մը ծնաւ, որդի մը տրուեցաւ, եւ անիկա պիտի կոչուի սփանջելի խորհրդակալ, հօգոր Աստուած, յաւիտեանակալ հայր եւ խաղաղութեան իշխան» (Ես 9.6): Եւ տակաւին յետոյ կը շարունակէ, «Դաւիթի աթոռին վրայ պիտի բազմի, եւ անոր քագաւորութիւնը պիտի հաստատէ ու գորացնէ իրաւունքով եւ արդարութեամբ այժմէն սկսեալ մինչեւ յաւիտեանս յաւիտեանից» (Ես 9.7):

Եւ դարձեալ նոյն այդ թագաւորութեան համար Դանիէլ մարգարէ կ'ըսէ. «Պիտի գայ մինչեւ հինաւուրցը եւ անկէ իր իշխանութիւնը պիտի առնէ, որ յաւիտեանական թագաւորութիւն մըն է, անվախճան» (Հմմտ Դն 2.44):

Արդ, կրնա՞յ ըլլալ որ այդ թագաւորութիւնը ինքը անվախճան չըլլայ, ինքը յաւիտեանականութեան հայրը ըլլայ, հօգոր Աստուածը ըլլայ եւ իր կեանքը մահուամբ վերջ գտնէ...: Բնականօրէն այս բոլորը կու գային դեռ Եսայի բերնով, Քրիստոսէ ուրիշ դար առաջ, մեզի վկայելու հետեւաբար յարութեան իրականութեան մասին: Ճիշդ ատոր համար է, որ Պետրոս առաքեալ վճռականօրէն կ'ըսէ, «Մահը չէր կրնար իշխել անոր վրայ» (Հմմտ Հռ 6.9): Նաեւ Պողոս առաքեալ ինքը Ազրիպպասի դիմաց շատ զօրեղ ու անդիմադրելի համոզումով մը կը յայտարարէր, «Իմ ըսածներուս մէջ չկայ բան մը որ մարգարէները եւ Մովսէս ըսած չըլլան՝ իբրեւ ապագային կատարուելիք պատգամներ: Թէ՛ Քրիստոս պիտի չարչարուէր, թէ՛ ինք առաջինը պիտի ըլլար որ մեռելներէն յարութիւն պիտի առնէր փրկութեան լոյսը տալու համար այս ժողովուրդին եւ բոլոր ազգերուն» (Գրծ 26.22):

Ձեական ուրիշ հարց մը, Քրիստոս ի՞նքն էր որ յարութիւն առաւ, թէ՞ Հայրն էր որ զինք յարուցանեց: Երբեմն կրնանք մտածել որ մարդիկ ինչ աւելորդ հարցումներ կու տան: Սակայն, երբ մարդիկ այդ հարցումները կ'ընեն, մենք ալ ստիպուած ենք երբեմն պատիկ պատասխաններ հայթայթել: Արդեօք Քրիստոս ինքը սոսկ մա՞րդ մըն էր եւ կախեալ պարզապէս Հօր Աստուծոյ կամքէն, թէ՛ նաեւ ինք միաժամանակ մարդացեալ Աստուածն է, եւ եթէ այդպիսին է, ինչպէ՞ս կը ներկայանայ այս յարութեան իրողութիւնը մեզի:

Յարութիւն առաւ: Ո՞վ էր որ զԱյն յարուցանեց, ի՞նքը ինքզինքը, թէ՞ Հայրը զինք յարուցանեց: Այս առարկութիւնը

նը, ինչպէս առարկութիւնը ընողները, կը տանի մէկ ուղղութեան՝ Աստուածութեան հերքումին, մերժումին, ուրացումին:

Միւս կողմէ, որպէսզի Աստուածաշունչէն տուած ըլլանք պատասխանը, եւ ոչ թէ միայն մեր տրամաբանութեամբ: Նոր Կտակարանի յայտարարութիւնները յարուցեան մասին, երկու խումբի կարելի է բաժնել: Մէկ խումբը որոշակի կերպով կ'ըսէ թէ Աստուած գոյն յարուցանեց, Աստուած բառին ետեւ հարկաւ մենք կը կարդանք Հայրը գոյն յարուցանեց: Միւս խումբին մէջ կը տեսնենք, թէ՛ ուղղակի եւ թէ՛ անուղղակի կերպով, թէ՛ Քրիստոս է որ յարուցիւն առաւ, եւ եթէ յարուցիւն առաւ կը նշանակէ թէ ինքզինքը յարուցանեց, այսինքն ոչ թէ ուրիշը իրեն յարուցիւն տուաւ, այլ ինք ի՛ր գորութեամբ: Որովհետեւ «Կեսանքը իմ մէջս ունիմ» (Հմմտ ՅՎ 10-10) կ'ըսէ Յովհաննու Աւետարանին մէջ:

Պետրոս առաքեալ առաջին օրէն կ'ըսէր. «Աստուած գոյն յարուցանեց, մահուան կապանքները փշրելով, որով ցոյց տուաւ թէ մահը չէր կրնար իշխել անոր վրայ» (Հմմտ Հռ 6-9): Կամ ուրիշ առիթով մը նոյն առաքեալը կ'ըսէ, «Սպաննեցի՛մ ձեզ դէպի կեանք առաջնորդողը: Բայց Աստուած գոյն մեռելներէն յարուցանեց՝ եւ մեմք ատոր վկայ եմք» (Գրծ 3-15): Տակաւին քիչ մը անդին ուրիշ խօսքի մը 5-րդ գլխուն մէջ կ'ըսէ. «Մեր հայրերուն Աստուածը յարուցանեց Յիսուսը, որ դուք սպաննեցի՛ք՝ խաչափայտէն կախելով: Աստուած իր աջով գոյն բարձրացուց, որպէսզի մեր Առաջնորդն ու Փրկիչը ըլլայ, եւ Իսրայէլին ապաշխարութեան առիթ եւ մեղքերուն թողութիւն տայ» (Գրծ 5.30-31):

Նոյնը կը գտնենք այս անգամ Պօղոս առաքեալի բերնին մէջ, եւ միւս առաքեալներուն: Պօղոս առաքեալ իր մէկ քարոզութեան ընթացքին, երբ գնաց Պիսիդիայի, Փոքր Ասիայի Անտիոք կո-

չուած քաղաքը, (ոչ թէ Սուրիայի Անտիոքը), այնտեղ ժողովարանին մէջ քարոզութեան պահուն, հետեւեալ բացատրութիւնը տուաւ. «Երբ անոր մասին բոլոր գրուածները կատարած եղան, –Հրեաներուն համար է խօսքը,– գոյն խաչէն իջեցուցին եւ գերեզման դրին: Բայց Աստուած գոյն մեռելներէն յարուցանեց եւ Յիսուս բազմաթիւ օրեր երեւցաւ անոնց, որոնք իրեն հետ Գալիլիայէն Երուսաղէմ եկած էին, եւ որոնք հիմա իր վկայներն են ժողովուրդին առջեւ: Մենք ալ ահա, ձեզի կ'աւետենք թէ Աստուած մեր հայրերուն տուած իր խոստումը կատարեց Յիսուսը յարուցանելով, ինչպէս երկրորդ Սաղմոսին մէջ ալ գրուած է, “Իմ Որդիս ես դուն, այսօր բեզ ծնայ”: Նոյն այն իրողութիւնը, որ Աստուած գոյն մեռելներէն յարուցանեց, եւ անիկա այլեւ բնաւ մահ պիտի չտեսնէ, խոստում մըն է մեզի ուղղուած, որովհետեւ Աստուած այսպէս կ'ըսէ, “Ձեզի պիտի տամ այն իսկական եւ սուրբ օրհնութիւնը որ Դաւիթին խոստացայ: Եւ ինչպէս ուրիշ սաղմոսի մը մէջ Սաղմոսագիրը կ'ըսէ, ”Պիտի չթողուս որ քու ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ”: Արդ, Դաւիթ իր սերունդին մէջ Աստուծոյ ծառայել ետք մեռաւ եւ իր հայրերուն քով թաղուեցաւ, եւ իր մարմինը փտեցաւ: Բայց Աստուած յարուցանեց Յիսուսը, որուն մարմինը փտութիւն չտեսաւ» (Գրծ 13.35-37): Ինչ որ Պետրոս կ'ըսէր, Պօղոս առաքեալ աւելի ընդհանուր կերպով մը յարուցեան իրողութիւնը ամփոփելով, նոյն բաները մեզի կը փոխանցէ:

Երկրորդը, այն վկայութիւնները, որոնք ոչ թէ այս անգամ Հօրը կը վերաբերին, այլ ուղղակի Քրիստոսի: Կարգ մը տեղեր որոշակի կերպով յարուցիւն առաւ, կ'ըսեն, եւ այդ յարուցիւն առաւը չէզոք կերպով երբ որ կը գործածուի, կը նշանակէ թէ ուրիշ մէկը չէր որ յարուցիւն տուաւ Յիսուսի, այլ ինք յարուցիւն առաւ: Ճիշդ այնպէս ինչպէս քիչ առաջուան ընթերցուած խօսքը կ'ը-

սէր, ոեւէ մէկը իրաւունք չունի, կ'ըսէ, իմ կեանքը առնելու, ես է որ իմ կեանքս կու տամ, եւ ես է որ գայն կրնամ վերստին առնել:

Եւ ինչպէս որ Ղազարոսի յարու-թեան առիթով ալ Քրիստոս ըսաւ. «Ես եմ յարութիւնը եւ կեանքը, որոչպէս արդէն կ'ըսէ որ յարութիւնը իմ մէջս է, յարութիւնը դուրսէն չէ որ կու գայ:

Վերեւ, Հա՞յրը, թէ՞ Որդին, այդ գա-տորոշումը ըրինք եւ փորձեցինք ճշդում մը բերել. պահ մը հիմա ըսեմ նորէն որ գատորոշումը ձեւական է սակայն, Աստուածաշունչը ինչ ձեւով ալ մեզի ներկայացնէ, մենք գիտենք որ անոր ետին կայ մէկ բան. երբ կ'ըսենք՝ Աստուած գայն յարուցանեց, կամ Հայրը գայն յարուցանեց, արդեօք ըսած կ'ըլ-լա՞նք թէ Որդին ինք ինքզինք չյարուցա-նեց: Նման յայտարարութիւն մը որովհետեւ ամբողջութեամբ անջատումը պիտի ըլլար Հօր գործին եւ Որդիին գործին: Ըսել պիտի ըլլար, որ Հօրը գործը տարբեր է եւ Որդիին գործը տարբեր է: Մինչդեռ երբ ամբողջ Աստուածաշունչին կը նայինք, Երրորդութեան երեք անձերուն համար ալ նոյնը կրնանք ըսել, բոլորին ալ գործը աշխարհի ստեղծագործութեան եւ մարդուն վերաբերեալ նոյնն է: Հետեւաբար կարելի չէ անջատել իրարմէ Որդիին գործը եւ Հօրը գործը, այնպէս ինչպէս Յիսուս ինքը ըսաւ առիթով մը, «Ինչ որ Հայրը ունի՝ իմս է» (ԹՎ 16:15): Հետեւաբար կրնանք ըսել չկայ գործ մը որ Հայրը ունի եւ Որդիին չըլլայ, ինչպէս Որդին՝ չունի գործ մը որ Որդիինը ըլլայ եւ Հօրը չըլլայ:

Նոյն այս իրողութիւնը կարելի է հաստատել ուրիշ կերպով մը, որովհետեւ մինչեւ հիմա երկու անձերու՝ Հօր եւ Որդիին մասին խօսեցանք, վերջին վկայութիւն մըն ալ Հոգիին մասին, որպէսզի տեսնենք թէ այս յարութեան գործին մէջ նաեւ Սուրբ Հոգիին ներկա-

յութիւնը կա՞յ թէ չկայ: Կը կարդանք այս անգամ Հռոմայեցիներու գրուած նամակին սկիզբը, «Որդին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ իբրեւ մարդ՝ Դաւթի սերունդէն ծնաւ, բայց որ իբրեւ Աստուծոյ Որդի յայտնուեցաւ, երբ իր Սուրբ Հոգիին գորութեամբ մեռելներէն յարութիւն առաւ» (Հռ 1:3-4): Ո՞վ է յարուցանողը գայն, Սուրբ Հոգին: Եթէ Սուրբ Հոգին յարուցանողն է, եթէ Հայրը յարուցանողն է միայն Որդիին դուրս կը մնայ իր գործէն, բայց կարելի չէ, կը կրկնեմ, այդպէս մտածել, որովհետեւ եթէ նայինք Պօղոս առաքեալի այն բացատրութեան, որ Կողոսացիներու նամակին մէջ կայ, «Քրիստոս իր մարդեղութեանը մէջ իսկ Աստուածութեան լեցութիւնը ունէր» (Հմմտ Կղ 1:19), կ'ըսէ, այդ Աստուածութեան լիութիւնը իրմէ անբաժան ունէր, չենք կրնար տարբեր եզրակացութեան գալ, քան ըսել որ Քրիստոս ինքզինք յարուցանեց:

Քրիստոս իր յարութեամբ մեզի ի՞նչ բերաւ, կամ ի՞նչ տուաւ: Մի քանի իրողութիւններ պիտի հաստատենք, յետոյ նաեւ մեր հայրերէն մէկ ընդարձակ վկայութիւն պիտի բերենք. -

1.- Քրիստոս առաջին հերթին մահուան գորութիւնն էր որ խափանեց: Մեր եկեղեցիին մէջ ամէն Կիրակի «Միածին Որդի» ին կամ «Քրիստոս Յարեալ ի Մեռելուց» ժամամուտին մէջ կ'ըսենք «Մահուամբ գմահ կոխեաց» (Ժամագիրք), խափանեց մահը, բայց երկրորդ բաժինով կ'աւելցնենք՝ «Եւ յարութեամբն իւրով մեզ գկեանս պարգեւեաց», եւ իր յարութեամբ մեզի կեանք պարգեւեց:

2.- Իր յարութեամբ Քրիստոս մեզ բոլորս արդարացուց, մեր արդարացման սկիզբն է, այդ արդարացումը Աստուծոյ ներկայութեան, եւ ոչ թէ մեր արդար ըլլալուն համար, ոչ թէ մեր ամբողջապէս սրբուած ըլլալուն համար, բայց այն վիճակով որ էինք Աստուած մեզ՝ իրեն վստահողներս առաւ եւ Աստուծոյ ներկայացուց եւ կը ներկայացնէ

իրբեւ արդար, մեր արդարութեան հիմը հետեւաբար Քրիստոսի փրկագործութիւնն է եւ մասնաւորաբար յարութիւնը, ատրկա Հռոմայեցիներու նամակին մէջ ալ մենք կը կարդանք, ուր կ'ըսէ «Իր կեանքը տուաւ մեր յանցանքները ջնջելու համար, եւ յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար» (Հռ 4.25):

3.-Իր յարութեամբ Քրիստոս անմահական կեանքին գրաւականը դարձաւ մեզի համար. այլ խօսքով յաւիտենական կեանքին ապահովութիւնը մեզի տուաւ: Մարդկային մեր բնութեան դիմաց դարձեալ բացաւ այն դուռը որ Ադամով փակուած էր, Ադամ որ ինքզինքը ձեւով մը մեղանշումով կամ անհնազանդութեամբ դուրս բերաւ յաւիտենական կեանքի կարելիութենէն, նոյն այդ յաւիտենական կամ անմահական կեանքի կարելիութիւնը Քրիստոս վերստին բացաւ մեր դիմաց իր խաչով եւ մասնաւորաբար իր յարութեամբ ու յատկապէս, երկինք բարձրանալով, ու Հօր աջ կողմը նստելով:

4.- Հանդերձեալ, յաւիտենական կեանքին փառաւոր եւ անեղծ վիճակին ճշմարիտ պատկերացումն է որ մեզի տուաւ, եւ վստահութիւնը եւ յոյսը թէ Աստուած այդ անեղծ, այդ փառաւոր ու անմահ կեանքը մեզի վերապահած է, եւ մեզի պիտի տայ:

Պետրոս առաքեալի առաջին նամակին սկիզբը, առաքեալը կը գրէ. «Օրինեալ է Աստուած, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմութեամբ մեզ վերստին ծնաւ, որպէսզի Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն առնելովը ունենանք այն կենդանի յոյսը՝ թէ պիտի ժառանգենք անեղծ, անարատ եւ անթառամ կեանքը, որ երկնքի մէջ պահուած է ձեզի համար» (Ա.Պտ 1.3-4):

Պօղոս առաքեալ երբ հաւատքի աչքով, հաւատքի պրիսմակէն կը դիտէ նոյն այս վկայութիւնը, հետեւեալ ճշմարտութիւնը մեզի կը յանձնէ, եւ կ'ըսէ. «Մենք երկնքի քաղաքացիներ

ենք, եւ հոնկէ կը սպասենք որ գայ մեր Փրկիչը՝ Տէր Յիսուս Քրիստոս, որ մեր մահկանացու մարմինները պիտի կերպարանափոխէ եւ իր մարմինին պէս փառաւոր դարձնէ իր գօրութեամբը, որով կրնայ ամէն ինչ իր իշխանութեան ենթարկել» (Փլպ 3.20-21): Այս յայտարարութիւնը մենք ամէն Կիրակի կը կարդանք: Իւզաբերից Աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետք, Սարկաւազը ունի եղանակաւոր քարոզ մը, յորդորական կոչ մը ժողովուրդին կոչուած, որուն մէջ ճիշդ այս բառերը գրաբարով կ'արտասանէ. առաքելական խօսքերն են որ եղածին պէս կ'արտասանենք այնտեղ:

Թրդ դարու Հայրապետ Յովհաննէս Բ. Գարեղեան Կաթողիկոսին մէկ հաստատումով կը փակենք այս մասը, որ առնուած է Աղուանից Կաթողիկոսին գրուած իր երկրորդ նամակէն եւ կը կոչուի «Սակս Հաւատոյ Հաստատութեան»: Այսինքն՝ հաւատքի հաստատման համար գրուած նամակ մըն է, մեր հաւատքը հաստատելու համար. -

«Իսկ ժամանակի վախճանին, Աստուած Բանը, որ մշտնջենաւոր Աստուած էր, կատարեալ մարդ եղաւ, առանց փոփոխութիւն կրելու, մարմնանալով սուրբ կոյսէն, անպատմելի ձեւով, առանց հեռանալու իր բնութենէն, առանց փայլալուծելու մարմնաւորութեան մէջ, այլ՝ մնաց նոյնպէս, անփոփոխելի, անայլայլելի: Աստուած մարդացաւ ո՛չ թէ մասնակիօրէն, այլ՝ ամբողջութեամբ. ո՛չ թէ պակասութեամբ, այլ՝ լիութեամբ. ո՛չ թէ երկուքի վերածուելով, այլ՝ անբաժանելի միութեամբ: Հայրը չէր որ մարմին առաւ, այլ՝ Որդին. Սուրբ Հոգին չէր որ թանձրացեալ մարմին եղաւ, այլ՝ Հօրմէն եղող Միածինը, բայց Հօրը կամքով եւ Սուրբ Հոգիին գօրութեամբ միայն Աստուած Բանը, իր գոյութեամբ: Այսպէս ալ ծնունդը սուրբ կը կոչուի, նոյն ինքը որ անբովանդակելի էր՝ իսնձարուրին մէջ պատուեցաւ, որպէսզի մենք անապականութիւն հազնինք. մտուրի մէջ դրուեցաւ, որպէսզի մեր ա-

մասնական բարձր փոխանակման կողմնակից փառաբանական, որպեսզի մենք ալ անոնց փառաբանակից ըլլալու կոչուիմք: Մոգերուն կողմէ նուէրները ընդունեց, որպէսզի մենք ալ մեր հաւատքի պտուղը տանք: Կաթով սնանեցաւ, որպէսզի մեր անմեղութիւնը գտնենք: Մարմինով գարգացաւ, ինք որ ամէն բանի կատարելութիւնն է, որպէսզի մեզ Քրիստոսի կատարելապէս հասակին հասցնէ: Կամաւորապէս եկաւ չարչարուեցաւ, որպէսզի մեզ ազատէ մեղքերու տանջանքէն: Խաչուեցաւ, որպէսզի կեանքի պտուղէն վայելեցնէ: Մեռաւ, որպէսզի իր մահով մահը սպաննէ, գերեզման դրուեցաւ որպէսզի անդրաշխարհին դռները խորտակէ: Երբորդ օրը յարութիւն առաւ, որպէսզի մեզ նոր կեանքի փոխադրէ: Երկիմք համբարձաւ եւ Հօր աջ կողմը նստաւ, որպէսզի մենք իր աջ կողմը դասուիմք: Վերստին պիտի գայ դատելու համար ողջերն ու մեռելները, եւ անոր թագաւորութիւնը վերջ չունի: Այսպէս կը հաւատանք, եւ այսպէս կ'երկրպագենք եւ փառաբանելով կ'ըսենք, Սուրբ Աստուած, Սուրբ եւ Հօր, Սուրբ եւ Ամմահ, որ խաչուեցար մեզի համար, ողորմէ՛ մեզի»:

Մէկ-երկու վերջին հարցեր, Քրիստոսի յարուցեալ մարմինին մասին: Ոմանք Քրիստոսի ճշմարիտ մարդեղութիւնը կ'ուրանային, ուստի Քրիստոսի յարուցեալ պարագային եւս ճշմարիտ մարմինին յարուցեալը կը փորձեն մերժել: Այսպէս խորհողները կարելի է երկու դասակարգումի ենթարկել: Անոնք, որոնք նախ բնաւ յարուցեալ մասին չեն խօսիր, այլ միայն կը հաստատեն, կ'ըսեն Քրիստոս մեռնելէն ետք իր աշակերտներէն ոմանց երեւցաւ, եւ աշակերտներն ալ գոհացան այդ երեւումներով, առանց երբեք գերեզման այցելելու եւ Յիսուսի մարմինով հետաքրքրուելու:

Երկրորդ խումբ մը մարդիկ կամ աղանդաւորներ, որոնք թէպէտ յարուցեալ մասին կը խօսին, բայց միայն ձեւականօրէն կը խօսին, որովհետեւ կ'ը-

սեն թէ Յիսուսի երկրաւոր մարմինը գերեզմանին մէջ փճացաւ: Կամ ուրիշներ ալ տակաւին աւելի տարօրինակօրէն կ'ըսեն, թէ Յիսուս իր մարմինը առաւ եւ մոլորակներէն մէկուն վրայ ձգեց, այսինքն իր հետ Աստուծոյ ներկայութեան չտարաւ. ուրկէ՞ կը քաղեն իրենց տեսութիւնները, կը գարմանանք երբեմն:

Այս օրերուն եւս կան աղանդաւորներ, որոնք նոյն մտածողութիւնները ունին, եւ մեզի կը ներկայանան նոյն խորհողութեամբ: Նախ եթէ մարմինը չկայ Յիսուսի՝ յարուցեալ չկայ, յարուցեալ մասին խօսիլը կրնանք կոչել պատրանք մէկ կողմէ, միւս կողմէ սակայն՝ խարբեայութիւն: Պօղոս առաքեալ ինքը կ'ըսէ. եթէ մեռելներու յարուցեալ եղած չէ, այն ատեն մեր ամբողջ հաւատքը ոչ միայն զուր է, այլ նաեւ մենք Աստուծոյ համար սուտ վկաներ եղած կ'ըլլանք, որովհետեւ կը վկայենք թէ Աստուած յարուցեալ տուաւ անոր. եթէ մարմին չունէր կը նշանակէ թէ յարուցեալ չարաւ, ուրեմն մեր ամբողջ վկայութիւնը սո՛ւտ է: Անոր համար ալ մարմինը, ինչպէս մարդեղութեան պարագային, ըսինք, անհրաժեշտ տուեալն է մեր փրկութեան համար, այնպէս նաեւ մահուան պարագային: Յիսուս ինքը այդ մարմինն էր որ նաեւ իր մահուանէն ետքը ցոյց տուաւ իր աշակերտներուն, կ'ինքուն իր բոլոր երեւումներուն ընթացքին, ո՛չ թէ այսպէս կոչուած հոգեղէն մարմին մը, երեւութական մարմին մը:

Մենք երբեմն յարուցեալը կը հոգեղինացնենք, կ'ըսենք որ ոչ միայն մարմիններու յարուցեալն է կայ, այլ նաեւ հոգիներու յարուցեալն է կայ, եւ մասնաւորաբար երբ կը խօսինք մեղաւոր անձի մը, եւ անոր ներքին վերակենդանութեան, վերակենդանացման մասին, ոչ միայն մենք կը կոչենք, Աստուածաշունչը, Պօղոս առաքեալէն սկսեալ այդպէս կը կոչէ, այդ մասին կը խօսինք եւ կրնանք նոյնիսկ ըսել անոնց համար, մե-

ուած էր՝ ողջնցաւ, կ'ըսէ, կորսուած էր՝ գտնուեցաւ: Ասիկա ողջննալ կը կոչենք, եւ սակայն ասիկա երբեք կարելի չէ շփոթել այն իրականութեան հետ, որ Քրիստոսի յարուսթիւնն է եւ ապագայ մարմիններու յարուսթիւնը պիտի ըլլայ:

Քրիստոսի մարմինին ճշմարտացիութեան մասին կան նաեւ վկայութիւններ՝ եկաւ ձեռքերը ցոյց տուաւ, սպինները, վէրքերուն հետքերը ցոյց տուաւ, եւ առիթ տուաւ որ շօշափեն, եւ որ անոնցմէ ուտելիք ուզեց, եւ միասին նստան եւ կերան, եւ որ կասկածող թովմասը հրաւիրեց որ այս անգամ իր մատը մօտեցնէ վէրքին, կողին, կողը խոթէ որպէսզի ատով ստուգէ իր մարմինին եւ վէրքին ճշմարտութիւնը կամ իրականութիւնը. եւ դարձեալ այս անգամ Գալիլոյ լիճին եզերքը երեւում մը կը ներկայացնէ, այնտեղը, ծովեզերքը կրակին վրայ ձուկ դրուած էր, կ'ըսէ, այդ ձուկէն ինքն ալ կերաւ, իր աշակերտներուն ալ տուաւ եւ որ դարձեալ աշակերտներուն հետ նստաւ, երկարօրէն խօսեցաւ, գրուեցեց, Հին Կտակարանի մարգարէութիւնները մէկ առ մէկ ցոյց տուաւ, բացատրեց: Այս բոլորը յստակ կերպով աշակերտներուն առիթ կու տային որ Քրիստոսի մարմնաւոր ներկայութիւնը զգան իրենց հետ, այն քառասուն օրերուն ընթացքին որ իրենց հետ եղաւ:

Հաւատամքին մէջ «Եւ նոյն մարմինն» հաստատումը երբ կը կարգանք, մէկ կողմէ այս ճշմարտութիւնը շեշտած կ'ըլլանք, երկրորդ՝ կը շեշտենք նաեւ որ այս մարմինը նախկինէն տարբեր եւ նոր մարմին մը չէր, թէպէտ, այդ մարմինը արդէն ձեռք բերած էր նոր յատկութիւններ, նոր յատկանիշներ, որոնք յատուկ են: Երկու բառեր կրնանք գործածել, փոխակերպուած մարմինին, կամ փառաւորեալ մարմին: Այժմ, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ, մեր մարմինները բոլորն ալ շնչաւոր մարմիններն են, այլ խօսքով կարծէք մահով տիրապետուած

մարմիններն են, բայց երբ մենք թօթափենք այս բանը, եւ մահուան հանգրուանէն անցնինք, մեր մարմինները իրենք ալ դուրս պիտի գան այդ շնչաւոր վիճակէն. այն ինչ որ հիմա կը ներկայանայ իբրեւ անարգ, իր փառքը պիտի ստանայ. այն ինչ որ ներկայիս ցաւերով, տկարութիւններով յատկանշուած մարմին է, իր զօրութիւնը պիտի ստանայ. այն ինչ որ հիմա եղծանելի է, փճանալիք մարմին մըն է, մահկանացու մարմին մըն է, պիտի դառնայ անեղծ եւ անմահ մարմին մը, ոչ թէ որովհետեւ մարմինը անմահ ստեղծուած է, այլ Աստուծոյ կամքով այդպէս պիտի դառնայ (Հմմտ Ա.Կր 15.42-44):

Հետեւաբար Քրիստոսի մարմինը նոյն մարմինն էր, այլպէս տարբեր անձ մը պիտի փորձէինք ենթադրել, նոյնն է, այնպէս ինչպէս մեր մարմինները նոյնը պիտի ըլլան:

Հաւատամքը կրկնելով կ'աւելցնէ, «նոյն մարմինով երկինք ելաւ», ոչ միայն այդ մարմինով յարուսթիւն առաւ, այլ նաեւ նոյն մարմինով երկինք ելաւ: Այս «երկինք ելաւ» բացատրութիւնը կարելի է հիմա քանի մը ձեւերով առնել եւ քանի մը իմաստներ տեսնել անոր մէջ. Առաջին, ինչպէս էջքի պարագային ըսինք, նոյնը երբի պարագային կրնանք ըսել, աստուածութեան համար տեղի հարց գոյութիւն չունի, հետեւաբար «ըջաւ», «ելաւ» բացատրութիւնները յարաբերական ճշմարտութիւններ են, Աստուած ամէնուրեք է, ամբողջ տիեզերքը կը լեցնէ: Բայց որովհետեւ մարդեղութեան մարմինը կայ, այս պարագային, մարմինին յարաբերաբար երբ որ կը խօսինք, այդ «ելաւ» բացատրութիւնը կ'արդարանայ:

Այս երկինք բարձրացումը մենք մեր ծիսական կամ կրօնական լեզուին մէջ կը կոչենք համբարձում. եւ հետեւաբար երկինք ելաւ բացատրութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ ակնարկութիւնը այն երեւոյթին կամ տօնին, որ կը յիշատակէ

ճիշդ այս իրողությունը:

Այս կապակցությունում նախ այն է, որ մարդեղություն մէջ դարձեալ Աստուածութեան եւ մարդկութեան անբաժանելի ըլլալն է որ կը շեշտուի, ըսելու համար որ յարուցեալն է ետք այլ մարմինը անբաժանելի մնաց աստուածութեանն, ինչպէս աստուածութիւնը մահուան պարագային անբաժանելի մնաց մարմինն է, այնպէս ալ անբաժանելի ըլլալուն համար, այլեւ անբաժանելի այդ միաւորութեան համար Քրիստոս նաեւ մարմինը իր հետ տարաւ երկինք: Այլ խօսքով “տարաւ” բացատրութիւնն ալ ինքնին սխալ է տառացի կերպով, որովհետեւ ինքն էր մէկ եւ միակ նոյն Տէր Յիսուս Քրիստոսը որ գնաց երկինք:

«Հօրը աջ կողմը նստաւ»: Աջ կողմը նստիլ, աջ կողմ բացատրութիւնը դարձեալ մենք կրնանք հետեւեալ հարցումով սկսիլ, պէ՞տք է նիւթականօրէն աջ կողմ հասկնալ, որովհետեւ կողմի հասկացողութիւնը մենք ունինք, մարմնեղէն գոյություններուն յարաբերաբար աստուածութեան պարագային կ'ենթադրեմ որ աւելի բացատրութիւն մըն է, որ յատուկ ճշմարտութիւն մը կ'ուզէ փոխանցել:

Արդ, այս առաջին յայտարարութիւնը ըսել կ'ուզէ որ Քրիստոս ասով վերադարձաւ այն փառքին, այն պատիւին, այն փառաւորութեան, որ Աստուծոյ հետ ունէր, այլ խօսքով Հօր Աստուծոյ հաւասարապատիւ ըլլալն է որ մեզի կը նշէ: Միաժամանակ ըսելու համար որ Հօր ամբողջութիւնն է, Հօր փառակիցն է, ամբողջն ալ փառքի խորհրդանիշ մըն է:

Յովհաննու Աւետարանին 6-րդ գլուխին մէջ Յիսուս առիթով մը իր մարմինը ուտուելու մասին երբ կը խօսի, կ'աւելցնէ. «Ատիկա կը գայթակղեցնէ՞՞ ձեզ: Հապա ի՞նչ պիտի ընէք երբ տեսնէք որ Մարդու Որդին կ'ելլէ հոն՝ ուր էր նախապէս» (ՅՏ 6.61-62), որ կը նշանակէ վերադարձ իր աստուածային նախկին փառքին:

Ղուկասու Աւետարանին մէջ ալ մենք ատիկա կը տեսնենք, որ երբ ատեանին մէջ կը դատէին զինք, կը կարդանք. «Երբ առաւօտ եղաւ, ժողովուրդին երէցները, աւագ քահանաներն ու Օրէնքի ուսուցիչները հաւաքուեցան, Յիսուսը բերել տուին իրենց Ատեանը եւ ըսին անոր. “Եթէ դուն ես Քրիստոսը, ըսէ՛ մեզի”»: Յիսուս պատասխանեց. «Եթէ ըսեմ՝ պիտի չհաւատաք, եւ եթէ հարցում ընեմ ձեզի՝ պատասխան պիտի չտաք եւ ոչ ալ պիտի արձակէք զիս: Բայց ասկէ ետք Մարդու Որդին պիտի նստի ամենագոր Աստուծոյ աջ կողմը» (22.66-69), նոյն ատեանին դիմաց, որպէս գերագոյն վկայութիւն մը տուաւ:

Երկինք բարձրանալ եւ Աստուծոյ աջ կողմ նստիլը, կը կրկնեմ, նոր դիրք մը եւ նոր փառք մը չէ Քրիստոսի համար, ո՛չ թէ մարդեղութեանն է ետք ստացաւ անիկա: Երկրի վրայ եղած ատենը, օրինակ, վերջին անգամ երբ իր Հօր կ'աղօթէր, այդ աղօթքին մէջ ո՛չ թէ իրեն համար, այլ աշակերտներուն համար իսկ ըսաւ հետեւեալ բացատրութիւնը. «Այժմ, ո՛վ Հայր, փառաւորէ զիս այն փառքով որ ունէի քու հետդ, աշխարհի գոյութեանն առաջ»: Ինչորա՞նք մըն էր արդեօք Հօր ուղղուած, որ Հայրը իրեն նոր փառք մը տայ, թէ՞ պարզապէս յայտնութիւն մըն էր աշակերտներուն, որպէսզի ճանչնային, հասկնային իր ճշմարիտ ինքնութիւնը:

Աստուածային այդ փառքին հիմա կու գան միանալու Քրիստոսի երկու պաշտօնները: Երկրի վրայ Քրիստոս ժամանակակից մարդոց ներկայացաւ, իրեւ մարդարէ, իր ամբողջական մարդարէական պաշտօնին մէջ որ Աստուծոյ կողմէ եկաւ, յայտնութիւն բերելու համար, որ Աստուծոյ խօսքերուն բերանը եղաւ, ինչպէս Եբրայեցոց նամակին առաջին իսկ համարը պիտի ըսէր. «Անցեալին Աստուած տարբեր-տարբեր կերպերով խօսեցաւ, բայց վերջին օրերուն իր Որդիով խօսեցաւ մեզի» (Եբր 1.1-2), եւ

միաժամանակ ապագային վերաբերեալ սկիզբէն յայտնութիւններ կատարելու համար, որովհետեւ Քրիստոսի խօսքերուն մէջ նաեւ ապագայի վերաբերեալ բազմաթիւ մարգարէութիւններ կային:

Արդ, երկրի վրայ այդ պաշտօնը լիովին ցուցաբերեց: Երկինք իր համբարձումով եւ Աստուծոյ աջ կողմը նստելով Քրիստոս ստանձնեց նաեւ երկու այն միւս պաշտօնները, որոնցմով Հին Կտակարանին մէջ երեք պաշտօնները լրիւ իր վրայ առած կ'ըլլայ, այլ խօսքով՝ թագաւորութիւնը եւ երրորդ՝ քահանայապետութիւնը:

Երկինք բարձրացումով կը սկսի իր թագաւորութիւնը: Այդ թագաւորութեան մասին տարբեր ժամանակներ տարբեր արտայայտութիւններ կը լրսենք: Երկրի վրայ Քրիստոս երբ ներկայ էր արդէն կ'ըսէր որ «Աստուծոյ թագաւորութիւնը հիմա ձեր մէջ ներկայ է» (Հմմտ Մտ 12-28), որովհետեւ սկսած էր անկա իր ներկայութեամբ, անով որ Քրիստոս ինքը իբրեւ թագաւոր, ներկայ էր իր թագաւորութեամբ, այդ թագաւորութեան ապագայ հպատակներուն մէջ:

Երկրորդ սակայն, բուն թագաւորութեան ստանձնումը եղաւ համբարձումով: Համբարձումով Քրիստոս ինք արդէն Աստուծոյ կողքին բազմած, եկեղեցիէն ներս եւ ամբողջ աշխարհի վրայ, ամբողջ տիեզերքին ներկայ թագաւորն է: Բայց միաժամանակ, ինչպէս “Հայր Մեր” ով ամէն օր կ'արտայայտենք, միշտ ալ դեռ այդ թագաւորութեան վերջնական կամ վախճանական պատկերին սպասումը ունինք մենք, եւ եկեղեցին այդ սպասումով է որ միշտ կ'ըսէ «Եկեացէ արքայութիւն քո»: Ատիկա սակայն, վերջնական հանգրուանն է թագաւորութեան, երբ այդ թագաւորութիւնը պիտի ըլլայ այս աշխարհի բոլոր տեսակի իշխանութեանց ջնջումով, եւ բոլորին ենթարկումով Քրիստոսի թագաւորութեան. ներկայիս տակաւին անոնք են-

թարկուած չեն, ներկայիս միայն Քրիստոսի եկեղեցին է որ ենթարկուած է իրեն, Քրիստոս բոլորին վրայ կ'իշխէ, բայց ճիշդ այնպէս ինչպէս տակաւին անկատար թագաւորութեանց պատկերը եղող երկրաւոր թագաւորութիւններու մէջ պետութեան մը հաւատարիմ քաղաքացիներ եւ անհաւատարիմ քաղաքացիներ կ'ըլլան, ներկայ ժամանակի պատկերը այդպիսի պատկերացում մըն է, ուր կան հաւատարիմ քաղաքացիներ, այսինքն Աստուծոյ ճշմարիտ հնազանդները, եւ անոնք՝ որոնք այդ հնազանդութեան մէջ չեն, մինչեւ որ գայ կատարումը:

Իսկ այս թագաւորական պաշտօնի ստանձնումի մասին վկայութիւնը մենք երկու տարբեր սաղմոսներէ, կը քաղենք, երկու սաղմոսներէ որոնք եկեղեցւոյ մէջ մենք կը գործածենք նաեւ թէ՛ Համբարձման տօնին աւիթով եւ թէ՛ Քրիստոսի թագաւորութիւնը յիշեցնելու կամ փառաբանելու համար: 24-րդ սաղմոսը, այն կարեւոր սաղմոսն է, որ կը ներկայացնէ Քրիստոսի համբարձումը, ուր կարծէք հրեշտակային դասեր, գունդեր երկնաւոր, կը դիմաւորեն այս եկող փառաւոր թագաւորը: Սաղմոսին (7-11) համարները կ'ըսեն. «Համբարձե՛ք Իշխանի գորունս ձեր ի վեր», «Բացե՛ք ձեր փեղկերը, ո՛վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտեանականութեան դռները, որպէսզի փառաւոր թագաւորը ներս մտնէ»: Հարցում. «Ո՞վ է այս փառաւոր թագաւորը»: Պատասխան. «Տէ՛ր է, հօգր եւ անպարտելի, Տէ՛ր է, պատերազմի մէջ անխորտակելի: Բացե՛ք ձեր փեղկերը, ո՛վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտեանականութեան դռները, որպէսզի փառաւոր թագաւորը ներս մտնէ»: Դարձեալ կը հարցուի. «Ո՞վ է այս փառաւոր թագաւորը»: Եւ կը պատասխանուի. «Ամենակալ Տէ՛ր է, Ի՛նչքան փառաց թագաւորը»:

47-րդ սաղմոսը նոյնպէս կու գայ շեշտելու Քրիստոսի այս երկնաւոր համբարձումին կապուած թագաւորական

Հանգամանքը, որովհետև այնտեղ 5-7 համարները հետեւեալ բառերով կը ներկայանան. «Աստուած ցնծութեամբ համբարձաւ, փողի ձայնով բարձրացաւ Տէրը: Աստուած երգեցէ՛ք Աստուծոյ, սաղմոս երգեցէ՛ք. սաղմոս երգեցէ՛ք մեր Թագաւորին, սաղմոս երգեցէ՛ք, որովհետեւ Աստուած է որ կը թագաւորէ ամբողջ աշխարհի վրայ, անոր երգ երգեցէ՛ք» (5-7): **Կը սկսի Աստուած ցնծութեամբ համբարձաւ, վեր ելաւ, երկինք ելաւ բացատրութեամբ, որ ըսի, եկեղեցին իր մեկնութեան մէջ կ'առնէ իրրեւ համբարձման պատկերը:**

Գալով երկրորդին, այլ խօսքով քահանայական պաշտօնին, այդ մասին գլխաւորաբար Երբայեցիներու նամակին հեղինակն է, որ մեզի կը խօսի, կ'ըսէ. «Մենք ունինք այնպիսի քահանայապետ մը, որ ամենագոր Աստուծոյ աթոռին աջ կողմը նստած է երկինքի մէջ» (8-1) Անիկա է հետեւաբար, որ իրրեւ այս անգամ քահանայապետ, մեր աղօթքները կ'ընծայէ Աստուծոյ: Միաժամանակ յիշեցէ՛ք ինչ որ Յովհաննէս առաքեալ կ'ըսէ, մեր կողմէ եւ մեզի համար կը բարեխօսէ Հօրը քով, մնայուն բարեխօսն է այլեւս եւ բարեխօսութիւնը դարձեալ իր քահանայապետական պաշտօնին ակնարկութիւն մըն է, բայց նաեւ ինքը միաժամանակ իրրեւ Աստուած կ'ընդունի մեր աղօթքները եւ կը կատարէ մեր աղօթքները, ճիշդ այնպէս ինչպէս բազմաթիւ անգամներ խոստացաւ: **Ձեզի չըսի՞ խնդրեցէ՛ք ինձմէ եւ ես պիտի կատարեմ, բայց խնդրեցէ՛ք եւ ձեզի կ'ըսեմ որ զայն պիտի կատարեմ, որ կը նշանակէ խնդրանքները ընդունողը եւս ինքն է (Հմմտ Մտ 7.7): Եւ այդպէս ալ Հռոմայեցիներու նամակին մէջ կը կարդանք.**

«Յիսուս Քրիստոս մեզի համար մեռաւ, բայց մանաւանդ յարութիւն առաւ, եւ հիմա Աստուծոյ աջ կողմն է ու կը բարեխօսէ մեզի համար» (Հռ 8.34):

Բայց չմոռնանք, ի վերջոյ, որ Քրիստոսի այս փառաւորումը նաեւ մեր փառաւորումն է, որովհետև, եթէ Քրիստոս մարդկային մարմինը իր հետ տարաւ, կը նշանակէ թէ ատով ուղեց մեր մարդկութիւնը, մարդկային բնութիւնը տանիլ Աստուծոյ քով, իրրեւ տեսակ մը գրաւական, ըսելու համար որ բոլոր մարդիկ Աստուծոյ ներկայութեան դարձեալ պիտի բարձրանան: Այլ խօսքով, ցոյց տալու համար այն տեղը եւ այն փառքը, որ Աստուած սահմանած է մարդ արարածին, վերապահած է մեզի: Այն ինչ որ կրնանք ըսել դարձեալ մարդուն համար, թէպէտ մեզի կը վերաբերի, բայց մեզի իսկ հիանալի եւ զարմանալի, երբեմն անհաւատալի թուացող փառքն է, հրաշալի խորհուրդ մը, որուն դիմաց միայն Պօղոս առաքեալի բառերը կ'որդեգրենք, ըսելու համար. «Ի՞նչ խորունկ են Աստուծոյ առատ ողորմութիւնը, իմաստութիւնն ու գիտութիւնը: Որքա՞ն անմեղելի են անոր վնասները, եւ անգնելի են անոր ցամաքները: Եւ իրապէս, «ո՞վ կրցաւ երբեք Տիրոջ միտքը կարգալ, կամ ո՞վ երբեք խորհուրդ տուաւ անոր. կամ ո՞վ ի՞նչ տուաւ անոր երբեք, որ փոխարէնը առնելիք ըլլայ անկէ»: Որովհետեւ ամէն ինչ իրմէ է, իրմով եւ իրեն համար գոյութիւն ունի: Յաւէտ փա՛ռք իրեն: Ամէն» (Հռ 11.33-36):

ԶԱՐԵՀ ԱՐԹ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ

(Շար. 8)

ՊԱՏՄԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՅԵՍՏԵՐ ԷԿԷԱՐՏ

(1260 - 1328)

13-րդ դարը ողջ քրիստոնեայ Եւրոպայի համար հանդիսանում է վանական կարգերի եւ կրօնական միաստիկ շարժումների ծաղկման շրջան: Դա հէնց այն ժամանակահատուածն է, երբ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնները իրար դէմ լարուած պայքար էին մղում՝ նիւթական հարստութիւն ձեռք բերելու համար եւ հեղինակագրկելու մէկը միւսին: Դրա վրայ պէտք է աւելացնել մի շարք տարածքներում տեղի ունեցող բռնութիւնները, պատերազմները, կեղեքումները, համաճարակները, խաչակրական արշաւանքները եւ այլեւայլ արհաւիրքներ:

Ահաւաստիկ, այսպիսի մի խառնաշըփոթ եւ պատուհասներով լի իրադարձութիւններում, բազմաթիւ տղամարդիկ ու կանայք իրենք իրենց յանձնում են ապաշխարութեան՝ որոնելով հոգեկան անդորր եւ աստուածային խաղաղութիւն: Նրանց ստեղծած համարեայ բոլոր հոգեւոր շարժումների հիմքում կարեւոր տեղ են զբաղում կամաւոր աղքատութիւնն ու խոնարհ ապրելակերպը, նպատակ ունենալով նմանուել Քրիստոսի եւ Նրա առաքեալների վրած կեանքին:

Այսպիսով հանդէս են գալիս Պետրոս Վաղղուսի աշակերտները՝ «Լիոնի Աղքատներ» անունով, ինչպէս նաեւ այլ բիզոյցիները հարաւային Ֆրանսիայում: Սրանք իրենց հետապնդած նպա-

տակներում այն աստիճան են առաջ գնում, որ ընկնում են հերետիկոսութեան մէջ՝ մերժելով եկեղեցական բոլոր խորհուրդները, ինչպէս նաեւ որեւէ կարգի միջնորդութիւն՝ մարդկանց եւ Աստուծոյ միջեւ:

Այս դարաշրջանում, սակայն, սկիզբ առած խորհրդապաշտ շարժումների մի մասը չի անջատուում Եկեղեցու դաւանած վարդապետութիւնից: Այս առումով արժէ յիշել սուրբ Ֆրանչիսկոս Ասիզիի եւ սուրբ Դոմինիկոսի պարագաները, որոնք, քաջալերուելով Ինովկենտիոս Գ. Պապից, կարողացան իրենց հոգեւոր շարժումները միացնել Եկեղեցուն:

1221 թ. մուտք են գործում Գերմանիա Ֆրանչիսկեաններն ու Դոմինիկեանները: Նրանք հաստատուում են Քյոլնում եւ իրենց կողմն են շահում բազմաթիւ հաւատացեալների սրտերը, որոնցից չէր պահանջուում հրաժարուել ընտանեկան եւ ընկերային իրենց պարտականութիւններից: Նրանք յանձն էին առնում օգնութեան հասնել աղքատներին, խնամել հիւանդներին եւ մանաւանդ ուշադրութիւն դարձնել պատերազմներում զոհուածների երեխաներին:

Դոմինիկեան վանականների հովանաւորութեան ներքոյ հասակ է առնում եւ կրթում գերմանացի միջնադարեան մեծ աստուածաբաններից եւ խորհրդապաշտ խոշորագոյն փիլիսոփաներից մէ-

կը՝ Էկհարտ ազգանունով, որը հետագայում ստանում է «Մայեստեր» (Մագիստրոս) տիտղոսը եւ այնուհետեւ կոչուում է Մայեստեր Էկհարտ, դառնալով հմուտ դասախօս Քյոլնում, Փարիզում եւ Ստրասբուրգում:

Այստեղ հարկ ենք համարում հակիրճ կերպով բացատրել, թէ ո՞վ է իսկական խորհրդապաշտը: Խորհրդապաշտը նա է, որ իր մէջ եւ իր շուրջը գտնուող ամէն ինչում տեսնում է Աստուծոյ խորհրդաւոր ներկայութիւնը, Նրա գորութիւնն ու ազդեցութիւնը: Այդ գիտակցութիւնից մղուած խորհրդապաշտը համապարփակ սիրով գրկում է ողջ մարդկութիւնն ու տիեզերքը, սիրտը լցում է կարեկցութեամբ հանդէպ աստուածային ողջ ստեղծագործութեան:

Ենթադրուում է, թէ Մայեստեր Էկհարտը ծնուել է 1260 թ. Թիւրինգէնեան Հոխսայմ քաղաքում (Գերմանիա), ազնուականի մի ընտանիքում: Ասացինք՝ ենթադրուում է, քանի որ մի հին արձանագրութիւն Էկհարտ ազգանունան կողքին նշուում է Հոխսայմցի, իսկ ծննդեան թուականը վերականգնուում է յատկապէս այն փաստի վրայ, որ նա 1293/94 ուսումնական տարում իր մուտքի անդրանիկ դասախօսութիւնն է կարդացել Փարիզի համալսարանում, որի կանոնադրութեան համաձայն նման դասախօսութեամբ հանդէս եկող անձը պէտք է առնուազն 33 տարեկան լինէր: Թէ՛ այդ դասախօսութեան եւ թէ՛ նոյնպէս Փարիզում 1294 թ. Ապրիլի 18-ին արտասանած գատիկական քարոզի բնագրերը հասել են մեզ:

Էկհարտի անունն էլ մեզ յայտնի չէ: Ոմանք նրան անուանում են Յովհաննէս, բայց դա ստոյգ տուեալների վրայ չէ հիմնուած: Նա համարեայ միշտ հանդէս է եկել իր Էկհարտ ազգանունով եւ «Մագիստրոս» (Մայեստեր) տիտղոսով: 18 տարեկանում նա մտնում է Էրֆուրտի Դոմինիկեանների վանքը, դրանից

յետոյ աստուածաբանական բարձրագոյն կրթութիւն ստանալու համար ուղարկուում է Քէօլն քաղաքը: 1285ին ձեռնադրուում է քահանայ: Մի քանի տարի յետոյ նա դառնում է վանահայրը Էրֆուրտի դոմինիկեանների վանքի:

Դարավերջում նա մեկնում է Փարիզ եւ տեղի համալսարանում ձեռք է բերում «Մագիստրոս»-ի գիտական աստիճան: 1303 թուականին նա վերադառնում է Գերմանիա: Իր տուած շարունակական այցելութիւնների ընթացքում գերմանական զանազան կրօնական կեդրոնների՝ նա գրում է իր երկու նշանաւոր աշխատութիւնները՝ «Հոգեւոր Հանդիպումներ» եւ «Մատեան Աստուածային Մխիթարութեան»: Սակայն Էկհարտին հռչակաւոր են դարձնում նրա քարոզների հաւաքածուն:

Մխիթարութեան Մատեանում Էկհարտը յաճախակի մէջբերումներ է կատարում Ս. Օգոստինոսից, Պողոս առաքեալից, Աւետարաններից, Սողոմոն Իմաստունի գրքերից, նպատակ ունենալով հեռացնել հաւատացեալներին աշխարհի վաղանցուկ հաճոյքներից եւ երեւոյթներից, ինչպէս նաեւ ներքնապէս անքակտելի կերպով միացնել նրանց Աստուծու հետ: Ըստ նրա, անհրաժեշտ չէ ուխտագնացութիւններ կատարել դէպի Երուսաղէմ կամ այլ սրբազան վայրեր՝ գտնելու համար Աստուծուն, քանզի Աստուած ներկայ է մեր առօրեայ կեանքի ողջ ընթացքում: Այս առթիւ Էկհարտը խորհուրդ է տալիս ճանաչել Աստուծուն մարդկային կեանքում դրսեւորուող իւրաքանչիւր մասնիկի կամ երեւոյթի մէջ, լինի դա թէկուզ տառապանք, դժբախտութիւն, թշուառութիւն կամ ուրախութիւն, որոնք, իրականում, մեզ մղում են պարզապէս դէպի հոգեւոր բարեպաշտութիւն:

Ինչ վերաբերում է նրա քարոզներին, Էկհարտը զարգացնում է այն միտքը, թէ Քրիստոսի արտասանած իւրաքանչիւր խօսքն անգամ ունի իր խոր

իմաստը, որը պիտի հասկանալ ոչ թէ այլաբանական կամ բարոյական իմաստներով, այլ պէտք է կեանքի կոչել այն եւ խորհրդածութեան առարկայ դարձնել:

Իր քարոզներում էկզարտը խոստատու է հոետորական պաճուճանքներից. նա պարզապէս շեշտը դնում է այն բանի վրայ, թէ Աստուած ինքն իրեն արտայայտում է իր խօսքի մէջ: Այդ խօսքը իբրեւ «Քանն Աստուծոյ» յաւիտեանապէս ծնւում է: Այնտեղ, ուր այդ խօսքը չի ծնւում, այնտեղից բացակայում է Աստուած:

1325 թ., Վենետիկում, Կաթողիկ Եկեղեցու կողմից գումարուած մի ժողով փորձ է անում լուծութեան մատնել գերմանացի մի շարք հռչակաւոր քարոզիչների, որոնց թուում նաեւ՝ Մայեստեր էկզարտին: Վերջինս մերժում է իր դէմ յարուցուած մեղադրանքները եւ ներկայանում Ավինիոն քաղաքում Կաթողիկ Եկեղեցու հաւատաքննիչներին ու դիմում ինքնապաշտպանութեան: Չնայած այն բանի, որ նշանակուած էր մի յանձնախումբ քննարկելու էկզարտի բոլոր գրութիւնները եւ Յովհաննէս 22-րդ Պապը նոյնիսկ անձամբ ուսումնասիրել էր դրանք, այդուհանդերձ ոչ ոք չի համարձակւում դատապարտման վճիռ արձակել նրա դէմ: Նրա մահից մէկ տարի յետոյ միայն, 1329 թ., Պապը դատապարտում է ոչ թէ էկզարտի քարոզածը, այլ պարզապէս նրա մի քանի եզրայանգումները: Դրանից յետոյ, դարեր շարունակ, մոռացութեան է մատնւում էկզարտի անձն ու գործը:

Նոր միայն, 19րդ դարի սկզբին, գերմանացի հանրայայտ փիլիսոփայ՝ Հեգելը (1770-1831), յայտնաբերում է էկզարտի գործերը եւ մեծապէս խանդավառում նրանցով: Նա նոյնիսկ հաստատում է, թէ ինքն իր փիլիսոփայական ողջ մտածելակերպը պարտական է էկզարտին: Մօտաւորապէս միեւնոյն միտքն է արտայայտում նաեւ գերմանացի մի այլ հռչակաւոր փիլիսոփայ՝

Արթուր Շոփէնհաուերը (1788-1860):

էկզարտը հիմնականում մեղադրւում է պանթէիզմի (համաստուածութիւն) մէջ, որ նոյնացնում է Աստուծոն բնութեան կամ տիեզերքի հետ, այսինքն՝ ժխտում է անձնաւորեալ Աստուծու գերբնական գոյութիւնը: էկզարտի պարագայում այդ մեղադրանքը միայն մասամբ ճիշդ է. նրա պանթէիզմը ամբողջութեամբ կրօնամիտիկական է եւ անմիջական որեւէ կապ չունի ստոյիկեան կամ նորպլատոնական առումով դրսեւորուող պանթէիզմի հետ:

Դժբախտաբար դեռ շատերին անծանօթ է Մայեստեր էկզարտի բացառիկ եւ բարձրարժէք վաստակը փիլիսոփայութեան եւ հոգեւոր գիտութեան բնագաւառներում: Նրա մտքերն ընդհանուր առմամբ հոյակապ են եւ գերհմայիչ: Այստեղ մեր նպատակն է, կենսագրական այս շատ ամփոփ տեղեկութիւններից յետոյ, թարգմանաբար կատարուած հատուածներով, մի համեստ գաղափար տալ հայ ընթերցողին նրա գործերի մասին:

ԲԱՐԻ ԱՌԱՒՕՏ

Մայեստեր էկզարտը մի օր ասաց մի աղքատ մարդու.

- Աստուած քեզ մի բարի առաւօտ շնորհի, եղբայր:
- Տէ՛ր, այդ մաղթանքը դու քեզ համար պահիր, որովհետեւ ես դեռեւս ոչ մի վատ առաւօտ չեմ ունեցել, - պատասխանեց մարդը:
- Իսկ ինչպէ՞ս կարող է դա պատահել:
- Որովհետեւ այն բոլորը, որ Աստուած ինձ իբրեւ տառապանք է տալիս, ես Նրա սիրոյն համար կրում եմ ուրախութեամբ, ինձ այդպիսի մի պատուի համար անարժան եմ համարում, եւ այդ պատճառով էլ ես ինձ երբեք տխուր կամ տրտում չեմ զգում:
- էկզարտը հարցնում է.

- Առաջին անգամ ե՞րբ գտար Աստծուն.

- Հէնց այն ընդհանրապես, երբ ես հրաժարուեցի իմ բոլոր կրթերից:

- Իսկ ո՞ւր թողեցիր Աստծուն:

- Աստծուն թողեցի մաքուր եւ ջինջ սրտերի մէջ:

Էկհարտը հարցնում է.

- Ի՞նչ տեսակ մարդ ես դու, եղբա՛յր.

- Ես մի թագաւոր եմ:

- Որտե՞ղ ես թագաւորում:

- Ես թագաւորում եմ իմ մարմնի վրայ, որովհետեւ այն, ինչ որ իմ հոգին ձգտում է ստանալ Աստծուց, իմ մարմինն աւելի արագ է շարժուում խանդարելու համար այդ ձգտումը:

Էկհարտը հարցնում է.

- Ամէն մի թագաւոր պէտք է անպայման մի թագաւորութիւն ունենայ, իսկ որտե՞ղ է քո թագաւորութիւնը:

- Իմ թագաւորութիւնը իմ հոգու մէջ է: Երբ ես փակում եմ իմ զգայարանների դարպասները եւ ամենայն լրջութեամբ տենչում Աստծուն, այն ժամանակ ես գտնում եմ Նրան իմ հոգու մէջ այնպէս լուսաւոր եւ այնպէս բերկրայի, ինչպէս որ Նա գոյութիւն ունի յաւիտենական կեանքում:

Էկհարտը հարցնում է.

- Դու ուրեմն մի սուրբ ես, ո՞վ քեզ սրբացրեց, եղբա՛յր:

- Այդ բանն արեց լուսութեան մէջ իմ կեցութիւնը, իմ անդրանցական խորհրդածութիւնը եւ իմ միաւորումը Աստծու հետ: Սրանք ինձ վեր բարձրացրին դէպի երկինք, քանզի ես չկարողացայ ոչ մի տեղ հանգիստ գտնել, բացի Աստծոյ մօտից: Այժմ ես գտել եմ Նրան եւ Նրանում գտել եմ նաեւ յաւիտենական հանգիստն ու խաղաղութիւնը, եւ դրանք ժամանակագրային առումով գլուխ- անցնում են աշխարհի բոլոր թագաւորութիւնները:

ՅԱՂԹԵԼ ԹՎԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

«Արբերը հաւատով պարտութեան մատնեցին թագաւորութիւններ»:

(Եբր. ԺԱ. 33):

Սրբերը պարտութեան են մատնել չորս թագաւորութիւններ, եւ մենք էլ պէտք է գիտենանք յաղթել թագաւորութիւններին: Առաջին թագաւորութիւնը աշխարհն է. աշխարհին պէտք է յաղթել հոգու աղքատութեամբ: Երկրորդ թագաւորութիւնը մեր մարմինն է. նրան պէտք է յաղթել քաղցով եւ ծարաւով: Երրորդ թագաւորութիւնը սատանայինն է. նրան պէտք է յաղթել տառապանքներով եւ յամառ ջանքերով: Չորրորդ թագաւորութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսինն է. այն պէտք է զրաւել ուժով եւ սիրով:

Եթէ մարդ ամբողջ աշխարհի տէրն էլ լինի, նոյնիսկ այդ դէպքում պէտք է իրեն աղքատ համարի, չղաղարի իր ձեռքը երկարելուց դէպի մեր Տէր Աստծու դարպասը եւ նրանից խնդրի որպէս ողորմութիւն աստուածային շնորհք, քանզի այդ շնորհն է, որ մարդ արարածին դարձնում է Աստծոյ Որդի: Դրա համար էլ Դաւիթ մարգարէն ասում է. «Տէր, իմ ամբողջ փափաքը քո առաջ է, որ ձգտում է դէպի քեզ»: Պօղոս առաքեալն ասում է. «Ես ամէն ինչ նկատի ունեմ իբրեւ պղծութիւն, պարգապէս սիրաշահելու համար Յիսուս Քրիստոսին»: Անկարելի է, որ գոյութիւն ունենայ մէկ հոգի առանց մեղքի, բացի այն դէպքից, երբ Աստծոյ շնորհը հանգչում է նրա վրայ:

Շնորհի տէրը նա է, որ աշխուժացնում է մարդու հոգին եւ տրամադրում նրան կատարելու աստուածային գործողութիւններ, քանզի շնորհը բղխում է աստուածային ակունքից, այն նմանութիւնն է աստուածայինին, ունի աստուածային քաղցրութիւն եւ փոխակերպում է մարդկանց հոգին՝ նմանեցնելով այն Աստծու:

Երբ այդ միեւնոյն շնորհը, այդ

միեւնոյն քաղցրութիւնը ազդում է մարդու կամքի վրայ, այդ ժամանակ այն հանդէս է գալիս իբրեւ սէր: Երբ այդ միեւնոյն շնորհը ընկնում է մարդու մտաւոր կարողութեան վրայ՝ այն ժամանակ դա դառնում է յոյս եւ հաւատ: Երբ այդ միեւնոյն շնորհը ողողում է մարդու ցասումնական կիրքը՝ վերածում է դրան վերամբարձ զօրութեան եւ դառնում մի յոյս: Այս բոլորը կոչւում են աստուածային առաքինութիւններ, որովհետեւ առաջացնում են տարբեր աստուածային կարողութիւններ մարդկային հոգում, այնպէս, ինչպէս արեւի զօրութիւնը, որ առաջացնում է կեանք բնութեան մէջ: Եթէ լոյսը չքանայ, ապա ամէն ինչ կը կորչի այնպէս՝ ինչպէս ոչինչ գոյութիւն չի ունեցել երբեք: Նոյնը պատահում է նաեւ հոգու հետ. երբ շնորհը եւ սէրը հաստատուած են մարդու հոգում, հեշտ է կատարել աստուածային գործեր: Երբ մի մարդու համար դժուար է լինում կատարել աստուածային գործերը, ամենայն վստահութեամբ դա նշանակում է, որ նրա մօտ շնորհ գոյութիւն չունի: Հէնց դրա համար էլ վարդապետներին մէկն ասել է. «Ես չեմ դատապարտի այն մարդուն, որ փոխ զգեստներ է հագնում եւ համեղ ցաշերի է ձգտում, եթէ նա սէր ունի: Մինչդեռ այն մարդը որ անհամբեր է եւ դիւրաբորբոք, ինչպէս նաեւ չի փորձում բարեկամել իր կեցութիւնը, եթէ նոյնիսկ մեծ գործեր անի, շատ աղօթի, պաս պահի եւ առանձնանայ, դա նրա հոգուն ոչնչով չի օգնի»: Այսպիսով պէտք է ձեւը գտնել պարտութեան մատնելու թագաւորութիւններին:

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԾՆՈՒՆԴ

Այն ժամանակ Աստու իողմից ուղարկուեց Գաբրիէլ հրեշտակը մի կոյսի մօտ եւ ասաց.

«Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տէրը քեզ հետ է»:

(ՂԿ Ա. 26:28)

Ղուկաս աւետարանիչը գրում է, թէ՛ «այն ժամանակ Գաբրիէլ հրեշտակը Աստու իողմից ուղարկուեց»: Ո՞ր ժամանակ: Դա վեցերորդ ամիսն էր, ինչ Յովհաննէս Մկրտիչը յրիացել էր իր մօր որովայնում:

Նա, ով հարց կը տայ ինձ, թէ ինչո՞ւ ենք աղօթում, պաս պահում, մեր պարտականութիւնները կատարում, ինչո՞ւ համար ենք մկրտուած, ինչո՞ւ համար Աստուած մարդացաւ, մի բան, որին գերազանցող ոչինչ չկայ, - ես կ'ասէի նրան՝ ամբողջը նրա համար է, որպէսզի Աստուած ծնուի հոգու մէջ, եւ հոգին էլ՝ Աստուծոյ մէջ: Հէնց դրա համար է գրուել ամբողջ Աստուածաշունչը, դրա համար է Աստուած ստեղծել աշխարհը եւ հրեշտակների ողջ դասերը: Եւ այս բոլորը, դարձեալ պարզապէս նրա համար, որ Աստուած ծնուի մարդու հոգում, եւ այդ հոգին էլ՝ Աստուծոյ մէջ: Յորենի սերմերի բնութիւնը կայանում է ցորեն արտադրելու մէջ: Բոլոր տեսակի մետաղների բնութեան ազնուագոյն դրսեւորումը ոսկին է, իսկ բոլոր տեսակի ծնունդների ազնուագոյնը՝ մարդ էակն է: Դրա համար էլ մի վարդապետ ասել է՝ գոյութիւն չունի մի անասուն, որ որեւէ նմանութիւն չունենայ մարդու հետ:

Պօղոս առաքեալն ասում է. «Ի լրումն ժամանակի, Աստուած ուղարկեց իր Որդուն»: **Ս.** *Օգոստինոսը բացատրում է, թէ ինչ բան է «ի լրումն ժամանակի» արտայայտութիւնը՝ ասելով.* «Երբ այլեւ գոյութիւն չունի ժամանակ, դա է ի լրումն ժամանակին»: **Օրը** *աւարտուում է, այսինքն՝ իր լրումին է հասնում, երբ այլեւ ոչ մի բան չի մնում այդ օրուանից: Բացարձակապէս ճիշդ է այն, որ ժամանակն իր ամբողջութեամբ պէտք է չքանայ հէնց այն բնակին, երբ սկսուում է այդ ծնունդը, քանզի ոչինչ չի խանդարում այնքան այդ ծնունդը, որքան որ է ժամանակը եւ արարածը: Մի բացարձակ ճշմարտու-*

թիւն է այն, որ ժամանակը չի կարող առնչուել Աստծոյ հետ:

Մի ուրիշ իմաստ էլ ունի «ի լրումն ժամանակի» հասկացութիւնը: Նա, ով իշխանութիւն ունի վեց հազար տարին ամփոփելու ներկայի մէջ եւ ասելու՝ «այսօր ծնայ գեղ», հէնց այդ «այսօրը» նկատի ունի ժամանակի լրումը: Դա «այսօրն» է յաւիտենականութեան, որում մարդկային հոգին ճանաչում է այն ամէնը, որ աստուածային է եւ հաղորդակից է դառնում նորագոյն մի ուրախութեան: Այսօր, այս նոր ծննդով, Աստուած ստեղծում է մի անգամ եւս աշխարհը յար եւ նման այն առաջին օրուան, երբ ստեղծել էր այն: Այսպիսով, այն հոգու մէջ, որ ծնուելու է Աստուած, այդ հոգին պէտք է դուրս գայ ժամանակի սահմաններից եւ թեւեր առնի թուչելու՝ դիտելու համար Աստծոյ փառքն ու ճոխութիւնը:

Այն վարդապետները, որոնք փորձում են նկարագրել, թէ ինչքան լայնածաւալ է երկինքը, անհաւատալիօրէն ասում են. ամենափոքր կարողականութիւնը, որ գոյութիւն ունի իմ հոգում աւելի ընդարձակ է քան լայնատարած երկինքը, էլ չեմ խօսում մտքի կարողութեան մասին, այն գլում-անցնում է բոլոր տարածութիւնները: Իմ մտքումս, որ հոգու թագն է, ես կարող եմ լինել ովկիանոսից հազարաւոր մղոններ այն կողմ գտնուող մի վայրում այնքան մօտիկ, որքան որ այժմ ես ինձ գտնում եմ այստեղ: Այսպիսի տարածութիւններում եւ այսպիսի աստուածային փառքերի մէջ հոգին գտնում է իր առաւելագոյն գիտակցական կարողութիւնը, ոչինչ չի թաքնուում նրանից:

«Հրեշտակը ուղարկուած էր»: Վաղապետներն ասում են, թէ հրեշտակների բազմութիւնը կազմում է մի այնպիսի թիւ, որ գերազանցում է բոլոր հաշուարկները: Նրանց բազմութիւնը քանակական առումով այնքան մեծ է, որ թուերը բաւարար չեն ընդգրկելու այն:

Նրանց հաշիւը կարելի չէ նոյնիսկ մտքով ըմբռնել: Այն անձը, որ կարող է բազմութիւնները առանց թուերի օգնութեան հասկանալ, նրա համար «հարիւրը» միեւնոյն բանն է, ինչ որ՝ «մէկը»: Ըստ որում, եթէ աստուածութեան մէջ գոյութիւն ունենար հարիւր անձ էլ, այն անձը, որ գիտէ ըմբռնել զանազանութիւնները առանց թուերի, նա այդ անձերի մէջ կը ճանաչի միայն ընդհանուր մէկ Աստծուն: Անհաւատ մարդիկ եւ նոյնիսկ որոշ տգէտ քրիստոնեաներ զարմանում են այս բանի վրայ, նոյնիսկ մի շարք եկեղեցականներ այնքան քիչ գիտեն այս բաների մասին, որքան որ քարը կարող է իմանալ: Նրանք ասում են՝ «Երրորդութիւն», որպէս թէ նկատի առնուած լինեն երեք քարեր: Բայց նա, ով հասկանում է զանազանութիւնները առանց թուերի, նա անմիջապէս դաւանում է երեք անձերի մէջ միայն «մէկ» Աստծուն:

Ս. Օգոստինոսն ասում է. «Այն, ինչ որ հոգին սիրում է, սկսում է նմանուել դրան: Եթէ հոգին երկրաւոր բաներ է սիրում, ուրեմն դառնում է երկրաւոր: Եթէ հոգին Աստծուն է սիրում, ուրեմն կարելի է ասել, թէ այդ հոգին դառնում է Աստուած»: Եթէ ես սրա նման մի բան ասէի, այն անհաւատալի պիտի թուար նրանց աչքերին, որոնք չափազանց տկար են հոգեպէս: Բայց Ս. Օգոստինոսն ասում է. «Ես չեմ այս բանն ասողը, այլ Սուրբ Գիրքն է վկայում սրա մասին՝ հաստատելով. «Ես ասացի, թէ դուք աստուածներ էք»: Եթէ մէկը մի փոքր գաղափար ունենայ կամ մի փոքր յոյս եւ վստահութիւն այն բանի մասին, որ ես խօսեցի, անպայման կը հասկանայ ասածս: Ոչ ոք իր ծննդով չի եղել այնքան մօտիկ Աստծուն կամ չի միաւորուել նրա հետ, որքան Աստծոյ մէջ վերածնուող մարդու հոգին: Բայց այդ հոգին եթէ դժուարութիւնների հանդիպի եւ ամբողջութեամբ չկարողանայ աստուածանալ, դրանում Աստուած մեղք չունի:

Եթէ ատաղձագործը փտտած փայտով չի կարող մի գեղեցիկ տուն կառուցել, դա նրա մեղքը չէ, այլ՝ փայտինը: Միեւնոյն բանը պատահում է Աստուծոյ կատարած գործողութեանը մարդու հոգում: Եթէ հրեշտակը կարողանար իր պատկերը արտադրել եւ ծնուել մարդու հոգում, այն ժամանակ աշխարհը կարելի չէր լինի համեմատել ոչ մէկ բանի հետ, քանզի հրեշտակի ջնջին միջնորդութեամբ կարելի կը լինէր կանաչագարդել եւ փայլ տալ աշխարհին: Բայց ինքը՝ Աստուած է միակ աղբիւրը ծննդագործութեան, հրեշտակը դրանում պարզապէս ծառայի դեր է կատարում:

«Շնորհիւնկալ»: Շնորհի վերաբերեալ ամենափոքր գործը ըստ բնութեան աւելի մեծ է, քան բոլոր հրեշտակները: Ս. Օգոստինոսն ասում է, թէ Աստուծոյ կողմից շնորհի միջոցով եղած գործողութիւնները մեղաւոր մարդուն դարձնում են բարի, եւ դա շատ աւելի մեծ գործ է, քան մի նոր աշխարհ ստեղծելը: Աստուծոյ համար շատ հեշտ է շարժել երկինքն ու երկիրը, քան թէ ինձ համար շարժել մի խնձոր իմ ձեռքում: Երբ շնորհն իջնում է մարդու հոգում, նրան դարձնում է այնքան ջինջ, որ նա նմանում է Աստուծուն:

«Աստուած քեզ հետ է»: Այսպիսով տեղի է ունենում ծնունդը: Սա ոչ ոքի չպէտք է անկարելի թուայ, քանզի ինչ-

քան էլ սա անհասկանալի լինի, Աստուած ինքն է, որ հնարաւոր է դարձնում այն: Նրա բոլոր պատուիրանները ինձ համար հեշտ է պահելը: Ինչ որ ուզի թող հրամայի ինձ, դա ինձ ամենեւին չի մտահոգի, դա ինձ համար շատ քիչ բան կը լինի այն դէպքում, երբ նա միաժամանակ տայ ինձ շնորհը՝ իրագործելու այդ հրամայուածը: Ոմանք ասում են, թէ չունեն այդ շնորհը: Ես ասում եմ. «Ցաւում եմ դրա համար, բայց դու կ'ուզենայի՞ր ունենալ այն»:

- «Ո՛չ»:

- «Այն ժամանակ ես աւելիով եմ ցաւում»:

Եթէ դու չես կարողանում ունենալ այդ շնորհը, նուազագոյնը, որ պէտք է անես, դրան ձգտելն է: Իսկ եթէ չես կարող դրան ձգտել, պարզապէս դրան ձգտելու ձգտումն ունեցիր: Դաւիթ մարգարէն ասում է. «Տէ՛ր, փափաքելով փափաքել եմ ունենալ քո արդարութիւնը»:

Թող Աստուած օգնի մեզ, որ ձգտենք Նրան այնպէս, որ նա ուզենայ ծնուել մեր մէջ: Ամէն:

Ուսումնասիրեց եւ թարգմանեց՝
ՅԱԿՈՒ ԱՐԻ. ԳԼՆՃԵԱՆ

(Շար. 1)



ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ*

Դ. ՄԱՍ

**ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԷՆ ՄԻՆՉԵԻ
ՊԱՇՏՕՆԱՏՈՒՉՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ**

Գլուխ 6

Եւրոպական Քրիստոնէութիւնը 9-րդ դարուն

Չարլզ Մեծի մահուան (814) յաջորդող շրջանը կը յատկանշուէր Գարոյինեան կայսրութիւնը ցնցող քաղաքական վերիվայրումներով: Սա արդիւնք էր Չարլզի յաջորդներուն անձեռնհասութեան եւ ֆրանքեան այն սովորութեան թէ ժառանգութիւնը պէտք էր բաժնուէր բոլոր վերապրող արուններուն միջեւ: Այս երկուքին վրայ կը բարդուէր տեղայնական մտայնութիւնը, երբ մանաւանդ վաճառականական եւ հաղորդակցական կապերը եւս առկայ չէին: Գարոյինեան կայսրութիւնը կը շարունակէր մնալ գիւղատնտեսական կառոյց մը, որուն ընկերային միաւորը կը հանդիսանար ինքնաբաւ աւատապետական կալուածք: Միաժամանակ մարտավարական տկարութիւնն ալ իր ժխտական դերակատարութիւնը կ'ունենար, երբ բանակը չէր կրնար գսպել Եւրոպան եւ Բրիտանիան ծովէն ասպատակող ու գինուորական վարժ մարտունակութիւն ունեցող վալքինկներն ու սարակինոսները:

Չարլզի կը յաջորդէր իր միակ օրինակը՝

նաևոր գաւակը՝ Լուի «Բարեպաշտ»ը (814-840), որ Գարոյինեան կայսրութիւնը կը ժառանգէր որպէս մէկ ամբողջութիւն: Լուի գինուորական չէր եւ բնաւ կարողութիւն չունէր կայսրութեան գործութեան աղբիւրը հանդիսացող բանակին հրամանատարութիւնը վարելու: Սակայն, ան կը յաջողէր իր իշխանութիւնը տարածել ամբողջ կայսրութեան վրայ՝ ապաւինելով լատին քրիստոնէական կայսրութեան գաղափարականը դարբնող հոգեւորականներու գործակցութեան: Ան իր կայսերական պաշտօնը որպէս աստուածային կոչում կ'ըմբռնէր եւ ինքզինք քրիստոնեաներու տիրակալ եւ անոնց շահերուն պաշտպան կը համարէր: Ան այս կոչումը վաւերական կը նկատէր եպիսկոպոսներէն ստացած իր օծումով: Այս եպիսկոպոսները իր կայսրութեան դատաւորները եւ իր գլխաւոր նախարարներն ու խորհրդականներն էին: Լուի, իր հօր հետեւողութեամբ, կը գործէր որպէս եկեղեցիներու կեանքը բարեկարգող եւ կանոնաւորող գլխաւոր հովիւր:

Հակառակ իր արձանագրած յաջողութեան, Լուի կ'որոշէր քրիստոնէական կայսրութիւնը բաժնել իր գաւակը

* Շար. նախորդ թիւէն:

ներուն միջև: Առաւել, ան այս քայլը այնպիսի տհասութեամբ ի գործ կը դնէր, որ իր եւ անոնց միջեւ յարաբերութիւնները բոլորովին կը վատթարանային: Անոնց վէճերը նոյնիսկ իր մահէն ետք կը շարունակուէին եւ միայն 843 թուականին էր որ Վերտենի Դաշինքով վերջնական լուծումի կը յանգէին: Այս դաշինքը Ֆրանսայի եւ Գերմանիոյ բաժանեալ պատմութիւնները կը սկզբնաւորէր եւ կայսրութիւնը երեք մասերու կը բաժնէր: Լուիի (843-875) կը տրուէր Հռենոսի արեւելքը գտնուող «Գերմանիա» բնորոշուած մասը: «Ճաղատ» Չարլզը (843-877) կը տիրանար գրեթէ այժմու ամբողջ Ֆրանսային: Լոթհէր Ա. (843-855), աւագագոյնը, կայսր տիտղոսին հետ կ'առնէր Հռենոսի ակէն մինչեւ հիւսիսային Իտալիոյ լոմպարտ թագաւորութիւնը երկարող կեդրոնական տարածքը: Այս մասնահատումը աւելի ուշ տակաւին կը շարունակուէր: Լոթհէր Ա. ի մահէն ետք, անոր տարածքը երեք մասի կը բաժնուէր եւ ի վերջոյ փոքր ինքնավարութիւններու կը վերածուէր: Թէեւ Գերմանիոյ եւ Ֆրանսայի մէջ թագաւորութիւնը կը տիրէր, սակայն կեդրոնական իշխանութիւնը գոյութիւն չունէր: Երբ Գերմանիոյ Գարոլինեան վերջին թագաւորը՝ Լուի «Մանուկ» կը մահանար 911 թուականին, իշխանութեան կը տիրանային Պավարիոյ, Ֆրանքոնիայի, Սուապիայի եւ Սաքսոնիայի ցեղապետերը, որոնք արդէն իսկ Գարոլինեան թագաւորներէն դուրս տիտղոսին արժանացած էին: Նմանապէս Ֆրանսայի վերջին Գարոլինեան թագաւորները եւս, որոնցմէ ամէնէն վերջինն էր Լուի Ե. (986-987), իրենց իշխանութեան տէրը չէին: Այսպիսով, Չարլզ Մեծի իրագործած քաղաքական միասնականութիւնը իր աւարտին կը հասնէր:

Իտալիոյ եւ Ֆրանսայի մէջ, ուժերու այս մասնատուածութիւնը մասամբ արդիւնք էր 9-րդ եւ 10-րդ դարերուն Եւրոպան ցնցող արտաքին յարձակում-

ներուն: Դանիական եւ Նորվեկեան ծովային ժողովուրդներ 9-րդ դարու սկիզբէն իսկ Անգլիա եւ Ֆրանսա կ'ասպատակէին: Մինչ ասոնց շուէտացի զարմիկները Պայթեան ծովեզրէն Ռուսիոյ վրայով Սեւ Ծով կը թափանցէին, դանիացիներ եւ նորվեկացիներ անգլոսաքսոն եւ Ֆրանքեան գետեզրերէն յարձակումի անցնելով քաղաքներ հրոյ ճարակ կը դարձնէին, վանքեր կը գրաւէին եւ արքունական տուրքերը վճարելէ կը խուսափէին:

Անգլիոյ մէջ, այս յարձակումները պատճառ կը դառնային վանքերու այն մտաւորական եւ մշակութային կեանքի կասեցման, որ ոչ միայն իմացական զարթոնքին նպաստած էր, այլ նաեւ աւետարանչութեամբ Գերմանիոյ քրիստոնեայ զարձը իրագործած: Լինտիաֆարնը արդէն գրաւուած էր 793 թուականին. իսկ 9-րդ դարու կիսուն դանիացիներ կ'ասպատակէին անգլիական կեանքը բնորոշող կեդրոններուն մեծ մասը եւ իրենց իշխանութիւնը կը տարածէին գրեթէ Անգլիոյ ամբողջ տարածքին վրայ: Կացութիւնը կը փրկուէր միայն Ուէսէքսի թագաւոր Ալֆրէտ Մեծի (871-899) մղած էտիկիթնի ճակատամարտով, որ կը պարտադրէր դանիացիներուն, որպէս Danelaw բնորոշուած, հողատարածքներու ներքին բաժանումը ընդունիլ եւ անոնց իշխանութեան ներքեւ կը դնէր կեդրոնական եւ հիւսիսարեւելեան Անգլիան:

Համեմատական այս խաղաղութիւնը պարզապէս առիթ կու տար վայրենիներուն իրենց յարձակումները խստացնելու Ֆրանսայի եւ Հոլանտայի վրայ: Մինչ Լոթհէր Ա. ի գաւազը՝ Լուի Բ. Պապերուն հետ համախորհուրդ եւ յաճախ բիւզանդական գործակցութեամբ կը փորձէր կասեցնել սարակինոսներու ներխուժումը հարաւային Իտալիա, վայրենիներ կը յարձակէին հիւսիսային Կենթ, Գէօլն եւ Ռայմզ քաղաքներուն վրայ: Ի վերջոյ, հիւսիսային այս ցեղերը

Սեն Գեստի շուրջ կ'ապաստանէին եւ Ֆրանսայի «պարզամիտ» Չարլզ Թագաւորը (898-929) Ալֆրէտ Մեծի նման կը պարտաւորուէր իր Danelaw-ն ունենալ՝ համաձայնութեան գալով անոնց առաջնորդին՝ Ռոլլոյի հետ: Ռոլլո Նորմանտիի Դքսութիւն բնորոշումով ծանօթ այս հողատարածքներուն փոխարէն կ'ընդունէր քրիստոնեայ դառնալ եւ իր կեդրոնը կը հաստատէր Ռուէնի մէջ:

Ֆրանսայի մէջ Գարոլինեան իշխանութեան անկման կը նպաստէր աստիճանաբար աճող եւ 18-րդ դարուն որպէս «աւատական դրութիւն» բնորոշուած շարժումը, որ խորքին մէջ կառավարման ընկերային եւ քաղաքական դրութիւն մըն էր: Այս շարժման արմատները կը գտնուէին գերմանական պատերազմական ղեկավարին եւ անոր ենթակայ գինուորներուն յարաբերութիւններուն մէջ՝ փոխադարձ ծառայութեամբ եւ հաւատարմութեամբ դրսեւորուած: Սա շօշափելիօրէն կը ցոյրար տիրոջ կողմէ հպատակներուն մշակման համար շնորհուած հողային պարգեւով եւ թագաւորին կեդրոնական իշխանութեան վայելած անվիճելի հեղինակութեան պահպանմամբ: Իր հաւատարիմ ծառայութեան փոխարէն, ճորտը տիրոջմէն կը ստանար ցկեանս մշակման համար շնորհուած հողեր: Արքունական պաշտօնեաներ այս հողերուն վրայ կը հաստատէին իրենց դքսութիւնները եւ այս աւատական դրութեամբ կ'ապրէին: Նկատի ունենալով որ այս դրութիւնը տնտեսական ու գինուորական ոյժի հիմք կը ծառայէր եւ հօրմէ որդի կը փոխանցուէր, այս պաշտօնեաները ժառանգական ազնուականութեան կը վերածուէին: Առաւել, իրենց ձեռք բերած անձնական հարստութեան ու ուժին յենած անոնք ո՛չ միայն թագաւորէն անկախանալու կը ձգտէին, այլ նաեւ շրջանային անկախ կառավարիչի կը վերածուէին՝ երբ մանաւանդ ժողովրդական կարգապահութեան, արդարութեան

հաստատման եւ արտաքին թշնամիներու դէմ ղնելու պարտաւորութիւնները եւս իրենց վրայ կը ծանրանային: Այսպիսով, անոնք եւս աւատապետութիւններ կը հաստատէին եւ իրենց հողատարածքներուն վրայ փոքր թագաւորներ դառնալով իրենց իշխանութիւնը թէ՛ գիւղացիութեան եւ թէ՛ ազատ մարդոց վրայ կը տարածէին: Այս բոլորէն բնականաբար ամենէն շատ կը տուժէր կայսերական կեդրոնական իշխանութիւնը եւ աստիճանաբար վանքերն ու եպիսկոպոսութիւնները եւս տեղական աւատապետներու ենթակայ կը դառնային:

Յամենայնդէպս, մինչ Չարլզ Մեծի հաստատած քաղաքական միութիւնը կը խախտէր, գարոլինեաններու իրագործած կրօնական միութիւնը նոյն ճակատագրին չէր ենթարկուեր: Կաթոլիկ եւ հռոմէական քրիստոնէութիւնը եւրոպական եւ անգլիական մշակոյթի եւ ընկերութեան միասնականութեան ազդակը կը հանդիսանար: Անոր կեդրոնական հաստատութիւնները՝ պապականութիւն, եպիսկոպոսութիւն եւ վանականութիւն, հակառակ ժամանակակից դէպքերուն եւ պայմաններուն յաճախակի ազդեցութեան տակ ըլլալուն, իրենց կենսունակութիւնը կը պահպանէին: Մանաւանդ տիրական կը մնար արքունական եւ եկեղեցական իշխանութիւններու դաշնութեան Գարոլինեան յարացոյցը եւ կը շարունակուէր ընկերութեան քրիստոնէական սնուցումը:

Իր ծագումով վանականութիւնը կը ներշնչուէր աշխարհէն մեկուսանալու եւ աշխարհիկին հակադրուելու ու անձնական ճիգով Քրիստոսի նմանելու ոգիէն: Սելթիք եւ ապա անգլիական վանականութիւնը թէեւ կորսնցուցած էր այս ճգնողական նկարագիրը, սակայն միաժամանակ լծուելով հովուական, աւետարանչական եւ դաստիարակչական առաքելութեան, Բերին Բ.ի եւ անոր յաջորդներուն նեցուկով հեթանոս Եւրոպայի քրիստոնէացման գլխաւոր ազդա-

կը կը հանդիսանար: Արդ, 9-րդ դարուն, թագաւորներու եւ բարերարներու առատաձեւութեամբ, վանքերը ոչ միայն ամէն տեղ կը բազմանային, այլ նաեւ աշխարհիկ եւ եկեղեցական հեղինակութեան կեդրոններ կը դառնային: Աւելին, շնորհիւ Ս. Պենետիկտոսի Վաննին հասարակաց գործադրութեան, վանական կեանքը աւելի միաձեւութիւն կը ստանար: Լուի «Բարեպաշտ» մեծապէս կը նպաստէր այս բոլորին, երբ 814 թուականին կայսերական պալատ կը հրաւիրէր պուրկոն վանական Պենետիկտոս Անիանցին (751-821), որ բոլոր վանքերուն կը պարտադրէր հետեւիլ Ս. Բենեդիկտոսի Վաննին: Ան պալատին հարեւանութեամբ վանք մը կը հիմնէր եւ 817 թուականին կայսեր հրաւերով համախմբուած վանահայրերու էքսլա-Շափելի ժողովին իր խմբագրած վանական դրութիւնը ամէն տեղ ի գործ դնելու իրաւունքը ձեռք կը ձգէր: Բարեկարգութեան այս քայլը մեծ խանդավառութեամբ կ'ընդունուէր ամէնուրեք եւ Պենետիկտոսի ներշնչած կարգապահութեան ոգին ի վերջոյ Եւրոպայի խստակրօն վանական կեանք մը կը շնորհէր:

Սակայն, 9-րդ եւ յետագայ դարերու Պենետիկտեան վանքերը բոլորովին կը տարբերէին Երկր դարու իրենց հիմնադիրին նախատեսած վանքերէն: Վանականները այլեւս աշխարհականներ չէին, այլ մեծաւ մասամբ հոգեւորականներ, որոնք հողամշակութեամբ չէին զբաղէր: Անոնց արտերը, ժամանակակից սովորութեան համաձայն, կը մշակուէին ճորտերու կողմէ, մինչ իրենք պաշտամունքի եւ այլ աշխատանքներու կը նուիրուէին: Առաւել, թէեւ անոնք մեկուսացած համայնքներ էին, սակայն իրենց ստանձնած պատասխանատուութեան բերումով աւելի աշխարհամերձ էին: Անոնց մատուցած յարաճուն ծաղկուն եւ երկարատեւ աստուածային պաշտամունքը ո'չ միայն որպէս Աստուծոյ ընծայուած ծառայութիւն մը կ'

'ըմբռնուէր, այլ նաեւ յանուն անկարգ ընկերութեան՝ չարին դէմ մղուող շարունակական պայքար մը: Վանականներուն ունեցած կալուածները ո'չ միայն նիւթական կարելիութիւններով կ'օժտէին գիրենք եւ իրենց կայսերական եւ ազնուական հովանաւորները, այլ նաեւ ուսման ու արուեստի կեդրոններու կը վերածէին վանքերը, ու նոյնիսկ պատերազմներու պարագային գինուորներու հայթայթման կը նպաստէին: Ամէնէն կարեւորը, վանքերը՝ իրենց կարգապահ եւ խաղաղ կեանքին ու աստուածային սպասաւորութեան շնորհիւ, սրբութեան խորհրդանիշներ կը դառնային անկարգ աշխարհին մէջ:

Վանքերու եւ ընկերութեան այս յարակցութիւնը միաժամանակ կ'ազդէր եպիսկոպոսութեան վրայ: Գարոյնեան ընկերութեան մէջ, եպիսկոպոսը ամէն բանէ առաջ հովիւն էր, որուն խնամքին յանձնուած էր իր իշխանութեան տակ գտնուող ամբողջ ժողովուրդը: Ան կը վայելէր թագաւորին անվերապահ գործակցութիւնը. որովհետեւ, կը նշանակուէր թագաւորէն, որ իր հովանին կը տարածէր անոր եկեղեցւոյ վրայ եւ ժողովներ կը հրաւիրէր՝ եպիսկոպոսութիւնը նկատելով իր պատասխանատուութեան կարեւոր բնագաւառներէն մին ի բարօրութիւն իրեն հպատակ քրիստոնեայ ժողովուրդին: Եւրոպայի մէջ եկեղեցւոյ եւ թագաւորութեան միջեւ աճող գործակցութիւնը առաւել կը նպաստէր եպիսկոպոսներու վարկին եւ պատասխանատուութեան աճման՝ նոյնիսկ ի հեճուկս պապերուն: Արդ, եպիսկոպոսներ աստուածային օժում ստացած թագաւորներուն տրամադրութեան տակ կը դնէին իրենց կալուածներուն եկամուտներն ու իրենց վարչական կարելիութիւնները: Թագաւորներն ալ իրենց հերթին եպիսկոպոսները կը նկատէին իրենց խորհրդականներն ու հաւատարիմ հպատակները, որոնց բոլոր ստացուածքները ժառանգականօրէն փոխան-

ցելի չըլլալով՝ միշտ թագաւորին տրամադրութեան տակ կը գտնուէին: Ասոր փոխարէն, եպիսկոպոսներ թագաւորական նիւթական ամբողջական աջակցութիւն կը վայելէին: Գարոյինեան թագաւորներն ու Գերմանիոյ անոնց յաջորդները եկեղեցիներու պահպանութիւնը որպէս սրբազան պարտաւորութիւն կ'ըմբռնէին եւ աւատական դրութեան զարգացմամբ եկեղեցական կալուածներուն աւելիով կ'ապաւինէին:

Քաղաքական ապակեղորոնացման այս շրջանին, վանքերու եւ եպիսկոպոսութիւններու բերած նպաստին մէջ ուշադրաւ տեղ ունէր Ալզուինի եւ անոր գործակիցներուն Չարլզ Մեծի պալատին մէջ սկսած ուսումնական նախաձեռնութիւնը: Ասոր հետեւողութեամբ, վանքերն ու եպիսկոպոսարաններու դպրանոցները կ'օժտուէին եօթը ազատ արուեստները զասաւանդող ուսուցիչներով: Այսպիսով, հռչականուն վանքեր լայն կարելիութիւններ կ'ունենային ձեռագրատուներ պահելու, աստուածաբանական եւ մեկնողական գրականութիւն մշակելու եւ միաժամանակ ուսողութիւն, տոմարագիտութիւն եւ աստղաբանութիւն զասաւանդելու: Այս «Գարոյինեան վերածնունդ»ը նաեւ մղում կու տար բանաստեղծութեան եւ ընկերա-քաղաքական գիտութիւններու խորացման եւ աստուածաբանական նոր քննարկումներու զարգացման:

Այս ժամանակաշրջանի ամէնէն ուշադրաւ աստուածաբանը «ճաղատ» Չարլզի դպրոցէն իրլանտացի ճան Աբոթ Էրիսենան էր (մ. թ. 877), որ լատիներէնի կը թարգմանէր Կեղծ-Դիոնիսիոս Արիսպագացիի երկերը եւ նոր պղատոնական ոգիով տողորուած անոնց կը կցէր իր գաղափարները՝ Յաղագս Բնութեան Բաժանման երկին մէջ: Դժբախտաբար, ան իր աշխատանքը շարունակողներ չունենալով, միայն փոքր հետք մը կը թողուր թարգմանական մարզէն ներս: Այս օրերուն երկու վար-

դպետական վէճեր կը ծագէին դպրանոցներուն մէջ: Առաջինին պատճառն էր Գորպիի վանահայր՝ Փասկասիոս Ռատպերթոս (մ. թ. 860), որուն Յաղագս Տիրոջ Մարմնի եւ Արեան երկը ոմանց կողմէ կը քննադատուէր որպէս սուրբ պատարագի հացին եւ գինիին մէջ Քրիստոսի խորհրդական ներկայութեան ստորագնահատում: «Ճաղատ» Չարլզ եւ ուրիշներ կը հակադարձէին այս վարդապետութեան: Ասոնց մէջէն ամէնէն աչքառուն կը հանդիսանար նոյնինքն Փասկասիոսի վանքի վանականներէն Ռաթրամոս, որ Ս. Օգոստինոսի հետեւողութեամբ կը գրէր թէ Քրիստոսի ներկայութիւնը սուրբ պատարագի հացին եւ գինիին մէջ թէեւ ամբողջապէս իրական էր, սակայն հոգեւոր ու պատկերաւոր հանգամանք մը ունէր եւ զգացականօրէն անհասանելի ըլլալով հանդերձ խորհրդականօրէն հասանելի էր: Նոյն հարցին կը հակադարձէր նաեւ Ալզուինի աշակերտած Ֆուլտայի վանահայր եւ ապագայի Մենցի արքեպիսկոպոս Ռատպանոս Մորոս (մ. թ. 856), որ ո՛չ միայն Փասկասիոսի կը պատասխանէր, այլ նաեւ իր տեսակէտը պաշտպանելու համար Աստուածաշունչի ընդարձակ մեկնութիւն մը կը հեղինակէր:

Երկրորդ վէճը, որուն եւս մասնակից կը դառնային Ռատպանոս եւ Էրիսենան կը ծագէր Կոթսչոլք վանականին պատճառաւ (մ. թ. 868), որ Ֆուլտայի վանքէն Ֆրանսայի Օրպէ արքայարանը կը փոխադրուէր եւ որուն վանականութիւնը լքելու ճիգերը Ռատպանոսի կողմէ խստօրէն կը քննադատուէին: Օրպէյի մէջ ան կը խորանար Օգոստինոսի ուսումնասիրութեան մէջ եւ կրկնակի նախասահմանուածութեան ծայրայեղ վարդապետութիւն մը կը պաշտպանէր, թէ Աստուած ոմանց փրկութիւնը եւ այլոց դատապարտութիւնը նախօրոք արդէն իսկ ճշդած էր: Այս տեսակէտը այս ժամանակաշրջանի ամէնէն հրատապ հարցը կը դառնար՝ 5-րդ դարու կիսա-

պեղագեանութեան հակամարտութիւնները վերարժարծելով: Այս տեսակէտին կը հակադարձէին ո՛չ միայն Ռապանոս եւ Էրիճենա, այլ նաեւ Հինգմար (մՏ. 882), որ Ռէյմգի հռչակաւոր արքեպիսկոպոսն ու Ս. Տենըյի նախկին վանականներէն էր եւ առաւելաբար ծանօթ էր որպէս քաղաքագէտ, վարչագէտ եւ կանոնագէտ՝ քան թէ աստուածաբան: 848 թուականին, Մենցի մէջ գումարուած սինոտ մը, Կոթսչոյքը կը դատապարտէր: Ան ցիեանս Հոթվիրըսի վանքը կը քաշուէր եւ հոնկէ կը շարունակէր իր գրաւոր պայքարը իր ընդդիմադիրներուն դէմ: Աստուածաբանական խրթնութիւններով զարգացած այս երկու վէճերը ո՛չ միայն այսպիսով չէին աւարտիր, այլ կը դրսեւորէին Արեւմուտքի մէջ աճող աստուածաբանական հարցերը, որոնք նոյնիսկ կեդրոնական տեղ պիտի գրաւէին Բողոքական աստուածաբանութեան մէջ:

Այս բոլորին մէջ Հռոմի Եկեղեցին եւ պապականութիւնը կը կորսնցնէին արեւմտեան քրիստոնէութեան մէջ իրենց ունեցած մասնաշատուկ դիրքը: Թէեւ որպէս Պետրոս Առաքեալի փոխանորդն ու ներկայացուցիչը Պապը բացառիկ յարգանք կը վայելէր եւ Հռոմի Աթոռին բարօրութիւնը Գարոյիներան իշխանաւորներուն գլխաւոր մտահոգութիւններէն մին կը հանդիսանար, սակայն անոնք գործնականօրէն չէին կարողանար նպաստել այս նպատակին: Աւելին, պապեր մտահան չէին ըրած Կոստանդիանոսի Տուուչութիւնով իրենց ձեռք բերած իրաւասութիւնները եւ անով իրենք իրենց կը վերագրէին բոլոր եպիսկոպոսներուն վրայ տարածուող վարչական տիեզերական իշխանութիւն մը, Եկեղեցւոյ ուսուցման գլխաւոր հեղինակութիւնը եւ բոլոր քրիստոնեայ իշխանաւորները ներառնող հոգեւոր ուժ մը: Անշուշտ այս բոլորը վերագրել չէր նշանակեր ամբողջապէս իրագործել: Սակայն, պարագաներուն համե-

մատ, պապեր այս բոլորը կը փորձէին ի գործ դնել: Ծրդ դարու սկզբնաւորութեան, անոնք յաճախ կը յաջողէին իրենց իրաւունքները պաշտպանել իրենց իրաւասութեան տակ գտնուող շրջաններուն մէջ եւ եկեղեցիները իրենց հեղինակութեան տակ պահել: Սակայն, անոնք ուղղակիօրէն չէին կարողանար եկեղեցիներու առօրեայ ղեկավարման եւ մանաւանդ քաղաքական հարցերուն միջամուխ ըլլալ: Աստիճանաբար, Գարոյիներան կայսրութեան անկման հետ, պապերը միայն իտալական քաղաքականութեամբ պիտի կարողանային զբաղուիլ:

Նիկոյայոս Ա. (858-867) պապական հեղինակութիւնը պարտադրող ամէնէն ուժեղ դէմքն էր այս ժամանակաշրջանին: Իր նախորդը, Լեոն Դ. (847-855), գահ կը բարձրանար սարակինոսներու Հռոմի եւ Ս. Պետրոս ու Ս. Պողոս տաճարներու ներխուժումէն մէկ տարի ետք: Անոր գահակալութիւնը ընդհանրապէս կը յատկանշուէր Փիզիքական պաշտպանութեամբ, մանաւանդ Տիրբեր գետի աջ ափի «Լեւոնեան քաղաք»ին ամրապնդումով: Նիկոյայոս, որ նշաւաւոր դիւանագէտ մըն էր, իր հերթին չէր կրնար անտեսել իսլամական յարձակումները եւ Լուի Բ. կայսեր (855-875) ու Իտալիոյ հարաւը գտնուող բիւզանդական զօրքերուն հետ համագործակցութեամբ երկու առիթներ օգտագործելով սարակինոսներու հոսանքին գոնէ ժամանակաւորապէս կը դիմադարձէր, Ալպեաններէն հիւսիս պապական հեղինակութիւնը կը հաստատէր եւ ցոյց կու տար թէ պապական ղերակատարութիւնը կը շարունակէր տիրական մնալ: Առաջին առիթը կը ներկայանար երբ Լորէյնի Լոթհեր Բ. թագաւորը Փրանք թագաւորութեան շարունակականութեան նախանձախնդրութեամբ կը փափաքէր իր ամուլ կինը՝ Թիեթպերկան արձակել եւ հարձին՝ Ուոլտրատային հետ ամուսնանալ: Երբ Թիեթպերկա Պապին կը դիմէր, ան 863 թուականին

Մեթցի մէջ գումարուած սինոտին ա- մուսնայուծումը արգիլող որոշումը կը բեկանէր եւ Թրիէրի ու Գօլոյնի արքեպիսկոպոսները պաշտօնանկ կ'ընէր: Այսպիսով, Նիկողայոս իր պապական հեղինակութիւնը կը տարածէր թէ՛ Փրանք հոգեւորականութեան եւ թէ՛ աշխարհիկ իշխանութեան վրայ:

Ապագային համար աւելի յատկանշական էր երկրորդ առիթը, երբ Նիկողայոս կը միջամտէր Փրանսական Եկեղեցոյ ներքին գործերուն եւ կը ստիպէր Ռէյմզի Հինգմար արքեպիսկոպոսին վերահաստատելու Սուասոնի պաշտօնանկ եպիսկոպոսը: Այս մէկը թէեւ Պապին թեմի մը ներքին գործերուն միջամտելու հեղինակութիւնը կը հիմնաւորէր, սակայն երկու իրերամերժ հակադարձութիւններ կը յառաջացնէր: Առաջինը Հինգմարի այն համոզումն էր թէ Ռէյմզի Աթոռը գերագոյն հեղինակութիւնը ունէր Փրանքներու եկեղեցական հարցերուն մէջ. ան այս մէկը կը բացայայտէր Գլովիսը մկրտած Ռէյմզի եպիսկոպոսին նուիրուած Ս. Ռեմիկիոսի Կեանքը երկու եւ 869 թուականին, Մեթցի մէջ, ինքնագլուխ կերպով «ճաղատ» Չարլզը կայսր հռչակելով: Երկրորդը, Փրանսացի եպիսկոպոսներ կը դժգոհէին իրենց եկեղեցիներէն ներս տեղի ունեցող կանոնական կարգերու եւ կարգապահութեան յաճախակի խախտումներէն, երբ մանաւանդ այսպիսով եկեղեցապատկան կայուածներ տեղական աշխարհիկ իշխանաւորներուն կողմէ կ'իւրացուէին: Այս հարցը լուծելու համար, անոնք 846 թուականին, Էրերնայի մէջ, ժողով մը կը գումարէին եւ կը պահանջէին որ թագաւորը Եկեղեցոյ իրաւունքները պաշտպանէր: Սակայն, «ճաղատ» Չարլզ, իր կողքին ունենալով նաեւ Հինգմարը, կը մերժէր ընդառաջել այս պահանջին: Կարգ մը եպիսկոպոսներ տեսնելով թէ թագաւորական իշխանութիւնը կը մերժէր եկեղեցիներու աւանդական պաշտպանութիւնը ստանձ-

նել, կը դիմէին պապականութեան: Այս պահանջը արդարացնելու համար, դժգոհ այլախոհներու խմբակ մը պապական եւ ժողովական վճիռներու կեղծ հաւաքածոյ մը (ներառեալ Կոստանդինոսի Տուուչուքիւնը) կը խմբագրէր եւ անոր վաւերականութիւնը ապահովելու համար գայն Սեպիլիոյ Իսիտորին կը վերագրէր: Այս հաւաքածոյին նպատակը յստակ էր: Եպիսկոպոսներու աւանդական իրաւասութիւնները աշխարհիկ ազնւականութեան ոտնձգութիւններուն դէմ պաշտպանելու համար, եկեղեցական հեղինակութիւնը կեղրոնացնել պապականութեան վրայ՝ ի հեճուելս թագաւորական հեղինակութեան եւ աշխարհիկ ազնուականութեան ու նոյնիսկ թեմակալ եպիսկոպոսներուն: Այդ օրերուն, այս քայլը յեղաշրջումի համագոր էր: Նիկողայոս կը համակրէր այս յեղափոխական շարժումին եւ ըստ այնմ նաեւ կը դիրքորոշուէր Հինգմարի հանդէպ. սակայն, երկու դարեր յետոյ միայն պապեր ամբողջապէս պիտի օգտագործէին այս հաւաքածոն իրենց նպատակներու իրագործման համար:

Փրանք թագաւորութենէն ներս պապական հեղինակութեան տարածման գուզահեռ, Նիկողայոս կը միջամտէր նաեւ Բիւզանդական Եկեղեցոյ կեանքէն ներս: 858 թուականին, Կոստանդնուպոլսոյ Ինգնատիոս պատրիարքը պաշտօնանկ կ'ըլլար Միքայէլ Գ. կայսեր հօրեղբօր եւ գլխաւոր խորհրդականին՝ Պարտասի ճնշումով. որովհետեւ, ան որպէս թունդ աւանդապաշտ չէր ենթարկուէր կայսրութեան քաղաքականութեան՝ յատկապէս Թէոտորա կայսրուհիի պարտադրեալ հրաժարականէն ետք: Պարտաս Ինգնատիոսը կը փոխարինէր Փոտ աշխարհականով, որ արեւելեան Եկեղեցոյ ամենէն զարգացած աստուածաբաններէն մին կը նկատուէր: Երբ Ինգնատիոս կը մերժէր հրաժարիլ, կայսրը եւ Փոտ Նիկողայոսի կը դիմէին որպէսզի սինոտի մը գու-

մարման համար նուիրակներ ղրկէր պատկերամարտութեան եւ պատրիարքութեան կապուած կարգ մը հարցեր քննարկելու համար: Պապին գլխաւոր մտահոգութիւնը այս առիթը օգտագործել էր արեւելեան իշխանաւորներուն հետ բանակցելու հարաւային Իտալիոյ եւ Պալքաններուն վրայ պապական եկեղեցական իրաւասութիւնը վերահաստատելու, երբ նաեւ ան կապի մէջ էր Պուլկարիոյ Պորիս ցարին հետ, որպէսզի հռոմայեցի աւետարանիչներ ղրկէր Պորիսի իշխանութեան տակ գտնուող ժողովուրդը քրիստոնէացնելու: Սակայն, պապական նուիրակները չէին յաջողեր Պապին նպատակը իրագործել, երբ Իզնատիոսը պաշտօնանկ ընող սինոտին կը մասնակցէին, առանց Կոստանդնուպոլսէն անհրաժեշտ զիջումները ձեռք բերելու: Երբ Նիկողայոս կ'իմանար պատահածը, կը բողոքէր թէ իր նամակը կեղծուած էր եւ կը մերժէր սինոտին որոշումները ու կը յայտարարէր թէ Իզնատիոս տակաւին պատրիարք կը մնար: Աւելին, 863 թուականին, ան Փոսը կը հաղորդագրէր: Չորս տարիներ Փոս չէր պատասխաներ. սակայն, 867 թուականին, նամակ մը կը խմբագրէր եւ ա-

ռաջին անգամ ըլլալով Նիկիական Հանգանակին լատիներէն տարբերակին մէջ ներմուծուած «եւ յՈրդւոյ» բանաձեւին հարցը կը յարուցէր եւ Նիկողայոսը կը նզովէր ու կը հաղորդագրէր: Նոյն տարին, Պարտասը եւ Միքայէլ Գ.ը սպաննած նոր կայսր մը, Բարսեղ Ա. (867-886), Իզնատիոսը պատրիարքական աթոռին վրայ կը վերահաստատէր եւ «փոտեան հերձուած»ը կ'աւարտէր: 878 թուականին, Իզնատիոսի վախճանումէն ետք, Փոս դարձեալ պատրիարք կը դառնար, սակայն այս անգամ Յովհաննէս Ը. Պապ (872-882) անոր ընտրութիւնը վաւերական կը համարէր: Թէեւ Նիկողայոս կը յաջողէր որպէս առանձին եպիսկոպոս մը իր տիեզերական հեղինակութիւնը պարտադրել, սակայն ժամանակի ընթացքին արեւելեան եւ արեւմտեան եկեղեցիներու յարաբերութիւնները մընայուն հերձուածի մը պիտի յանգէին:

"A History of The Christian Church"

N. Y. (1985) - Williston Walker

Թրգմ.՝ ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՆԵՄԷՆՉԵԱՆ

(Շար. 51)



ՎԵՑԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

ՄՈՒՏՔ

1980 թռակահին ուսումնասիրական ճամբորդութիւն մը կատարեցի դէպի Մաղկաձոր՝ Կեչարիսի վանքին մէջ գտնուող տապանաքարերը ուսումնասիրելու նպատակաւ: Եկեղեցիներու մոտքին, բակին եւ գերեզմանատան մէջ կային բազմաթիւ տապանաքարեր սակայն, անոնք չունէին փորագրուած գծանկարներ: ունէին անունները մահացեալներու որոնք կը խնդրէին յիշել զիրենք:

Իմ փնտռած տապանաքարերը գրծագրուածներն էին. անոնց արուեստին վրայ կեղրոնացուցեր էի աշխատանքս:

Հոն գտնուող պահակը երբ իմացաւ այցելութեանս նպատակը զիս առաջնորդեց վանքի բակին արեւելեան կողմը եւ ցոյց տալով Վեցիկ ճարտարապետի յուշարձան-խաչքարը, կարդաց խաչքարէն վար գտնուող երեք տողերը.

Զվեցիկ վարդ-
ետ Յաղաւթս Յիշես-
չիք ի Քս-Աղաչեմք

Սակայն գաղափար չունէր խաչքարի ետեւի 15 տողնոց արձանագրութեանէն: Ես գայն գտայ տուն վերադարձիս, Ս. Բարխուդարեանի «Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ» գրքէն:

Ամբողջ յետմիջօրէ մը յատկացուցի, չափազրելու ուսումնասիրելու եւ նկարելու:

«Հարթ տապանաքարերու արուեստը» թէգիս մէջ յիշելու նպատակով, ա՛յն

բաժնին մէջ ուր ցոյց պիտի տայի գանազանութիւնը թաղման կարգերու եւ գործածուող տապանաքարերու:

ՎԵՑԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

Հայաստան այցելող ամէն գրօսաչըրջիկ, եթէ իր պտոյտներու շրջագիծին մէջ ունի Մաղկաձոր այցելելու ծրագիր, անպայման պիտի տեսնէ Կեչարիսի վանքը, ուր չորս կրօնական կառոյցներ, առաւել գաւիթ մը, կը կազմեն եկեղեցիներու համալիր մը, որ իր տեսակին մէջ եզակի է եւ կու գայ՝ 11-13 դարերէն:

Ինչ որ գրօսաչըրջիկը չի կրնար տեսնել, վանքի բակին արեւելեան կողմը գտնուող կոթո՛ղն է, խաչքարը Վեցիկ ճարտարապետի տապանաքարին վերեւ ամրացուած: Նոյնիսկ եթէ գրօսաչըրջիկը նկատէ գայն ու կարդայ պատուանդանի վրայ արձանագրուած երեք տողերը՝

Զվեցիկ վարդոյ
ետ Յաղաւթս Յիշես
Ջիք ի Քս-Աղաչեմք

չի կրնար հասկնալ թէ ո՞վ է Վեցիկ վարդպետը: Եթէ տեղեակ կամ մասնագէտ չէ, կրնայ նոյնիսկ կարծել թէ Վեցիկ վարդպետ մըն է, կրօնաւոր մը, որ կապ ունի վանքին հետ: Որոշ հետազոտողներ անգամ կարծած են թէ Վեցիկ վարդպետ մըն է. մինչդեռ ան ճարտարապետ մըն է, վարդպետ մը, որ կառուցած է Կեչարիսի Համալիրին գեղեցկագոյն եկեղեցիներէն՝ Կաթողիկէն, որ իր չափերով՝ 13.40 x 9.80 սանթիմ համալիրի ամէնափոքրն է: Ներքուստ խաչածեւ

է, չորս անկիւններուն շինուած կրկնա-
յարկ աւանդատուներու պատճառաւ: 13
դարու յուշարձաններու բնորոշ օրինակ
մը:

Կաթողիկէ եկեղեցին կը գտնուի Ս-
նչանի մօտ: Ունի շինարարական երկու
արձանագրութիւն, մէկը արեւմտեան
մուտքի ճակատին, միւսը՝ հարաւային
պատին դուրսը: Երկուքն ալ գրուած են
մեկենաս Վասակ Խաղբակեանի կողմէ:
Մուտքի արձանագրութիւնը թուական
չունի, իսկ հարաւային պատինը գրուած
է 1214-ին: Արձանագրութիւններու բո-
վանդակութիւնները զիրար կ'ամբող-
ջացնեն. անոնք կը վերաբերին եկեղեցիի
շինութեան եւ անոր տրուած կալուած-
ներու եւ շարժական գոյքերու թուարկ-
ման: Եթէ նոյնիսկ ընդունինք, որ հիմ-
նական շինարարական արձանագրու-
թիւնը անթուական է, այնու ամենայ-
նիւ, ան կրնայ շատ քիչ, մէկ երկու տա-
րի առաջ շինուած ըլլալ 1214 թուակա-
նէն: Պատմութեան յայտնի է, որ Խաղ-
բակեան Վասակը Կեչարիսի շրջանին
տիրած է 13րդ դարու առաջին տարինե-
րուն եւ որպէս հոգեւոր նոր կեդրոն,
սկսած է անմիջապէս շինել Կաթողիկէ
եկեղեցին: Այս բոլորը կ'ապացուցէ, որ
Կաթողիկէի շինութիւնը սկսած պէտք է
ըլլայ 13րդ դարու առաջին տասնամեա-
կին եւ վերջացած երկրորդի սկիզբի տա-
րիններուն:

Այս գրութեան շարժարիթն է ցոյց
տալ ճարտարապետի մը տապանին խաչ-
քար մը կանգնելու երեւոյթը: Առհասարակ
խաչքար կանգնեցուած է, քաղաքի
մը շինութեան առթիւ, տարուած յաղ-
թանակի մը համար, աղբիւրի մը, եկեղե-
ցիի մը շինութեան եւ կամ արժանաւոր
անձի մը մահուան առիթով:

13րդ դարուն Հայաստանի մէջ ար-
ուեստագէտներու նկատմամբ յատուկ
յարգանք սկսած է տածուիլ, մինչդեռ
Եւրոպայի մէջ այդ յարգանքը սկսած է
15րդ դարու սկիզբը:

Վեցիկ ճարտարապետի նուիրուած


յուշարձանը, վանքի բակին մէջ, ապա-
ցոյց է իր վայելած յարգանքին ու մե-
ծարման: Ծիշդ էր որ Վեցիկի եղբայր-
ներն էին յուշարձանի հեղինակները,
սակայն, կարելի պիտի չըլլար գայն վան-
քի բակին մէջ կանգնեցնել եթէ վանքի
մեծաւորները (բարձր դասի կրօնաւոր-
ներ) արտօնութիւն տուած չըլլային:

Ահա թէ ինչ է արձանագրուած Վե-
ցիկ ճարտարապետի յուշարձան-խաչ-
քարին ետեւի մասին վրայ.

- 1 Յիշեսջիֆ Յաղաւթս
- 2 Զծառայն Այ Զվեցիկ
- 3 Քարգործ որ Շինեաց Զն-
- 4 որ եկեղեցիս, եւ ի կատարման
- 5 Սորին ինքն կատարեաց Զկնն-
- 6 ցադս եւ փոխեցաւ առ ՔՍ.
- 7 կիսաւրեայ Աւուրբք, եւ ես
- 8 Յովհաննէս եւ եղբարքս իմ՝
- 9 հարազատ Սորին, կանկնե
- 10 ցաք Զսուրբ նշանս Քի ի վ-
- 11 երա հանկատարանի տրին, Առ
- 12 Ի բարեխաւսութի սմա եւ Մ-
- 13 եգ եւ ամենայն հաւատա-
- 14 ցելոց եւ Յիշողացն Զ-
- 15 Սա:

Սոյն արձանագրութեան շնորհիւ կը
տեղեկանանք որ Վեցիկ ճարտարապետ
մահացած է «կիսաւրեայ աւուրբք», այ-
սինքն երիտասարդ տարիքին, հաւանա-
բար 35-40 տարեկանին, կառուցած է
նոր եկեղեցին, որ Կաթողիկէն է: Ունի
եղբայրներ: 1198 թուի արձանագրու-
թեան մը մէջ Կիւրիկեան Դաւիթը¹, Վա-
սակի որդին, կը յայտարարէ որ շինած է
եկեղեցին ձեռամբ հայր Գրիգորի «եւ
նորին արբանեկին՝ Պետրոսի եւ եղբարց
նորա Յովհաննէսի եւ Ագարիայի»: Այս-
տեղ Յովհաննէսի հետ երեւան կու գան
իր երկու եղբայրներուն անուններն ալ՝
Պետրոսի եւ Ագարիայի, որոնք նոյնպէս
ճարտարապետներ են՝ եւ իր օգնական-

¹ Դաւիթը, Վասակ Խաղբակեանի որդին է:



ԾԱՂԿԱԶՈՐ. ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ:
ԳՈՐԾ՝ ՎԵՑԻԿ ՎԱՐԴՊԵՏԻ

ները:

Վեցիկ անունը կը կարծուի թէ սրամտորէն տրուած է ճարտարապետին, նկատի առնելով որ իր եղբայրներուն եւ քոյրերուն, որոնք թիւով 6 էին, կրտսերագոյնն էր:


Յուշարձան-խաչքարը կանգնողները ղժբախտարար թուական չեն դրած:

Տեղին է յիշել, որ ուրիշ ճարտարապետի մը եւս, որ կառուցած է Վեցիկէն 70 տարի յետոյ, զանազան կրօնական կառույցներ Սիւնեաց աշխարհին մէջ, յուշարձան կանգնեցուցած են իր ժամանակակիցները:

Այժմ յիշենք թէ որո՞նք են մնացեալ եկեղեցիները, որ կառուցած էին Կեչարիսի վանքին մէջ, Վեցիկի կառուցած Կաթողիկէէն առաջ:

Առաջին. Լուսաւորիչ անունը կրող եկեղեցին առաջինն ու ամէնամեծն է, կառուցուած 1003 թուականին:

Երկրորդը Ս. Նշան, որ կառուցման թուական չունի. կը կարծուի թէ շինուած է 11րդ դարու սկիզբը:



ԾԱՂԿԱԶՈՐ. ՎԵՑԻԿ ՎԱՐԴՊԵՏԻ
ՅՈՒՇԱՐԶԱՆԸ

Երրորդը Գաւիթ, որ շինուած է Լուսաւորիչ եկեղեցիի արեւմուտքը, նոյնպէս թուական չունի բայց ճարտարապետութեան պատմաբանները կը հաստատեն որ 12րդ դարու վերջերու եւ 13րդ դարու սկիզբի գործ է:

Չորրորդը Ս. Կաթողիկէ եկեղեցի, կառուցուած Վեցիկի կողմէ 1214ին:

Հինգերորդ Ս. Յարութիւն եկեղեցի, իր սրահանման գաւիթով, կը գտնուի յուշարձաններու խումբէն հեռու, առանձնացած ղէպի արեւմուտք, հին գերեզմանատան մէջ, շինուած է 1220 թուին համաձայն արձանագրութեանց:

Գլխաւոր աղբիւր. «Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարնոյն վարպետներ», Ս. Բարխուդարեան 1963,

Երեւան:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍԵԱՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՏԱՐԻ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՆ ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կողմէ 2007 տարին «Հայ Լեզուի Տարի» հռչակումին առիթով, Անթիլիասի Մաչրավանքին մէջ, 2 Մարտի երեկոյեան մտաւորականներու հաւաք մը տեղի ունեցաւ: Այդ առթիւ գրուած, կլոր սեղանին մասնակցողներուն շահեկան գրութիւնները Հասկի յաջորդական թիւերով լոյս պիտի ընծայենք, փակելէ առաջ 2007 տարին: **ԽՄԲ.**

Ա.– Ի՞նչ ԿԱՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՐԶԷ ԱՅՍՕՐ ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՍՓԻՒՌԻ ՄԷՁ

Լեզուները կ'ապրին գիրենք խօսող ժողովուրդներու ճակատագրով: Կը նշանակէ՝ լեզուի մը ճակատագիրը անմիջականօրէն կապուած է գինք գործածող ժողովուրդի ճակատագրին:

Երբ կենդանի է ժողովուրդը, կենսունակ եւ ստեղծագործ, կենսունակ ու բարգաւաճման ճանապարհի վրայ է նաեւ անոր լեզուն: Այլապէս... Փիղիքապէս ապառողջ, ծնունդէ գերծ կամ գերօնուազ աճ արձանագրող եւ իմացական կեանքով լծացած ժողովուրդի մը լեզուն, մահուան դատակնիքով՝ կը սկսի իր նահանջը:

Յեղադրական ու լեզուագիտական վերջին հետազօտութիւններու եզրակացութեամբ, մինչեւ 2100 թ., այժմ աշխարհի եօթ հազար խօսակցական լեզուներուն կէսը՝ դատապարտուած է մահուան:

Բայց այսօր, յատկապէս համաշխարհայնացումի եւ արուեստագիտութեան տիրապետութեան տակ, բազմաթիւ ժողովուրդներու լեզուներ իրենց նահանջը կ'ապրին նաեւ այլ պատճառներով:

1.- Կայ ընդհանուր անտարբերութիւնը լեզուի հանդէպ: Այսպէս կոչուած գիտական նուաճումներու եւ կրթական ծրագիրներու մէջ գիտական առարկաներու տիրապետութեան դարուն, մարդկայնական նիւթերը, որոնց էական գործիքն է լեզուն, երբ կը կորսնցնեն իրենց նախապատուութիւնը ու յաճախ կ'ենթարկուին անտեսումի, ինքնաբերաբար լեզուն կը կորսնցնէ իր հմայքն ու հետաքրքրութիւնը:

2.- Կատաղօրէն հետապնդուած համաշխարհայնացումի քաղաքականութեամբ, երբ մէկ քանի լեզուներ «առանձնապէս անգլերէնը» իրենց կայսրութիւնները կը հաստատեն, կամայ թէ ակամայ, անոնց տիրապետութեան տակ ինկող ժողովուրդները կը դիմեն գիջու-

մի՝ ի հաշիւ իրենց ազգային լեզուներուն, հեշտացնելով անոնց նահանջը:

Այսօր, արգիլելու համար իրենց լաւագոյն ուսանողներուն Արեւմուտք գաղթը, ու մինչեւ իսկ իրենց հրապուրելու համար տարբեր ցամաքամասերու ուսանողները, Ասիոյ համալսարանները իրենց դասընթացքներուն մէկ կարեւոր մասը, ու տոկոսային յարաճուն համեմատութեամբ, անգլերէնով կը դասաւանդեն:

Այս առումով, լեզուի նահանջը, այսօր, համաշխարհային հարց է:

Դեռ տարիներ առաջ, Մեծն Բրիտանիոյ գահաժառանգ իշխանը՝ Չարլզ, ահագանգ կը հնչեցնէր ու հարց կու տար.– Ի՞նչ եղաւ Շէյքսպիրի լեզուին. դեռ ո՞րքան կրնայ գուեհկանալ խօսակցական լեզուն, եւ գրականը ո՞րքան կը հետեւի անոր:

Նոյն օրերուն, «Պի.Պի.Սի.»ի վրայ, հարցազրոյցի մը ընթացքին, հարցումի մը, թէ՛ ի՞նչպէս կարելի է հանդուրժել միավանկ գուեհիկ բառերու յաճախակի, անընդհատ գործածութիւնը բանաւոր եւ գրաւոր խօսքի մէջ: Պատասխանողը՝ (դասախօսուհի՞). «Ի՞նչ կայ որ, այնքան ատեն որ այդ բառը ամբողջ տրամադրութիւն մը կ'արտայայտէ»:

Սօսաւորապէս տասը տարիներ առաջ, ամերիկեան միջազգային շաբաթաթերթի մը մէջ, յօդուածագիր մը կը գրէր. «Մեր Երկրորդական վարժարաններէն շրջանաւարտ աշակերտները, իրենց անգլերէնի իմացութեամբ չեն կրնար հասկնալ շուկայէն գնած իրենց տուփեղէններուն վրայ գրուած բացատրագիրները, իսկ շատ են այն բժիշկները, որոնք կրնան դեղագիր մը գրել, բայց չեն կրնար ճիշդ լեզուով էջ մը տեղեկագիր պատրաստել:

Այսօր անընդհատ կը կարգանք ամերիկեան մամուլի մէջ (հաւանաբար տարբեր չէ պարագան այլ երկիրներու

մէջ նաեւ) որ ընթերցումը տաժանքի վերածուած է դպրոցներուն մէջ: Նախակրթարանի վերի աշակերտներու պիտի հանդիպինք, որոնք տակաւին տառերը չեն ճանչնար: Իսկ միջնակարգի մէջ պարբերութիւն մը ճիշդ ու սահուն կարգալը եւ անսխալ գրելը նուաճում է արդէն:

Այսօր ոչ ոքի գաղտնիք է որ Ֆրանսայի մէջ, անգլերէնի ներխուժումին պատճառով Ֆրանսերէնի աղճատումին դէմ պետական մակարդակով պայքար կը մղուի, ինչ որ կը խօսի կացութեան լրջութեան մասին: Մինչեւ իսկ երկրին մէջ սահմանափակուած է ժամանակը ոչ-Ֆրանսերէն երգերու ձայնասփռումին:

Վերջերս, տնտեսական միջազգային համաժողովի մը ընթացքին, Ֆրանսայի պատուիրակին անգլերէն խօսելուն որպէս բողոք, նախագահ Շիրաք դուրս եկաւ համաժողովի սրահէն:

Սփիւռքը, իր տարագիր գաղութներու ճակատագրով, չի կրնար խուսափիլ լեզուին ապրած համաշխարհային տագնապէն: Բազմաթիւ երկիրներու մէջ, բազմաթիւ ժողովուրդներու ու պետական լեզուներու դիմաց, հայերէնը՝ հայ մարդու բերնին մէջ դատապարտուած է չփոթի մատնուելու, ու դժուար թէ կարենայ երկար ժամանակ գլուխ պահել:

Եւրոպայի, Ամերիկաներու եւ Աւստրալիոյ հայազաղութները, որոնք շարունակ կը վերանորոգուին նոր գաղթականներու կամ տեղափոխուողներու նոր արիւնի ներարկումով, ո՞րքան ժամանակ կրնան յուսալ այդ նոր ներարկումներուն:

Նահանջը մեծ է այս ցամաքամասերուն վրայ, սակայն նաեւ պիտի խոստովանիլ որ զգալի է ճիգը հայկական նոր վարժարաններ հաստատելու, ուր, անպայման, նահանջը կրնայ դանդաղիլ ինչ որ չափով:

Միջին ու Մերձաւոր Արեւելքի մէջ, հայերէնը թրքերէնէ մաքրագործուելէ ու զարգացման եւ յատկացման շրջան մը բոլորելէ ետք, կայունութեան շրջանը եղաւ կարճ, եւ այժմ՝ նահանջի օրերուն մէջ է: Հոս ակնարկութիւնը գլխաւորաբար խօսակցական լեզուին համար է, մինչ գրական լեզուն կը պահէ յարգելի մակարդակ մը, մէկ մէկ աչքառու նուաճումով:

Հայաստանի մէջ, ռուսերէնի անտեղի թափանցումէն հազիւ ձերբազատուած, եւ այս՝ Խորհրդային վերջին տասնամեակներուն լեզուագիտական-ակադեմական կաճառներու ազդու միջամտութեամբ, հիմա անգլերէնի անսանձ թափանցումն է, դեռ ռուսերէնի հիւրընկալութեամբ, սկսած ցուցափեղկերէն մինչեւ հեռուստացոյց ու մամուլ: Իսկ խօսակցական լեզուն, մանաւանդ երիտասարդութեան մօտ, ինկած է ժարգոնի տիրապետութեան տակ:

«"Հելանթ", "լիոֆշա", "նայրիմեր", "սլուչայնի եղաւ": Ահա այդ եւ նմանատիպ ժարգոնային (աղաւաղուած բարբառ) բառերով է ողողուած այսօրուան երիտասարդներու բառապաշարը:

«Հարցին, թէ ինչու են խօսում ժարգոնով, տղաներից մէկը պատասխանեց այսպէս.

«- Հիմա մօտա է այդպէս խօսելը, "լաւ տղերքը" ժարգոնով են խօսում, եթէ այն չես կիրառում, խօսքը կարծես տեղին չի հնչում (Արա, 17 տարեկան)»: («Ազգ», 9 Օգոստոս, 2006):

Բ.- Ի՞նչ են ՀԱՅ ԼԵՁՈՒԻ ԽԱԹԱՐՄԱՆ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱՀԱՆՁԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1.- Անգիտացումը մայրենի լեզուին եւ ազգային մշակոյթին դերին ու կարեւորութեան՝ ամբողջական հայր պատրաստելու գործին մէջ:

ա) Անգիտութիւնը՝ թէ ինչ է կապը անհատին մտածելու կարողութեան եւ լեզուի իմացութեան: Լեզու եւ իմացական մակարդակ կը զարգանան դրական փոխազդեցութեամբ: Եւ հոս՝ ճակատագրական նշանակութիւնը մայրենի լեզուին, որուն որակաւոր իմացումը ոչ միայն կը նպաստէ ենթակային մտածելու որակաւորումին, բայց նաեւ այլ լեզուներ աւելի արագ եւ ճշգրիտ սորվելուն:

բ) Անգիտութիւնը՝ թէ հայերէնի ճիշդ եւ որակաւոր իմացումը մեծապէս կը նպաստէ հայ ժողովուրդի պատմութիւնը աւելի լաւ հասկնալուն: Լեզուն յաճախ բանալի դեր կը խաղայ պատմութեան հանգոյցները քակելու:

2.- Քաղքենիացումը-սնոպիզմը- Հայերէն չիմանալը կամ չգործածելը սկսեր է... զարգացած մարդ ըլլալու չափանիշ դառնալ: Հիւանդութիւնը հասեր է աշակերտներուն եւ ուսանողներուն: Եւ հոս նաեւ մեծ մեծամասնութեան անգիտութիւնը, թէ երբ օտար լեզուներով կը բարբառին, որքան հեռու են անոնց ճիշդ գործածութենէն:

3.- Հայ դպրոցէն ներս հայերէնի կարեւորութեան անտեսումը: Տեւական նոր դասապահներ պահանջող ու զբաւոյ պետական ծրագիրներուն դիմաց տեղի տուողն ու նահանջողը հայերէնն է եւ հայագիտական դասանիւթը: Հայերէնն ու հայագիտական առարկաները աշակերտին ուսումնական ճակատագիրը չեն որոշեր այլեւս, ասկէ՝ աշակերտին անտարբերութիւնը հայերէնի եւ հայագիտական առարկաներու հանդէպ:

4.- Կռիւր հայերէնի դէմ: Ծնողք սկսած են ճակատ բանալ հայերէնի դէմ՝ իրենց զաւակներուն ձախողութեան եթէ ոչ միակ, բայց գլխաւոր պատճառ նկատելով հայերէնի դասապահներու առկայութիւնը: Եւ այդ դասապահները ջնջելու կամ իրենց զաւակները այդ դասապահ-

րէն գերծ պահելու տրուած պատճառաբանութիւնը՝ «Չի՞ բաւեր որ տղան կը խօսի, քիչ մըն ալ կը կարողայ ու կը գրէ...»: Հիմա զգայի տոկոսով ծնողներու մօտ այս է հայերէնագիտութեան պահանջը:

5.- Հայերէնի եւ հայագիտական աւարկաններու դասագիրքերու որակը անգոհացուցիչ է, եւ չի համապատասխաներ արդի մանկավարժութեան պահանջներուն: Ըսենք. դասագիրքերը անհատական նախաձեռնութիւն չեն կրնար ըլլալ այլեւս: Դասագիրքերու պատրաստութեան համար անհրաժեշտ է խմբային եւ խմբագրական աշխատանքը: Գործին մէջ բաժին պիտի վերցնեն լեզուագէտը, գրականագէտը, մանկավարժը եւ հոգեբանը: Եթէ դասագիրքը հրատարակուի (եւ այդպէս են մեծաւ մասամբ), դժուար է այդ դասագիրքով հայերէնին հրատարակել աշակերտը եւ անոր հայերէն սորվեցնել: Ու երբ աշակերտը չի սորվիր, կը նահանջէ լեզուն:

6.- Ուսուցիչները: Ուսուցիչին մօտ անհրաժեշտ է մասնագիտութիւնը լեզուին եւ մանկավարժական գիտելիքին: Ճակատագրական նշանակութիւն ունի նաեւ ուսուցիչին անհատականութիւնը: Գաղտնիք չէ, աշակերտն է առաջին քննիչը ուսուցիչի գիտելիքներու պաշարին եւ դասը մատուցանելու եղանակին: Եւ եթէ անհրապոյր է ուսուցիչին անհատականութիւնը եւ անոր դասաւանդման եղանակը, կը նշանակէ՝ անհրապոյր է եւ դասաւանդող առարկան:

7.- Խառն ամուսնութիւնները: Աղէտալի է անոնց ազդեցութիւնը հայ ընտանիքէն եւ ընտանիքներէն ներս հայերէնի գործածութեան վրայ: Անկախ ինքնութեան ակամայ նահանջէն, օտար հարսին կամ փեսային արտասանած երկու հայերէն բառերուն դիմաց... իննըսունութ օտար բառերով կը շարունակուի խօսակցութիւնը: Եւ անշուշտ, մէկ

խառն ամուսնութիւնը դուռ կը բանայ երկրորդին...: Բայց հոս նաեւ պիտի խոստովանիլ, թէ՛ թէկուզ քիչ բացառութեամբ, խառն ամուսնութեամբ կազմուած ընտանիքներէ եկած պատանիները ոչ միայն սիրով կը հետեւին հայերէնին ու ամէն ջանք կը թափեն լաւագոյնը իրագործելու, այլ եւ յաճախ շատ աւելի հայ կը գրան... քան իրենց զոյգ հայ ծնողներով դասընկերները:

Գ.- Ի՞նչ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՀԱՐԿ Է ԴԻՄԵԼ

1.- Տունը: Երեխան իր առաջին բարձր տան մէջ կը սորվի եւ առաջին նախադասութիւնը իր տան մէջ կ'արտասանէ: Իր առաջին գրուցակիցը մայրն է: Եւ ամէն ինչ կը սկսի այս մեկնակէտէն: Երեխային մօտ լեզուին «տիրապետութիւնը» կը սկսի մօրը հետ գրուցելով, երբ մայրը նաեւ առաջին սրբագրող ուսուցիչն է երեխային: Ամէնօրեայ գրոյցը կը վերածուի դասաւանդութեան, երբ մայրը գիտէ երեխային պատմել, անոր համար ընթերցել, եւ հարցում-պատասխանով հետաքրքրութիւնը շարժել երեխային եւ խթանել գայն որ ճիշդ խօսի ու ճիշդ արտայայտէ ինքզինք:

Տան մէջ, մանաւանդ մինչեւ հինգ-վեց տարիքը, երեխան հեռու պէտք է պահել հեռուստացոյցէն: Գիտական հետազօտութիւններու վերջին տուեալները կը ժխտեն այն կարծիքը, թէ՛ հեռուստացոյցի դիմաց երեխան «լեզու կը սորվի»: Ընդհակառակը, կ'ըսեն գիտնականները, հեռուստացոյցը կ'արգելակէ երեխային իմացական կարողականութեան աճը, ինչ որ իր ժխտական ազդեցութիւնը կրնայ ունենալ անոր մինչեւ իսկ գոյլճական տարիներու ուսման:

2.- Որդեգրել լեզուն գեղեցիկ սորվեցնելու միջոցը: Այս առումով օգտակար ուղեցոյց կրնայ ծառայել Ակադ.

Լեւոն Հավերդեանի «Ձրոյցներ Լեզուի Մասին» գիրքը: Լեզուին հրապոյրը պէտք է հասցնել աշակերտին: Այսօր իրապէս տխուր մակարդակի վրայ է հայ աշակերտին բառամթերքը. առաւելագոյն ուշադրութիւնը պիտի դարձնել բառամթերքի հարստացման, որուն համար հետաքրքրական միջոց է բառերը սորվեցնել իրենց պատմութեամբ, ինչպէս նաեւ կարեւորելով բառերու պատմական նշանակութիւնը:

3.- Գովազդային աշխատանք: Հրատարակել հայ լեզուի հակիրճ պատմութիւնը մատչելի ոճով ու կառուցով: Հոն ներկայացնել հայ լեզուին առանձնաշատկութիւնները, ինչպէս նաեւ հայ եւ օտար լեզուագէտներու, գիտնականներու եւ մտաւորականներու տեսութիւններն ու վկայութիւնները հայ լեզուի մասին: Ասոր գուզահեռ կարելի է հրատարակել հայերէնի նուիրուած գրական էջերու հատոր մը, որ նոյնպէս գովազդային դեր կրնայ ունենալ:

4.- Լեզուն կը սորվին եւ լեզուով կը խանդավառուին գլխաւորաբար ընթերցանութեամբ: Ահա թէ ինչու հրամայական պահանջ է մանկապատանեկան ամսաթերթի մը հրատարակութիւնը, եւ անհրաժեշտ, հրատարակուած իւրաքանչիւր թիւ անհատ աշակերտին հասցընել իր հասցէով: Համագաղութային ծրագիր կրնայ ըլլալ այս մէկը, մինչեւ իսկ ինքնաբաւ, եթէ ոչ շահաբեր: Անկարելիի մասին չենք խօսիր: Երիտասարդ, կարող ու շնորհալի ոյժեր կան, որոնք կրնան ձեռք առնել գործը: Նման ամսաթերթ մը նաեւ գրելու կը քաջալերէ աշակերտները:

5.- Հայերէնի ուսուցումը, անոր ճիշդ ու հաղորդական ուսուցումի գիտա-մանկավարժական դրութեան կարիքը ունի: Ու եթէ դպրոցն է այն տեղը, ուր լեզուն կը սորվեցնեն, առաջին հեր-

թին հարց պիտի տալ թէ այսօր, հայ դպրոցները մանկավարժական ինչ հիմունքներու վրայ կը գործեն (չենք խօսիր պետական ծրագիրները հետապնդելու մասին), ինչպէս կը բացատրեն ուսումն ու դաստիարակութիւնը, ինչ է իրենց ուսուցման կապը արդի մանկավարժութեան կրթական-ընկերային-բարոյագիտական տեսութիւններուն հետ: Այս բոլորին մէջ կը մտնեն հայերէնի ուսուցման գիտակցական կեցուածքը: Եւ այս բոլորը կրթական խորհուրդին, հոգաբարձութեան, տնօրէնին, ուսուցիչին, ուսանողին եւ ծնողքին մատչելի եւ հասանելի դարձնելու համար, անհրաժեշտ է մանկավարժական եռամսեայ կամ քառամսեայ հանդէսի մը հրատարակութիւնը: Կարելիի սահմանին մէջ է եւ այս, պայմանով որ պեղենք մեր ներքին կարողականութիւնները, վստահինք մանաւանդ մեր համալսարանաւարտ երիտասարդ ոյժերուն, եւ զանոնք է՛ւ քաջալերենք աշխատանքի, է՛ւ հովանաւորենք:

6.- Հայ Լեզուի Տարին՝ 2007-ը, հնարաւոր բոլոր միջոցներով օգտագործել հայերէնի գովազդը կատարելու: Դըպրոցները՝ առաջին թիրախ: Մշակութային միութիւնները, որոնք գրեթէ քաշուած են ասպարէզէ, համատեղ, դասախօսութիւններու շարքով, մրցանքներով, հրատարակութիւններով առաջին գիծի վրայ բերեն հայերէնը եւ անոր կարեւորութիւնը: Հայերէնը ամէնօրեայ մտահոգութեան եւ հոգատարութեան առարկայ դարձնել: Ոչ միայն խօսիլ անոր նահանջին մասին, բայց անոր տիրութեան անհրաժեշտութեան, յաղթանակներուն ու նուաճումներուն մասին: Սորվեցնել, թէ երբ կը խօսինք հայ լեզուի մասին, կը խօսինք մեր մասին:

ԵՐՈՒԱՆԴ. Հ. ՔԱՍՈՒՆԻ

ԱՐԽԻՒՒԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ԻԲՐԵՒ ԿՐՕՆՔ*

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

«Եւ Տէր յաւելոյր գփրկեալսն հանապազօր յեկեղեցին» (Գրծ Բ. 47):

Եկեղեցին է մարմին Քրիստոսի, ինչպէս Քրիստոս մարդը մարմինն էր մարմնացեալ Բանին: Ինչպէս Քրիստոս կը ներկայացնէր զԱստուած, եկեղեցին ալ պիտի ներկայացնէ զՔրիստոս:

Այս էր պատճառը որ Քրիստոս կազմակերպեց իրեն հետեւորդները իրրեւ եկեղեցի:

Քրիստոս ունէր, ժողովուրդ, որ էր ամբոխ ունկնդիրներու, հիւանդներու, հետաքրքիրներու: Աշակերտներ, որոնք մասնաւորապէս կ'ուսանէին Անկէ եւ կը ծառայէին Անոր:

Եկեղեցին, որ յատկապէս կազմակերպեալ ձեւ ստացաւ եւ թուով կ'աճէր յաւելմամբ փրկեալներուն:

Քանզի ամէն ունկնդիր աշակերտ չէ, եւ ամէն աշակերտ փրկեալ չէ: Որով եկեղեցին ոչ խումբն է ժողովուրդին եւ ոչ աշակերտաց, այլ՝ փրկուածներու, որոնք կը գործադրեն իրենց լսածը եւ սորվածը ու Սուրբ Հոգիին ներգործութեամբ փրկուած են բնագոյն ճշունմէն - մեղքին իշխանութենէն եւ Աստուծոյ արդար դատաստանէն:

Հարց է ուրեմն, թէ՛ մէկը կրնա՞յ լիւնել քրիստոնեայ՝ առանց լինելու մէկ

անդամը Քրիստոսի:

Կան երկու պատասխաններ, այո՛ եւ ոչ: Այո՛ կ'ըսեն անուանական քրիստոնեաներ, ո՛չ կ'ըսեն իրական քրիստոնեաներ:

Ճիւղ մը առանձին՝ ծառ չէ՛:

Գլուխին չմիացած անդամ մը ինքնին մարդ չէ:

Եկեղեցին ի Քրիստոսէ կազմակերպուած հաստատութիւն մըն է - գործաւորական խումբ մը: Ռազմիկ բանակ մը՝ ի գործ դնելու համար Աստուծոյ ծրագիրը, շարունակելու համար Քրիստոսի գործը:

Եկեղեցին, ուրեմն, պիտի ունենայ իր մասնաւոր միջոցներն ու պայմանները զլուխին միանալու եւ Անկէ ազդուելու, առաջնորդուելու համար: Ունենալու է նաեւ իր պաշտօնեաներն ու պաշտօնատունն, որպէսզի տեղի ունենան կազմակերպական օրինաւոր գործունէութիւնք եւ դրական առնչութիւնք զլուխին հետ:

Միջոցներն ու պայմաններն են Քրիստոսէ յանձնարարուած եւ առաքեալներէն գործադրուած խորհուրդները որոնք կը կատարուին նիւթական, արարողական ձեւակերպութեամբ որպէս պատուէր Տեառն եւ կանոն եկեղեցւոյ: Սրտանց հաւատացեալին համար նոքա են հաղորդակցութեան կապեր Քրիստոսի հետ եւ միջոց գեղման շնորհաց Սուրբ Հոգւոյն:

* Շար. նախորդ թիւէն:

Պաշտօնեայք են Քրիստոսի նուիրուած սպասաւորներ եւ եկեղեցւոյն սրբազան արարողութեանց գործադիրներ ու սուրբ խորհրդոց մատակարարներ:

Պաշտօնատուենն է սրբավայրը, տաճարը - նիւթական եկեղեցին, ուր տեղի կ'ունենան Աստուծոյ երկրպագութեան պաշտամունքները եւ սուրբ խորհրդոց մատակարարութիւն: Ան է Աստուծոյ մասնաւոր ժամադրավայրը եւ հոգեւոր տունը համայնից: Քրիստոնեայ աշխարհը այս դրութիւնը որդեգրած եւ անով ապրած է անհատական ու հաւաքական կեանքը սուրբ աւետարանի, որով կերտուած է կրօնական հոյակապ պատմութիւն մը:

Հայերուս համար թէ՛ եկեղեցին իրբեւ կրօնական կազմակերպութիւն եւ թէ՛ տաճարն իբրեւ հոգեւոր տուն՝ բացառիկ պատճառներով եղած են զուտ ազգային հաստատութիւնք, այնպէս որ՝ հայ մարդ չէր կրնար քրիստոնեայ ըլլալ առանց հայ եկեղեցիին եւ այլազգի մը չէր կարող հայանալ առանց միանալու հայ եկեղեցիին:

Պատմական անխուսափելի բազում ազդումներով այսպէս իրարու մէջ ձուլուած են հայ ազգութիւն եւ հայ եկեղեցին:

Հետեւաբար, հայ եկեղեցիին պատմութիւնն է պատմութիւն ազգին եւ փոխադարձաբար: Որովհետեւ թագաւորն ու հայրապետն լծակցաբար ազգային բովանդակ կեանքը ու ճակատագիրը վարած են միասնաբար, ազդեցութիւններու համադրութեամբ, մասնաւորապէս թագաւորին խոնարհութեամբը կաթողիկոսին՝ իբրեւ հոգեւոր հօր եւ թագադիր:

Իսկ երբ զրկուած ենք Ազգային Իշխանութենէն՝ Հայրապետին վիճակուեր է ստանձնել ազգին ճակատագրին ամբողջ պատասխանատուութիւնը:

Պատմականօրէն Աստուծոյ ու եկե-

ղեցիին կառչած հայ ժողովրդեան միասնականութեան գաղտնիքը կեղրոնացած է իր հաւատքի եւ աստուածաշտութեան նոյնութեան մէջ՝ նոյնիսկ հայրենի հողին վրայ, ուր հոգեբանական շաղկապութիւնները, աւանդութիւններն ու սովորութիւնները մէյմէկ ուժեղ պահպանակներ էին ապահովելու ցեղին գոյութիւնը:

Իսկ դժբախտ պայմաններով հայրենագրկուած հայութեան համար՝ սոսկ եկեղեցին իր հոգեկան ու վարչական տիրականութեամբ մնաց միայնակ պահպանութիւնը եւ ապահովութիւնը ազգային գոյութեանն, ու այն գաղութները որոնք չկրցան պահել եկեղեցին, կորսնցուցին ազգութիւնն ալ եւ ձուլուեցան միջավայրին մէջ:

Այսօր առաւել քան երբեք բոլոր ազգեր կը շեշտեն ու կը գնահատեն իրենց ազգային գոյութիւնը ամենածանր կորուստներով, գոհողութիւններով: Հայերուս համար այժմ արեան զնով հայ մնալու մարտիրոսական պահանջներ չկան, այլ միայն մէկ պայման, այն է պահպանումն հայ եկեղեցիին իր հոգեւոր եւ վարչական դրութիւններովն անխախտ: Ինչ ալ որ ըլլան դժուարութիւնները, հրապոյրները, ճնշումները: Հերիք է որ գերծ ըլլանք այլասերումի ներքին թուլութենէ ինքնադաս օտարամոլութենէ:

Իբրեւ եզրակացութիւնը այլ բոլոր տուեալներուն կը շեշտենք թէ՛ ոեւէ անհատ ինքնին առանձին չի կրնար ըլլալ քրիստոնեայ, ապրիլ քրիստոնեայ, աւետարանական սկզբունքներով առանց անդամանալու ուղղափառ եկեղեցիի մը: Իսկ հայ ազգային ամբողջականութիւնը քաղաքական ներկայ պայմաններու ներքեւ հնարաւոր չէ՛ առանց հայ եկեղեցիի:

Դժուարալուր է այս բայց իրականութիւն մըն է անփխտելի:

Գիտնալ պէտք է որ հայ ազգութեան եւ եկեղեցիին կորուստով՝ մարդկութիւնը կը կորսնցնէ իր զանգուածէն փոքր՝ բայց ազնուագոյն տարր մը իր բոլոր մշակոյթով եւ պատմական արժէքներով: Իսկ քրիստոնեայ աշխարհը կը կորսնցնէ եկեղեցի մը, որուն արժէքը միայն Աստուած գիտէ, եւ այն մարդը որ ուսումնասիրած է այդ սրբազան հաստատութիւնը եւ ապրած է անոր շնորհներով:

Այսպէս է վկայութիւնն այն օտար բանասէրներուն, որ սորված են հայ պատմութիւնը, մատենագրութիւնն ու եկեղեցին:

Այսօր մենք ճակատագրապէս ահա՛ կը գտնուինք ժամանակի միջակէտի մը վրայ՝ ուր լինել չլինելու վճռական հարցը ժայռացեր է մեր առջեւը, ու մենք պիտի որոշենք հայ մնալ կամ ոչ՝ այն գիտակցութեամբ թէ մեր վրայ կը ծանրանայ պատասխանատուութիւնը մեր

սրբազան նախնեաց ու մեր սերունդին: Մենք պիտի ընտրենք անոնց օրհնութիւնն կամ անէծքը:

Այո՛ շատ դժուար է մեր դիրքը:

- Այսպիսի փորձանաւոր երկրի մը մէջ ու ժամանակին, լինել քրիստոնեայ հոգեւոր կեանքով:

- Այսպիսի կլանող միջավայրի մը մէջ պահել ազգային գոյութիւնը եւ մշակոյթը ու կազմակերպութիւնները:

- Այսպիսի բազմակրօն ժողովուրդներու մէջ պահել հայ եկեղեցին:

Բայց՝ մեզի վիճակուած է զիւցազնական հերոսութեամբ պահել մեզի աւանդուած ժառանգութիւնը եւ հաւատարմաբար՝ մեր նոր սերունդին փոխանցել Քրիստոսի Հայ Եկեղեցին - փրկեալներու սուրբ համայնքով յաւէտ կենդանի:

ԽԱԶԻԿ ՔՉՆՅ. ԳՌՈՒԶԵԱՆ

(Շար. 9)



ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ

Ներկայ ժամանակներուն քրիստոնեայ ըլլալը մեծ հերոսութիւն կը համարուի, նկատի ունենալով սոյն կրօնին բարոյագիտական ու յարաբերական կանոնները: Նմանին հետ ապրելու, կամ անոր հետ վարուեցողութեան խմաստով, ամէնէն կատարեալ օրէնքները ունի քրիստոնէութիւնը: Այդ կատարելութեան դիմաց, յարատեւ ճիգ կը պահանջուի մարդէն, եւ միշտ ալ թերութիւններ կ'արձանագրուին բնականօրէն:

«Կատարեալ մարդ չկայ» խօսքը, կարելի է նաեւ պատշաճեցնել քրիստոնեայ մարդուն, ըսելով թէ՛ «կատարեալ քրիստոնեայ մարդ չկայ»: Սա գայթակղեցուցիչ պէտք չէ՛ թուի բարեպաշտ քրիստոնեային, նոյնիսկ անոր՝ որ իր կեանքը իսկապէս կ'ապրի Աստուածաշունչի կանոններուն համաձայն, գործադրելով Աստուածահաճոյ բոլոր պատուիրանները Քրիստոսի: Որովհետեւ, մարդուն մեղանշական բնութիւնը, եւ մարդը շրջապատող աշխարհը, միշտ ալ գայն պիտի դնեն մեղանշումի դրան սեմին, երբեմն ամէնէն պարզ մեղքերէն սկսեալ, մինչեւ ծանրագոյնները գործելու փորձութեան մատներով մարդը:

Մարդուն վերոյիշեալ անկատարութեան պարագայէն տարբեր, քրիստոնեային անկատարութիւնը նաեւ ա՛յլ երեւոյթով մը կը յայտնուի: Անկեղծութեան բացակայութիւնը ոմանք այնպէս

կը կարծեն, թէ ամէնէն աւելի բարեկամութեան պարագային իր «գոյնը» կը ցուցնէ: Այսինքն, մեր բարեկամութիւնը կը չափուի մեր անկեղծութեամբ: Կամ՝ կարելի է ըսել, որ բարեկամութեան փորձաքարը՝ անկեղծութեան քննութիւնն է: Անձի մը անկեղծութիւնը հաստատելու համար, պէտք է փորձել գայն: Յատկապէս երբ այդ բարեկամութիւնը փորձաքարի կը զարնուի՝ դժուարութիւն մը կը պատահի եւ կարիքի մը, օգնութեան մը պէտքը կը զգացուի բարեկամի մը կեանքին մէջ, անկեղծութեան չափանիշը ի յայտ կու գայ: Շատեր իրենց բարեկամները կորսնցուցած են նեղութեան մէջ, որովհետեւ դժուարութեան մը պարագային ի յայտ եկած է, որ այդ բարեկամները անկեղծօրէն չէին սիրեր զիրենք, այլ շահու մը հետ կապուած եղած էր անոնց բարեկամութիւնը: Այսինքն ոչ անկեղծ մարդիկ, կը լքեն երբեմն իրենց տարիներու բարեկամները, գանոնք միմեկ ձգելով ստեղծուած դժուար կացութեան դիմաց:

Քրիստոսի հետ ալ անկեղծ բարեկամ ըլլալու կամ չըլլալու երեւոյթ մը կայ քրիստոնէական կեանքին մէջ: Ոմանք անուանական քրիստոնեաներ են, պարզապէս մկրտուած ըլլալով քրիստոնէական եկեղեցւոյ աւագանին մէջ: Ուրիշներ աւելի չափաւորական են, ոմանք ծայրայեղ եւ նեղմիտ: Վերոյիշեալ բա-

րեկամուլթեան պարագային ամէնէն ցա-
 ւալի երեւոյթը, կեղծաւորաբար բարե-
 կամուլթիւնն է Քրիստոսի հետ: Այ-
 սինքն, բարեկամուլթիւն հասկացողու-
 թեան հակադրուող ամէնէն հեղնական,
 նենգ ու վատ երեւոյթը:

Լսուած խօսք է՝ «անոնք որոնք կ'ը-
 սեն թէ կը հաւատան, եւ անոնք որոնք
 կ'ապրին հաւատքի ճշմարիտ կեանք մը,
 միեւնոյն անձերը չեն ըլլար առհասա-
 րակ»: Ճշմարիտ հաւատացեալ մը իր
 կեանքին օրինակով կը դիւրացնէ ուրիշ-
 ներու հաւատացեալ դառնալու գործըն-
 թացը: Անիկա մանաւանդ արտօնուած
 չէ «դիմակ» կրել, պահուան հետ գայն
 փոխելու համար: Ան չի կրնար ոմանց
 նկատմամբ իր մէկ երեսը գործածել,
 իսկ ուրիշներու ցոյց տալ դիմակաւոր
 այլ երես մը: Երբեմն, թունաւոր հեղուկ
 պարունակող շիշերուն վրայ փակցուած
 մարդկային գանկի դէմք մը աւելի
 փպտուն կ'ըլլայ, քան՝ կարգ մը քրիստո-
 նեաներու երեսը: Մինչդեռ քրիստոնեայ
 մարդուն գլխաւոր համոզումներէն մէ-
 կը պէտք է ըլլայ ուրախութիւնը եւ ազ-
 նուութիւնը: Առաքելը այդ յորդորը
 կու տայ, նոյնիսկ հալածանքի մէջ եղող
 առաջին դարու քրիստոնեաներուն:
 «Միշտ ուրախ եղէ՛ք Տիրոջմով, դարձեալ
 կ'ըսես՝ ուրախ եղէ՛ք», կ'ըսէ ան, շարու-
 նակելով նաեւ յորդորել «բոլորին հան-
 դէպ ազնիւ եղէ՛ք» խրատն ալ տալով
 (Հմմտ Փլ 4.4-5):

Կեղծաւոր քրիստոնեային հաշուար-
 կումով, կեղծիքը գոր ի գործ կը դնէ,
 ուղղուած կ'ըլլայ մարդոց՝ իր նմաննե-
 րուն: Այսպէս, օրինակ՝ մարդոց ներկա-
 յութեան ամբողջութեամբ տարբեր անձ
 մը կը դառնայ ան, բարեպաշտ, աստ-
 ուածասէր, մինչ իր ներքին կեանքին մէջ
 կրնայ նոյնը չըլլալ: Առաքելը դարձեալ
 կը յիշեցնէ, որ մարդոց հաճելի ըլլալը չէ՛
 կարեւորը, այլ Աստուծոյ (Հմմտ Ա. Թս
 2.4): Սակայն, այդ կեղծիքը մարդոց

ուղղուած չէ՛, այլ ուղղակիօրէն Աստու-
 ծոյ: Աստուած չես կրնար խարել: Ան գի-
 տէ ինչ որ ծածուկ է ու գաղտնի (Հմմտ
 Մտ 6.5-6): Ճշմարիտ քրիստոնեան մէկ
 բառ իսկ չի՛ քարոզեր, այլ իր կեանքը կը
 դարձնէ ճշմարիտ քարոզ մը: Քրիստո-
 նեան դաշնամուրի կը նմանի. կարեւոր
 չէ թէ ի՞նչ տեսակ է անիկա՝ մեծ, փոքր,
 պոչաւոր թէ կարճ, տեղական թէ ար-
 տասահմանեան արտադրութիւն: Կարե-
 ւորը անոր ձայներուն ներդաշնակուած
 ըլլալն է, կամ ներքին ձայնաթելերուն
 ճիշդ լարուած ըլլալը: Եւ ամէնէն կարե-
 ւոր ձայնը գոր պիտի արտաբերէ քրիս-
 տոնեայ մարդը՝ իր կեանքին հետ ներ-
 դաշնակուած «անկեղծութեան երաժշ-
 տութիւն»ն է: Այդ անկեղծութիւնը, հա-
 մեստութեամբ արտայայտութիւն կը
 գտնէ նաեւ, որովհետեւ Աստուած հա-
 կառակ է ամբարտաւաններուն (Առ
 3.34, Յլ 4.6): Լսուած խօսք է, թէ՛ խո-
 նարհութիւնը քրիստոնեային տարագն
 է, որուն նորաձեւութիւնը բնաւ ժամա-
 նակավրէյ չի՛ դառնար:

Կան սակայն երկու կէտեր, որոնք
 քրիստոնեայ մարդու գլխաւոր արժա-
 նիքները ըլլալով, կը փաստեն անոր իս-
 կապէս հաւատքի մարդ ըլլալու իրողու-
 թիւնը. - ա) Տալ, բ) Ներել:

Ահաւասիկ փորձաքարը գԱստուած
 իր սրտին մէջ ունեցող մարդուն համար:
 «Ինչքան՞ով քրիստոնեայ ես» հարցու-
 մին պատասխանը պիտի կարենաս տալ,
 ուրիշին տուածովդ: Եւ «Կ'ապրի՞ս քը-
 րիստոնէական կեանք մը» հարցումին
 պիտի կարենաս պատասխանել, ուրիշին
 նկատմամբ ունեցած ներողամտու-
 թեանդ ոգիով:

Այս երկու սկզբունքներուն պարա-
 գային ամէնէն աւելի թերութիւն արձա-
 նագրողները կ'ըլլան անոնք, որոնք
 Քրիստոսի հետ անկեղծ բարեկամու-
 թիւն չունին: Որովհետեւ Քրիստոսի
 հետ անկեղծ չեղողը, իր նմաններուն

հետ բնաւ անկեղծ չի կրնար ըլլալ: Կեղծաւորաբար իրենց աղօթքը երկարողներուն, յօնքի ու դէմքի ծամածռութիւններով գԱստուած փառաւորողներուն, կիսախուփ աչքերով ձեւական խորհրդապաշտութիւն կիրարկողներուն համա՛ր եւս վստահաբար աւելի ճոխ «վա՛յ»եր պիտի արտասանէր մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, զանոնք դասելով իսկական փարիսեցիներու խուռներամ շարքին: Յատկապէս աղանդաւորական շարժումերու Արեւմտեան տարբերակները, (որոնց արտաքին ձեւականութեան կապկումը կատարելու ցանկութիւն մը ակներեւ է նոյնիսկ Արեւելքի

պահպանողական համայնքներուն մէջ), Քրիստոսի հետ կեղծաւոր բարեկամութեան ռահվիրաներն են, ամէն ինչ կատարելով մարդոց ի ցոյց եւ ո՛չ թէ Աստուծոյ աչքին ի հաճոյս...:

Ի՞նչ կու տաս ուրիշին, կամ կը ներե՞ս: Ահա մարտահրաւէրները քրիստոնէական կեանքին: Այլապէս մնացեալը ամբողջ ձեւականութիւն է, դերասանական շնորհքով պայմանաւորուած, եւ որ միայն կորստեան պիտի մատնէ քեզ թէ՛ հոգեպէս եւ թէ՛ ֆիզիքապէս...:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ՉԻՖԹՅԵԱՆ



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅԸ

ՍԻՐՈՅ ԱՆՍԱԿԱՐԿ ՎԿԱՆԵՐ ԸԼԼԱԼ

Բարի լուրը գէշ կը դառնայ, երբ գայն առանց սիրոյ, անչար չհաղորդենք: Ան, որ դառնացած սրտով կը հռչակէ Յիսուսի ներողամիտ եւ բժշկարար սէրը, կեղծ վկայ մըն է: Յիսուսն է միայն աշխարհի Փրկիչը: Մենք մեր կեանքով եւ երբեմն ալ մեր խօսքով կոչուած ենք վկայելու մեզի համար Աստուծոյ կատարած մեծ գործերու մասին: Բայց սոյն վկայութիւնը պէտք է ի սրտէ ըլլայ եւ անսակարկ:

Որքանով վստահինք Աստուծոյ մեր նկատմամբ ունեցած անկեղծ սիրոյն, այնքան եւ աւելիով կարող պիտի ըլլանք հռչակելու Յիսուսի սէրը:

ՍԻՐՈՅ ԿԵՆԴԱՆԻ ՆՇԱՆՆԵՐ ԸԼԼԱԼ

Յիսուսի ամբողջ կեանքը վկայութիւն մըն է իր Հօրը սիրոյ մասին, եւ Ան կը հրաւիրէ իր հետեւորդները, որպէսզի անոնք շարունակեն այդ վկայութիւնն իր անունով: Մենք՝ Յիսուսի հետեւորդներս, աշխարհ դրկուած ենք ըլլալու համար Աստուծոյ անսակար սիրոյն տեսնելի նշանները: Մենք առաջին հերթին կը դատուինք ոչ թէ մեր խօսքով, այլ մեր ապրած կեանքով: Երբ մարդիկ ըսեն մեզի համար. «Նայեցէ՛ք, ինչպէ՛ս կը սիրեն զիրար», անոնք որոշ պատկերացում կ'ունենան Աստուծոյ արքայութեան մասին, զոր Յիսուս ծանուցեց, եւ որ իբրեւ մագնիս կը քաշէ հոգիները:

Մրցակցութեամբ, գայրոյթով ու ատելութեամբ բաժան-բաժան եղած աշխարհի մը մէջ մենք առանձնաշնորհեալ կոչուամն ունինք ըլլալու կենդանի նշաններն այն սիրոյ, որ կրնայ կամրջել բոլոր բաժանումներն ու բժշկել վէրքերը:

ՍԻՐՈՎ ՏՈՉՈՐԻԼ

Յաճախ մենք մեզի հարց կու տանք, թէ ինչպէ՞ս կրնանք Յիսուսի անունով վկայել: Ի՞նչ պէտք է ըսենք կամ ընենք մարդոց, որպէսզի ընդունելի դարձնենք այն սէրը, զոր Աստուած ընծայած է իրենց: Այս հարցումներն արդիւնք են աւելի մեր վախին, քան սիրոյ: Յիսուս մեզի ցոյց կու տայ վկաներ ըլլալու ճամբան: Ան այնքան լեցուած էր Աստուծոյ սիրով, այնքան միացած էր Աստուծոյ կամքին եւ այնքան կը տոչորէր Անոր արքայութեան նախանձախնդրութեամբ, որ չէր կրնար ուրիշ բան ընել, քան վկայել: Յիսուս ո՛ւր ալ գնաց, որո՛ւ որ հանդիպեցաւ, բժշկեց, քանզի կենդանարար գորութիւն մը կը բխէր իրմէ (ՏԵՍ ԶԿ 6:19):

Եթէ Յիսուսի վկաները կ'ուզենք ըլլալ, ապա պէտք է ջանանք նոյնքան կենդանի ըլլալ Աստուծոյ սիրոյ հետ, որքան Յիսուսն էր:

ԱՐԴԻԻՆՔՆԵՐՈՒՆ ՎՍՏԱՀԻԼ

Մենք այսօր կը պատկանինք սերունդի մը, որ անպայման կ'ուզէ տեսնել գործերուն արդիւնքը: Կ'ուզէ առատ արտադրող ըլլալ եւ սեփական աչքերով տեսնել իր յաջողութիւնը: Բայց ասիկա Աստուծոյ թագաւորութեան ուղին չէ: Յաճախ մեր վկայութիւնն Աստուծոյ մասին շօշափելի արդիւնքներու չ'առաջանորդեր մեզ: Յիսուս անձամբ իբրեւ ճախողութիւն մեռաւ խաչին վրայ (աշխարհիկ հասկացողութեամբ): Անոր կեանքին արդիւնաւէտութիւնը որեւէ մարդկային չափանիշէ ու արժեքափէ անդին է: Իբրեւ Յիսուսի հաւատարիմ

վկաներ, պէտք է վստահ ըլլանք, որ մեր կեանքն ալ պիտի արդիւնաւորուի, եթէ նոյնիսկ չտեսնենք անոր պտուղը: Մեր կեանքի պտուղը կը պատկանի գայիքին:

ՅԻՍՈՒՍԻ ՊԱՀՈՒԱԾ ԿԵԱՆՔԸ

Յիսուսի կեանքի մեծագոյն մասը քողարկուած է: Ան ծնողքին հետ Նազարէթին մէջ ապրեցաւ, «հնազանդ մնալով անոնց» (Ղկ 2-51) եւ հոն «գարգացաւ իմաստութեամբ ու մարմնով, Աստուծոյ եւ մարդոց սիրելի ըլլալով» (Ղկ 2-52): Երբ Յիսուսի մասին կը մտածենք, առաւելաբար անոր խօսքերն ու հրաշքները, չարչարանքները, մահն ու յարուցիւնն է, որ կը յիշենք, բայց երբեք պէտք չէ մոռնանք, որ Աստուծոյ Որդին նախ եւ առաջ ապրեցաւ պարզ կեանք մը, կեանք մը խուլ գիւղի մը մէջ, հեռու մարդոցմէ եւ պատահարներէ: Անոր սքողուած կեանքը շատ կարեւոր է մեր հոգեւոր ճանապարհորդութեան համար: Եթէ կ'ուզենք կատարելագոյն հետեւիլ Յիսուսին, այսինքն՝ մեր խօսքով ու գործով լիովին նուիրուելով Անոր թագաւորութեան ծառայութեան, պէտք է առաջին հերթին ջանանք ընդօրինակել անոր պարզ ու թագնուած կեանքը:

ԱՆՆԿԱՏՈՒԹԻՒՆԸ,
ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՎԱՅՐ ՄԸՆ Է

Աննկատութիւնը յոյժ կարեւոր որակ մըն է հոգեւոր կեանքին համար: Առանձնութիւն, լուսութիւն, սովորական աշխատանքներ, ժողովուրդին հետ ըլլալ ամէնուրեք, քնանալ, ուտել, խմել, խաղալ... այս բոլորը կը ներկայացնեն այն կեանքը, զոր Յիսուս ապրեցաւ եւ մեզմէ կը պահանջէ նոյնը ընել: Աննկատու-

թեան մէջ է որ մենք ալ Յիսուսի նման կրնանք աճիլ «իմաստութեամբ, հասակով եւ սիրելի ըլլալ թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մարդոց» (Ղկ 2-52):

Եթէ Աստուծոյ հետ չունինք սքողեալ կեանք մը, ապա Աստուծոյ համար ապրած մեր համայնական կեանքը չի կրնար պտղաբերիլ:

ԱՆՆԿԱՏՈՒԹԻՒՆԸ,
ՎԱՅՐ ԲԻՒՐԵՂԱՅՄԱՆ

Հոգեւոր կեանքին համար աննկատութիւնը շատ կարեւոր է այն պատճառով, որ ան պրկուած կը պահէ մեր կեդրոնացումն Աստուծոյ հանդէպ: Հոն մուտք չունին համաշխարհային հիացումը, հռչակն ու քաջալերանքը: Այնտեղ Աստուծոյ կ'երթանք մեր տխրութիւններով, ուրախութիւններով եւ վստահ ենք, որ Ան մեզի կու տայ, այն ամէնը, ինչ յոյժ կարիքն ունինք:

Մարդկային ընկերութեան մէջ հակումն ունինք խուսափելու աննկատութենէ: Յաճախ կ'ուզենք տեսնուիլ եւ ճանչցուիլ մարդոցմէ: Կ'ուզենք օգտակար ըլլալ ուրիշներու եւ ազդեցութիւն բանեցնել տեղի ունեցող եղելութիւններու վրայ: Բայց երբ անուանի կը դառնանք, կախեալ կ'ըլլանք մարդոցմէ եւ կը խզուի մեր կապը մեր ճշմարիտ աղբիւրին՝ Աստուծոյ հետ: Աննկատութիւնը վայրն է բիւրեղացման: Հոն է, որ ճշմարտագոյն մենք մեզ կը գտնենք:

"Bread for the Journey"
Henri J.M. Nouwen
ԹՐԳՄ՝ ՄԱԿԱՐ ԱՐՂ. ԱՇԳԱՐԵԱՆ


(Շար. 27)

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ»
(ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ Տ. ԽՐԼՈՊԵԱՆ)

Անցեալ տարի (2006) Պէյրուժի մէջ լոյս տեսաւ պատմաբան Գէորգ Խրլոպեանի «Յեղասպանագիտութիւն» խորագիրով ստուար հատորը, որ կը բաղկանայ շուրջ 400 էջերէ: Երեսուն տարուան աշխատանք խլած սոյն գիտական ուսումնասիրութեամբ, հեղինակը կը քննարկէ Հայկական Յեղասպանութիւնը իր գուտ աստուածաբանական, պատմական, իրաւական, քաղաքական, դիւանագիտական, ընկերային-հոգեբանական եւ գաղափարական դիտանկիւնէն:

Քննարկելով Հայկական Յեղասպանութեան հիմնական պատճառներն ու հետեւանքները, Գէորգ Խրլոպեան կ'ըսէ, թէ առանց հիմնաւորելու այդ պատճառները գիտական տուեալներով, անոնց հետեւանքները սխալ մեկնաբանութիւններու դուռ պիտի բանան եւ, հետեւաբար, պատմագիտութիւնը պիտի շեղի իր կարեւոր առաջադրանքէն: Այլ խօսքով, կ'ըսէ, պէտք չէ ցոյց տալ մակերեսային մօտեցում Յեղասպանութեան հարցին, ինչպէս կարգ մը պատմաբաններ Հայկական Յեղասպանութեան իսկական պատճառները կը վերագրեն ճակատագրին, նախախնամութեան, հայր «աստուածուրացութեան», փանթոլրանիզմի, փանխլամիզմի, ազգայնամոլութեան եւ ռազմապաշտութեան: Իսկ հեղինակը գիտական ճշգրիտ տուեալներով կը փորձէ բացայայտել Հայկական



Յեղասպանութեան իսկական պատճառները եւ այս առնչութեամբ կը դիմէ Աստուածաշունչին՝ հայերու դէմ գործըւած ահաւոր չարիքին աստուածաշնչական մեկնութիւն տալու առաջադրութեամբ: Ան կ'ըսէ, թէ Աստուծոյ կողմէ մարդ անհատին շնորհուած ազատ կամքը կը շահագործուի մարդէակի կողմէ հակամարդկային եւ չարաղէտ նպատակներու համար: Թէ՛ մարդ էակը հակառակ իրեն տրուած անձնիշխանութեան աստուածատուր շնորհին եւ, մա՛նաւանդ, Աստուծոյ

պատկերին համաձայն ստեղծուած ըլլալուն, կը շեղի մարդկօրէն ապրելու եւ բարոյական բարձր գիտակցութեամբ գործելու իր սկզբունքէն ու կը դառնայ չարագործ, այլամերժ ու նենգամիտ:

Աստուծոյ կողմէ մարդոց շնորհուած ազատ կամքի կապակցութեամբ մեր եկեղեցական սրբազան հայրերուն աստուածաբանական մեկնութիւնները ներկայացնելէ ետք, Գէորգ Խրյուպեան կը պարզէ այն ճշմարտութիւնը, թէ Հայկական Յեղասպանութիւնը նախահամուժեան կողմէ հայ ժողովուրդին վիճակուած երկնային պատիժ չէ երբեք, այլ՝ օսմանեան պետութեան դեկավարներուն կողմէ հայութեան դէմ դաւադրաբար գործուած ոճրային կանխածրագրուած արարք մը:

Գէորգ Խրյուպեան կ'ըսէ, թէ Հայկական Յեղասպանութեան գլխաւոր պատճառը կը գտնուի թրքական պատմութեան թաքուն ծալքերուն մէջ: Թէ՛ 15րդ դարէն ի վեր, կ'ըսէ, օսմանեան բռնակալութեան ներքեւ հայ ժողովուրդի պատմութիւնը եղած է յարատեւ ջարդի, լլկանքի ու եղբրական դէպքերու արիւնագիր վկայութիւնը:

Գէորգ Խրյուպեան կ'ըսէ, թէ թուրքերը թէեւ ներկայիս չեն ընդունիր Հայկական Յեղասպանութիւնը, սակայն կը խոստովանին, թէ իրենք են, որ պատմական Հայաստանի, Կիլիկիոյ, Պոյսոյ, Չմիւռնիոյ, Տրապիզոնի եւ Փոքր Ասիոյ միւս քաղաքներու հայերը բռնի ուժով տեղահան ըրած են, որոնք կորսնցնելով իրենց պապենական հողն ու օճախը՝ դարձած են սովամահ Արաբական անպատին մէջ: Այս խոստովանութեամբ, կ'ըսէ հեղինակը, թուրքերը հաստատած կ'ըլլան, թէ իրենց ձեռքով կատարուած են հայկական կոտորածները:

Ապա Գէորգ Խրյուպեան կ'անդրադառնայ այն իրողութեան, թէ եւրոպական մեծ տէրութիւններու անտարբեր վերաբերումը Սուլթան Համիտի վարած

հակահայ քաղաքականութեան հանդէպ՝ պատճառ դարձաւ, որ թուրք դեկավարները յղանան հայութիւնը արմատապէս բնաջնջելու գաղտնի ծրագիրներ: Այս իրողութիւնը փաստելու համար Գէորգ Խրյուպեան կը ներկայացնէ Եղեռնը նախորդող քառորդ դարու քաղաքական այն պայմանները, երբ ծայր առին հայկական արիւնտո դէպքերը՝ 25 յիթունի ապստամբութենէն մինչեւ 1909ի Ատանայի ահաւոր սպանդը:

Հայկական Յեղասպանութեան վաւերական հանգամանքը փաստելու առաջադրութեամբ, Գէորգ Խրյուպեան կը դիմէ գերմանական աղբիւրներու, տրուած ըլլալով, որ Թուրքիա եւ Գերմանիա Համաշխարհային Ա. պատերազմին եղած են դաշնակից պետութիւններ: Ըստ հեղինակին, թէեւ Թուրքիա թերահաւատութեամբ կը մօտենայ Ֆրանսական, անգլիական ու եւրոպական այլ պետութիւններու արխիւներուն, նկատելով զանոնք իբրեւ յերիւրածոյ տեղեկութիւններ բովանդակող լրատուական աղբիւրներ, սակայն պատերազմի ընթացքին գերմանական պետութիւնը իր դեսպաններուն միջոցով հայկական ջարդերու շուրջ գաղտնապէս հաւաքած է վաւերական տեղեկութիւններ՝ յաղթութեան պարագային զանոնք քաղաքական նպատակներու համար շահագործելու դիտաւորութեամբ:

Այս իրողութենէն անկախ, կ'ըսէ Խրյուպեան, հայկական ջարդերը բարոյապէս ճնշած են գերմանացիներու խիղճին վրայ, որոնք մեղսակից կը նկատեն իրենց անձերը Եղեռնի գոհերուն նկատմամբ իրենց ցուցաբերած անտարբերութեան պատճառով: Այս մասին օրին արտայայտուած է թրքագէտ-պատմաբան եւ թղթակից Հերպրտ Կիպլընը:

Այս իրականութիւնը պատմական ճշգրիտ տուեալներով ներկայացնելու առաջադրանքով, Գէորգ Խրյուպեան կը կատարէ մէջբերումներ գերմանական աղբիւրներէ, որոնց վաւերական ճշմար-

տուեթիւնը թուրք պատմարանները չեն կրնար ուրանալ կամ հերքել:

Պատմարան Գէորգ Խրլոպեան կ'ըսէ, թէ որեւէ ցեղասպանական արարք կը ծրագրուի ու կը գործադրուի տրւեալ պետութեան կողմէ բռնի ուժի օգտագործումով: Թէ՛ պետութիւնը, որ պէսզի արդարացնէ իր յանցանքը, կը դիմէ կազմակերպչական բազում միջոցներով՝ իր ծրագիրներուն գործադրութեան նպաստող բազմութիւններ կամ համակիրներ սիրաշահելու մտադրութեամբ: Ապա, մեկնելով խտրականութեան սկզբունքներէն, կ'ըսէ, թէ պետութիւնը իրաւագուրկ կը դարձնէ ժողովուրդ մը եւ այս առնչութեամբ կը մշակէ Ցեղասպանութեան գաղափարախօսութիւնը, որ կեղծ է եւ ունի գաղափարական ո՛չ մէկ հիմնական նախադրեալ:

Շարունակելով Ցեղասպանութեան շուրջ իր գիտական վերլուծումները՝ Խրլոպեան կը մէջբերէ կրօնական գործիչ եւ գիտնական վեր. Դոկտ. Ճէյմս Ուիլսոն Փիրսի այն կարծիքը, թէ Սուլթան Համիտ Օսմանեան կայսրութեան գահը բարձրացաւ դիմելով ահաբեկչական արարքներու, եւ թէ՛ ահաբեկչութեամբ պարտադրեց իր իշխանութիւնը բովանդակ Թուրքիոյ տարածքին: Բայց երբ Սուլթան Համիտ գրկուեցաւ իր քաղաքական իշխանութիւնը երաշխաւորող ահաբեկչութենէ, կործանեցաւ Օսմանեան կայսրութիւնը: Այս յղացքով, Դոկտ. Փիրս նմանութեան եզրեր կը հաստատէ իշխանութեան վրայ մնալու կապակցութեամբ Սուլթան Համիտի եւ Անգլիոյ վարչապետին որդեգրած քաղաքական գործելակերպերուն միջեւ: Այսպէս, ըստ Դոկտ. Փիրսի, Սուլթան Համիտ իր իշխանութիւնը կանգուն պահելու համար կը դիմէ ջարդերու, ինչպէս Անգլիոյ վարչապետը միեւնոյն նպատակով կը լուծէ կամ կը ցրուէ բրիտանական խորհրդարանը:

Խրլոպեան կ'ըսէ, թէ թուրք պետու-

թիւնը, եթէ հաստատէր ժողովրդավարական վարչակարգ, բռնութեամբ պիտի չլուծէր հպատակ ազգերու ինքնավարութեան պահանջները եւ, հետեւաբար, պիտի չդիմէր ցեղասպանութեան:

Ըստ իրեն, ցեղասպանութիւնը հետեւանք է քաղաքական հարցերը ժողովրդավարական միջոցներով լուծելու թուրք պետութեան անկարողութեան:

Այս առումով, Գէորգ Խրլոպեան կը յիշէ Ֆրանսան եւ Անգլիան, որոնք իրեւ զազուեթատէր պետութիւններ՝ փորձեցին ճնշել ինքնավարութեան համար իրենց դէմ ծառայող ժողովուրդներու ըմբոստութիւնը եւ պայքարը: Բայց Ֆրանսան եւ Անգլիան չգործադրեցին երբեք ցեղասպանական արարքներ իրենց ըմբոստ հպատակներուն դէմ, զանոնք ազգովին բնաջնջելու նպատակով, որովհետեւ, իրեւ ժողովրդավար պետութիւններ, անոնք գիտէին լուծել ամէնէն բարդ հարցերն անգամ քաղաքական միջոցներով, յարգելով մարդ էակի ազգային ինքնորոշման իրաւունքը:

Ապա Գէորգ Խրլոպեան կ'ըսէ, թէ Եղեռնի օրերուն հայ ժողովուրդը տրւաւ մէկուկէս միլիոն նահատակներ, ունեցաւ նիւթական անհաշուելի կորուստներ եւ կորսնցուց իր պապենական հարազատ հողերը: Քանզուեցան հայկական դարաւոր յուշարձաններ եւ ճարտարապետական անփոխարինելի կառոյցներ:

Հայկական Ցեղասպանութիւնը խոր ազդեցութիւն ձգած է գեղանկարչութեան վրայ, կ'ըսէ Խրլոպեան: Այս առիթով ան կը յիշէ անունները Քերօ Անթոյեանի, Արշիլ Կորքիի, Զարեհ Սուլթաֆեանի, Բիւզանդ Կոջամանեանի, Ռիշար (Խաչատուր) ժերանեանի, Գառգուրի, Ռոպէրթ Պարսամեանի եւ այլ գեղանկարիչներու, որոնց նկարները կը կրեն դրոշմը Եղեռնի ջարդերէն անդրադարձուած տխրատեսիլ յիշա-

տակներու...

Նրլոպեան կ'անդրադառնայ նաեւ «Արարատ» շարժանկարին՝ իբրեւ կենդանի վկայութիւնը հայկական ուրացուած ցեղասպանութեան:

Ներկայիս, Հայոց Յեղասպանութիւնը իբրեւ պատմական եղելութիւն գուտ ազգային հարց չէ, կ'ըսէ, այլ միջազգային երեւոյթ է նաեւ, որ կը կազմէ շահագրգռութեան առարկան համայն մարդկութեան:

Գէորգ Նրլոպեան կ'ըսէ, թէ գիտնականները ուսումնասիրելէ ետք վերջին եօթանասուն տարիներուն Եւրոպայի մէջ կատարուած ցեղասպանական եւ ողջակիզման արարքները, յանգած են այն եզրակացութեան, թէ հայկական Եղեռնէն ետք, եթէ եւրոպական պետութիւնները դիմէին ցեղասպանութիւնը դատապարտող եւ կանխարգիլող միջոցներու, հիթլերականները պիտի չգործէին իրենց ոճիրները՝ քաջալերուելով թուրքերու գործած ջարդերէն:

Արդարեւ, հաստատելէ ետք Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման արժանացած ըլլալու իրողութիւնը, Նրլոպեան կը թելադրէ զարկ տալ Հայաստանի պետականութեան հզօրացման, խորացնել Հայկական Հարցի իրաւաբարոյական երեսները, կը թելադրէ, որ արտասահմանի հայերը բնակին հայրենիքի մէջ՝ առաջը առնելու համար սպիտակ ջարդին եւ ամրապնդեն յարաբերական կապը հայրենի ժողովուրդին եւ սփիւռքահայութեան

միջեւ:

Եզրափակելով՝ փրոֆ. Դոկտ. Գէորգ Տ. Նրլոպեանի «Յեղասպանագիտութիւն» հատորին մասին վերոյիշեալ մեր կարծիքները, պէտք է ըսել, որ հեղինակը տարած է լուրջ եւ բժախնդիր աշխատանք ներկայացնելով Հայկական Յեղասպանութիւնը՝ գիտական եւ առարկայական փաստերով եւ անհրաժեշտ մանրամասնութեամբ:

Հայոց պատմութեան եւ, յատկապէս, մեր ազգային կեանքի վերջին հարիւրամեակի պատմական իրադարձութեանց քաջածանօթ պատմաբանն է Գէորգ Նրլոպեան, որ Յեղասպանութեան հարցին կը նայի քննական ակնոցով: Ճշգրտութիւնը եւ անաչառութիւնը կը հանդիսանան բնորոշ տարրերը պատմագիտական բնոյթ կրող իր հատորին, գոր գրած է իբրեւ գէնք ունենալով ճշմարտութիւնը:

Իսկապէս, Հայկական Յեղասպանութեան մասին ցարդ լոյս տեսած երկերու մէջ ուշագրաւ եւ գնահատանքի արժանի իրագործում մըն է Գէորգ Նրլոպեանի «Յեղասպանագիտութիւն» խորագիրով ծաւալուն ուսումնասիրութիւնը, որ իր ընդգրկած նիւթերուն պատմաբանասիրական յղացքով եւ այժմէականութեամբ կը պատրաստէ իրաւական ենթահող՝ Հայ Դատի կենսագործման աշխատանքին:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՈՒԹՒԻՆ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

Լաթակազմ 256 էջ



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հրամանաւ, Աստուածաշունչի նոր հրատարակութիւն մը կատարուեցաւ, համատեղ աշխատանքով Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին եւ Լիբանանի Ս. Գրոց Ընկերութեան:

Հին եւ Նոր Կտակարաններու խտացեալ պատմութիւնը իր մէջ ներառող 256 էջերով սոյն Աստուածաշունչը, մանկավարժական պատշաճեցում մըն է, յատկապէս պատանեկան տարիքի մէջ գտնուող նոր սերունդին համար: Ամբողջութեամբ գունաւոր պատկերներով զարդարուն հատորը, գեղատիպ հրատարակութեամբ, մատչելի է պատանիներուն, յատկապէս գործածուած պարզ լեզուին ու ոճին պատճառաւ: Ս. Գրոց Ընկերութեան հրատարակած անգլերէն բնագրէն կատարուած սոյն թարգմանութիւնը, ամբողջութեամբ հարազատ հայացումն է յիշեալ հատորին, ոճի եւ օգտագործուած բառապաշարի իմաստով:

Ս. Գրոց Լիբանանի Ընկերութեան Ընդհ. տնօրէն Մայք Պասսուս, որ Հինգշաբթի 6 Սեպտեմբեր 2007-ին, Անթիլիասի Մայրավանք եկած էր անձամբ Վեհափառ Հայրապետին յանձնելու վերոյիշեալ Աստուածաշունչին առաջին օրինակը, Նորին Սրբութեան ներկայացուց հրատարակչական աշխատանքին ամբողջ գործընթացը: Հանդիպման ներկայ գտնուեցաւ նաեւ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի ատենապետ՝ Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեան:

Վեհափառ Հայրապետը բարձրօրէն գնահատելով կատարուած աստուածահաճոյ աշխատանքը, Ընդհ. տնօրէնին հետ քննարկեց յառաջիկայ ծրագիրներու իրագործման փուլերը, մանկավարժական նոր հրատարակութիւններու գծով, ինչպէս նաեւ նորատիպ Աստուածաշունչը հանրութեան ծանօթացնելու իմաստով:

Մանկավարժական պատշաճեցումով գանազան գրքոյկներ լոյս տեսած են Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին կողմէ, եւ շարք մը այլ հրատարակութիւններ ընթացքի մէջ են: Աստուածաշունչի տարբեր տարիքներու յարմար հրատարակութիւնները ներկայիս Անթիլիասի կրօնական հրատարակութեանց մէջ իւրայատուկ տեղ ունին՝ տարեց, երիտասարդ, պատանի ու մանուկ տարիքի մէջ գտնուողներուն հասկնալի ոճով:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

**ՔԵՆՆԵՐՊԸՐԻՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՉ**

Ուրբաթ 28 Սեպտեմբեր 2007-ին, Աճկլիքան Եկեղեցւոյ պետ՝ Զէնթրպարիի Արքեպիսկոպոս Ռօւըն Ուիլիըմզ այցելեց Անթիլիաս եւ հանդիպում ունեցաւ Վեհափառ Հայրապետին հետ: Նախ Վեհափառ Հայրապետին եւ Արքեպիսկոպոսին միջեւ առանձին հանդիպում մը տեղի ունեցաւ եւ ապա երկու հոգեւոր պետերուն միացան ներկայացուցիչներ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն եւ Աճկլիքան Եկեղեցիէն: Նաեւ հանդիպում մը տեղի ունեցաւ ներկայութեամբ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ պետ՝ Ն.Ս. Զազգա Ա. Իուսա Պատրիարքի ներկայացուցիչ՝ Ճորճ Սալիպա Եպիսկոպոսին, քննարկելու համար Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու եւ Աճկլիքան Եկեղեցւոյ միջեւ աստուածաբանական երկխօսութեան վերսկսման հարցը:



ԵՐԿՈՒ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐ ԿՈՒՂՈՒԻՆ ԵԿԵՂԵՑԻ



ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՔԵՏ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ



ՔԵՆՁԸՐՂԸՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԻՐ ՀՔԱԽՈՒՄԲՈՎ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՇՈՒՐՋ ՆԵՐԿԱՅ ԵՆ ՆԱԵՒ ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐ, ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԴՅ. ՔԱՐՏՈՒՂԱՐԸ



ՔԷՆՆԸՐՊՈՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԾԱՂԿԵՊՍԱԿ ԿԸ ԶԵՏԵՂԷ
ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՅԱՏԱԿԱՑ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ



ԿԵՐԱՓԱՌ ՋԱՅՐԱՊԵՏԸ ՈՂՋԵՐԹ ԿԸ ՄԱՂԹԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Արքեպիսկոպոսը իր ընկերակիցներով երեկոյեան ճաշի հիւրը եղաւ Կեհա-
փառ Հայրապետին: Ճաշին ներկայ եղան միաբան հայրեր, Ազգային Կեդրո-
նական Կարչութեան եւ միջ-եկեղեցական յանձնախումբի անդամներ: Ճաշ-
կերոյթէն ետք, Ուիլիըմը Արքեպիսկոպոս Պիքֆայայի Ապրիլեան Նահատակաց
Յուշարձանին առջեւ ծաղկեպսակ զետեղեց: Զենթրոպրիի Արքեպիսկոպոսը
երկար շրջագայութեան մը ելած է ու յաջորդաբար կ'այցելէ Միացեալ Նա-
հանգներ, Իսրայէլ, Պաղեստին, Հայաստան, Սուրիա, Լիբանան եւ այլ երկիրներ:

ԵՐԿՈՒ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՍՖԷՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄԻՋԵՒ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս անցնող երկու ամիսներուն ընթացքին
երկու հանդիպումներ ունեցաւ Մարոնիո՞ Եկեղեցոյ պետ՝ Ամեն. Տ. Նասրալլա
Սֆէյր Պատրիարքին հետ: Առաջին հանդիպումը կայացաւ Չորեքշաբթի 10
Հոկտեմբեր 2007-ի առաւօտուն, Պքերքէի մէջ որու ակարտին Արամ Ա. Կաթո-
ղիկոս հետեւեալ յայտարարութիւնը կատարեց. «Կ'ողջունենք ու զօրավիգ կը
կանգնինք Սֆէյր Պատրիարքի մարոնիո՞ համայնքային ու քաղաքական ղեկա-
վարները Պքերքէ հրաւիրելու նախաձեռնութեան: Զրիստոնէական միութիւնը
հիմքը կը կազմէ լիբանանեան միութեան: Զրիստոնէական միութիւնը, իր
կարգին, պէտք է սկսի մարոնիո՞ համայնքի ներքին միութեան ամրապնդումով»:
Շարունակելով իր խօսքը, Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ. «Լիբանանը կը գտնուի իր



պատմութեան ճակատագրական մէկ հանգրուանին: Սխալ քայլ մը, Լիբանանը կրնայ մատնել լուրջ տագնապի: Երկար տարիներու մեր տագնապը մեզի պէտք է սորվեցնէ, թէ մեր ոյժը, մեր հաւաքական միութեան մէջ է: Լիբանանը ամէն բանէ առաջ ու ամէն բանէ վեր. ա՛յս պէտք է ըլլայ իւրաքանչիւր լիբանանցիի, ու բոլոր համայնքներուն ու քաղաքական կուսակցութիւններուն միակ նշանաբանը: Ներքին զգայնութիւններ ու տարբերութիւններ պէտք չէ մեզ հեռացնեն այն հիմնական սկզբունքներէն, որոնք կը կազմեն Լիբանանի գոյութեան հիմքը.- Անկախութիւն, Գերիշխանութիւն, Ազատութիւն, Միութիւն եւ Հողային ամբողջականութիւն ու գոյակցութիւն»:

Անդրադառնալով նախագահական ընտրութեան, Վերափառ Հայրապետը ըսաւ. «Նախագահի ընտրութիւնը հրամայական անհրաժեշտութիւն է: Անկախ պէտք է տեղի ունենայ սահմանադրութեան ճշդած սկզբունքներուն եւ ժամանակացոյցին համաձայն: Պէտք է ընտրել նախագահ մը, որ վեր ըլլայ բոլոր կողմերէն, դառնայ ամբողջական Լիբանանի նախագահը, դառնայ կողմերու միջեւ փոխադարձ վստահութիւն յառաջացնող, Լիբանանի գերագոյն շահերը ու արժէքները պաշտպանող, ու միջազգային ընտանիքէն ներս Լիբանանի կարեւոր տեղը ու դերը վերահաստատող նախագահ»:

Երկրորդ հանդիպումը երկու հոգեւոր պետերուն միջեւ կայացաւ Հինգշաբթի 25 Հոկտեմբեր 2007-ին, երբ Վերափառ Հայրապետը նոր վերադարձած էր Զուլիգերիա, Պելճիքա ու Իտալիա կատարած ճամբորդութենէն: Սֆէյր Պատրիարքին հետ ունեցած իր հանդիպումէն ետք Արամ Ա. Կաթողիկոս մամուլին կատարեց հետեւեալ յայտարարութիւնը. «Պատրիարք Սֆէյրը տեղեակ պահեցինք, Պելճիքայի, Զուլիգերիոյ ու Իտալիոյ մէջ Մեր ունեցած կրօնական ու պետական հանդիպումներուն մասին, որոնց առանցքը կազմեց բնականաբար Լիբանանը: Ոչ միայն մեծ հետաքրքրութիւն կայ Լիբանանի նկատմամբ, այլ նաեւ՝ զօրակցութիւն: Միջազգային համայնքը նախանձախնդիր է պահելու լիբանանեան գոյակցութիւնը, որպէս մշակոյթներու եւ կրօններու համակեցութեան շօշափելի արտայայտութիւն: Ինչպէս նաեւ ամրապնդելու Լիբանանի գերիշխանութիւնը ու ամբողջականութիւնը»:

Խօսելով Իտալիոյ մէջ իր ունեցած հանդիպումներուն մասին, Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ. «Նափոլիի մէջ տեղի ունեցած Սէնթ Էճիտիոյի միջազգային համագումարի ծիրէն ներս, պատիւը ունեցայ սեղանակից դառնալու նախ Պենետիկտոս 16-րդ Պապին եւ ապա Իտալիոյ նախագահին: Այս երկու առիթներով պատեհութիւնը ունեցայ թէ՛ Պապին, թէ՛ նախագահին եւ նոյն սեղանին վրայ գտնուող կարեւոր անձնաւորութիւններուն, պարզելու Լիբանանի կացութիւնը ու նախագահական ընտրութեան կարեւորութիւնը: Բոլորին մօտ ալ տեսայ նոյն մտահոգութիւնը ու նոյն յանձնառութիւնը Լիբանանի գոյակցութեան, միութեան ու գերիշխանութեան պահպանման նկատմամբ»:

Շարունակելով իր խօսքը Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ. «Նաեւ առիթը ունեցայ առանձին հանդիպում մը ունենալու Վատիկանի պետական քարտուղար՝ Պերթոնէ Կարտինալին հետ: Վատիկանի բոլոր պատասխանատուները մօտէն ծանօթ են Լիբանանի կացութեան, եւ իրենց կարելին կը կատարեն մեր երկիրը դուրս բերելու իր տագնապէն: Այս ծիրէն ներս ես իմ կողմէս որոշ մտածումներ ու

առաջարկներ ներկայացուցի պետական քարտուղարին»:

Ապա, անդրադառնալով Լիբանանի մեջ տիրող վերջին շրջանի կացության, Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ, «ուրախութեամբ հետեւեցայ վերջին օրերուն արձանագրուած դրական զարգացումներուն, յատկապէս քրիստոնէական ճակատի վրայ: Մեծապէս գնահատելի կը նկատեմ Պքէրքէի կատարած աշխատանքը այս ուղղութեամբ: Պէտք է շարունակել նոյն գործընթացը: Տեսակէտներու տարբերութիւնը պէտք է արգելք հանդիսանայ երկխօսութեան: Լիբանանը մեր բոլորին կը պատկանի: Անոր մտահոգութիւնները մե՛ր մտահոգութիւններն են եւ անոր շահերը մե՛ր շահերն են: Արդ, անհրաժեշտ է, քանի ժամանակը ուշ չէ, որ հաւաքուինք մեր բոլորին հայրենիքին, մեր մեծ ընտանիքին՝ Լիբանանի շահերուն շուրջ՝ օգտուելով մանաւանդ միջազգային համայնքին կողմէ Լիբանանի նկատմամբ ցուցաբերուած զօրակցութենէն»:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ ՌՈՒՄԱՆԻՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԲԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Ռումանիոյ Նորընտիր Պատրիարք Դանիէլ Արքեպիսկոպոսի Գահակալութեան անձնական հրաւեր ստացած ըլլալով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Ռումանիա ուղարկեց պաշտօնական պատուիրակութիւն մը բաղկացած Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանէ եւ Գերպ. Տ. Շահէ Ծ. Կրդ. Փանոսեանէ, մասնակցելու համար գահակալութեան հանդիսաւոր արարողութեան:

Դանիէլ Արքեպիսկոպոս աւելի քան 30 տարիներու անձնական բարեկամն է Ս. Աթոռոյս գահակալ Վեհափառ Հայրապետին: Ան անդամ եղած է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական Վարչութեան, որու ատենապետութիւնը վարած է Արամ Ա. Կաթողիկոս շուրջ երկու տասնամեակ:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը ողջոյնի յատուկ գիր յղեց Նորընտիր Պատրիարքին, ինչպէս նաեւ Հայրապետական յուշանուէր մը յանձնեց անոր, պատուիրակութեան ճամբով:



ՌՈՒՄԱՆԻՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԲԻ
Ն.Ս. ԴԱՆԻԷԼ Ա.

Գահակալութեան հանդիսութեան ասարտին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակութեան անդամները, յանուն Վեհափառ Հայրապետին շնորհաւորեցին նորընտիր Պատրիարքը, բեղուն գործունէութիւն եւ արեւջատ գահակալութիւն մաղթելով Նորին Սրբութեան: Այս առիթով անոնք վերահաստատեցին Հայ Եկեղեցւոյ Հայրապետական Ս. Աթոռին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Ռումանիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ միջեւ եղբայրական սերտ գործակցութեան երկար տարիներու վրայ երկարող կապերը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵԹՈՎՊԻՈՅ ՌԻՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԿՐՈՐԴ ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

26-27 Սեպտեմբեր 2007, Ատտիս Ապեպայի մէջ, Եթովպիոյ Ուղղափառ Եկեղեցին տօնախմբեց Եթովպիոյ երկրորդ հազարամեակի ասարտը նշող յատուկ հանդիսութիւններ:

Այս առթիւ, Ն. Ս. Փաուլոս Պատրիարք հրաւիրած էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, որ Լիբանանի մէջ տիրող քաղաքական անորոշ կացութեան պատճառաւ չկարողացաւ անձամբ ընդառաջել այս եղբայրական հրաւերին: Վեհափառ Հայրապետին տնօրինութեամբ, Գերշ. Տ. Գեղամ Եպս. Խաչերեան (*Առաջնորդ Լիբանանի Հայոց*) եւ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեւմէզեան (*Վարիչ Միջ-Եկեղեցական Յարաբերութիւններու*) մասնակցեցան տօնախմբութիւններուն:

Յանուն Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ներկայ եղան Գերշ. Տ. Ոսկան Արք. Գալփաքեան (*Հայրապետական Պատուիրակ Յունաստանի*) եւ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեան (*Առաջնորդ Եգիպտոսի Հայոց*):

Չորեքշաբթի, 26 Սեպտեմբերին, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ասիական կեդրոնատեղիին մէջ, գումարուեցաւ խաղաղութեան նուիրուած միջազգային համագումար մը, որուն ներկայ գտնուեցան շուրջ 500 հոգեւորական եւ աշխարհական հրաւիրեալներ:

Համագումարը ընդգրկեց վայրագութեան յաղթահարման, պատերազմներու դադարեցման, առողջապահութեան անխտրական հայթայթման, ընկերային արդարութեան հաստատման եւ բնութեան հոգածութեան ու պահպանութեան հրատապ հարցերը:

Յիշեալ նիւթերուն շուրջ դասախօսեցին ասիականացի ու միջազգային քաղաքական հանրածանօթ դէմքեր եւ ընդգծեցին աշխարհը ակելի լաւ բնակելի վայրի մը վերածելուն մէջ պետութիւններուն ունենալիք դերակատարութիւնը՝ ի վայելումն համայն մարդկութեան:

Արամ Ա. Կաթողիկոս յիշեալ գիտաժողովին դասախօսելու հրաւիրուած միակ Հոգեւոր Պետն էր, որուն դասախօսութիւնը կարդաց Նարեկ Սրբազան: Իր դասախօսութեամբ, ի պատասխան վերել տրուած դասախօսութիւններուն, Վեհա-



Չախեն աջ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ, ՃՈՐՃ ՍԱԼԻՊԱ ԵՊՍ.,
ԱՊՊԱ ՓԱՌԻԼՈՍ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՆԷԶԵԱՆ

փառը աստուածաբանական խոր վերլուծումով քրիստոնեական լուսարձակի տակ կը բերէր մարդուն, Աստուծոյ եւ ստեղծագործութեան հանդէպ ունեցած պատասխանատուութիւնը՝ շեշտելով միջ-կրօնական համակեցութեան հրամայականը եւ մարդուն տնտեսի աստուածատուր կոչումը:

Վեհափառ Հայրապետը իր դասախօսութիւնը կը սկսի հետեւեալ հաստատումով, թէ՛ «աշխարհը հիւանդ է բարոյական, տնտեսական, քաղաքական, հոգեւոր ու կենսոլորտային իմաստով, որովհետեւ մարդը շահագործած է Աստուծոյ կողմէ իր տրուած ազատութիւնը եւ հեռացած իր աստուածատուր պատասխանատուութենէն»: Այս հաստատումէն մեկնելով, Վեհափառ Հայրապետը իր դասախօսութիւնը չորս գլխաւոր կէտերով կը զարգացնէ.-

1) Մարդ արարածը պէտք է աստուածատուր իր ոյժը օգտագործէ ի խնդիր բարիին իրագործման: Նորին Սրբութիւնը կը յիշեցնէր, թէ ոյժի գործածութեան հարցը, ներկայ աշխարհի գլխաւոր տագնապներէն մէկն է: Ոյժը երբ կը գործածուի անձնական շահի եւ ոչ թէ հաւաքական շահի համար, ուրիշներուն վրայ տիրելու եւ ոչ թէ ծառայելու նպատակով, երբ ոյժը կը վերածուի աղբիւր հեղինակութեան եւ ոչ թէ սիրոյ, ու աւելին՝ երբ ոյժը կը դառնայ գործիք չարին, փտածութեան տիրապետութեան, այն ատեն ընկերութեան կեանքը կը խաթարուի կորսնցնելով իր ինքնութիւնը եւ ուղղութիւնը: Ապա Վեհափառ Հայրապետը կը յիշեցնէ, թէ ոյժը պէտք է գործածուի պատասխանատուութեամբ ու պէտք է հիմնուած ըլլայ բարոյական արժէքներու վրայ: Ոյժը պէտք չէ սեփականացուի:

Ան պետք է դառնայ հաւաքական պատասխանատուութեան արտայայտութիւն: Ոյժը պետք չէ դառնայ ամբարտաւանութեան ու ինքնաբաւութեան միջոց: Զրիստոնէական հաւատքը կը մերժէ ոյժի նման հասկացողութիւնը: Զրիստոսի խաչը աղբիւր է ոյժի, այլ խօսքով՝ սիրոյ, զոհողութեան, ծառայութեան, համեստութեան, որ միաժամանակ եղաւ յաղթանակ ընդդէմ չարին:

2) Մարդը իր ճշմարիտ կոչումը պէտք է հաստատէ տիեզերքին մէջ: Մարդուն կողմէ բնութեան աղբիւրներու անհաւասարակշիռ ու անհամաչափ օգտագործումը ինչպէս նաեւ անոնց շահագործումը յառաջացուցած է կենսոլորտային տագնապներ: 1992-ի Րիօ Տը ժամերօյի Միջազգային համագումարը նուիրուած կենսոլորտին, յիշեցում մըն էր մարդկութեան, թէ՛ տիեզերքը կենսոլորտային լուրջ տագնապի մը դիմաց կը գտնուի: Մի քանի ամիսներ առաջ Փարիզի մէջ տեղի ունեցած կենսոլորտի մասնագէտներու համաժողովը նոյն յիշեցումը կատարեց: Դժբախտաբար կարգ մը մեծ ազգեր կը շարունակեն կենսոլորտի շահագործումը, ի խնդիր տնտեսական, զինուորական ու քաղաքական նպատակներու: Վեհափառ Հայրապետը կոչ ուղղեց ներկայ ընթացքը շրջելու: Այլապէս գիտնականներու տուեալներուն իսկ հիման վրայ, տիեզերքի ինքնաքանդումը կրնայ չուշանալ: Այս շրջագծէն ներս Նորին Սրբութիւնը կը յիշեցնէ մարդու պատասխանատուութիւնը, յարաբերաբար բնութեան: Աստուած մարդը իր ներկայացուցիչը նշանակած է այս տիեզերքին մէջ, ոչ թէ շահագործելու, այլ օգտագործելու բնութիւնը այնքանով, որ անհրաժեշտ է իր կեանքին համար: Այս գծով մարդը համարատու է Աստուծոյ դիմաց:

3) Ընկերա-տնտեսական արդարութիւնը պէտք է դառնայ պետութիւններու ու ազգերու օրակարգի առաջնահերթութիւնը: Անարդարութիւնը զանազան ձեւերով կը շարունակուի: Աղքատութիւնը, որպէս անարդարութեան հետեւանքներէն մէկը, աւեր կը գործէ: Յստակ տուեալներու համաձայն, ամէն տարի 20 միլիոն երեխաներ կը մահանան սնունդի պակասի հետեւանքով, ըսաւ Վեհափառ Հայրապետը: Ճիշդ է, արդարութիւնը վերացնող ընկերա-տնտեսական ծրագիրներ կը մշակուին աղքատ երկիրներու մէջ՝ հարուստ երկիրներու կողմէ: Սակայն, անոնք քաղաքական ու զինուորական նպատակներ կը հետապնդեն աւելի, քան թէ ընկերա-տնտեսական արդարութիւն հաստատելու կը միտին: Եկեղեցին չի կրնար անտարբեր մնալ այս կացութեան դիմաց: Ան պետք է պայքարի այն բոլոր կառոյցներուն դէմ, որոնք անարդարութիւն կը սերմանեն: Եկեղեցին պէտք է պաշտպանէ աղքատը, ոչ թէ անոր հաց տալով, այլ անարդարութիւնը արմատախիլ ընելով՝ շեշտեց Արամ Ա. Կաթողիկոս:

4) Պէտք է միասնաբար աշխատինք ներդաշնակ ընկերութիւն մը ստեղծելու: Կ'ապրինք մարդկային պատմութեան այն շրջանը, ուր անհանդուրժողութիւնը եւ ահաբեկչութիւնը սկսած են իրենց տիրապետութիւնը հաստատել մեր կեանքէն ներս: Աշխարհը սկսած է փոքրանալ եւ մենք բոլորս, տարբեր ցեղերու, մշակոյթներու ու կրօններու պատկանող, կ'ապրինք նոյն աշխարհին մէջ: Սա մեր հաւաքական տունն է, թերեւս միակը: Հետեւաբար, կոչուած ենք միասին

ապրելու այս տան մէջ, զիրար յարգելով, մեր տարբերութիւնները ճանչնալով ու ընդունելով եւ զանոնք ներդաշնակելով, ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Եթովպիոյ փոխ-վարչապետը եւ այլ դասախօսներ իրենց ելոյթներուն մէջ ակնարկեցին Վեհափառ Հայրապետին ջանքերով Եթովպական եւ Ղպտի Եկեղեցիներուն միջեւ Յուլիս 2007ին իրագործուած հաշտութեան եւ զայն նկատեցին պատմական քայլ մը:

Գիտաժողովի ընթացքին, Նարեկ Սրբազան տեղական եւ միջազգային լրատուական գործակալութիւններուն հետ հարցազրոյցներ ունեցաւ եւ մասնակցեցաւ պաշտօնական մամլոյ ասուլիսին:

Հինգշաբթի, 27 Սեպտեմբերին, Ատտիս Ապեպայի կեդրոնական հրապարակին վրայ, Գեղամ եւ Նարեկ Սրբազաններ մասնակցեցան Գիւտ Խաչի ժողովրդային տօնակատարութեան, որուն ներկայ գտնուեցան բազմահազար հաւատացեալներ:



ԲԱԶՄԱՅԱԶԱՐ ԺՈՂՈՎՈՐԴ ԿԸ ՅԵՏԵԻ ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Նոյն օրը, երկու Սրբազանները պաշտօնապէս այցելեցին Փաուլոս Պատրիարքին եւ փոխանցեցին Վեհափառ Հայրապետին բարեմաղթութիւնները եւ որպէս յիշատակի նուէր ուղարկած ականակուռ ձեռաց խաչը:

Երեկոյեան, անոնք նաեւ հանդիպում մը ունեցան այս առթիւ Եթովպիա ժամանած Ն.Ս. Բարթոլոմիոս Յունաց Տիեզերական Պատրիարքին եւ Ն.Ս. Փաուլոս Միլիթիոս Հնդկաստանի Ուղղափառ Եկեղեցւոյ ընտրեալ Կաթողիկոսին հետ եւ անոնց փոխանցեցին Վեհափառ Հայրապետին եղբայրական ողջոյնները:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ԳԻՐԸ ՆԵՆՍԻ ՓԵԼՈՍԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս հետևեալ պաշտօնական նամակը յղեց Միացեալ Նահանգներու Խորհրդարանի նախագահ՝ Տիկին Նենսի Փելոսիի, գնահատելով Ներկայացուցիչներու Տան Արտաքին Ցարաբերութեանց Յանձնախումբի՝ առած քայլը, ի նպաստ Հայկական Յեղասպանութեան ճանաչման: Ստորեւ Վեհափառ Հայրապետին նամակը ամբողջութեամբ.–

Տիկին Նենսի Փելոսի

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան
Արտաքին Ցարաբերութեանց Յանձնախումբ
Ուաշինգթոն.

Սիրելի Տիկին Փելոսի,

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի կեդրոնատեղիէն կ'ողջունենք Ներկայացուցիչներու Տան Արտաքին Ցարաբերութեանց Յանձնախումբի առած քաջ քայլը՝ ի նպաստ Հայկական Յեղասպանութեան ճանաչման բանաձեւին:

Արդարեւ, Յանձնաժողովի այս որոշումը 2024-ի եւ հարազատ արտայայտութիւնն է մարդկային իրաւանց եւ մարդկութեան դէմ գործուած բոլոր տեսակի ոճիրներուն, ներառեալ Յեղասպանութեան նկատմամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու խոր մտահոգութեան:

Հայկական Յեղասպանութիւնը պատմական իրողութիւն մըն է: Ո՛չ միայն անհկա խոր կերպով արմատացած է հայ ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ, այլ նաեւ անհկա պատմական փաստերով եւ ականատեսի վկայութիւններով լաւապէս փաստուած: Մարդկութեան դէմ գործուած նման ոճիրներու ճանաչումը հրամայական է խուսափելու համար նոր ցեղասպանութիւններէ: Հետեւաբար, Յանձնախումբի առած որոշումը ճիշդ պատասխան մըն է թրքական Օսմանեան կայսրութեան այս տխուր էջին նկատմամբ:

Հայ Եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, իր ժողովուրդով եւ հաստատութիւններով, Յեղասպանութեան զոհ դարձած է: Կիլիկիոյ Կաթողիկոսարանի շրջափակէն ներս գտնուող նահատակներու մատուռը, թանգարանը

եւ հազարաւոր արխիւները, շօշափելի փաստեր են 1915-ին Օսմանեան թուրք կառավարութեան կողմէ ծրագրուած եւ գործադրուած ծեղասպանութեան: Մեծապէս կը գնահատենք Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Արտաքին Յարաբերութեանց Յանձնախումբին կողմէ առնուած այս որոշումը եւ խորապէս կ'ակնկալեմ որ Ներկայացուցիչներու ամբողջ Տունը շուտով որդեգրէ յիշեալ բանաձեւը:

Կ'ուզենք նաեւ այս առիթով Մեր բարձր գնահատանքը յայտնել Ձեզի անձնապէս, Հայկական Ծեղասպանութեան ճանաչման գծով Ձեր ցուցաբերած երկար տարիներու յանձնառու զօրակցութեան համար:

Թող Աստուած օրհնէ Ձեզ եւ Ձեր պաշտօնակիցները:

Աղօթարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



ՀԱՅ ԴԱՏ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
ՊՐԻՒՔՍԷԼ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ
ԵՒՐՈ-ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻՆ ՍԷՋ**

Շաբաթ 13 Հոկտեմբեր 2007-ի առա-
ւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողի-
կոս մեկնեցաւ Պրիւքսէյ, Պելճիքա, ներ-
կայ գտնուելու եւ իր Հայրապետական
պատգամը ուղղելու Եւրոպայի Հայ Հա-
մայնքներու եւ Միութիւններու ընդհա-
նուր համաժողովին, յանուն Մեծի Տանն
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Նորին
Սրբութիւնը կը գլխաւորէր պատուիրա-
կութիւն մը, որուն մաս կը կազմէին
Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փո-
խանորդ՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հեր-

կելեան, Յունաստանի Թեմի Առաջնորդ՝
Գերշ. Տ. Խորէն Եպս. Տողրամաճեան,
եւ Կաթողիկոսարանի Տեղեկատուական
Բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Գրի-
գոր Ծ. Վրդ. Զիֆթճեան:

Պրիւքսէյի օղակայանի պատուոյ
սրահին մէջ Վեհափառ Հայրապետը դի-
մաւորուեցաւ Պելճիքայի մէջ Լիբանանի
դեսպան Հանրի Քասթունի կողմէ ըն-
կերակցութեամբ հայ համայնքի ներկա-
յացուցիչներուն եւ Հայ Դատի Յանձնա-
խումբի ղեկավարութեան:



ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԿԸ ԴԻՄԱԲՈՐԷ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՂԱԿԱՅԱՆԻ ՊԱՏՈՒՈՅ ՍՐԱՀԻՆ ՍԷՋ



ՎԵՐԱՓՈՒՐ ՀԱՅՐԱՊԵՏՆԸ ԻՐ ՃԱՌԸ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՊԱՐՈՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Եւրոպայի խորհրդարանին մէջ Փրանսերէնի լեզուով արտասանած իր ճառին ընթացքին, Երկուշաբթի 15 Հոկտեմբեր 2007-ին, Եւրոպայի հայ համայնքներու եւ միութիւններու երկրորդ ընդհանուր համաժողովի բացման հանդիսութեան, ըսաւ. «Եւրոպան տնտեսական ու քաղաքական շահերու վրայ հիմնուած միութիւն մը ըլլալէ առաջ ու վեր, մարդկային արժէքներու վրայ հաստատուած մըն է ինձի համար: “Մարդկային արժէք” ըսելով կը հասկնամ այն կրօնական, մշակութային, կրթական արժէքները, որոնք հիմք կազմեցին Եւրոպայի ժողովուրդներու ստեղծած մշակութային ու կրօնական կառոյցներուն: “Մարդկային արժէք” ըսելով կը հասկնամ հաւասարութեան,

արդարութեան, մարդկային իրաւանց, ինչպէս նաեւ ժողովրդավարական սկզբունքները, որոնք հիմք կը կազմեն Եւրոպայի»:

Արամ Ա. Կաթողիկոս որ յատուկ կերպով հրաւիրուած էր իր խօսքը ուղղելու յիշեալ համագումարին, լայնօրէն անդրադարձաւ Եւրոպան յատկանշող պատմական արժէքներուն, ու ապա խօսեցաւ այս երկրամասը դիմագրաւող ներկայ մարտահրաւէրներուն մասին: Այս ծիրէն ներս Վեհափառ Հայրապետը ընդգծեց երեք մարտահրաւէրներ.-

ա) Եւրոպական միութեան ամրապնդումը. «Քաղաքական ու տնտեսական շահերու վրայ հիմնուած միութիւններ ժամանակաւոր են: Եւրոպայի միութիւնը ռազմավարական ու մարտավարական փոխադարձ յարաբերութիւններէն անդին, պէտք է հիմնուած ըլլայ Եւրոպայի հասա-



ՆԵՐԿԱՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԴԱՅԼԻՃԻՆ ՄԷՋ

րակաց արժեքներու եւ սկզբունքներու վրայ, ու ժողովուրդներու գործօն մասնակցութեամբ»:

բ) Եւրոպայի մէջ ապրող ժողովուրդներու համարկումը Արամ Ա. Կաթողիկոս նկատեց Եւրոպայի ամենէն հրատապ հարցերէն մէկը. «Եւրոպան Ամերիկա չէ: Միաձուլումի որեւէ փորձ, որուն ես անձնապէս դէմ եմ, կրնայ լուրջ վնասներ հասցնել այս երկրամասին, նաեւ ներքին տագնապներ յառաջացնելով: Հետեւաբար Եւրոպան պետք է համարկումի ընդհանուր ու ծրագրուած քաղաքականութիւն մը որդեգրէ, ուր գանազանութիւնը պետք է յարգուի միութեան ու ամբողջականութեան ծիրէն ներս»:

գ) Որպէս երրորդ մարտահրաւեր, Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ ընդգծեց հաւաքական տեսիլք մը մշակելու անհրաժեշտութիւնը. «Եւրոպական միութիւնը պիտի կորսնցէ իր ուժակաւորութիւնը եւ ուղղութիւնը, եթէ ան հիմնուած չըլլայ տեսիլքի մը վրայ: Այնպիսի տեսիլք մը, ուր Եւրոպայի ինքնութիւնը, որպէս արժեքներու համայնք, պետք է դառնայ ցայտուն» **ըսաւ Վեհափառ Հայրապետը:**

Իր խօսքի երրորդ եւ վերջին բաժնին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս լայնօրէն անդրադարձաւ երկու հարցերու. «Ճիշդ է, հայ ժողովուրդին ծննդավայրը Եւրոպան չէ: Սակայն Եւրոպան իր արժեքներով ու աւանդութիւններով միշտ ներկայութիւն եղած է հայ ժողովուրդի կեանքէն ներս, յատկապէս Կիլիկեան շրջանէն սկսեալ: Անհրաժեշտ է որ այս կենդանի երկխօսութիւնը հայ ժողովուրդին եւ Եւրոպայի միջեւ շարունակուի, քաղաքական, կրօնական, մշակութային, ընկերային եւ այլ մարզերէն ներս»:

Երկրորդ հարցը գոր Նորին Սրբութիւնը առաջադրեց, Հայկական Յեղափոխութեան ճանաչման հարցն էր: Այս գծով, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Այս ծիրէն ներս Եւրոպական միութիւնը եւ շարք մը երկիրներ ու կազմակերպութիւններ մեծապէս օգտակար հանդիսացան հայ ժողովուրդի պայքարին: Սակայն ես հարց կու տամ. ինչպէ՞ս կարելի է արժեքներու վրայ հիմնուած Եւրոպական համայնքէն ներս ընդունիլ երկիր մը, որուն դաւանած արժեքները ամբողջութեամբ խոտոր կը համեմատին Եւրոպայի մարդկային արժեքներուն: Ինչպէ՞ս կա-

րելի է ժողովրդավարական սկզբունքներով կառավարուող Եւրոպայէն ներս ընդունիլ երկիր մը, ուր ժողովրդավարութիւնը ձեւական է եւ հեռու իրականութենէ: Ինչպէ՞ս կարելի է ազատութեան ու արդարութեան վրայ հիմնուած Եւրոպայէն ներս ընդունիլ երկիր մը, որ ոչ միայն կ'անտեսէ մարդկային իրաւունքները, այլ նաեւ կը սպաննէ, կը հալածէ ու կ'ը բանտարկէ մարդկային իրաւունքներու պաշտպանները: Վերջապէս ինչպէ՞ս կարելի է, որ ցեղասպանութիւններու հեղինակները պատժելու քաջութիւնը ունեցող Եւրոպայէն ներս մուտք գործէ երկիր մը, որ կ'ուրանայ իր անցեալը, եւ պատրաստ չէ հաշտուելու իր անցեալին հետ»: Ապա Վեհափառ Հայրապետը շեշտակիօրէն ըսաւ. «Եւրոպայի ընդլայնումը պէտք չէ՛ տեղի ունենայ ի հեճուկս Եւրոպայի դաւանած սկզբունքներուն, արժէքներուն ու արժանութիւններուն առանել խորացման»:

Իր դասախօսութեան որպէս վերջին կէտ, Վեհափառ Հայրապետը յանուն Հայ ժողովուրդին, իր բարձր գնահատանքը ու շնորհակալութիւնը յայտնեց

Եւրոպային, ըսելով. «Հայ եկեղեցին, որ աշխարհի ամէնէն հին եկեղեցիներէն է, մեծապէս օգտուած է Եւրոպայի եկեղեցական արժանութիւններէն: Հայ մշակոյթը, որ աշխարհի ամէնէն հին մշակոյթներէն մէկն է, դարձեալ երկխօսութեան ցամաքով օգտուած է Եւրոպայի մշակութային արժէքներէն: Միաժամանակ, հայ ժողովուրդը ու հայ եկեղեցին, յատկապէս Կիլիկեան շրջանին, մանաւանդ մշակութային, կրօնական, ընկերային ու տնտեսական բնագաւառներէն ներս իրենց մասնակցութիւնը բերած են Եւրոպայի զարգացման ու յառաջդիմութեան: Հետեւաբար Եւրոպայի հայ համայնքները պէտք է վերանորոգ յանձնառութեամբ իրենց մասնակցութիւնը բերեն այսօր Եւրոպայի զարգացման ու յառաջացման գործընթացին»

Կող ուղղեց Արամ Ա. Կաթողիկոս:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

Համագումարի բացումէն օր մը առաջ, Կիրակի 14 Հոկտեմբերին, Ն.Ս.Օ.-Տ.-Տ. Արամ Ա. Կաթողիկոս, իր իջե-



ՎԵՅՎՈՒՄ ԳՅՅՐԱՊԵՏԸ ԵՒ Վ. ՕՍԿԱՆԵԱՆ ԳԱՆԴԻՊԱՆ ՊԱՅՈՒՆ

ւանած պանդոկին մէջ ընդունեց Հայաստանի Արտաքին Գործոց նախարար՝ Վարդան Օսկանեանը:

Հանդիպման ընթացքին խօսակցութեան նիւթ դարձան Ամերիկեան Քոնկրէսի Յանձնախումբի առած քայլն ու անոր յառաջիկայ հանգրուանները Հայկական Յեղասպանութեան ճանաչման գծով: Վեհափառ Հայրապետին ու նախարար Օսկանեանի հանդիպման ընթացքին արծարծուեցան նաեւ Հայաստանի արտաքին յարաբերութիւններու ներկայ հանգրուանին առնչուած հարցեր, ինչպէս նաեւ ընդհանրապէս Միջին Արեւելքի ներկայ կացութեան եւ Լիբանանի նախագահական յառաջիկայ ընտրութիւններու իրավիճակը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՊՐԻՒՔՍԵԼԻ
ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Կիրակի 14 Հոկտեմբեր 2007-ի յետմիջօրէին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, ընկերակցութեամբ Պելճիքայի

մէջ Լիբանանի դեսպան Հանրի Քասթունի եւ Կաթողիկոսարանի Տեղեկատուական Բաժանմունքի Վարիչ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանի, պաշտօնական այցելութիւն մը տուաւ Պրիւքսէլի Հայ Դատի Գրասենեակը, ընդառաջելով Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբի հրաւերին: Հայ Դատի Գրասենեակէն ներս Վեհափառ Հայրապետը դիմաւորեցին Յանձնախումբի ատենապետուհի Տիկ. Հիլտա Չօպոյեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի անդամներ Կարօ Արմէնեան եւ Յակոբ Տէր Խաչատուրեան, Եւրոպայի Հայ Դատի գործադիր մարմնի պատասխանատու անդամներ՝ ինչպէս նաեւ գրասենեակի պաշտօնէութիւնը:

Տիկ. Հիլտա Չօպոյեան Վեհափառ Հայրապետին ներկայացուց Գրասենեակի կատարած աշխատանքները, Եւրոպական քաղաքականութենէն ծիրէն ներս Հայ Դատի հետապնդման գծով: Ան նաեւ ներկայացուց անձնակազմը, իւրաքանչիւրին աշխատանքային կալուածով:



ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ԱՌՋԵՒ ՉՈՒՅԵՆ ԱՐ. ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ, ԳԻԼՏԱ ԶՕՊՈՅԵԱՆ, ՏԱՐՕՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, ԴԵՍՊԱՆ ՀԱՆՐԻ ՔԱՍԹՈՒՆ, ԵՒ ԱՐԱ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Նորին Սրբութիւնը յատուկ աղօթքով օրհնելէ ետք կեդրոնը, բարձրօրէն գնահատեց տարուող աշխատանքը: Վեհափառ Հայրապետը յատկապէս ըսաւ. «Հայ Դատը իւրաքանչիւր հայուն դատն է: Այս գիտակցութեամբ ու յանձնառութեամբ իւրաքանչիւր հայ իր մասնակցութիւնը պէտք է բերէ մեր ժողովուրդի հաւաքական իրաւունքներու պաշտպանութեան հարցին»: Ապա, Արամ Ա. Կաթողիկոս ողջունելով մի քանի օրեր առաջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Քոնկրէսի Յանձնախումբին քայլը Հայկական Ցեղասպանութեան գծով, ըսաւ. «Մեծապէս կը գնահատեմ այս ուղղութեամբ տարուած աշխատանքը Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբերուն եւ մեր համայնքին կողմէ: Սակայն, անհրաժեշտ է որ առաւել կազմակերպուածութեամբ շարունակուի այս աշխատանքը, որովհետեւ յառաջիկայ հանգրուանները շատ աւելի դժուար ու բարդ են» ըսաւ Նորին Սրբութիւնը: Ապա, խօսելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայ Դատի աշխատանքներուն բերած նպաստին, ան ըսաւ. «Մեր ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութիւնը, Մեր Սուրբ Աթոռին առաջնութեան կարեւոր առաջնահերթութիւններէն մէկն է: Չմոռնամ որ մեր Աթոռը իր ժողովուրդով, գոհն է Հայկական Ցեղասպանութեան: Հետեւաբար մեր ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութիւնը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ իրաւական, բարոյական ու ազգային խնդիր է»:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ
 ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ

Երկուշաբթի 15 Հոկտեմբերի երեկոյեան, ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, Պեյճիքայի մէջ Լիբանանի դեսպան Հանրի Քասթուն պաշտօնական ճաշկերոյթ մը տուաւ, Լիբանանի դեսպանատան շէնքին մէջ: Ճաշկերոյ-

թին ներկայ գտնուեցան Պրիւքսէյի լիբանանեան համայնքի ղեկավար դէմքերը, ինչպէս նաեւ հայ համայնքի ներկայացուցիչներ:

Ճաշկերոյթի ընթացքին խօսք առաւ դեսպանը, բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին, յատկապէս գնահատելով անոր արտասանած ճառը Եւրո-խորհրդարանին մէջ տեղի ունեցող համագումարին: Նաեւ խօսք առին Պեյճիքայի լիբանանեան համայնքի ներկայացուցիչներէն ոմանք, որոնք շեշտեցին Լիբանանի միութիւնը ամրապնդելու եւ նախագահական ընտրութիւնը անպայման կատարելու անհրաժեշտութիւնը: Իսկ Տոքթ. Ղաթթաս յատկապէս այս առիթով յօրինած իր սրտաբուխ բանաստեղծութիւնը ընթերցեց, որ նուիրուած էր Նորին Սրբութեան:

Ապա Վեհափառ Հայրապետը խօսք առնելով ըսաւ. «Լիբանանը զինք կազմող քրիստոնեայ թէ իսլամ բոլոր համայնքներուն յաւերժական հայրենիքն է: Այս գիտակցութեամբ պէտք է կառչինք Լիբանանին, եւ այս յանձնառութեամբ պէտք է միասնաբար աշխատինք, այնպիսի լուծումներ գտնելու, որպէսզի կարելի ըլլայ վերականգնել Լիբանանը»: Ապա Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ շեշտեց, թէ Լիբանանը կանգնած է լուրջ մարտահրաւէրներու դիմաց: «Լիբանանի հիմքը ու ինքնութիւնը կազմող սկզբունքները, այլ խօսքով Լիբանանի միութիւնը, համայնքներու գոյակցութիւնը, Լիբանանի գերիշխանութիւնը ու անկախութիւնը պէտք է մեզ միացնեն: Մենք շատ կը խօսինք ուրիշներուն մասին. ուրիշներու միջամտութեան, յարուցած դժուարութիւններուն մասին: Սակայն, պէտք է նաեւ խօսինք մեր մասին: Ի՞նչ ձեւով մենք կ'արտայայտենք մեր միութիւնը, մեր հաւաքական կամքը, մեր հաւաքական պատասխանատուութիւնը: Ուրիշներ իրենց շահերէն մեկնած կը նային Լիբանանին: Իսկ մենք, մեր



ՎԵՂԱՓԱՌ ԳԱՅՐԱՊԵՏԸ ԻՐ ԽՕՍՔԸ ԿՈՒՂՈՒ
ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻ ԸՆԹԱՍՔԻՆ

ազգային գերագոյն շահերէն մեկնած պետք է նայինք Լիբանանին: Ուրիշներուն համար Լիբանանը իրենց շահերը հետապնդելու երկիր է: Իսկ լիբանանցիներուս համար Լիբանանը մեր բոլորին հայրենիքն է: «Լիբանանը ամէն բանէ վեր», այս պետք է դառնայ իւրաքանչիւր լիբանանցիի կեանքին ու գործին սկզբունքը»:

Խօսելով նախագահական ընտրութեան մասին, Վեհափառ Հայրապետը շեշտեց, սահմանադրութեամբ ճշդուած ժամանակամիջոցին ընտրութիւնը կատարելու անհրաժեշտութիւնը: Ան ըսաւ. «Լիբանանի նախագահը պետք է հեռու մնայ կողմերէն, ու կողմնակի օրակարգերէն, եւ պետք է աշխատի ամբողջական

Լիբանանին գերագոյն սկզբունքներուն համար: Նոր նախագահը պետք է ընտրուի լիբանանցիներուն կողմէ, ու Լիբանանի գերագոյն շահերը պաշտպանելու յանձնառութեամբ»:

Իր խօսքի աւարտին, Նորին Սրբութիւնը ըսաւ. «Լիբանանի հայ համայնքին մօտեցումը միշտ եղած է հաւասարակշռուած, ու կը մնայ այդպէս: Մեր համայնքը չէզոք ու անտարբեր չէ: Մեր համայնքը ամբողջական Լիբանանին հետ է, ու կառչած կը մնայ անոր միութեան, անկախութեան ու համակեցութեան: Մենք պիտի շարունակենք միշտ այդպէս ըլլալ, անխտիր բոլոր համայնքներուն, բոլոր քաղաքական հոսանքներուն հետ գործակցելով, ի խնդիր Լիբանանի փրկութեան»:

ՄԻՋ – ԿՐՕՆԱԿԱՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՍԱԽՕՍԵՅ
«ՍԷՆԹ ԷՃԻՏԻՕ»Ի ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԻՏԱԼԻՈՅ ՄԷՋ**

Շարաթ 20 Հոկտեմբեր 2007-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ժամանեց Իտալիոյ Նափոլի քաղաքը, ուր տեղի պիտի ունենար «Սէնթ ԷՃԻՏԻՕ» կազմակերպութեան հրաւերով միջ-կրօնական միջազգային համագումարը: Վեհափառ Հայրապետին կ'ընկերանար Կաթողիկոսարանի Տեղեկատուական Բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթճեան: Նորին Սրբութեան

չքախումբին միացան նաեւ Իտալարնակ Տէր եւ Տիկին Ալեքքօ Պէգիքեան: Նորին Սրբութիւնը ոստիկանական պատուոյ պահակազուցի յատուկ պատիւներով ընդունուեցաւ Նափոլիի օդակայանին մէջ, ուրկէ ոստիկանական ինքնաշարժներով առաջնորդուեցաւ հիւրանոց: Կիրակի 21 Հոկտեմբեր 2007-ի երեկոյեան, Նափոլիի մէջ, Իտալիա, մամլոյ թղթակիցներուն հարցումներուն պա



ՆԱՓՈԼԻԻ ԳՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ, ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ՊԱՅՈՒՆ



ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԿՐՕՆԱՊԵՏՆԵՐ՝ ՃԱՇԿԵՐՈՅԹԻ ԱԲԱՐՏԻՆ

տասխանելով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ, թէ Վատիկանը աւելի քան երբեք, այսօր կը մնայ յանձնառու Լիբանանի միութեան, անկախութեան ու գերիշխանութեան ամրապնդման, ինչպէս նաեւ նախագահական ընտրութեան՝ սահմանադրութեամբ ճշդուած ժամանակամիջոցին:

Արամ Ա. Կաթողիկոս սոյն յայտարարութիւնը կատարեց Ն.Ս. Պենետիկտոս 16-րդ Պապին հետ ունեցած կէսօրուան ճաշէն, եւ ապա Վատիկանի պետական քարտուղար՝ Թարքիսիօ Պերթոնէին հետ ունեցած հանդիպումէն յետոյ: Վեհափառ Հայրապետը յատկապէս ըսաւ. «Սէսօրին, Նորին Սրբութեան հետ ունեցած ճաշին ընթացքին անդրադարձայ Լիբանանի կացութեան: Սրբազան Պապը մօտէն ծանօթ է Լիբանանի կացութեան եւ իր կարելին կ'ընէ օգնելու Լիբանանին: Ապա երկար հանդիպում մը ունեցայ պետական քարտուղար՝ Կարտինալ Պերթոնէի հետ: Իրեն բացատրեցի երկրէն ներս տիրող կացութիւնը, եւ նախագահական ընտրութեան անհրաժեշտութիւնը: Ուրախութեամբ հաստատեցի, որ Վատիկանը կը շարունակէ յատուկ կարեւորութիւն ընծայել Լիբանանի, կը մնայ կառ-

չած անոր իւրայատուկ նկարագրին ու դերակատարութեան ամրապնդման»:

Այս օրերուն, Իտալիոյ Նափոյի քաղաքին մէջ տեղի կ'ունենայ Սէնթ Էճիտիոյի համագումարը, որուն կը մասնակցին բոլոր կրօններուն պատկանող կրօնական ու քաղաքական ղեկավարներ, ինչպէս Իտալիոյ վարչապետը՝ Փրոտի, նաեւ նախագահներ, նախարարներ, ու պետական անձնաւորութիւններ: Պապը նախագահեց բացման պատարագին: Արամ Ա. Կաթողիկոս վաղը խօսք պիտի արտասանէ համագումարին: Ան նաեւ հանդիպումներ կ'ունենայ ժողովի մասնակիցներուն հետ, արժարծելով Լիբանանեան հարցը:

21-23 Հոկտեմբեր 2007-ի օրերուն վրայ երկարաձգուեցաւ համագումարը, «Մշակոյթներու եւ կրօններու երկխօսութիւն - դէպի աշխարհ մը՝ առանց բռնութեան» թեմային շուրջ: Համագումարի ընթացքին տեղի ունեցան զանազան նիւթերու շուրջ դասախօսութիւններ: Այս ծիրէն ներս, «Աստուծոյ Խօսքը Քրիստոնեաներու կեանքին մէջ» նիւթին շուրջ դասախօսեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս:

Նոյն նիւթին յատկացուած երեք

ժամերու ընթացքին նաեւ խօսք առին, Կիպրոսի Արքեպիսկոպոս Խրիստոսթոմոս Բ., Յոյն Կաթողիկ Պատրիարք՝ Կրէկորիոս Գ. Լահճամ, Հնդկաստանի Կարտինալ Բլասիտիոս Թոփփօ, Նորվեկիոյ Լուտերական եկեղեցւոյ պետ՝ Օլէ Քվարմէ եւ Պոգէ կեղրոնի ընդհանուր տնօրէն՝ Էնգօ Պիանչի: Նիստը կը վարէր Իտալիոյ նախկին նախագահ՝ Ն.Վ. Օսքար Լուիճի Սքալֆարօ:

Վեհափառ Հայրապետը իր խօսքը բաժնած էր երեք մասերու: Առաջին բաժնին մէջ Նորին Սուրբ Օծուծիւնը մեկնելով Յովհաննու Աւետարանէն, շեշտեց թէ Աստուծոյ Խօսքը ո՛չ թէ Աստուծոյ ինքնարտայայտութիւնն է, այլ նոյնինքն Աստուած: Ան մասնակից է տիեզերքի ստեղծագործութեան: Աստուծոյ նոյն Խօսքն է որ մարդացաւ, որպէսզի մարդը առաջնորդէ դէպի Աստուած:

Իր խօսքի երկրորդ մասին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս ընդգծեց, թէ Աստուծոյ մարդեղացման նպատակն էր փրկութիւնը, մարդու եւ տիեզերքի վե-

րաստեղծագործութիւնը: Այս շրջագծէն ներս Վեհափառ Հայրապետը յիշեցուց, որ փրկութիւնը ուղղուած չէ՛ միայն անհատ մարդու, այլ՝ ամբողջ մարդկութեան ու տիեզերքին: Վեհափառ Հայրապետը նաեւ կարեւորութեամբ շեշտեց, թէ Քրիստոսի եգակիութիւնը, բացարձակութիւնը ու տիեզերականութիւնը պէտք չէ՛ շփոթել Եկեղեցւոյ հետ: Այս իրողութենէն մեկնած, այլ կրօններուն մեր մօտեցումը պէտք չէ՛ եկեղեցակերոն ըլլայ, այլ՝ Քրիստոսակերոն: Որովհետեւ Քրիստոս ամբողջ աշխարհին համար մարդեղացած է:

Երրորդ բաժնին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս կարեւորութեամբ ընդգծեց, թէ Եկեղեցին հաստատուած իրականութիւն մը չէ՛ այլ՝ դէպի ապագայ ուղղուող ընթացքի մէջ կը գտնուի: Նոյնպէս նաեւ քրիստոնէական հաւատքը, որ մարդը անցեայէն կը կապէ ներկային, ու ներկայէն կը բանայ ապագային: Այլ խօսքով վախճանաբանութիւնը քրիստոնէական կեանքին ու մտածողութեան առանցքը կը կազմէ: Քրիստոսի Երկ-



ՎԵՅԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՊՎՅՈՒՆ



ՆԵՐԿԱՆԵՐ ԿԸ ԴԵՏԵԻՆ ՎԵՅՎՓԱՌ ԳԱՅՐԱՊԵՏԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ

*ԸՐՐԴ ԳՅՐՈՆԱՏՐ ԿՐ ԿՅՈՎՄԱՆԱԼՈՐԷ ՈՒ
Կ՛ԱՌԱՋՆՈՐԴԷ ԵԿԵՂԵՍԵՆՅ ԿԵԱՆՔՐ:*

*ՆԻՍՏԻ ԲԱՅՄԱՆ ՈՒ ՓՈԿԻՄԱՆ ԽՕՍՔՐ
ԿԱՏԱՐԵՑ ՆԱԽԱԳԱՏ ԱՔԱԼՓԱՐՈ:*

*ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՆԱՓՈԼԻԻ ՄԷՁ*

*ՎԵՐՈՅԻՋԵԱԼ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՋ-
ԽԱՏԱՆՔՆԵՐՈՆ ԱՌԸՆԹԵՐ, Ն՝Ս՝Օ՝Տ՝Տ՝*



ԳԵՐԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՊԵՏ ԳԻՊՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ



ՎԵՐԱՓԱՌ ԶԱՅՐԱՊԵՏԸ ԵՒ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԸ ԿԸ ԴԵՏԵԻՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՓԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ



ԿԱՐՏԻՆԱԼ ՍԵՓԷ ԿՈՂԶՈՒՆԷ ՎԵՐԱՓԱՌ ԶԱՅՐԱՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Արամ Ա. Կաթողիկոս ունեցաւ շարք մը կարեւոր հանդիպումներ:

Այսպէս, Վեհափառ Հայրապետը երկար հանդիպում մը ունեցաւ Քէնթրալըրիի Արքեպիսկոպոս Բօուըն Ուլլըմզի հետ, որ շուրջ երկու շաբաթներ առաջ Անթիլիաս այցելած էր եւ Նորին Սրբութեան հիւրը եղած: Հանդիպման ընթացքին արծարծուեցան միջ-եկեղեցական հարցեր, եւ յատկապէս Անլիքան եկեղեցւոյ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու միջեւ սկսուած աստուածաբանական երկխօսութիւնը վերականգնելու կարելիութիւնները:

Արամ Ա. Կաթողիկոսը այցելելու Գերմանիա:

Հանդիպումներու շարքին կ'արժէ նաեւ յիշել Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Տիեզերական Պատրիարքին հետ տեղի ունեցած հանդիպումը, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ընդհանուր քարտուղարին, Լուսեռական Եկեղեցիներու Ընդհանուր Քարտուղարին, ինչպէս նաեւ այլ կրօններու պատկանող բարձրաստիճան պատասխանատուներու, եւ պետական բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ կայացած հանդիպումները:



ԵՒՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԴՀ. ԲԱՐՏՈՒՂԱՐ՝ ԺԱՆ ԱՌՆՈՒՆՏ ԲԼԵՐՍՈՆԻ ԴԵՏ

Վեհափառ Հայրապետը նաեւ հանդիպում մը ունեցաւ Գերման Աւետարանական Եկեղեցիներու նախագահ Հիւպըր Եպիսկոպոսին հետ: Այս վերջինը, որ երկար տարիներու բարեկամն է Վեհափառ Հայրապետին, անգամ մը եւս իր շնորհակալութիւնը յայտնեց, Պերլիւնի մէջ տեղի ունեցած համագումարին, Վեհափառ Հայրապետին դասախօսութեան համար: Ապա, ան հրաւիրեց

Սոյն հանդիպումներու ընթացքին, միջ-եկեղեցական ու միջ-կրօնական հարցերու աւընթեր արծարծուեցան Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը, Լիբանանի այժմու կացութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգներու Քոնկրէսի ենթալանձնախումբին կողմէ Հայկական Յեղասպանութեան գծով առնուած որոշումը, Լիբանանի կացութիւնը եւ այլ հարցեր:



ԿԱՐՏԻՆԱԼ ԷԶԱԿԱՐԱՅ ԿԸ ԶՐՈՒՅԷ ՎԵՐԱՓՈՒ ԶԱՅՐԱՊԵՏԻՆ ԴԵՏ



ՔՐԻՍՏՈՆԵԱՅ-ԻՍԼԱՄ ԱՐԱՐ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԻ ՆԱԽԱԳԱՅ ԴԱՏԱԴՈՐ ԱՊՊԱՍ ԶԱԼԱՊԻԻ ԴԵՏ

ԱՅՑՑԵԼՈՒԹԻՒՆ
«ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ»Ն

Երկուշաբթի առաւօտ, 22 Հոկտեմբեր 2007-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, նախապէս կատարուած յատուկ կարգադրութեան համաձայն, պաշտօնական այցելութիւն մը տուաւ Խտալիոյ Նափոլի քաղաքին մէջ գտնուող Խտալական կաթողիկ եկեղեցին, որ կը կրէ «Հայոց Ս. Գրիգոր Եկեղեցի» անունը: Յայտնենք, որ աւանդութեան համաձայն, Ս. Գրիգոր Լուսաւորչի գանկը կը գտնուի սոյն եկեղեցւոյ մէջ, եւ ճիշդ անոր համար եկեղեցին եւ անոր կից գտնուող վանքը ու փողոցը կոչուած են Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով: Նաեւ յայտնենք, որ Հայոց Քրիստոնէութեան դարձի 1700-ամեակին առիթով, Յովհաննէս Պօղոս Բ. Պապը, Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքէն բաժին մը նուիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, ու բաժին մը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Վեհափառ Հայրապետը աղօթք մը արտասանեց եկեղեցւոյ մէջ, ապա, եկեղեցւոյ պատասխանատու քօյրերու առաջնորդութեամբ շրջեցաւ եկեղեցւոյ ու վանքի գանազան բաժինները, ուր զետեղուած են Խտալացի արուեստագէտներուն կողմէ նկարուած, Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքէն ու չարչարանքներէն եւ հայ ժողովուրդի քրիստոնէութեան դարձէն տեսարաններ:

Ապա կարճ հիւրասիրութիւն մը տեղի ունեցաւ, որու ընթացքին Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը արձանագրեց վանքի յուշամատեանին մէջ: Սոյն այցելութեան ընթացքին Նորին Սրբութեան կ'ընկերանային Կաթողիկոս



ՎԵՅՎՓԱՌ ԳԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ԳՐԻԳՈՐ» ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՅՐ ԽՈՐԱՆԻՆ ՎՐԱՅ



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԿԱՒՈՐԶԻ ԳԱՆԿԸ, ՆԱՓՈԼԻ «ՅԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ» ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ



ՎԱՔԻ ՔՈՅՐԵՐՈՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՏ



ՔՈՅՐԵՐՈՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՒՈՐՈՒՅԻՆ ՎԵՅԱՓԱՈ ՅԱՅՐԱՊԵՏԻՆ ՅԵՏ
 Ձախեն աջ.- գրիգոր Ծ. ՎՐԴ., ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՊԵՏԸ,
 ԲԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԼԵԹՕ ՊԵՋԻԿԵԱՆ

սարանի Տեղեկատուական Բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեան, եւ Նորին Սրբութեան չքախումբի անդամներ Տէր եւ Տիկին Այեքքօ Պէգիկեան, ինչպէս նաեւ Սէնթ Էճիտիօ կազմակերպութեան ներկայացուցիչը:

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Համագումարի փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի 23 Հոկտեմբերի երեկոյեան, Նափոյի հրապարակին վրայ, ժողովրդային հսկայ բազմութեան ներկայութեամբ: Տեղի ունեցաւ մոմվառութիւն, եւ համագու-

մարին պատգամը հանդիսացող խօսքը, երիտասարդներ յանձնուեցին ներկայ կրօնապետներուն, իսկ վերջիններս գանձ յանձնեցին նոր սերունդը խորհրդանշող մանուկներուն:


Երեկոյեան, Իտալիոյ նախագահ Ն.Վ. Ճիորճիօ Նափոյիթանօ, ժողովականներուն ի պատիւ ճաշկերոյթ մը տուաւ Նափոյի նախկին թագաւորական շքեղ պալատին մէջ: Վեհափառ Հայրապետը կը գտնուէր նախագահի պատուոյ սեղանին շուրջ, ուր առիթ ունեցաւ խօսելու Հայաստանի, Հայ ժողովուրդի ու Լիբանանի առնչուած հարցերու մասին:

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԱՏԳԱՄ ՅՂԵՑ
ԹԱՅՈՒԱՆԻ ՄԻՋ-ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

Հոկտեմբեր 26-29 2007-ին Թայուանի մէջ տեղի ունեցած միջ-կրօնական համագումարին ուղղած իր պատգամին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ողջունեց յիշեալ նախաձեռնութեան յոյժ կարեւորութիւնը, երկու երկրամասերու միջեւ կրօններու ճամբով գործակցութիւնը աւելի ամրապնդելու պատրաստակամութիւնը: Վեհափառ Հայրապետը յատկապէս ըսաւ. «Ափրիկէն, Ասիան եւ Միջին Արեւելքը Հիմնտուիզմի, Պուտտիզմի, Ծինթոյիզմի եւ միաստուածեան երեք կրօններու՝ Հրեական կրօնի, քրիստոնէութեան եւ իսլամութեան ծննդավայրը եղած է: Հետեւաբար, անհրաժեշտ է փոխադարձ հասկացողութիւնը ու գործակցութիւնը աւելի զօրացնել, միասնաբար դիմագրաւելու մարդկութեան տագնապները»:

Վեհափառ Հայրապետը անդրադառնալով 11-15 Նոյեմբեր 2006-ին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքին մէջ տեղի ունեցած նմանօրինակ համագումարին, եւ յիշեալ համագումարի կատարած յայտարարութեան, կոչ ուղղեց շարունակելու միջ-կրօնական երկխօսութեան ու գործակցութեան հաւաքական ընթացքը:



Արամ Ա. Կաթողիկոս հրաւիրուած էր յիշեալ համագումարին անձամբ իր խօսքը ուղղելու, սակայն իր բազմազբաղ ըլլալուն բերումով չկրցաւ անձնապէս ներկայ գտնուիլ: Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, յիշեալ համագումարին մասնակցեցաւ Տիկթենի Փիրի-Սիմոնեան:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՃՕՐՈՒՄԵՆ ՌՈՏՈՍԻ ՄԷՋ**

10-14 Հոկտեմբեր 2007-ին, Ռոտոսի մէջ (Յունաստան), կայացած Համաշխարհային Ֆորումի քաղաքակրթութեանց երկխօսութեան միջազգային համագումարին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր գործօն մասնակցութիւնը բերաւ: Յիշեալ ոչ-պետական կազմակերպութեան տարեկան համագումարին մասնակցեցան անոր մնայուն ներկայացուցիչները, ինչպէս նաեւ քաղաքական ու պետական ականաւոր անձնաւորութիւններ, մասնագէտներ ու գիտնականներ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինումով, Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան (Թեհրանի Թեմի առաջնորդ), եւ Տիկ. Թենի Փիրի-Սիմոնեան (Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական Յանձնախումբի փոխ-ատենապետուհի), մասնակցութիւն բերին յիշեալ համագումարին:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչները յատուկ նիւթերով մասնակցեցան երկու կլոր սեղաններուն: Սեպուհ Արքեպիսկոպոս ներկայացուց «Կրօն եւ քաղաքակրթութեանց երկխօսութիւն» նիւթը, յատկապէս շեշտելով աղօթքին կարեւորութիւնը անհատական թէ հաւաքական կեանքէն ներս: Իսկ Տիկ. Թենի Փիրի-Սիմոնեան խօսեցաւ «Քաղաքակրթութիւններու ստեղծած միջոցը եւ դաստիարակութեան անհրաժեշտութիւնը» նիւթին շուրջ, շեշտելով ժողովրդային մակարդակի վրայ կատարուելիք դաստիարակութեան կարեւորութիւնը, քաղաքական, ընկերային ու տնտեսական համախոհութիւն մը ստեղծելու ի խնդիր:



Երկու կլոր սեղաններու նիւթերէն առաջինը յատկացուած էր Միջին Արեւելքին, իսկ երկրորդը՝ Ասիական մշակոյթներուն՝ այլ քաղաքակրթութեանց հետ երկխօսութեան:

Ռոտոսի մէջ իրենց կեցութեան օրերուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչները հանդիպումներ ունեցան վերոյիշեալ կազմակերպութեան նախագահին, փոխ-նախագահներուն եւ գործադիր տնօրէնին հետ, որոնք հիացումով արտայայտուցան Վեհափառ Հայրապետին միջ-եկեղեցական, միջազգային գործունէութեան, եւ հրաւիրեցին Նորին Սրբութիւնը գլխաւոր բանախօսը դառնալու յառաջիկայ միջազգային համագումարին:

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԽՈՐՀՈՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԻՆ**

11-13 Սեպտեմբեր 2007, Ժընևեի մէջ, գումարուեցաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Միջազգային Հարցերու Յանձնաժողովի ժողովը, որուն յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցեցաւ Լոս Անճելոսէն փաստաբանուհի Վանա Կիտցինեան:

Ժողովականներ քննարկեցին աշխարհն ու եկեղեցիները յուզող կրօնական, ընկերային եւ քաղաքական հարցեր

ու բանաձեւեցին անոնց գծով Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին որդեգրելիք կեցուածքներն ու առնելիք գործնական քայլերը:

Վանա Կիտցինեան գործօն մասնակցութիւն բերաւ ժողովական բոլոր լիակատար նիստերուն եւ յատկապէս Հայկական Յեղասպանութեան եւ միջ-կրօնական յարաբերութիւններու փոքր խմբակներու աշխատանքներուն:

**ՔԵՆԹՐՈՂՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Հինգշաբթի, 11 Հոկտեմբեր 2007, Անթիլիաս այցելեց Անկլիքան Եկեղեցւոյ Պետ՝ Քենթրոպրիի Արքեպիսկոպոս Բօուրն Ուիլիլմզի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մօտ պաշտօնական ներկայացուցիչ՝ Հայր Նապիլ Շէհատի եւ աշխատանքային հանդիպում մը ունեցաւ Միջ-եկեղեցական Յարաբերութիւններու Վարիչ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեքսանդրեանի հետ:

Սրբազանն ու Հայր Նապիլ արժեւորեցին Քենթրոպրիի Արքեպիսկոպոսին անցեալ ամիս Հայաստան, Եգիպտոս, Սուրիա եւ Լիբանան կատարած այցելութիւնը, յատկապէս ծանրանալով 28

Սեպտեմբերին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հետ Նորին Սրբազնութեան ունեցած հանդիպումին եւ Հայ ու Անկլիքան Եկեղեցիներուն, ինչպէս նաեւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու ընտանիքին ապագայի յարաբերութիւններուն վրայ:

Նոյն օրը Նարեկ Սրբազան նաեւ ընդունեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Միջին Արեւելքի Բաժանմունքի խորհրդատու եւ Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան անդամուհի՝ Գարլա Խիժոյեանը:

**ԳԵՐՇ. Տ. ՕՇԱԿԱՆ ԱՐՔ. ԶՕԼՈՅԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ
ՇՆՈՒՏԱ Գ. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ**

Շարաթ, 1 Սեպտ. ժամը 10:30-ին Գերշ. Տ. Օշական Ա. Արքեպիսկոպոս, ընկերակցութեամբ Գերաշնորհ Տ. Անուշաւան Եպս. Դանիէլեանի, այցելելեց Ղպտի եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ն.Ս. Շնուտա Գ. Պատրիարքին, Նիւ Ճրրգիի Առաջնորդարանին մէջ: Յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին Սրբազանը բարի գալուստ մաղթեց Նորին Սրբու-

բար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ունեցած դերակատարութիւնը վերջերս կայացած Ղպտի եւ Հապէշ քոյր եկեղեցիներու հաշտեցման պատմական առաքելութեան մէջ: Շնուտա պատրիարք բարձրօրէն գնահատեց Վեհափառ Հայրապետին ունեցած տիրական ու դրական դերը՝ լայնախոհութիւն եւ համբերութիւն պահանջող այս



ՕՇԱԿԱՆ ԱՐՔ. ԶՕԼՈՅԵԱՆ ԵՒ ԱՆՈՒՇԱԲԱՆ ԵՊՍ. ԴԱՆԻԷԼԵԱՆ ԿՈՂՋՈՒՆԵՆ ՇՆՈՒՏԱ Գ. ՊԱՏՐԻԱՐՔԸ

թեան Ամերիկա իր այցելութեան առթիւ, միաժամանակ փոխանցելով Վեհափառ Հայրապետի եղբայրական ողջոյնները: Շուրջ ժամ մը տեւած սիրալիր խօսակցութեան առանցքը եղաւ ընդհանրապէս Հայ եւ Ղպտի եկեղեցիներու ջերմ յարաբերութիւնը, մասնաւորա-

երկարաշունչ գործընթացի բոլոր հանգրրուաններուն, որ Սուրբ Հոգիի ներգործումով յաջողութեամբ պսակուեցաւ, համերաշխութիւն եւ սերտ գործակցութիւն ըստեղծելով զոյգ եկեղեցիներուն միջեւ, նոր հորիզոններ բանալով անոնց դիմաց:

ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԻՋ-ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

9-11 Սեպտեմբեր 2007, Գերշ. Տ. Անուշաւան Եպս. Դանիէլեան (Առաջ. Փոխանորդ Հիւս. Ամերիկայի Արեւելեան Թեմի եւ Վարիչ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Միջ-եկեղեցական Յարաբերութիւններու) մասնակցեցաւ Նիւ Եորքի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցած միջ-կրօնական համագումարի մը, ուր քննարկուեցան դաստիարակութեան, առողջապահութեան եւ աղքատութեան

առնչուած հարցեր: Սրբազանը ընդծեց ՄԱԿ եւ Եկեղեցիներ գործակցութեան անհրաժեշտութիւնը այս եւ այլ ընկերային բնագաւառներէ ներս:

Իսկ 11 Սեպտեմբերին, Անուշաւան Սրբազան մասնակցեցաւ Նիւ Եորքի Միջ-Կրօնական կեդրոնին մէջ 11 Սեպտեմբեր 2001-ի գոհերուն ի յիշատակ տեղի ունեցած հոգեհանգստեան արարողութեան:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ-ԻՍԼԱՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՅՈՐԳԱՆԱՆԻ ՄԷՋ

Միջին Արեւելքի եկեղեցիներու Խորհուրդի կազմակերպութեամբ, 17-21

Հոկտեմբեր 2007, Ամմանի մէջ, տեղի ունեցաւ Քրիստոնեայ-Իսլամ երիտա-



ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՒ ԻՍԼԱՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՆՏԱՐԻՄՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԻՍՏԵՐՈՒՆ. կեդրոնը.- ԳՈԳԸ. Տ. ՄԵՍՐՈՊ ԱԲԸ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

սարդական 7-րդ համագումարը, որուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ մասնակցեցաւ Հոգչ. Տ. Մեսրոպ Աբղ. Սարգիսեան (Հոգեւոր Խորհրդատու ՀեղձՈՄ-ի):

Ձանագան Քրիստոնեայ եւ Իսլամ համայնքներ ներկայացնող աւելի քան 40 երիտասարդ-երիտասարդուհիներ առիթը ունեցան աւելի մօտէն ծանօթանալու ՄԱԵԽ-ի աշխատանքներուն եւ անոր ունեցած կարեւոր դերակատարութեան: Նաեւ, անոնք խօսեցան իրենց համայնքներուն մասին եւ կարծիքներու

փոխանակման ճամբով համագործակցութեան կարելիութիւնները մշակեցին:

Օրակարգի գլխաւոր հարցերն էին.-

ա. Արաբական մշակոյթը, անոր կրած փոփոխութիւնները եւ երիտասարդութեան մօտեցումը:

բ. Համաշխարհայնացումի վտանգները եւ անոնց ունեցած ազդեցութիւնները երիտասարդութեան վրայ:

գ. Երիտասարդութեան դերը շրջանէն ներս խաղաղութեան հաստատման բնագաւառին մէջ:



ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ԴՊՐԵՎԱՆՔԸ
ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐՈՒ ԴԻՄԱՑ**

Կրթական տարեմուտի սեմին, «ԱԶԴԱԿ» հետեւեալ հարցազրույցը ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Տեսչութեան հետ որ լոյս տեսաւ 27 Սեպտեմբերի թիւին մէջ: Դպրեվանքի Տեսչութիւնը կը բաղկանայ հետեւեալ միաբաններէն.– Գերպ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան, Տեսուչ, Հոգ. Տ. Մասիս Վրդ. Զօպուլեան, Փոխ-Տեսուչ եւ Հոգ. Տ. Մակար Արդ. Աշգարեան, Հսկիչ: Ինչպէս մեր բոլոր կրթական կառոյցները, Դպրեվանքը եւս ներկայ օրերու հրամայականներուն դիմաց ներքին վերանորոգման ընթացքի մէջ կը գտնուի: Դպրեվանքը ծանօթացման չի կարօտիր: Ան, աւելի քան 75 տարիներու իր առաքելութեամբ ու լատկապէս մարդուծի պատրաստութեամբ, ծանօթ եւ համազգային տարողութիւն ունեցող կրթական կառոյց մըն է:

Հարցում.– Անցեալին ակնարկ մը նետելով, ինչպէ՞ս կ'արժեւորէք Դպրեվանքի կատարած առաքելութիւնը:

Պատասխան.– Ինչպէս գիտէք, երկու տարիներ առաջ համազգային մաշտապով նշուեցաւ Դպրեվանքի 75-ամեակը: Այս առիթով Վեհափառ Հայրապետը իր Հայրապետական սրբատառ Կոնդակով եւ գանազան գաղութներէ ներս մեր ժողովուրդին փոխանցած իր պատգամներով կարեւորութեամբ շեշտեց Դպրեվանքի կատարած սրբազան գործը մեր ժողովուրդի կեանքէն ներս: Կրնա՞ք երեւակայել մեր ժողովուրդի կեանքին պարզած վիճակը 30-ական կամ 40-ական թուականներուն,

երբ մտաւորականի, ուսուցիչի, հոգեւորականի, այլ խօսքով՝ մարդու պակասը այնքան զգալի էր եւ այս կացութեան դիմաց Դպրեվանքի կատարած մեծ գործը՝ մարդակերտումի բնագաւառէն ներս: Արդարեւ, հարիւրաւոր հոգեւորականներ, ուսուցիչներ, դպրապետներ, մտաւորականներ դուրս ելան Դպրեվանքէն, երթալու համար մեր գաղութներուն ու ծառայելու մեր ժողովուրդի գաւակներուն: Այս ծիրէն ներս չմոռնանք, որ Զարեհ, Խորէն, Գարեգին ու Արամ Վեհափառները Դպրեվանքի՝ շրջանաւարտներ են, ինչպէս նաեւ բազմաթիւ արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ ու մտաւորականներ, որոնք այսօր կը ծառայեն մեր ժողովուրդին, Հա-

յատանեն սկսել մինչև ի սփիւոս աշխարհի: Կրթական կառոյցի մը գործին արժեչափը իր մարդակերտումին մէջ է: Ու մարդակերտումը, ինչպէս մեր Վեհափառ Հայրապետը յանախ կը յիշեցնէ մեզի, որակի՛ խնդիր է եւ ո՛չ քանակի: Ուրակն է աղբիւրը յառաջդիմութեան, հօգորութեան. եւ Դպրեվանքը միշտ կը մնայ կառչած որակին:

Հարցում.- Մեկնելով Ձեր այս վերջին յիշեցումէն, ինչպէ՞ս գործնապէս կ'արտայայտէք Դպրեվանքին ցուցարբրած նախանձախնդրութիւնը՝ որակին նկատմամբ:

Պատասխան.- Ամէն բանէ առաջ պէտք է նկատի ունենալ ուսուցչական կազմը, որովհետեւ կրթական կառոյցէն ներս մարդու պատրաստութեան լծուած է ուսուցիչը: Արդարեւ, Դպրեվանքի ուսուցչական կազմը միշտ տարբեր է եղած սովորական ուսուցիչներէ: Մեզի համար դասագիրքը, վկայականը եւ այլ կրթական կեանքին առնչուած սովորական երեւոյթները երկրորդական իմաստ ունին: Մարդու պատրաստութեան համար էականը ոգին է, հաւատքը, տեսիլքը: Եւ Դպրեվանքը այս տիպի ուսուցիչներ, այլ խօսքով՝ ոգի ու հաւատք փոխանցող ուսուցիչներ ունեցած է եւ ունի: Ձեմ ուզեր անցեալին անդրադառնալ: Խօսելով ներկայի մասին, կ'ուզեմ յայտնել, թէ Դպրեվանքի առաջին ուսուցիչը Վեհափառ Հայրապետն է: Ան ո՛չ միայն փիլիսոփայական աստուածաբանութիւն ու հովուական աստուածաբանութիւն կը դասուանդէ, ամէն Չորեքշաբթի Դպրեվանքին մէջ անցընելով, այլ նաեւ կարելոր դեր ունի մարդակերտումի սրբազան գործին մէջ: Մեր միաբանութեան անդամներուն մէկ կարելոր մասը, իւրաքանչիւրը իր մասնագիտութեան ու հետաքրքրութեան նիւթին համաձայն, կը դասուանդէ Դպրեվանքէն ներս: Բնակա-

նաբար նաեւ ունինք աշխարհական ուսուցիչներ, որոնք մասնագէտներ են իրենց մարգերէն ներս. անոնք եւս լուրջ դասաւանդութեան առընթեր, յատուկ ուշադրութիւն կը դարձնեն մեր սաներուն հայակերտումին ու մարդակերտումին:

Նաեւ որակ ըսելով կը հասկնամք Դպրեվանքի ընդհանուր մթնոլորտը, դասարանէն մինչև եկեղեցի, մատենադարանէն մինչև սերտարան. մէկ խօսքով՝ Դպրեվանքի ընդհանուր կեանքը, որ ունի յստակ նպատակ եւ ուղղութիւն: Դպրեվանքի ամբողջ կեանքը կազմակերպուած է նպատակասլաց կերպով: Ինչ որ կը կատարուի Դպրեվանքէն ներս կը նպաստէ հայ աշակերտին հոգեմտաւոր կազմաւորման: Հետեւաբար, սովորական իմաստով գիշերօթիկ վարժարան չէ Դպրեվանքը:

Հարցում.- Դարձեալ մեկնելով Ձեր այս վերջին յիշեցումէն, թէ Դպրեվանքը սովորական գիշերօթիկ վարժարան չէ, ընդհանրապէս սխալ ըմբռնում կայ Դպրեվանքի մասին, թէ ան աղքատ կամ յետամնաց աշակերտներու վայր է:

Պատասխան.- Դժբախտաբար, կարգ մը շրջանակներէ ներս այս սխալ տպաւորութիւնները կան Դպրեվանքի մասին: Դպրեվանքը պատիւ ունի որ աղքատ աշակերտներու վայր է: Բոլորս ալ աղքատ ընտանիքներէ եկած ենք եւ պատիւ ունինք որ Դպրեվանքին մէջ ուսանած, կազմաւորուած ենք ու այսօր Դպրեվանքով հարըստացած կը ծառայենք մեր ժողովուրդին: Դպրեվանքը աղքատութիւնը հարստացնող սրբավայր է: Իսկ ծոյլ աշակերտներու տեղ նկատել Դպրեվանքը, բացարձակօրէն միշտ չէ: Ոեւէ կրթական կառոյցէ աւելի Դպրեվանքը բծախնդիր է ու խստապահանջ: Դպրեվանքի կրթական տարեշրջանի սկզբնաւորութեան տեսչութիւնը, ուսուցչական կազմին հետ միատեղ, յատուկ ուշադրութիւն կը դարձնէ աշակերտներու

թե՛ ուսումնական մակարդակին եւ թե՛ վարժ ու բարձրին. եւ այն աշակերտը որ ուսումնական թե՛ բարոյական իմաստով, ատակ չէ Դպրեվանճիկն մէջ իր ուսումը շարունակելու, կը հեռացուի Դպրեվանճիկէն: Հետեւաբար, առաջին տարին գտման շրջան մըն է: Ինչպէս ըսի, մեր մօտեցումը աշակերտին նկատմամբ միայն ուսումնական չէ. մեզի համար կարեւոր է անոր վարժագիծը: Չմոռնանք որ մարդու կազմաւորումը էպէս բարոյական ու ազգային արժէքներով թրծում է եւ ո՛չ թէ սոսկ ծանօթութիւններով աշակերտի մտքի հարստացում:

Հարցում.- Մեր ժողովուրդը այնքան ծանօթ չէ կարծէք Դպրեվանճիկ ներքին ուսումնական-կրթական կառոյցին: Կրնա՞ք հակիրճ կերպով որոշ տեղեկութիւններ տալ այս ուղղութեամբ:

Պատասխան.- Դպրեվանճիկ ուսումնական կառոյցը կը բաղկանայ երկու բաժիններէ.– առաջին բաժինը *Ժառանգաւորաց* բաժինն է, որ կը համապատասխանէ, որոշ իմաստով, երկրորդական դպրոցի բաժնին: Չորս տարիներէ կը բաղկանայ այս բաժինը: Իսկ երկրորդ բաժինը *Ընծայարան* կը կոչուի. այս բաժինը եւս կը բաղկանայ չորս տարիներէ, եւ որոշ իմաստով կը համապատասխանէ պաճաւորէայի եւ համալսարանի առաջին տարիներու ուսումնական մակարդակին: Յայտնեմ, որ Դպրեվանճիկ ուսումնական ծրագիրը կը բաղկանայ չորս գլխաւոր մարզերէ.– հայագիտութիւն, կրօնագիտութիւն, լեզուագիտութիւն եւ ընդհանուր գիտութիւն:

Հարցում.- Կրնայի՞ք քիչ մը ակնդիր բացատրութիւն տալ Ձեր յիշած չորս մարզերուն մասին:

Պատասխան.- Սկսիմ լեզուականէն:

Դպրեվանճիկն ներս հայերէն լեզուի կողմէն կը դասաւանդուի Գրաբար, Արաբերէն, Ֆրանսերէն ու Անգլերէն: Չեմ կարծեր որ մեր իրականութենէն ներս հինգ լեզուներ միատեղ դասաւանդող կրթական կառոյց մը գոյութիւն ունի: Բոլոր լեզուները հաւասար կարեւորութեամբ կը տրուին աշակերտին: Երկար տարիներ է վեր փաստօրէն դադրած էր Ֆրանսերէնի դասաւանդումը Դպրեվանճիկն ներս: Վեհափառ Հայրապետը յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ ֆրանսերէնին, որովհետեւ նախ Լիբանանի մէջ ֆրանսերէնը կարեւոր է, եւ յետոյ ֆրանսական լեզուին ու մշակոյթին յատուկ կարեւորութիւն սկսած է տրուիլ ներկայ աշխարհին մէջ: Հայագիտական մարզը Դպրեվանճիկն համար միշտ կարեւոր եղած է: Վերջին շրջանին Վեհափառ Հայրապետին թելադրութեամբ Դպրեվանճիկն սկսած է ակնդիր կարեւորութիւն տալ հայագիտական նիւթերու, մէկ կողմէ նկատի ունենալով հայ լեզուի նահանջը ու միւս կողմէն հայագիտական կեդրոններու փակումը սփիւռքէն ներս: Կրօնագիտական նիւթերը միշտ ալ կարեւորութիւն ստացած են Դպրեվանճիկն ներս: Այս ծիրէն ներս առաջնահերթութիւն կը տրուի Սուրբ Գրոց առնչուած նիւթերու: Իսկ ինչ կը վերաբերի ընդհանուր գիտական մարզին, յայտնեմ, որ նկատի ունենալով Դպրեվանճիկն ընդհանուր ուղղութիւնը, այս բաժնին մէջ նկատի առնուած են գիտական հիմնական նիւթերը միայն:

Հարցում.- Ինչպէս գիտէք ներկայ աշխարհի մէջ ուսանողներ հետամուտ են համալսարանական վկայականի: Արդե֞ք Դպրեվանճիկն շրջանաւարտ մը կրնայ բնական ընթացքով համալսարան յաճախել:

Պատասխան.- Ընդհանուր տպաւորութիւն մը կայ ոմանց մօտ, թէ Դպրեվանճիկն վկայական չի տար: Բացարձակօ-

րեն ցիշո չէ այս մօտեցումը: Նախ եւ առաջ, Դպրեվանքի ուսման շրջանի արարտին, աշակերտին կը տրուի յատուկ վկայական: Ճիշդ է, Դպրեվանքը պաճալորեայի չի ներկայացնել իր աշակերտները եւ ստոր կարիքը չգգար, որովհետեւ Դպրեվանքի վկայականով կարելի է ունենալ մալսարան ընդունուիլ: Մեր միաբաններն կամ աշխարհական շրջանաւարտներն շատեր Դպրեվանքի վկայականով յաճախած են արաբական, ֆրանսական, իտալական թէ անգլիական համալսարաններ եւ իրենց ուսումը կատարելագործած Լիբանանի, Զուիցերիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Իտալիոյ, Անգլիոյ եւ Միացեալ Նահանգներու համալսարաններուն մէջ եւ ստացած համապատասխան վկայական՝ նոյնիսկ տոքթորայի (Ph.D.) բարձրագոյն աստիճան: Անոնք իրենց մասնագիտութիւնը կատարած են ոչ միայն աստուածաբանութեան մէջ, այլ զանազան մարզերէն ներս: Այս բոլորին վրայ կ'ուզեմ աւելցնել, որ Վեհափառ Հայրապետին կարգադրութեամբ այսօր շատ մը համալսարաններ Եւրոպայի թէ Ամերիկայի մէջ պատրաստ են ոչ միայն Դպրեվանքի շրջանաւարտներ ընդունելու այլ նաեւ անոնց կրթաթոշակը հայթայթելու:

Հարցում.- Արդեօք Դպրեվանքը միայն հոգեւորականներու պատրաստութեան լծուած է այսօր:

Պատասխան.- Դպրեվանքի հիմնադրութենէն մինչեւ այսօր, Դպրեվանքը եղած է ու կը մնայ մարդակերտումի հնոց: Այլ խօսքով, մեր ժողովուրդի ծառայութեան լծուած մարդն է որ կը պատրաստուի Դպրեվանքէն ներս: Այդ մարդը կրնայ հոգեւորական ըլլալ, կրնայ ուսուցիչ, մտաւորական կամ ազգային դեկավար ըլլալ եւ կամ այլ մասնագիտութեան լծուած անձ: Հո՛ս է Դպրեվանքի իւրայատկութիւնը ու հարստութիւնը: Մարդու

պատրաստութեան մէջ մենք խստապահանջ ենք: Նաեւ հոս կ'արտայայտուի մեր նախանձախնդրութիւնը որակի նկատմամբ:

Հարցում.- Կ'ուզեմ որ նաեւ անդրադառնաք Դպրեվանքի տնտեսական վիճակին:

Պատասխան.- Ինչպէս մեր կեանքէն ներս գործող բոլոր կառոյցները, նաեւ Դպրեվանքը տնտեսական իմաստով դժուարութիւններու դիմաց է: Բարեբախտաբար, որպէս տեսչութիւն մենք այդ մասին չենք մտահոգուիր: Դպրեվանքին հայրը, Վեհափառ Հայրապետը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բարերարներու ու բարեկամներու ցամաքով ինք կ'ապահովէ Դպրեվանքի տարեկան պիւտնէն:

Հարցում.- Երբ Դպրեվանքի աշակերտութեան պատկերին նայինք կը տեսնենք որ անոնք ընդհանրապէս Լիբանանէն եւ Սուրիայէն կու գան: Արդեօք սա յատուկ քաղաքականութեան մը արդիւնք է:

Պատասխան.- Ո՛չ, գործնական պատճառներէ մեկնած, մեր աշակերտները ընդհանրապէս Լիբանանէն եւ Սուրիայէն եկած են: Աւելի նուազ թիւով աշակերտներ ունեցած ենք նաեւ այլ գաղութներէ: Պիտի ուզենք որ Դպրեվանքին մէջ աշակերտ դառնան մեր բոլոր գաղութներէն եկած պատանիներ, որպէսզի կարենան իրենց հոգեմտաւոր կազմաւորումը ստանալէ ետք վերադառնալ իրենց գաղութները, հոն ծառայելու համար մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին:

Հարցում.- Իմացանք որ վերջերս նաեւ քահանայից պատրաստութեան առանձին բաժանմունք մը հաստատուած

է Անթիլիասի Մայրավանքէն ներս: Կրնա՞ք այս գծով որոշ տեղեկութիւններ տալ:

Պատասխան.- Մեր Դպրեվանքը միշտ ալ ունեցած է ֆահանայից պատրաստութեան յատուկ դասարան: Սփիւռֆէն ներս գործող ֆահանաներուն մէկ կարեւոր տոկոսը Անթիլիասի Դպրեվանքէն ներս պատրաստուած է: Քահանայից պատրաստութիւնը աւելի կազմակերպելու մտահոգութենէն մեկնելով, երկու տարիներ առաջ, Վեհափառ Հայրապետը որոշեց Անթիլիասի Մայրավանքէն ներս առանձին բաժանմունք մը հաստատել այս նպատակին համար: Բաժանմունքը ունի իր ընդհանուր պատասխանատուն եւ ուսուցչական կազմը: Կարգ մը դասերու հետեւելու համար, անոնք կը բարձրանան Պիֆֆայայի Դպրեվանքը: Այս առիթով յայտնենք, որ դարձեալ Վեհափառ Հայրապետին որոշումով, ֆահանայից դասարանի աշակերտ կ'ընդունուին միայն թեմերու ա-

ռաջնորդներուն կողմէ ճշդուած ու ղրկուած անձեր, որոնք պատրաստելէ վերջ, կը վերադառնան ֆահանայագործելու համար իրենց թեմերուն մէջ: Անցեալ տարի, այս դասարանէն ներս ունեցած ենք հինգ աշակերտներ, Լիբանանէն, Սուրիայէն, Պարսկաստանէն եւ Միացեալ Նահանգներէն. այս տարի եւս պիտի ունենանք հինգ աշակերտներ:

Հարցում.- Հետաքրքրական այս հարցազրոյցի աւարտին աւելցնելիք որեւէ խօսք ունի՞ք:

Պատասխան.- Մեր Վեհափառ Հայրապետները Դպրեվանքը նկատած են սիրտը մեր Կաթողիկոսութեան: Դպրեվանքը այս գիտակցութեամբ կը շարունակէ գործել: Հետեւաբար, Դպրեվանքը տեղն է մեր ժողովուրդի այն ընտրեալ գաւակներուն, որոնք Դպրեվանքի հոգեւոր, մտաւոր ու ազգային կազմաւորումը ստանալէ ետք կ'ուզեն ծառայել մեր եկեղեցւոյ, մեր հայրենիքին ու ժողովուրդին:



**«ՄԵՐ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ
Ի ԽՆԴԻՐ՝
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՅԾԱԹԱՅՄԱՆ ԵՒ ԱԶԳԻ
ԳԵՐԱԳՈՅՆ ՇԱՀԵՐՈՒՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ»**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Հոկտեմբեր ամսուն սկիզբը ուղեւորեցաւ դէպի Երրոպա՝ Պելճիքա, Զուիցերիա եւ Իտալիա, ազգային ու միջ-կրօնական առաքելութեամբ: Սոյն ուղեւորութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետին կ'ընկերանար պաշտօնաթերթի խմբագիր Գերայ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեան: Առ այդ, «Հասկ»ի խմբագրութիւնը հետեւեալ հարցազրոյցը ունեցաւ Հայր Սուրբին հետ, Նորին Սրբութեան վերոյիշեալ երկիրները կատարած այցելութեան զծով, մամուլի տեղեկատուական պրիսմակէն անդին, ծանօթութիւններ քաղելու նպատակով:

«ՀԱՍԿ» - Վերջերս Վեհափառ Հայրապետը մեկնեցաւ Պրիւֆաէլ, Ժընև եւ ապա Իտալիա: Կրնա՞ք հակիրճ կերպով ներկայացնել Նորին Սրբութեան այս այցելութեանց նպատակը:

Գ.Մ.Վ. - Հոկտեմբեր ամսուն սկիզբը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Եւրոպա կատարած այցելութիւնը ընդգրկեց երեք երկիրներ, աշխատանքային իրարմէ տարբեր ծրագիրներով, եւ տարբեր հեռանկարներով: Այս այցելութիւնը, երկիրներուն թիւով, կրնամ երեք խումբերու բաժնել: Առաջին, Պելճիքայի մայրաքաղաք Պրիւքսէյի Եւրո-խորհրդարանին մէջ կայացած, Եւրոպայի Հայ Միութիւններու Համաժողովին, Վեհափառ Հայրապետին մասնակցութիւնն էր, որու ընթացքին ճառ արտասանեց ան: Երկրորդ, Ժընևի մէջ Վեհափառ Հայրապետին ունեցած հանդիպումներն էին միջ-եկեղեցական շրջանակէն ներս պատասխանատու անձնաւորութեանց հետ: Երրորդ, Իտա-

լիոյ Նափոյի քաղաքին մէջ, Սէնթ Էճիտիօ կազմակերպութեան հրաւերով կայացած միջ-կրօնական համագումարն էր, որուն ընթացքին դասախօսեց Վեհափառ Հայրապետը:

«ՀԱՍԿ» - Հայր Սուրբ, կ'ուզեմք որ մեր ընթերցողներուն համար աւելի լայն ծանօթութիւններ տաք այս այցելութեանց կարեւոր երեսներուն մասին:

Գ.Մ.Վ. - Վեհափառ Հայրապետին առաջին տպաւորիչ ելոյթը այս այցելութեան ընթացքին, տեղի ունեցաւ Պրիւքսէյի Եւրո-խորհրդարանի դահլիճին մէջ: Եւրոպայի Հայկական Միութիւններու Բ. Համագումարն էր այս, որուն մասնակցեցան զանազան երկիրներէն քաղաքական, պետական պատասխանատու անձեր: Հայ Ժողովուրդի բարեկամ խորհրդարանականներ, Հայ Դատի ու մարդկային իրաւանց պաշտպան կազմակերպութեանց ներկայացուցիչներ, եւ Հայ Դատի աշխարհացրիւ զանազան

մարմիններու պատասխանատուներ, ինչպէս նաեւ Հայաստանի Արտաքին Գործոց նախարար՝ Վարդան Օսկանեան ներկայ գտնուեցան սոյն համագումարին: Ինչպէս կ'ըսէի, Վեհափառ Հայրապետը խօսք առաւ եւ Փրանսերէն լեզուով կուռ ճառ մը արտասանեց, Հայկական Պահանջատիրութեան խօսնակը դառնալով Խորհրդարանի դահլիճին մէջ: Այսօրուան պայմաններու լոյսին տակ, Վեհափառ Հայրապետը բանաձեւեց պահանջատիրութիւնը: Քիչ առաջ տպաւորիչ կոչեցի Վեհափառ Հայրապետին ելոյթը: Սա ձեւական բառ մը չէր, այլ, տպաւորիչ՝ քաղաքական վերլուծման իմաստով եւ համոզիչ՝ տեսակէտներու յստակութեան ու պարզութեան համար: Քաղաքական ղեմքերու վարած դիւանագիտութեան երբեմն լպրծուն գետիներուն վրայէն, Վեհափառ Հայրապետը հաստատ քայլերով անցաւ: Այսինքն, մեր պահանջատիրութիւնը այսօրուան աշխարհի քաղաքականութեան լոյսին տակ բանաձեւելով ներկայացուց: Կրնամ ըսել, որ մտքի յստակութիւնը եւ հարցերը իրենց առաջնահերթութիւններով ներկայացնելու կարողութիւնը, հիացում պատճառած էր նաեւ Խորհրդարանի փոխ-վարչապետին, որ նիստին յաջորդող զաղարի ընթացքին արտայայտուեցաւ ըսելով, թէ ձեր Կաթողիկոսը ուղղակի բերդին հարուածեց գնդակը...:

«ՀԱՍԿ» - Նկատի ունեցնալով Վեհափառ Հայրապետի խօսքին կարեւորութիւնը, պիտի ուզէիմ աւելի լայն կերպով անդրադառնալ անոր:

Գ.Մ.Վ. - Վեհափառ Հայրապետին խօսքը ունէր գլխաւորաբար երեք հիմնական մասեր, որոնք Նորին Սրբութիւնը ընդգծեց իբրեւ նոր օրերու մարտահրաւէրներ:-

Առաջին կէտը գոր շեշտեց Արամ Ա. Վեհափառ, Եւրոպայի Միութեան ամրապնդումն էր: Ան ըսաւ որ քաղաքա-

կան ու տնտեսական դաշինքները միշտ ժամանակաւոր բնոյթ կը կրեն: Սակայն Եւրոպական Միութիւնը պէտք է խարսխուած ըլլայ Եւրոպայի հասարակաց արժէքներուն վրայ, այդ ցամաքամասին վրայ ապրող բոլոր ժողովուրդներուն մասնակցութեամբ:

Երկրորդ, Վեհափառը վերլուծեց նաեւ Եւրոպական ընտանիքին համարկման կարելիութիւնները: Միաձուլում չէր Վեհափառ Հայրապետին գործածած բառը, որ ինչպէս գիտէք, վտանգաւոր կացութիւն մըն է: Միաձուլումին գոհ կ'երթան ազգերու մշակոյթներ ու անդրութիւններ: Եւրոպական Միութեան մէջ, համաձայն Վեհափառ Հայրապետին, պէտք է եւրոպացի ժողովուրդը համարկուի, ուր գանգաւորութիւնները յարգուին Միութեան ամբողջականութեան շրջագծէն ներս:

Իր երրորդ կէտով, Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ նկատեց Եւրոպական միութեան համար, հաւաքական տեսիլք մը ունենալը, որ պիտի առաջնորդէ Միութիւնը ունենալու իր ինքնութիւնը: Արժէքներու համայնք մը պէտք է ըլլայ այս Միութիւնը, ըսաւ Վեհափառը, որ ներկայ աշխարհին մէջ իր տեղը պիտի ունենայ:

Ըսեմ նաեւ, որ իր խօսքին մէջ Արամ Վեհափառ անդրադարձաւ եւրոպահայ համայնքի գործօն դերակատարութեան: Ան ցոյց տուաւ պատմութեան ընթացքին մեր ժողովուրդին ունեցած սերտ կապերը Եւրոպայի մէջ, յատկապէս Կիլիկեան շրջանէն սկսեալ: Վերջապէս, ան ըսաւ նաեւ որ Եւրոմիութենէն ներս ապրող հայ գաղութները իրենց մեծ նպաստը պիտի բերեն, այդ տարածաշրջանի կրօնական, քաղաքական, մշակութային, ընկերային ու այլ մարզերէն ներս:

Մեր ժողովուրդի հաւաքական պայքարին գծով, Վեհափառ Հայրապետը կարեւոր նկատեց Եւրոպական համայնքին բերած նպաստը: Հայկական Յեղաս-

պանութեան ճանաչման ու մեր ժողովուրդի իրաւունքներուն վերատիրացման հարցով, եւրոպական շարք մը երկիրներ օգտակար հանդիսացան, ըսաւ Վեհափառը, եւ այդ օգտակարութիւնը բնական նկատեց Եւրոպայի նկարագրին ու մարդկային իրաւանց պաշտպանը ըլլալու անոր կոչումին համար: Այս առիթով ան խստօրէն դատապարտեց իւրաքանչիւր քայլ, որ կը միտի դուռ բանալ Թուրքիոյ դիմաց, ընդունելու համար գայն Եւրոմիութենէն ներս: Այստեղ, Վեհափառը յստակ կէտերով մատնանշեց Թուրքիոյ հակա-ժողովրդավար նկարագիրը, եւ մարդկային իրաւանց նկատմամբ խոցելի իր անցեալն ու ներկան: Յեղասպանութեան հեղինակ երկիր մը այս Միութենէն ներս առնելը, Վեհափառ Հայրապետը նկատեց աններելի սխալ մը, որուն հետեւանքները կրնայ կրել ամբողջ Եւրոպան:

Հիմնականին մէջ այս կէտերն էին որ արծարծեց Վեհափառ Հայրապետը, իր խօսքի աւարտին բարձրօրէն գնահատելով բոլոր այն երկիրները եւ խորհրդարանական անձնաւորութիւնները, որոնք միշտ զօրավիզ կը կանգնին մեր ժողովուրդին:

«ՀԱՍԿ» - Վստահարար այս առիթով Վեհափառ Հայրապետը առիթ ունեցաւ հայ թէ օտար պետական դէմքերու հետ հանդիպելու. կրնա՞ք գէթ կարեւորները յիշել անոնցմէ:

Գ.Մ.Վ. - Բնականօրէն նման բազմամարդ հաւաքներու ընթացքին, բազմաթիւ հանդիպումներ տեղի կ'ունենան, փոխադարձ ծանօթութենէն սկսեալ մինչեւ պաշտօնական հանդիպումները: Առաջին թէ երկրորդ պարագաներուն ալ, մեծ էր թիւը այն անձնաւորութեանց, որոնք օգտուելով Նորին Սրբութեան ներկայութենէն, ուզեցին հանդիպումներ ունենալ անոր հետ: Սակայն, այստեղ կ'արժէ յանուանէ յիշել Եւրոխորհրդարանի փոխ-նախագահը, որուն

հետ հանդիպումը առիթ հանդիսացաւ քննարկելու հայ համայնքներու դերակատարութիւնը, ներկայ Եւրոմիութեան նոր իրականութեան մէջ: Այս առիթով, փոխ-նախագահը անդրադարձաւ Վեհափառ Հայրապետին ճառին մէջ ներկայացուած մտածումներուն, որոնք Եւրոպայի հայութեան համար ուղեցոյց կրնան դառնալ, աւելի գործօն ու ազդու ներկայութիւն դառնալու Եւրոպական համայնքէն ներս:

Հանդիպումներու շարքին կարելի է յիշել նաեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյին ունեցած երկար տեսակցութիւնը Վեհափառ Հայրապետին հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան յատկապէս, Հայաստանի ու գանազան գաղութներու մէջ մեր ժողովուրդի կեանքը յուզող հարցեր: Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը աւելի եւս աշխուժացնելու միջոցներու քննարկումը եւս կարեւոր տեղ գրաւեցին հանդիպման գրոյցին ընթացքին:

Վեհափառ Հայրապետին հետ յատուկ հանդիպումներ ունեցան նաեւ Եւրոպական կարգ մը համայնքներու թեմական ներկայացուցիչները, ինչպէս նաեւ օտար քաղաքական դէմքեր, որոնք յատկապէս հրաւիրուած էին մասնակցելու համագումարին:

Այստեղ կ'արժէ յիշել նաեւ, որ լիբանանեան շրջագծէն ներս, հանդիպումներու հաւաքական առիթ հանդիսացաւ, Պեյճիքայի մէջ Լիբանանի դեսպան՝ Հանրի Քասթունի կազմակերպած ընթրիքը, Պրիւքսէյի Լիբանանի դեսպանատան մէջ: Լիբանանեան բոլոր համայնքները ներկայացնող քաղաքական, մշակութային ու ընկերային ծանօթ անձնաւորութիւններ իրենց մտահոգութիւնները եւ սպասումները յայտնեցին Նորին Սրբութեան, յատկապէս Լիբանանի վերջին իրադարձութեանց լոյսին տակ: Այս առիթով, Վեհափառ Հայրապետը իր արտասանած խօսքին մէջ, Լիբանանի համակցութեան օրի-



ԵՒՌՈՒՄՈՐՅՈՂԱՐԱՆԻ ՓՈՒՆՆԱԽԱԳԱՅԸ ԿԸ ՇՆՈՐՅԱԲՈՒԷ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

նակին պաշտպանը հանդիսանալու կոչ ուղղեց բոլորին: Յատկապէս քրիստոնեայ-իսլամ համակեցութեան օրինակով, Լիբանանը օրինակելի պէտք է մնայ ամբողջ աշխարհին դիմաց, ըսաւ Վեհափառը, կոչ ուղղելով գորավիզ կանգնիլ Լիբանանի անկախութեան, միութեան ու գերիշխանութեան:

Վեհափառ Հայրապետին հետ նման հաւաքական հանդիպումի առիթ մը եղաւ նաեւ, Պրիւքսէլի հայ համայնքի պատասխանատուներէն՝ Տէր եւ Տիկին Տարօն Կարապետեանի տան մէջ, ի պատիւ Նորին Սրբութեան կազմակերպուած ընթրիքը: Լիբանանցի եւ յատկապէս Պրիւքսէլի հայ համայնքի պատասխանատու անձնաւորութիւններ ներկայ գտնուեցան սոյն ճաշկերոյթին: Անոնք առիթ ունեցան իրենց մտահոգութիւնները արտայայտելու մեր ժողովուրդի ներկայ կեանքը յուզող շարք մը հարցերու մասին: Ըսեմ նաեւ, որ մեր

զաղութները մեծ սպասում ունին մեր եկեղեցիէն: Անոր վերապահուած առաջնորդողի դերը միշտ շեշտուեցաւ խօսակցութեանց ընթացքին, եւ Վեհափառ Հայրապետը յորդորեց զանոնք բոլորուիլ եկեղեցւոյ կեանքին շուրջ, եւ ծաղկեցնել ազգային կեանքը:

«ՀԱՍԿ» - Քիչ առաջ կ'ըսէիք որ Վեհափառ Հայրապետը կայն այցելութիւն մը տուաւ նաեւ Փրննե: Ի՞նչ էր այս այցելութեան նպատակը:

Գ.Մ.Վ. - Ինչպէս ծանօթ է, Արամ Ա. Կաթողիկոս անցնող շուրջ երկու տասնամեակներուն, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի բարձրագոյն պաշտօնը՝ ատենապետութիւնը վարեց: Անկէ առաջ ալ, շուրջ տասներկու տարիներ, զանազան յանձնաժողովներու մաս կազմեց, իր մասնակցութիւնը բերելով Խորհուրդի ծրագիրներու իրագործման: Տարիներու այս կեանքը միջ-

եկեղեցական շարժման մէջ, բնականօրէն Նորին Սրբութիւնը դարձուցին յիշեալ շարժումին լայն փորձառութիւնը ունեցող կարեւոր դէմքերէն մէկը: Առայդ, Վեհափառ Հայրապետին ժրնեւ կատարած այցելութեան նպատակներէն մին եղաւ, միջ-եկեղեցական կարեւոր հանդիպումներ ունենալ, ինչպէս նաեւ աշխատանք տանիլ՝ Շարժումի ապագային համար մարդու պատրաստութեան գծով: Այս առիթով, Վեհափառ Հայրապետը իր տեսակէտները պարզեց նաեւ Խորհուրդին կողմէ առաջադրուած կարգ մը նոր ծրագիրներուն առնչութեամբ: Ժրնեւ կատարած այս այցելութիւնը առիթ մը հանդիսացաւ նաեւ Վեհափառ Հայրապետին, մօտէն հսկելու Քրանսերէն լեզուով իր հրատարակելիք նոր աշխատասիրութեան, որ ներկայ կեանքի մարտահրաւէրներուն դիմաց կանգնած Քրիստոնէական Եկեղեցոյ դերին մասին Նորին Սրբութեան յստակ պատկերացումը կ'արտայայտէ, նոր աշխարհայեացքով:

«ՀԱՍԿ» - Ինչպէս կ'ըսէիք, Վեհափառ Հայրապետը Նափոյի մէջ մասնակցեցաւ Աէնթ Էնիտոյի համագումարին: Նախ պիտի ուզէիք որ ամփոփ տեղեկութիւն տաք Աէնթ Էնիտոյի մասին: Ի՞նչ էր գլխաւոր նիւթը համագումարին, եւ որոնք էինք մասնակիցները:

Գ.Մ.Վ. - «Սէնթ Էնիտո»ն Վատիկանի անմիջական հովանաւորութիւնը վայելող, հոգեւորական ու աշխարհական անձնաւորութիւններէ բաղկացած ընկերակցութիւն մըն է, որ 21 տարիներէ ի վեր գոյութիւն ունի: Սոյն ընկերակցութիւնը տարին անգամ մը քով-քովի կը բերէ աշխարհի զանազան կրօններու պետեր կամ ներկայացուցիչներ, հիմնական որոշ թեմայի մը շուրջ: Զեւուով մը, ամէն գոյնի, կրօնի, հաւատալիքի ու մշակոյթի մարդիկ կը մասնակցին տարեկան այս համագումարին: Տարիներու ընթացքին, փոխադարձ ծանօթու-

թենէն անդին քայլ մը առած է ընկերակցութիւնը, գլխաւոր ընդհանուր նիւթ մը սահմանելով իւրաքանչիւր տարուան համար: Այս տարուան գլխաւոր թեման, օրինակի համար, «Դէպի աշխարհ մը առանց բռնութեան երկխօսութիւն կրօններու եւ մշակոյթներու» նիւթն էր: Իւրաքանչիւր գրոյցի կլոր սեղան իրեն յատուկ նիւթ ունէր եւ ընտրուած դասախօսներ: Այսպէս, կարելի է յիշել կարգ մը նիւթերը այդ կլոր սեղաններուն, որոնք քաղաքի զանազան վայրերուն մէջ միաժամանակ տեղի ունեցան. «Կենսալուրտ. դժուարութիւնները թէ համակցութիւն», «Եւրոպա – գաղթ եւ ապագան», «Միաստուածեան կրօններու Սուրբ Գիրքերը», «Աղօթքը՝ ոյժ հաւատացեալներուն», «Եւրոպա եւ Ափրիկէ. երկու աշխարհամասեր եւ մէ՞կ ապագայ», «Իսրայէլ-Պաղեստին, երկարաշունչ պայքար վասն խաղաղութան», «Հաւատք եւ գիտութիւն՝ ժամանակակից մարտահրաւէր», «Լատին Ամերիկա – ապագայ մը առանց բռնութան», «Ասիա եւ Եւրոպա – բաղիտ՞ւմ թէ գործակցութիւն», «Միջերկրական ծովը – կրօններ եւ գոյակցութիւն», «Իսլամը եւ խաղաղութիւնը», «Ուղղափառ եկեղեցիները եւ միջ-եկեղեցական շարժման ապագան», «Երուսաղէմ – համաշխարհային վիշտը, եւ բոլորին յոյսը», «Հրեաներ, քրիստոնեաներ եւ իսլամներ երկխօսութեան մէջ՝ վասն խաղաղութան», «HIV/AIDS – մարտահրաւէր մը, գոր կրնանք յաղթահարել», «Աստուծոյ Խօսքը՝ Քրիստոնեաներու կեանքին մէջ», «Տարածում գտած բռնութիւնը՝ որ իրականութիւն է», «Գոյակցութեան փառապաշարութիւն մը», «Կրօններ, պատերազմ եւ խաղաղութիւն», «Ընտանիքը՝ տիեզերական ենթահող մը», «Ծայրագոյն Արեւելեան կրօններու դերը, բռնութեան կասեցման մէջ» եւ նման այլ նիւթեր:

Ինչպէս ըսի, բազմագոյն մարդիկ մասնակցեցան այս գրոյցներուն, եւ տարբեր կրօններու, մշակոյթներու եւ աւանդութիւններու աշխարհայեացքը

ներկայացուցին ունկնդիրներուն: Ըսեմ նաեւ որ մասնակիցներուն թիւը շուրջ հազար անձ էր, առանց նկատի ունենալու մամլոյ գործակալութեանց անձնակազմերը եւ տեղւոյն ժողովուրդէն եկող մասնակիցները:

«ՀԱՍԿ» - Առանձին անդրադարձած էիք Վեհափառ Հայրապետի դասախօսութեան, ուրիշ ըսելիք մը ունիք այս առնչութեամբ:

Գ.Մ.Վ. - Աստուածաբանական խորք ունեցող նիւթ մըն էր ինքնին Վեհափառ Հայրապետին դասախօսութիւնը, գորան ներկայացուց տարբեր կրօններ ու տարբեր պատրաստութիւն ունեցող մասնակիցներուն: Այսինքն, իսկապէս դժուար է նման պարագաներուն հաշիւը ընելով, նիւթ մը ներկայացնելը: Ինչպէս կ'ըսէի, ամէն «գոյնի» ու ամէն կրօնական հաւատալիքներու հետեւող մարդ կար այս համագումարին: Աստուծոյ Խօսքը քրիստոնեաներու կեանքին մէջ տեսնելու վերլուծական նիւթը, Վեհափառ Հայրապետը բաժնած էր երեք մասերու:

Առաջին բաժնին մէջ ուղղակի Յովհաննու Աւետարանը մէջբերելով, Վեհափառ Հայրապետը շեշտեց թէ Աստուծոյ Խօսքը ո՛չ թէ Աստուծոյ ինքնարտայայտութիւնն է, այլ նոյնինքն Աստուած: Ան մասնակից է տիեզերքի ստեղծագործութեան, եւ նոյն այդ Խօսքն էր որ մարդացաւ, որպէսզի մարդը տանի առ Աստուած:

Ապա, Արամ Ա. Կաթողիկոս անդրադարձաւ Փրկագործութեան Վարդապետութեան, որ իրագործուեցաւ Աստուծոյ նոյն Խօսքին մարդեղացումով: Մարդուն փրկութիւնը, աստուածաբանական եզրաբանութեամբ, Վեհափառը կոչեց վերստին ստեղծագործութիւն: Ան յիշեցուց, որ փրկութիւնը ուղղուած չէ՛ միայն անհատ մարդու, այլ՝ ամբողջ մարդկութեան ու տիեզերքին: Երեք եզրեր նշեց ան Քրիստոսի անձին

կապուած՝ Անոր եզակիութիւնը, բացարձակութիւնը ու տիեզերականութիւնը, գորս -ըսաւ- թէ պէտք չէ՛ շփոթել Եկեղեցւոյ հետ: Այսինքն կրօնները պէտք չէ եկեղեցակեղրոն ըլլան, այլ Քրիստոսակեղրոն, նկատի ունենալով որ Քրիստոս ամբողջ աշխարհին համար մարդացաւ:

Այս կէտը առաջնորդեց Վեհափառ Հայրապետը անդրադառնալու Եկեղեցւոյ դերակատարութեան: Ան ըսաւ թէ Եկեղեցին հաստատուած իրականութիւն մը չէ՛ այլ՝ դէպի ապագայ ուղղուող ընթացք մը: Քրիստոնէական հաւատքին վախճանաբանական նպատակը ընդգծեց Վեհափառը, որ հաւատացեալ մարդը ներկայէն կը տանի ապագային, որ պայմանաւորուած է Քրիստոսի Երկրորդ Գալուստով:

Ինչպէս կը նկատէք, մեր քրիստոնէական հաւատքի հիմնական տարրերը շօշափող դասախօսութիւն մըն այս, որուն ատենապետութիւնը վարեց Խտալիոյ հանրապետութեան նախկին նախագահ Սքալֆարօ: Ան ալ, իր կարգին նախանձախնդիր Եկեղեցւոյ աստուածաբանութեան, խստօրէն քննադատեց բոլոր այն ձգտումները, որոնք աղանդաւորական շարժումներու ճամբով կը փորձեն նսեմացնել քրիստոնէական հաւատքը:

«ՀԱՍԿ» - Հայր Սուրբ, ինչպէս յիշեցիք, աշխարհի գանազան շրջաններէն եկած էին տարբեր անձնաւորութիւններ որոնց հետ հանդիպում ունեցաւ Վեհափառ Հայրապետը: Կրնա՞ք ըսել արդեօք թէ ի՞նչ հարցեր արծարծուեցան այս հանդիպումներուն ընթացքին:

Գ.Մ.Վ. - Վեհափառ Հայրապետին հետ կայացած հանդիպումները եւս կարելի է բաժնել քանի մը խմբաւորումներու: Եղան հանդիպումներ, արդէն իսկ նախապէս ծանօթ անձնաւորութեանց հետ, միջ-եկեղեցական ու միջ-կրօնական շրջանակներէ ներս: Այս տեսակի հան-

դիպումները առիթ հանդիսացան արծարծելու առկա մնացած հարցեր, միջ-եկեղեցական ու միջ-կրոնական յետագայ ծրագրերը առնչուած: Ինչպէս ծանօթ է, Վեհափառ Հայրապետին նախաձեռնութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մօտիկ անցեալին միջ-եկեղեցական ու միջ-կրոնական կալուածներէ ներս երկխօսութեան հաւաքներու ձեռնարկած էր: Նմանօրինակ ու աւելի համապարփակ համագումարներու կազմակերպման գծով, մտքերու փոխանակումներ ունեցաւ Նորին Սրբութիւնը, այս կալուածէն ներս գործող յայտնի անձնաւորութեանց հետ:

Երկրորդ հերթին, պաշտօնական հանդիպումներ կայացան կրօնապետներու եւ հոգեւոր առաջնորդներու հետ: Այս գծով պէտք է յիշել Վեհափառ Հայրապետին հանդիպումը Պենետիքոս 16-րդ Պապին հետ, ինչպէս նաեւ Վատիկանի արտաքին յարաբերութեանց պատասխանատու Պերթոնէ կարտինալին հետ, որոնց ընթացքին Արամ Ա. Կաթողիկոս լայնօրէն անդրադարձաւ Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան վերահաստատման անհրաժեշտութեան ու Լիբանանի այժմու կացութեան բարօք լուծում գտնելու հրամայականին: Հանդիպումներ տեղի ունեցան նաեւ Նափոլիի կարտինալ Քրէսէնզիօ Սեփէի, կարտինալ Էշակարայի, Տիեզերական պատրիարք Բարթոլոմէոս Ա.-ի, Կիպրոսի Խրիսոսթոմոս Բ. Արք.-ի, Գերման Եկեղեցիներու պետ՝ Հիւլպը Եպիսկոպոսի, Նորվեկիոյ Եկեղեցւոյ պետին, եւ այլ հոգեւոր առաջնորդներու հետ:

Երրորդ խմբաւորման ներքեւ կարելի է դնել Վեհափառ Հայրապետին ունեցած հանդիպումները քաղաքական եւ այլ կրօններու պատկանող անձնաւորութեանց, ինչպէս նաեւ եկեղեցական թէ՛ աշխարհական կազմակերպութեան ներկայացուցիչներուն հետ: Յիշելու համար ըսեմ՝ Իտալիոյ հանրապետութեան

նախկին թէ՛ այժմու նախագահները, Իւլամական կրօնի ներկայացուցիչ Իզզէտին Իպրահիմը, Էքուատորի հանրապետութեան նախագահը, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Ընդհ. Քարտուղարը, Եւրոպական Եկեղեցիներու Միութեան Ընդհ. Քարտուղարին եւ այլ անձնաւորութեանց հետ:

«ՀԱՍԿ» - Որպէս եզրակացութիւն ի՞նչ կ'ուզե՞ք աւելցնել:

Գ.Մ.Վ. - Անձնապէս ինձի համար հարստացուցիչ երկու ձեռնարկներ էին ասոնք: Իսկ աւելին՝ մեր Եկեղեցւոյ համար արդիւնաւէտ ու հպարտառիթ ձեռնարկներ կարելի է որակել զանոնք: Վերջին հաշուով, մեր Ս. Աթոռը իր Վեհափառ Հայրապետով, իր միաբանութեամբ, իր կառոյցներով ու իր բոլոր հնարաւորութիւններով ի՞նչ որ կը կատարէ, զայն կը կատարէ Վեհափառ Հայրապետին բառերով՝ «Ի խնդիր հայ եկեղեցւոյ պայծառութեան եւ ազգի գերագոյն շահերուն կենսագործման»: Հայ Դատ եւ Միջ-Եկեղեցական շարժում, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան մէջ կարեւոր տեղ կը գրաւեն: Մեր նպատակը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մեր եկեղեցւոյ ու ազգին շահը: Եթէ Պրիւքսէլի Եւրո-խորհրդարանին մէջ Արամ Ա. Կաթողիկոս իր փայլուն նպաստը բերաւ, կամ՝ եթէ Նափոլիի միջ-կրօնական համագումարին իր կարեւոր ներդրումը ունեցաւ, ամբողջ Հայ Եկեղեցին ու Հայ ժողովուրդը շահեցաւ: Այս է մեր մօտեցումը եւ մեր գոյատեւման նպատակը: Այլապէս մնացեալը ամբողջ կը դառնայ խարուսիկ ամբոխավարութիւն, աժան քարոզչութիւն, եւ ասուպային փայլք: Եւ կը խորհիմ որ Եկեղեցի մը իր իսկական նպատակով եւ իր սպասաւորներու այս գիտակցութեամբ կը մնայ զօրաւոր, ու կը դառնայ բոլորին սեփականութիւնը անխտիր:

ԼՈՒՐԵՐ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ

«ԴՊՐԵՎԱՆՔԸ ՄԱՐԴԱԿԵՐՏՈՒՄԻ ՈՒ ՀԱՅԱԿԵՐՏՈՒՄԻ ԴԱՐԲՆՈՑ Է»

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Չորեքշաբթի 24 Հոկտեմբեր 2007-ի գիշեր Արամ Ա. Կաթողիկոս վերադարձաւ Պելճիքա, Զուլիցերիա եւ Իտալիա կատարած իր միջ-եկեղեցական ու ազգային առաքելութենէն, ու անմիջապէս ուղղուեցաւ Պիքֆայայի Դպրեվանքը: Դպրեվանքի մուտքին Վեհափառ Հայրապետը ընդունուեցաւ տեսչութեան, ու սարկաւազ եւ ժառանգաւոր սաներուն կողմէ: Եկեղեցւոյ մէջ կատարուած կանոնական աղօթքէն յետոյ, Վեհափառ Հայրապետը օրհնութեան իր հայրական խօսքը ուղղեց աշակերտներուն. «Ահաւասիկ Դպրեվանքը շուրջ շաբաթ մը ի վեր վերսկսած է իր կրթական կեանքին: Ազգային ու միջ-եկեղեցական առաքելութեամբ Եւրոպա գտնուելով, չկրցամք մերկայ ըլլալ Դպրեվանքի բացման աւանդական հանդիսութեան: Ուրախ ենք որ այսօր, Դպրեվանքեան այս հոգեպարար մթնոլորտին մէջ կ'ողջունենք ձեր բոլորը՝ տեսչութիւնը, ուսուցչական կազմը ու աշակերտութիւնը:

Դպրեվանքը մեր բոլորին հարագատ տունն է: Բոլորս ալ այս տան գաւակները եղանք եւ ենք, որոշ իմաստով: Դպրեվանք մուտք գործեցինք, հոս ուսում առինք, կրթութիւն, հոգեմտաւոր կազմաւորում ստացանք եւ ապա մեր եկեղեցւոյ ու ժողովուրդի ծառայութեան լծուեցանք: Ով որ Դպրեվանքէն անցած է, այս սրբազան տան հացը ճաշակած է, չի կրնար գայն մոռնալ»:



Ապա Նորին Սրբութիւնը շեշտելով Դպրեվանքի կարեւորութիւնը ըսաւ. «Սովորական դպրոց մը չէ՛ Դպրեվանքը: Անիկա մարդակերտումի ու հայակերտումի առաքելութեան լծուած սրբավայր մըն է: Այստեղ առաքելներ կը պատրաստուին սրբազան առաքելութեան մը համար: Այդ առաքելութիւնը մեր եկեղեցւոյ ու մեր ժողովուրդին ծառայութիւնն է: Առաքելութեան մը գիտակցութեամբ կատարուած ծառայութիւնը կը դառնայ աւելի վաւերական. տեսիլք է մը մղուած մեր ծառայութիւնը, կը դառնայ աւելի ճշմարիտ: Հո՛ս կը կայանայ Դպրեվանքի իւրայատուկ նկարագիրը: Դուք մեր ժողովուրդէն եկած էք այստեղ նոր մարդ դառնալու, հոգեմտաւոր կազմաւորման



ԴՊՐԵՎԱՆՔԻ ՍԱՐԿԱԽԱԳ ԵՒ ԺԱՌԱՆԳԱԽՈՐ ՍԱՆԵՐ
ԿԸ ՀԵՏԵԻՆ ՎԵՅԱՓՈԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅՐԱԿԱՆ ՅՈՐԴՈՐՆԵՐՈՒՄ

նամբով: Հետեւաբար Դպրեվանքէն միայն ուսում՝ պիտի չստանաք, այլ նաեւ ու մանաւանդ ծառայելու կոչման գիտակցութիւն: Մեր ժողովուրդէն եկաք, ու դարձեալ մեր ժողովուրդին պիտի երթաք ծառայութեան դրօշակը բարձր բռնած»:

Իր Հայրական խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը յատուկ կարեւորութեամբ շեշտեց երեք բառեր. Աշխատասիրութիւն, Կարգապահութիւն ու Նուիրուածութիւն: Այս երեք բառերու ետին կեցող ոգին ու յանձնառութիւնը պէտք է դառնան մղիչ ոյժը ձեր կեանքին ու գործին Դպրեվանքէն ներս:

Դպրեվանքը շուրջ շաբաթէ մը ի վեր սկսած է իր կանոնաւոր դասըն-

թացքներուն, գլխաւորութեամբ տեսուչ՝ Գերպ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեանի: Տեսչութեան մաս կը կազմեն երկու միաբան հայրեր՝ Հոգշ. Մասիս Վրդ. Զօպուլեան (փոխ տեսուչ) եւ Հոգշ. Տ. Մակար Արդ. Ազգարեան (Ընդհանուր հսկիչ): Ուսուցչական կազմը կը բաղկանայ միաբան հայրերէ ու աշխարհական ուսուցիչներէ:

Իսկ Քահանայից պատրաստութեան դասընթացքը եւս սկսած է, որուն կեդրոնը կը գտնուի Անթիլիասի Մայրավանքէն ներս: Սոյն դասընթացքին այս տարի կ'ը հետեւին ութը քահանայացուներ՝ Միացեալ Նահանգներու, Գանատայի, Սուրիոյ, Պարսկաստանի ու Լիբանանի թեմերէն:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՎԵՐԱՄՈՒՏ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ
ՀՈԳԵՒՈՐ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆՑ ՊԱՀԵՐՈՒ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՉ**


Երեքշաբթի 30 Հոկտեմբեր 2007-ի առաւօտուն, Անթրիիասի Մայրավանքին մէջ, ամառնային արձակուրդէն ետք վերաբացումը կատարուեցաւ հայ կանանց յատուկ հոգեւոր սերտողութեանց: Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին բարձր հովանաւորութեամբ, եւ կազմակերպութեամբ Կաթողիկոսարանիս Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, սոյն հոգեւոր սերտողութիւնները տեղի կ'ունենան ամէն Երեքշաբթի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

Բացման ու բարի գասլտեան խօսքը արտասանեց բաժանմունքի վարիչ՝

Հոգչ. Տ. Թորգոմ Աբղ. Տօնոյեան: Իր խօսքին մէջ Հայր Սուրբը կարեւորութեամբ ընդգծեց քրիստոնէական դաստիարակութեան կարեւորութիւնը մեր կեանքէն ներս: Բաժանմունքին կողմէ ի գործ դրուող դասախօսական սոյն շարքը, սուրբերու վկայբանութիւններուն ներկայացման առընթեր, շարաթական դրութեամբ հոգեւոր ապրումի ու խորհրդածութեան պահեր կը ստեղծէ հայ կանանց համար, որոնք մեծաթիւ խումբով կը մասնակցին կազմակերպուած բոլոր ձեռնարկներուն: Հանդիպումները կը քննարկեն նաեւ բարոյագիտական հարցեր, ուղղութիւն տալով մարդկային փոխ-յարաբերական մեր կեանքին:



ՍԱՆԱԿՑՈՂ ՏԻԿԻՆՆԵՐ, ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԱՐՕԹՔԻ ՊԱՅՈՒՆ



**Մ Ի Բ Ո Ն Օ Ր Հ Ն Է Ք
Ա Ն Թ Ի Լ Ի Ա Ս Ի Մ Է Ջ**

**Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ
ՀԱՒԱՏԱՅԵԱԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ
ԿԸ ԾԱՆՈՒՑԱՆԵՆՔ ԹԷ՛**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

**ՀԱՆԴԵՐՉԵԱԼ Է ՍՐԲԱԼՈՅՍ
ՄԻԲՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ,
ՇԱՐԱԹ, 7 ՅՈՒՆԻՍ 2008-Ի ԵՐԵԿՈՅԵԱՆ,
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԴՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ,
ԱՆԹԻԼԻԱՍ, ԼԻԲԱՆԱՆ**

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ԳԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ
ՊԵՐԼԻՆԻ ԱՏՈՒԱԾԱՐԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

Ի պատիւ Գերմանիոյ Աւետարանական եկեղեցիներու պետ՝ Ուոլֆկանկ Հիւպըր Եպիսկոպոսին, Աստուածաբանական համագումար վը տեղի ունեցաւ Պերլինի մէջ, Ծաբաթ 29 Սեպտեմբեր 2007-ին: Համագումարին մասնակցեցան գերմանացի թէ օտար աշխարհահռչակ աստուածաբաններ եւ համալսարաններու դասախօսներ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս գլխաւոր դասախօսներէն մէկն էր սոյն համագումարին, նիւթ ունենալով «Եկեղեցւոյ Ընդհանրականութեան Հասկացողութիւնը ներկայ աշխարհին մէջ»: Սոյն համագումարին անձամբ ներկայ չկարենալով գտնուիլ, Վեհափառ Հայրապետին տնօրինումով, Գերմանիոյ մէջ աստուածաբանութեան ուսանող Իշխան Չիֆթեան, գերմաներէն լեզուով կարդաց Նորին Սրբութեան դասախօսութիւնը:

Աստուածաբանական այս բարդ հարցը Վեհափառ Հայրապետը իր դասախօսութեամբ փորձեց դիտել եկեղեցւոյ կեանքի զանազան անկիւններէն: Այսպէս՝ ընդհանրականութիւն եւ եկեղեցւոյ միութիւն, ընդհանրականութիւն եւ առաքելութիւն, ընդհանրականութիւն եւ տիեզերականութիւն, ընդհանրականութիւն եւ համաշխարհայնացում:

Իր դասախօսութեան ճամբով, Արամ Ա. Կաթողիկոս ընդհանրականութիւնը դիտել յարաբերաբար այս երեւոյթներուն, մանաւանդ ան շեշտեց որ ընդհանրականութիւնը տեսական յղացք

վը չէ, այլ եկեղեցւոյ կեանքին կապուած իրականութիւն վը: Նորին Սրբութիւնը կարեւորութեամբ ընդգծեց, թէ ընդհանրականութիւնը Աստուծոյ պարգեւն է եւ ոչ թէ եկեղեցւոյ սեփականութիւնը: Ան ըսաւ նաեւ, թէ ընդհանրականութիւնը եկեղեցւոյ կառոյցին ու դաւանանքին կապուած չէ, այլ եկեղեցւոյ էութեան, որպէս Քրիստոսի խորհրդական Մարմինը: Արամ Ա. Կաթողիկոս ի վերջոյ շեշտեց նաեւ, որ ընդհանրականութիւնը որեւէ եկեղեցւոյ իրաւունքը չէ, այլ եկեղեցի վը՝ մեծ թէ փոքր, ընդհանրական է, որովհետեւ եկեղեցւոյ Տէրը՝ Քրիստոս ի՛նքն ընդհանրական է:

Արամ Ա. Վեհափառ Հայրապետի գլխաւոր եզրակացութիւնը այն եղաւ, որ ընդհանրականութեան նկատմամբ եկեղեցակեդրոն մօտեցում պէտք չէ ունենանք, այլ Քրիստոսակեդրոն: Այլ խօսքով ընդհանրականը ոչ թէ եկեղեցին, այլ՝ Քրիստոս ի՛նքն է, ըսաւ ան:

**ԶԱԳԳԱ Ա. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ
ԾԱՇԿԵՐՈՅԹԸ
Ի ՊԱՏԻ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

Երկուշաբթի 3 Սեպտեմբեր 2007-ի կէսօրին, ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, ասորի եկեղեցւոյ Պատրիարք Ն.Ս. Զազգա Ա. Իուսա ճաշկերոյթ վը սարքեց Աթշանէի ասորիներու վանքին մէջ: Ծաշկերոյթին ներկայ էին Վեհափառ Հայրապետին կողքին Գերպ. Տ. Նորայր Ծ. Վրդ. Աշրգեան եւ Թորգոմ Արդ. Տօնոյեան, իսկ Պատրիարքին կողքին ներկայ էին Լիբանանի ասորի համայնքի առաջնորդները, վանքին վանա-



հայրը, քոյրերու միաբանութեան ներկայացուցիչները, եւ այլ հոգեւորական ու աշխարհական ներկայացուցիչներ:

Ճաշկերոյթէն առաջ, Վեհափառ Հայրապետը եւ Պատրիարքը խորհրդակցական հանդիպում մը ունեցան ընդհանրապէս արեւելեան ուղղափառ եկեղեցիներու ընտանիքին եւ յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Անտիոքի Ասորի Պատրիարքութեան յարաբերութեան ու գործակցութեան առնչուած նիւթերու մասին: Հանդիպման ընթացքին բնականաբար նաեւ արծարծուեցան Միջին Արեւելքի եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին հետ կապ ունեցող հարցեր:

Երկու հոգեւոր պետերը շեշտեցին հայ ու ասորի եկեղեցիներու գործակցութիւնը աւելի ամրապնդելու անհրաժեշտութիւնը՝ հոգեւոր, համայնքային եւ այլ մարզերէն ներս:

Անտիոքի Ասորի Պատրիարքութեան կեդրոնը կը գտնուի Դամասկոսի մէջ ու հայ եկեղեցւոյ նման ասորի եկեղեցին թեմեր ունի Միջին Արեւելքի, Եւրոպայի ու Միացեալ Նահանգներու զանազան շրջաններէն ներս:

**ՆԵՍԻՊ ԼԱՀՈՒՏԻ
ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Նախկին երեսփոխան եւ «Մարտ 14 Ոյժեր»ու կարեւոր դէմքերէն Նեսիպ Լահրուտ, անցնող երկու ամիսներուն, յաջորդաբար երեք այցելութիւններ

տուաւ Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Լիբանանի մէջ տիրող քաղաքական կացութեան շուրջ խորհրդակցութիւններ ունենալու համար:

Առաջին այցելութիւնը տեղի ունեցաւ Ծաբաթ 1 Սեպտեմբեր 2007-ին Պիքֆայայի վանքին մէջ: Ծուրջ ժամ մը տեւող խորհրդակցութիւնները առաւելաբար կեդրոնացան Լիբանանը դիմագրաւող մարտահրաւերներու, ինչպէս նաեւ յառաջիկային կատարուելիք նախագահական ընտրութեան շուրջ:

Երկրորդ այցելութիւնը կայացաւ Երկուշաբթի 17 Սեպտեմբեր 2007-ի գիշեր, դարձեալ Պիքֆայայի վանքին մէջ, ուր քննարկուեցան Լիբանանէն ներս տիրող քաղաքական վերջին զարգացումները ու յատկապէս՝ նախագահական ընտրութեան գործընթացը:

Երրորդ հանդիպումը տեղի ունեցաւ Չորեքշաբթի 10 Հոկտեմբեր 2007-ի գիշերուան ուշ ժամուն, երբ անգամ մը եւս Պիքֆայայի վանքին մէջ Վեհափառ Հայրապետը ընդունեց Նեսիպ Լահրուտ, որ Լիբանանի նախագահական գլխաւոր թեկնածուներէն մէկն է: Վեհափառ Հայրապետը եւ Նեսիպ Լահրուտ, որպէս մտերիմ բարեկամներ, մտքերու փոխանակում կատարեցին, յատկապէս յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն առնչուած հարցերու շուրջ: Նորին Սրբութիւնը այս գծով իր յստակ տեսակէտները պարզեց նախագահութեան թեկնածուին, նկատի ունենալով Լիբանանի միութեան, ամբողջականութեան ու գերիշխանութեան հրամայականը:

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏՐ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԵՍՓՈՒԽԱՆ ՌՈՊԷՐ ՂԱՆԷՄԸ

Չորեքշաբթի 5 Սեպտեմբեր 2007-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Պիքֆայայի վանքին մէջ ընդունեց այցելութիւնը Լիբանանի Խորհրդարանի անդամ Ռոպէր Ղանէմի: Այցելութեան հիմնական նպատակն էր Վեհափառ Հայրապետին հետ խորհրդակցիլ Լիբանանի ներքին քաղաքական կացութեան գծով, ինչպէս նաեւ Նորին Սրբութեան ներկայացնել իր առաջադրանքները, որպէս թեկնածու Լիբանանի հանրապետութեան նախագահութեան:



Վեհափառ Հայրապետը երեսփոխան Ղանէմի յիշեցուց, թէ հայ համայնքը, որպէս Լիբանանի գլխաւոր համայնքներէն մէկը, միշտ կառչած կը մնայ Լիբանանի անկախութեան, գերիշխանութեան ու միութեան հիմնական սկզբունքներուն: Վեհափառ Հայրապետը ըսաւ, Հայ համայնքը միշտ հաւասարակշռուած մօտեցում ունի բոլոր կողմերուն նկատմամբ, մեկնելով իր շահերէն, ինչպէս նաեւ Լիբանանի գերագոյն շահերէն:

ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Պերնար Զուշնէրի Լիբանան այցելութեան նախօրեակին, Չորեքշաբթի 12 Սեպտեմբեր 2007-ի գիշեր Պիքֆայայի վանքին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.



Կաթողիկոսին այցելեց ֆրանսայի դեսպան Անտրէ Փարանը: Վեհափառ Հայրապետին եւ դեսպանին միջեւ շուրջ ժամ մը տեւող խորհրդակցութիւնները առաւելաբար կեդրոնացան Լիբանանը ներքին տագնապէն դուրս բերելու ու բնականոն պայմաններու մէջ նախագահական ընտրութիւն կատարելու կարելիութիւններուն շուրջ:

Վեհափառ Հայրապետը դեսպանին ներկայացուց իր պատկերացումները՝ շեշտելով նախագահական ընտրութիւն կատարելու հրամայականը, բոլոր կողմերէն ընդունելի թեկնածուի մը շուրջ համաձայնելու կարելորութիւնը, ինչպէս նաեւ նախագահական ընտրութիւններէն յետոյ ազգային միասնականութեան կառավարութեան մը կազմութիւնը, եւ բոլորին մասնակցութեամբ ազգային երկխօսութեան գործընթացի վերսկսումը: Վեհափառ Հայրապետը յատկապէս ընդգծեց Լիբանանի գերագոյն արժէքներու շուրջ համախմբուելու եւ համալիրանանեան ռազմավարութիւն ու մարտավարութիւն որդեգրելու կենսական կարելորութիւնը:

Վեհափառ Հայրապետը նաեւ անդրադարձաւ Լիբանանի հայութեան դերակատարութեան՝ յիշեալ բոլոր աշխատանքներուն մէջ: Ան յատկապէս ըսաւ թէ հայութիւնը երբեք դիտողի ու հետեւողի կրաւորական վիճակի մէջ չէ եղած, ու չի կրնար ըլլալ. այլ միշտ՝ մասնակցողի: Վեհափառ Հայրապետը նաեւ յիշեցուց, որ հայ համայնքը որեւէ կողմի հակադրուած չէ, եւ ոչ ալ կողմի մը հետ նոյնացած. այլ ինք իր հաւասարակշռուած մօտեցումներով ու համալիրա-

նանձեան շահերէ մեկնած միշտ երկխօսութեան մէջ եղած է բոլոր կողմերու հետ՝ ի խնդիր Լիբանանի գերիշխանութեան, միասնականութեան ու անկախութեան:

Դեսպանը իր կարգին Վեհափառ տեղեակ պահեց Լիբանանէն ներս թէ Լիբանանէն դուրս նախագահական ընտրութեան գծով Ֆրանսայի կատարած աշխատանքներուն մասին: Իր կարգին դեսպանը եւս շեշտեց նախագահական ընտրութիւնը կատարելու կարելորութիւնը:

**ԱՆԳԼԻՈՅ ԳԵՍՊԱՆՈՒՀԻՆ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Ուրբաթ 14 Սեպտեմբեր 2007-ի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Անգլիոյ դեսպանուհին Տիկ. Ֆրանսիս Կայ, ընկերակցութեամբ քաղաքական հարցերու իր խորհրդակցիկն: Երկար հանդիպում մը տեղի ունեցաւ Վեհափառ Հայրապետին հետ, որուն ընթացքին քննարկուեցան Լիբանանի առնչուած հարցեր ու յատկապէս՝ նախագահական ընտրութիւնը: Այս գծով Վեհափառ Հայրապետը իր տեսակէտները ու մտահոգութիւնները պարզեց՝ ընդգծելով սահմանադրութիւնը յարգելու եւ նոր նախագահի ընտրութիւնը կատարելու անհրաժեշտութիւնը: Վեհափառը յայտնեց, թէ նոր նախագահը հաւասար հեռանկարութեան վրայ պէտք է գտնուի բոլոր կողմերուն նկատմամբ՝ Լիբանանէն գերագոյն շահերը վեր



րը ու մտահոգութիւնները պարզեց՝ ընդգծելով սահմանադրութիւնը յարգելու եւ նոր նախագահի ընտրութիւնը կատարելու անհրաժեշտութիւնը: Վեհափառը յայտնեց, թէ նոր նախագահը հաւասար հեռանկարութեան վրայ պէտք է գտնուի բոլոր կողմերուն նկատմամբ՝ Լիբանանէն գերագոյն շահերը վեր

նկատելով կողմնակի շահերէն: Ան նաեւ պէտք է վերահաստատէ Լիբանանի տեղը ու դերը միջազգային ընտանիքէն ներս:

Խորհրդակցութիւնները նաեւ ընդգրկեցին միջ-եկեղեցական հարցեր եւ մանաւանդ՝ Զէնթրոպլորիի Արքեպիսկոպոսին այցելութիւնը Վեհափառ Հայրապետին:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ԴԱՍԱԽՕՍԵՑ ԳԵՐՄԱՆԱՑԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՆԵՐՈՒՆ**

Երկուշաբթի 17 Սեպտեմբեր 2007-ի առաւօտուն, Դպրեվանքի սրահին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս դասախօսութիւն մը տուաւ Գերմանիայէն ժամանած խումբ մը համալսարանականներուն: Գերմանական զանազան համալսարանները ներկայացնող եւ աստուածաբանութեան, արեւելագիտութեան ու եկեղեցւոյ պատմութեան մէջ իրենց մասնագիտութիւնը կատարող համալսարանականներուն նաեւ կ'ընկերանային իրենց դասախօսները: Իրենց այցելութեան նպատակն էր մօտէն ճանչնալ Միջին Արեւելքի քրիստոնէութիւնը:

Վեհափառ Հայրապետի դասախօսութեան նիւթն էր՝ «Միջին Արեւելքի քրիստոնէութիւնը նոր մարտահրաւերներու դիմաց»: Հպանցիկ ակնարկով Միջին Արեւելքի քրիստոնէութեան պատմականը կատարելէ յետոյ իր յատկանշական երեւոյթներով, Արամ Ա. Կաթողիկոս իր դասախօսութեան մէջ կեդրոնացաւ շրջանի եկեղեցիներու ներկայ կեանքին ու յատկապէս անոնց դիմագրաւած գլխաւոր մտահոգութիւններուն ու մարտահրաւերներուն վրայ: Այս ծիրէն ներս Վեհափառ Հայրապետը լայնօրէն անդրադարձաւ հետեւեալ հարցերուն.- եկեղեցւոյ միութիւն, քրիստոնէութեան վկայութեան վերակազմակեր-



պում, կրօնական դաստիարակութեան աշխուժացում, ընկերային ծառայութեան բարեփոխում, քրիստոնեաներու արտագաղթ, միջ-եկեղեցական շարժում:

Վեհափառ Հայրապետի դասախօսութենէն ետք ներկաները հարցումներ հարցուցին թէ՛ Միջին Արեւելքի քրիստոնէութեան առնչուած, եւ թէ հայ եկեղեցւոյ ու մանաւանդ՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Դասախօսութեան ամարտին ներկաները դիտեցին Կաթողիկոսարանին կողմէ պատրաստուած անգլերէն լեզուով «Հաւատքի Առաքելութիւն» վաւերագրական տեսաերիզը:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ՝ Ք2 ՖՐԱՆՍԱԿԱՆ
ՀԵՌԱՏԵՍԻԼԻ ԿԱՅԱՆԻՆ**

Երեքշաբթի 11 Սեպտեմբեր 2007-ի առաւօտուն, Անթիլիասի Մայրավանքին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս հարցազրոյց մը ունեցաւ Ֆրանսայի Ք2 հեռատեսիլի կայանի խումբ մը թղթակիցներուն հետ: Ծուրջ քառորդ ժամ տեւող հարցազրոյցի ընթացքին, միջ-եկե-

ղեցական, հայկական, ու այլ հարցերու շարքին արծարծուեցան Միջին Արեւելքէն ներս քրիստոնէութեան ներկայութեան ու Լիբանանի նախագահական ընտրութեան հարցերը: Խօսելով Միջին Արեւելքէն ներս քրիստոնէութեան ներկայութեան մասին, Վեհափառ Հայրապետը զայն բնորոշեց «տագնապներով ու մարտահրաւերներով լեցուն ներկայութիւն»: Ապա Վեհափառ Հայրապետը հարց տուաւ «ե՞րբ այսպէս չէ եղած քրիստոնէութիւնը պատմութեան ընթացքին շրջանէն ներս: Այս կացութեան դիմաց կրաւորական մօտեցումը անընդունելի է: Քրիստոնէութիւնը վկայութիւն է ու վկայութիւնը յանձնառութիւն ու պայքար է: Այս ոգիով ու հաւատքով քրիստոնէութիւնը պէտք է ինքզինք կազմակերպէ», ըսաւ Արամ Ա. Կաթողիկոս: Միաժամանակ, Վեհափառ Հայրա-



պետը քրիստոնեության արտագաղթը
յատկապես Երուսաղէմէն, Իրաքէն ու Ի-
րանէն՝ նկատեց լուրջ հարց, որուն դի-
մաց կարելի չէ անտարբեր մնալ:

Լիբանանի նախագահական ընտ-
րութեան անդրադառնալով, Վեհափառը
ըսաւ. «նոր նախագահի ընտրութիւնը
հրամայական անհրաժեշտութիւն է, այ-
լապէս երկիրը կրնայ նոր անորոշու-
թիւններու դիմաց գտնուիլ»: Եւ ապա
Վեհափառ Հայրապետը ակեցուց՝ «Լի-
բանանը համայնքներու ընտանիք մըն է
ուր, ճիշդ է, կան որոշ զգայնութիւններ
ու անհասկացողութիւններ, սակայն
պէտք է այդ բոլորը շրջանցել ու ընտ-
նիքին միասնականութիւնը ու ամբող-
ջականութիւնը ամրապնդել»:

Արամ Ա. Կաթողիկոս հայ համայնքը
նկատեց Լիբանանի եօթը գլխաւոր հա-
մայնքներէն մէկը եւ իբր այդպիսին, ան
յիշեցուց թէ հայ համայնքը գործօն ներ-
կայութիւն է լիբանանեան կեանքի բոլոր
մարզերէն ներս:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԳՈՒՆԵՑ
ՍԻՄՈՆ ՔԱՐԱՄԸ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին
հետ հանդիպում ունեցող պաշտօնական

հիւրերու շարքին, Երեքշաբթի 30 Հոկ-
տեմբերին, Անթիլիաս այցելեց, Ուա-
շինկթընի մէջ Լիբանանի նախկին
դեսպան Դոկտ. Սիմոն Քարամ: Խօսակ-
ցութիւնները ընդգրկեցին յատկապէս
Լիբանանի քաղաքական կեանքի բեմը
զբաղեցնող, նախագահական յառաջի-
կայ ընտրութիւնները:

Դոկտ. Քարամ քաղաքական կա-
րետոր դէմքերէն մէկն է, որ վերջին վեց
ամիսներու ընթացքին Քրիստոնէական
բոլոր համայնքները ներկայացնող հա-
մախմբումի մը ղեկավարն է:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԳՈՒՆԵՑ Հ.Մ.Ը.Մ.-Ի
ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ**

Երեքշաբթի 30 Հոկտեմբեր 2007-ին,
Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Ան
թիլիասի Սայրավանքին մէջ ընդունեց
Հ.Մ.Ը.Մ.-ի նորընտիր վարչութիւնը,
ընկերակցութեամբ Միութեան նախկին
վարչութեան: Լիբանանի մէջ իր Կեդրո-
նատեղին ունեցող Հ.Մ.Ը. Միութեան
նորընտիր վարչական կազմը, Նորին
Սրբութեան ներկայացուց ընդհանրա-
պէս վերջին պատգամաւորական ժո-



ղովի արդիւնքները, եւ Միութեան տարած գործունէութեան ընդհանուր պատկերը, զանազան երկիրներու հայագաղութներէն ներս:

Վեհափառ Հայրապետը հայրական սիրով ողջունեց նոր սերունդի դաստիարակութեան մէջ կարեւոր ներդրում ունեցող սոյն Միութեան կատարած աշխատանքը: Նորին Սրբութիւնը այս առիթով անգամ մը եւս վեր առաւ յատկապէս Լիբանանի երիտասարդական բոլոր հայկական կազմակերպութիւններուն կարեւոր նպաստը, նոր սերունդի ազգային դաստիարակութեան իմաստով: Մեր ազգային արժէքներուն շուրջ մեր նոր սերունդը համախմբելու գծով տարուած իւրաքանչիւր աշխատանք, Վեհափառ Հայրապետը նկատեց կենսական, թէ՛ գաղութներու առողջ ու կենսունակ պահպանման առումով եւ թէ՛ հայեցի կրթութեան իւրայատուկ յատկանիշերը արժեւորելու նպատակով:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԳԻ ՓՈԽ-ԸՆԴՀ. ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄՕՏ

Չորեքշաբթի 31 Հոկտեմբեր 2007-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Մայրավանքին մէջ ընդունեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի փոխ-ընդհ. քարտուղար Եորկո Լեմոփուլոսը: Հանդիպման ներկայ գտնուեցան նաեւ Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական Բաժանմունքի վարիչ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեւմէզեան եւ Քարլա Խիժօ:

Հանդիպումը առիթ մը եղաւ խօսելու ընդհանրապէս միջ-եկեղեցական շարժման դիմագրաւած ներկայ մարտահրաւերներուն մասին, եւ յատկապէս Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի յառաջիկայ ծրագիրներուն առնչութեամբ:



ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007: Դ. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Թորգոմ Աբղ. Տօնոյեան:

ԿԻՐԱԿԻ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007: Ե. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ: ԲԱՐԵԿԵՆԴՍՆ Ս. ԽԱԶԻ ՊԱՀՈՑ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Ղեւոնդ Աբղ. Բէնդէզեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան:

ԿԻՐԱԿԻ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007: ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Ղեւոնդ Աբղ. Բէնդէզեան:

ԿԻՐԱԿԻ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007: Բ. ԶԿՆԻ ԽԱԶԻ: ԲԱՐԵԿԵՆԴՍՆ ՎԱՐԱԳԱՅ ԽԱԶԻ ՊԱՀՈՑ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

ԿԻՐԱԿԻ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007: ՏՕՆ ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Սիփան Վրդ. Քէչէճեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Նորայր Ծ. Վրդ. Աշրգեան:

Թուչնոց Բոյնի Ս. Գայիանէ մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեան:

ԿԻՐԱԿԻ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2007: Դ. ԶԿՆԻ ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Մակար Աբղ. Աշգարեան:

Թուչնոց Բոյնի Ս. Գայիանէ մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝

Հոգչ. Տ. Վաղինակ Վրդ. Մերոյեան:

ԿԻՐԱԿԻ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2007: Ե. ԶԿՆԻ ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան:

Թուչնոց Բոյնի Ս. Գայիանէ մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Սահակ Աբղ. Եմիչեան:

ԿԻՐԱԿԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2007: Զ. ԶԿՆԻ ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Սահակ Աբղ. Եմիչեան:

րագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Սահակ Աբղ. Եմիչեան:

Թուչնոց Բոյնի Ս. Գայիանէ մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Ստեփանոս Աբղ. Փաշայեան:

ԿԻՐԱԿԻ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2007: Է. ԶԿՆԻ ԽԱԶԻ: ԳԻԻՏ ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Ստեփանոս Աբղ. Փաշայեան:

Թուչնոց Բոյնի Ս. Գայիանէ մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Ղեւոնդ Աբղ. Բէնդէգեան:

